

# **ԱՐՑԱԽԻ ԱՆՎԱՆԻ ԳՈՐԾԻՉՆԵՐ**

**ՀԱԴՐՈՒԹԻՒ  
ՇՐՋԱՆ**

**ԳԻՐԵՔ III**

9(47.928)

Հ-48

ԱՐՅԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

**ԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆԻ  
ԳՈՐԾԻՉՆԵՐԻ**

**ՀԱԴՐՈՒԹԻ  
ԾՐՁԱՆ**

6463

**գիրք III**

Կազմողներ՝ Դադայան Ս. Վ.

Միրզյան Լ. Ե.

Ավագիմյան Ն. Վ.

Բալայան Կ. Ե.

Ստեփանակերտ

2022



ՀՏԴ 94(479.25)  
ԳՄԴ 63.3(5Հ)  
Ա 948

Աշխարհական պատության է  
երաշխավորել Արցախի զիրական  
կենտրոնի զիրիորիուրդը

**Խմբագիր՝ Խանջյան Ս. Ա., բանասիրական գիտությունների  
դոկտոր, պրոֆեսոր, ԼՊՀ գիտության վաստակավոր  
գործիչ**

**Կազմողներ՝ Գաղայան Ա.Վ. (խմբի ղեկավար), Միրզոյան Լ.Է.,  
Ավագիմյան Ն.Վ., Բալայան Կ.Ե.**

Ա 948 Արցախցի անվանի գործիչներ: Հայրութիւն շրջան: Գիրք III,  
Ստեփանակերտ, 2022, 232 էջ:

«Արցախցի անվանի գործիչներ» խորագույ զիրքը նվիրված է Արցա-  
խի Հանրապետության Հայրութիւն շրջանին: Աշխատանքի նպատակն է՝  
ներկայացնել Հայրութիւն շրջանից սերված, պատմական դիզակցու ընտա-  
նիքում ծնված պիտական, ուազմական, գիտության, մշակույթի, կրթության,  
սպորտի և այլ բնագավառներում ավանդ ունեցած գործիչների համարուն  
կյանքն ու գործունեությունը: Այն նախատեսված է ընթերցողների լայն  
շրջանակների, Արցախ աշխարհի պատմական անցյալով հետաքրքրվող-  
ների համար: Դիմերով ընթերցողներին ժողովածուի հեղինակները խնդրում  
են, որ չիշխառավագած անձանց վերաբերյալ նյութերը ներկայացնել Արցա-  
խի գիտական կենտրոն՝ զիրքը վերահատարակելու նպատակով:

ՀՏԴ 94(479.25)  
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-1-1458-3

© Արցախի գիտական կենտրոն, 2022

ԳՐԱԴԱՐԱՆԻ ԶԱՐՈՒ

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Խոսք խմբագրի .....	4
Հույսի, հավատի և վերադարձի դոդանջները .....	5
Նախարանի փոխարեն .....	7
Անվանական ցանկ .....	8
Ցանկ շրջանի անվանի մարդկանց անունների, որոնց կենսագրական տվյալները գրքի հրատարակման պահին	
Հի հաջողվել հավաքագրել .....	229
Օգտագործված գրականություն .....	230

ԽՈՍՔ ԽՄԵՐՎԱՐԵ

Աշխարհի քաղաքակիրք ժողովուրդների պատմությունն ընդհանրության մեջ բազմերանգ մի ծիածան է, որը վկայում է ոչ միայն Մարդու արժանապատիվ տեղը նրանում, այլև արարող ուժի դերն ու նշանակությունը կյանքն ինաստավորելու բարդ ու դժվարին ճանապարհիմ: Այս առումով հաճնի ակնկալիք է Արցախի գիտական կենտրոնի կողմից հրատարակվող երրորդ գիրքը՝ նվիրված Արցախի Հաղորդի շրջանի անվանի գործիչներին:

Այս ձեռնարկումը սովորական երևոյթ չէ, այլ դարերի հետ առնչվելու, նոր սերունդների հետ հաղորդակցվելու մի նոր, բազմախոսասուն մատենաշար:

Ինչպես մատնանշվում է գրքի մուտքում, նրանում ներկայացվում են Հայոցութիւնը շրջանից սերված, պատմական դիզակցու ընտանիքում ծնված պետական, ուազմական, գիտության, մշակույթի, կրթության, սպորտի և այլ բնագավառներում ավանդ ունեցած գործիչների համառոտ կյանքն ու գործունեությունը:

Նման անհրաժեշտ ձեռնարկումը խրախուսելի փորձ է, որն իր վրա է վերցրել մեր փորձառու, տաղանդավոր մտավորականներից մեկը՝ Ստեփան Դարյայանը:

Միաժամանակ դիմում ենք ընթերցողներին, այն առումով, որ չենք տարակուսում, որ առանձին հանրահայտ անձինք կարող են ընդգրկված շինեն գրքում: Հեղինակները խնդրում են՝ նման դեպքում համապատասխան նյութը ներկայացնել Արցախի գիտական կենտրոն՝ գրքի երկրորդ հրատարակությունում ընդունելու համար:

Ընթեղող հասարակության ամունից սրտանց ողջունում ենք Ս. Դադա-յանին, հավաստիացնելով, որ սույն ժողովածուն ևս դառնալու է ընթեղող-ների սերանի բնտիր գորերից մեկո՛ հուզող, թևավորող:

Սույնակ ԽԱՆՅԱՆ

Բանասիրական զիրությունների դոկտոր, պրոֆեսոր,  
ԱՀ զիրության վաստակավոր գոռծից

ՀՈՒՅԱՆԻ, ՀԱՎԱՏԻ ԵՎ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՂՈՂԱՆՉԵՐԸ

«Արցախի անվանի գործիչներ» մատենաշարի երրորդ գիրքը (Հյուսիսային Արցախ, գիրք I, Մարտակերտի շրջան, գիրք II)՝ Արցախի գիտական կենտրոնի ժամանակին և նպատակային արձագանքն է ողբերգական և աղետաբեր մարտահրավերների, մասնավորապես՝ Արցախի Հանրապետության դեմ սահնազերծված 44-օրյա երրորդ պատերազմի, պատմական Դիզակ-Հաղորդ տարածաշրջանի կորսույանը։ Գիտաշխատողները ընձեռած հնարավորությունների սահմաններում փորձում են ներկայացնել երկրամասի տարբեր ժամանակահատվածների անվանի գործիչներին, որոնք իրենց հետոք են բողել դարերի խորքից եկող պատմական Դիզակի քաղաքական, տնտեսական, հոգևոր, ճաշկուրային պատմության մեջ, ինչպես շրջանում, Արցախում, այնպես էլ արտերկրուտ։ Բազում են նրանք՝ ընտրյալները, արժանավորները, գիտական բարձր կոչումներով, մրցանակներով, շքանշաններով ու մելաններով, պատվորերով, երկրի և սերունդների հիշողության մեջ ապրելու սխրանքով, իրավունքով։ Սի քանի ընտրյալների անուններ գրքում տեղ գտած շքեղ աստղաբույլից, տաղանդների և հանճարների բնօրրան Դիզակ աշխարհից։ ԽՍՀՄ և ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ, քանդակագործ, ճարտարապետ, Արցախի Հանրապետության «Մենք ենք, մեր սարերը» խորիրանիշ - հուշակորոնի հեղինակ Սարգսի Բաղրամյանը (գ.Քանաձոր), ակադեմիկոսներ Սերգեյ Արքահմայանը (գ.Տումի), Էդուարդ Խաչյանը (գ.Առաքել), քանախրական գիտությունների դրկտոր պրոֆեսորներ Էդուարդ Սկրտչյանը (գ.Խնձորեսք), Սոկրատ Խանյանը (գ.Ակնարբյուր), Վարդան Հակոբյանը (ԼՂՀ օրիններգի հեղինակ) (գ.Արփագետիկ), Արքուր Սկրտչյանը ԱՀ Գերագույն խորիրիդի առաջին նախագահ (գ.Ուխտաձոր), բարերար «Ավորոր» բարեգործական հիմնադրամի համանախագահ Ռուբեն Վարդանյանը (գ.Քանաձոր), ավիացիայի մարշալ Արմենակ Խանիկերյանը (Խույլակով) (գ.Անձ Թաղեր), Ֆիզմար գիտությունների դրկտոր, պրոֆեսոր, Արցախի պետական համայստանի ռեկտոր (1996-2000թ.), Մոսկվայի Լոմոնտոսովի

անվան համալսարանի քննական կոմիտեի նախագահ Պավել Գևորգյանը՝ Դիզայնի արժանավորները, հարյուրավորների, գուցե հազարավորների է հասնում նրանց թիվը:

Պատմությունը, ժամանակը, մարդը, բնությունը այստեղ ներդաշնակորեն ծովել են իրար և զորավոր Դիզափայտից ու Քիրսից նեափի մայր Արար և Մուղանի դաշտավայր աստղածն տարածվող լեռնաշղթաների, կուսական անտառների, սառնորակ ու անմահական աղբյուրների, Խչխանագետի, Ընկուզագետի, Խզակի, Ցորագետի, Տողասարի, Սաղասարի, Սահմանասարի, Արևասարի հայացքի ներք, կենսատարածքներում դարերով ապրել արարել և գոյատևել են Դիզակի անկրկնելի 45 բնակավայրերը: Այնտեղ երբեք չի կարողացել բափանցել օտարը: Դիզակի տարածքը ամրակուտքերին, վաճերին, եկեղեցիների, պրբազայրերի մի հոգնոր ու պաշտպանական ամրողություն է: Դիզակը՝ Մեծ Հայրի Աղվանց բազավորության Արցախ նահանգի 12-րդ գավառը, մշտակիս բախտածների մեջ լինելով օտար նվազողների հետ, կարողացել է անաղարտ պահել իր հայեցի կերպարը, գենետիկ կողը և դիմագիծը: Դիզակը այսօր օտարված է Արցախից և մայր Հայաստանից: Հաղորդի ավելի քան մեկուկես տասնյակ հազարավոր հայությունը դարձել է տարագիր: Հարյուր հազարավոր հաղորդեցիներ կորցրել են իրենց պատմական հայրենիքը: Պատմությունը պիտի սրբագրվի: ԽՍՀՄ ժողովրդական դերասան Վ. Փափազյանը մի առիթով ասել է. «Եթե Ղարաբաղը ուկե մատանի է, ապա Հաղորդը նրա աղամանդյա ակն է»: Ակը պիտի կրկին փայլատակի ուկե մատանու վրա: Եվ այդ փայլը ժամանակի ընթացքի մեջ պիտի լինի հավերժական: Հոսանք, հավատանը և սպասենք:

Ч. РЕШИДІ

ՆԱԽԱԲԱՆԻ Ը

ՎԱՐԱՐԱԿԻ ՓՈԽՎՐԵՆ

Հարգելի՝ ընթերցող, դուք ընթերցում եք «Արցախի անվանի գործիշներ» շարքի երրորդ գիրքը՝ նվիրված Հայութիքի շրջանին: Արցախի յուրաքանչյուր շրջանի, նրա կազմում ընդգրկված գյուղերում բնակվող հասարակության անցյալը, ներկան և առավել ևս պապան միահյուսված են իրարով: Դա այն ուժն է, որը պահպանել է և պիտի շարունակի պահպանել Արցախի ամբողջականությունը: Հայութիքի շրջանը (պատմական Դիզակը) բնակեցված էր դեռ խոր անցյալում՝ մ.թ.ա. առաջին հազարամյակում: Դիզակը հայ ժողովրդի կազմավորման վայրերից մեկն է: Նրան իրավամբ կարելի է համարել Արցախի հայության ազգագրական քանօքարան:

Արցախի ամեն մի շրջան, բնակավայր յուրահատող է իր պատմությամբ, ավանդույթով, պատմամշակութային արժեքներով, ստեղծարար մարդկանցով։ Ծնվելով Երկրամասում, արարել են, շենացրել են Երկրամասը՝ զարմացնելով աշխարհին։ Մի շարք անվանի մարդիկ ծնվել են այլ վայրերում, Արցախից դուրս, դիզակցու ընտանիքում։ Նրանց համար նույնպես պարծանք է, որ իրենց նախնիները Դիզակից են, իրավամբ իրենք էլ համարվել են դիզակից։

Այստեղով են անցել հայոց ազգային-ազատագրական պայքարի ամենաքիչ մարտերը: Պատմական Դիզակը՝ այսօրվա Հաղորդի շրջանը, հայրենիքն է Եսայի Արու Սուստ Առանշահիկի (9-րդ դ.), Սելիք Եզանի և Եսայի (18-րդ դ.), Թևան Ստեփանյանի և Արլան Մուրադյանյանի (20-րդ դ.), Արմենակ Խանփերյանից (Խուլյակով) (20-րդ դ. 40-ական թթ.), Արքուր Սկրտչյանի (20-րդ դ. 90-ական թթ.): Այստեղ է ապրել և արարել մինչև իր կյանքի վերջը Խորհրդային Միուրյան հերոս Աշոտ Կասպարովին:

Հաղորդիք շրջանը հարուստ է ոչ միայն իր պատմական անցյալով, այլ նաև իր տաղանդավոր արարող ժողովրդով: Շրջանը աշխարհին բաց ճակատով նայելու շատ հիմքեր ունի: Կրթությունը, գիտությունը և մշակույթը կարևոր դեր ունեցած շրջանի երիտասարդության համար՝ ապագան կերտելու գործում: «Գնացե՛ք, ստվորե՛ք, մենք տունը, տնտեսությունը կապահենք», -ասում էին մեր ծնողները որդիներին, իիշում է քնիկ տունեցի անվանի ուսուցիչ Խորեն Ղազարյանը: Որ շրջանը տվել է բազում գիտության, մշակույթի և արտադրության նվիրյալներ, դրա վկայությունն է: Այսօր Հաղորդիք շրջանը տեղահանված է, բայց հաղորդեցին չի կորցնում իր հոյսը՝ հայրենիք վերադառնալու ակնկալիքով:

Ա. ԳԱՂԱՅԻ

## ԱՆՎԱՆԱԿԱՌՆ ՑԱՆԿ

Արայան Ալեքսանդր Մելքոնի	17
Աքրահամյան Անահիտ Սերգեյի	17
Աքրահամյան Անդրամիկ Ծափաղարի	18
Աքրահամյան Աշոտ Սերգեյի	19
Աքրահամյան Արմեն Արտաշեսի	19
Աքրահամյան Արմեն Անդրամիկի	19
Աքրահամյան Արմեն Արտաշեսի	20
Աքրահամյան Բրուն Մարատի	21
Աքրահամյան Երվանդ Վահայի	21
Աքրահամյան Էմիլ Սամվելի	22
Աքրահամյան Էրիկ Սամվելի	23
Աքրահամյան Լիանա Ռուդիկի	23
Աքրահամյան Լյուբլեն Սմբատի	24
Աքրահամյան Կարեն Անդրանիկի	24
Աքրահամյան Ներսես Նիկոլայի	25
Աքրահամյան Սամվել Գյանջումի	26
Աքրահամյան Սերգեյ Գյանջումի	27
Աքրահամյան Սմբատ Բրունոյի	28
Աքրահամյան Սմբատ Գյանջումի	28
Աղամյան Նոնա Յուրիկի	29
Աթայան Արմեն Արշակի	29
Աթայան Արշակ Գևորգի	30
Աթայան Եղիշե Լևոնի	31
Աթայան Ռաֆայել Արշակի	32
Աթայան Ռոբերտ Արշակի	32
Ալավերդյան Գեղրդի Աղալումի	33
Ալավերդյան Յուրի Դավիթի	34
Ալեքսանյան Ալեքսան Գարեգինի	34
Ալբունյան Ռուդիկ Սեղմակի	35
Ալբունյան Օյա Ռաֆիկի	36
Ահարոնյան Ալեքսանդր Սեմյոնի	36
Աղաբեկյան Արքուր Ալեքսանդրի	37

Աղաջանյան Ալեքսանդր Մարգարի	38
Աղաջանյան Սուրեն Իվանի	38
Աղաջանյան Կամն Արզարի	39
Ամիրյան Վահան Հրամտի	40
Ամիրյան Սեյրան Գրիգորի	40
Ամիրջանյան Ալիյա Արտաշեսի	41
Ամիրջանյան Արքուր Արտաշեսի	42
Ամիրջանյան Արմեն Հայասերի	42
Ամիրջանյան Արսեն Արտաշեսի	43
Ամիրջանյան Արտաշես Իրարի	43
Ամիրջանյան Գագիկ Երվանդի	44
Ամիրջանյան Երվանդ Սամսոնի	45
Ամիրջանյան Թեմուր Իրարի	45
Ամիրջանյան Լիլիթ Հրամտի	46
Ամիրջանյան Հրանտ Իրարի	47
Ամիրջանյան Յուրիկ Սամսոնի	47
Ամիրջանյան Սամվել Հրանտի	48
Ամիրջանյան Սերգեյ Սամսոնի	49
Ամիրջանյան Սուսաննա Հրանտի	49
Ամիրջանյան Վահագն Երեմի	50
Այվազյան Գրիշա Մեխակի	51
Այվազյան Հենրիկ Սուրենի	51
Աշոտ Գրաչի	52
Ասարով Էդուարդ Արտաշեսի	52
Ասադով Յուրի Անդրեյի	53
Ավանյան Ալեքսանդր Ստեփանի	54
Ասրյան Միքայել Արայի	55
Ասրյան Սլավիկ Արմիկի	56
Ավագյան Արարատ Հրանտի	57
Ավագյան Արտավազդ Մեսրոպի	57
Ավագյան Բաղրամար Հայրապետի	58
Ավագյան Բորիս Համբարձումի	58
Ավագյան Համբարձում Հակոբի	59
Ավագյան Ռոբերտ Թեմուրի	59
Ավագյան Սերգեյ Եփրեմի	60
Ավագյան և Թարխան Յուզբաշի եղբայրներ	61

---

Ավանեսյան Իվան Խորենի	մասը մասը	61
Ավանեսյան Կարեն Գարեգինի	մասը մասը	62
Ավանեսյան Միքայել Հայրապետի	մասը մասը	63
Ավանեսյան Ռաֆիկ Վանյայի	մասը մասը	63
Ավանեսյան Վաղիմ Սերգեյի	մասը մասը	64
Ավետիսյան Թամարա Կոնստանտինի	մասը մասը	64
Ավետիսյան Հրաշիկ Արտաշեսի	մասը մասը	65
Արզումանյան Թեմոր Սեսրոպի	մասը մասը	66
Արզումանյան Հրաչյա Վաղարշակի	մասը մասը	66
Արզումանյան Ռոբերտ Անդրանիկի	մասը մասը	67
Արզումանյան Սոս Ռուբենի	մասը մասը	68
Բարայան Ալեքսանդր Միքայելի	մասը մասը	68
Բարայան Արմեն Սլավիկի	մասը մասը	69
Բարայան Համլետ Հովսեփի	մասը մասը	70
Բարայան Համո Հովսեփի	մասը մասը	70
Բարայան Հենրիկ Հովսեփի	մասը մասը	71
Բարայան Ղարիբ Միքայելի	մասը մասը	72
Բարայան Սամսոն Բարաջանի	մասը մասը	72
Բարայանց Մարիա Սարգսի	մասը մասը	73
Բարդայան Աշոտ Լևոնի	մասը մասը	73
Բարդայան Գորգեն Խաչիկի	մասը մասը	74
Բարդայան Նիկոլայ Սամսոնի	մասը մասը	74
Բարդայան Գայլա Արտեմի	մասը մասը	75
Բարդայան Վահան Միքայելի	մասը մասը	76
Բարձրայան Վահան Միքայելի	մասը մասը	76
Բարձրայան Բենիկ (Կամո) Եղիշեի	մասը մասը	77
Բարձրայան Ջնարիկ Բողդանի	մասը մասը	78
Բարձրայան Աշոտ Անդրեյի	մասը մասը	78
Բարյան Միքայել Սուրենի	մասը մասը	79
Բախչյան Սալվիկ Սուրենի	մասը մասը	79
Բակունց Հենրիկ Հովսեփի	մասը մասը	80
Բաղդասարյան Ալեքսանդր Սերգեյի	մասը մասը	81
Բաղդասարյան Բորիս Խավանի	մասը մասը	81
Բաղդասարյան Թամարա Մակարի	մասը մասը	82
Բաղդասարյան Խորեն Սիմոնի	մասը մասը	82
Բաղդասարյան Հրանտ Ռոբերտ	մասը մասը	83

---

Բաղդասարյան Մեսրոպ Սիմոնի	մասը մասը	84
Բաղդասարյան Սարգիս (Սերգեյ) Խվանի	մասը մասը	84
Բաղդասարյան Սերգեյ Սամսոնի	մասը մասը	85
Բաղդասարյան Սուրեն Սեմյոնի	մասը մասը	86
Բաղդասարով Արշավիր Գրիգորի	մասը մասը	87
Բաղդասարով Միքայել Աշոտի	մասը մասը	87
Բաղդասարով Միքայել Խվանի	մասը մասը	88
Բայյան Գրիշա Լևոնի	մասը մասը	89
Բաղունց Հովսեփի	մասը մասը	90
Բարիսուղարյան Արմեն Վլադիմիրի	մասը մասը	90
Բեգլարյան Ժաննա Ռաֆիկի	մասը մասը	91
Բեգլարյան Վոլոյյա Թեգլարի	մասը մասը	92
Գասպարյան (Կասպարով) Աշոտ Զոմշոսի	մասը մասը	93
Գասպարյան Արմեն Հենոյի	մասը մասը	94
Գասպարյան Էդուարդ Սուրենի	մասը մասը	94
Գասպարյան Հենրիկ Մովսեսի	մասը (մասը) առաջաւած	95
Գասպարյան Ռուզան (Ռուզան) Եղիշեի	մասը մասը	96
Գյուիշանյան Վալերիկ Գորգենի	մասը մասը	97
Գյուիշանյան Գորգեն Բարայի	(մասը) մասը	97
Գրիգորյան Անատոլի Սարգսի	մասը մասը	98
Գրիգորյան Գարեգին Պետրոսի	մասը մասը	99
Գրիգորյան Գրիգորի Գարեգինի	մասը մասը	100
Գրիգորյան Երվանդ Գերասիմի	մասը մասը	101
Գրիգորյան Սամվել Սամվելի	մասը մասը	101
Գրիգորյան Վալերի Ներսեսի	մասը մասը	102
Գրիգորյան Վարդան Վալերիի	մասը մասը	103
Գրիգորյան Վիգեն Սամվելի	մասը մասը	104
Գրիգորյան Վալեհիմիր Ռուբենի	մասը մասը	104
Գորջիյանց Նիկոլայ Գեորգիի	մասը մասը	105
Գևորգյան Լյովա Սամվելի	մասը մասը	106
Գևորգյան Պավել Սամվելի	մասը մասը	106
Դանիելյան Լևոն Արամի	մասը մասը	107
Դանիելյան Մարտիմ Ավանեսի	մասը մասը	108
Դավթյան Գեորգի Խաչատորի	մասը մասը	108
Դավթյան Բահատոր Լևոնի	մասը մասը	109
Դավիթյան Արամ Լեների	մասը մասը	110

Դավիդով Բորիս Արկադիի	111
Եգանյան Ալեքսան Սելիքսերի	111
Եգանյան Գագիկ Կիմի	112
Եգանյան Կիմ Երեմի	113
Եգանյան Միքայել Նիկոլայի	113
Եղյան Գրիգոր Եղիի	114
Եղյան Սամվել Եղիի	114
Եղյան Սերգեյ Թևանի	115
Զայխնյան Էլյազ Ասրիի	115
Զախարյան Արամ Գրիգորի	115
Զախարյան Մայիս Արամի	116
Զաքարյան Արտակ Գրիգորի	117
Զաքարյան Վալերի Բոգդանի	117
Զուրարով Գերասիմ Գերասիմի	118
Թահրով Վլադիմիր Քրիստոփորի	119
Թումանյան Սոֆիա (Սրբուհի) Յակովի	120
Ժամհարյան Գայրիկ Գրիգորի	121
Ժամհարյան Միքայել Բախչիի	121
Իշխան Եսայի (Արու-Մուսե)	122
Իշխան Վելիջան	122
Իշխանյան Վյաչեսլավ Սերգեյի	123
Լալայան Արտեմ Բոգդանի	124
Խանյան Սոկրատ Աղալյարի	125
Խանյան Համլետ Սոկրատի	126
Խանյան Կարեն Սոկրատի	127
Խանիկյան Արմենակ Արտեմի	128
Խաչատրյան Ալեքսանդր Արտեմի	129
Խաչատրյան Արմեն Մովսեսի	129
Խաչատրյան Խաչիկ Մարդիկի	130
Խաչատրյան Հարություն Երվանդի	131
Խաչատրյան Միհրան Մովսեսի	131
Խաչատրյան Մովսես Մարտիրոսի	132
Խաչատրյան Պետրոս Խաչատրյի	133
Խաչիյան Ալեքսեյ Սերգեյի	133
Խաչիյան Էդուարդ Եփրեմի	134

Խաչյան Միքայել Խշանի	135
Խասապետյան Արքիլիկ Ռուբենի	136
Խասապետյան Ռայա Ռուբենի	136
Կաֆյան Ժնենա Չամիրի	137
Կաֆյան Մանվել Հարությունի	137
Կոնստանյան Առաքել	138
Հակոբյան Արամայիս Հովհաննեսի	138
Հակոբյան Արկադիա Սուրենի	139
Հակոբյան Արմեն Վաղիմիրի	139
Հակոբյան Արմենակ Հովհաննեսի	140
Հակոբյան Արշակ Հայրապետի	141
Հակոբյան Դավիթ Եղիկի	142
Հակոբյան Էդուարդ Զավենի	142
Հակոբյան Լեռնիկ Մանվելի	143
Հակոբյան Հանլետ Բագեի	144
Հակոբյան Սուրեն Խշանի	144
Հակոբյան Վարդան (Սլավիկ) Սարգսի	145
Համբարձումյան Եղիշե Առատամի	145
Համբածումյան Միքայել Բահատորի	146
Հայրապետյան Արծվիկ Միքայելի	147
Հայրապետյան Էդուարդ Քրիստափորի	148
Հայրապետյան Ռոբերտ Քրիստափորի	149
Հայրապետյան Ռուդիկ	149
Հայրապետյան Սեղրակ Պետրոսի	150
Հայրապետյանց Էրվանդ Չամիրի	151
Հայրյան Արմեն Թևանի	151
Հայրյան Լևոն Արտաշեսի	152
Հայրիյան Էռնա Վաղիմիրի	153
Հովհաննիսյան Արտ	153
Հովհաննիսյան Հովհաննես Ալեքսանի	154
Հովհաննիսյան Մարգո Հակոբի	154
Հովսեփյան Եփրեմ Խվանի	155
Հովսեփյան Խորեն Ալեքսանդրի	156
Հովսեփյան Միքայել Սիսնի	157
Հովսեփյան Վաղիմիր Թևոսի	157
Հոսուումյան Ալեքսանդր Թենիշամինի	158

---

Ղազանչյան Սեդա Միքայելի	159
Ղազարյան Աշոտ Սերժիկի	159
Ղազարյան Արշալույս	160
Ղազարյան Խորեն Խահակի	161
Ղազարյան Ռոբերտ Մեխակի	162
Ղազարյան Ռոման Առուշանի	162
Ղահրամանյան Երվանդ Ավետիսի	163
Ղահրիյան Արտաշես Շատորիի	164
Ղարուչյան Ալեքսանդր Ռուբենի	164
Ղույսն Մարինետա Սուրենի	165
Ղույսն Ռազմիկ Սուրենի	165
Ղույսն Զույա Սուրենի	166
Ղույսն Սվետլանա Սուրենի	166
Ղուկասյան Սերժիկ Արտաշի	167
Մադոնց Յուրի Պավելի	168
Մայիլյան Լյուրա Ռաֆիկի	168
Մայլսյան Ռաֆիկ Ազագիմի	169
Մանվելյան Միքայել Ավանեսի	169
Մարդանյան Գրիշա Լազրի	170
Մելիք Եղան	170
Մելիք Եսայի	171
Մելիքյան Ալեքսանդր Նիկոլայի	172
Մելիքյան Հայկ Ավետիքի	173
Մելքոնյան Ասատոր Բախչիի	173
Մելքոնյան Արտեմ Բոգդանի	174
Մելքոնյան Գյուլի Բախչիի	174
Մելքոնյան Գորգեն Ալահվերդիի	175
Մելքոնյան Փառանձեն Բախչիի	175
Մելքոնյան Վիկոնտ Արտեմի	176
Միրզախանյան Էդիկ Արսենի	176
Միրզախանյան Նարինե Էդիկի	177
Միրզախանյան Ռուզաննա Էդիկի	177
Միրզոյան Նիկոլայ Ալեքսանդրի	178
Միրզոյան Սերգեյ Ալեքսեյի	179
Մկրտչյան Արքուր Ապանի	179
Մկրտչյան Էդուարդ Սամսոնի	180

---

Մկրտչյան Շահեն Մակիչի	181
Մովսիսյան Անդրեյ Մուշեղի	182
Մովսիսյան Զավեն Մուշեղի	183
Մուրադյան Իգոր Մարտի	183
Մուրադյան Միքայել Արտեմի	184
Մուրադյան Վիկտոր Ապանի	185
Մուրադյանյան Ավան Մերգոյի	186
Նավասարդյան Արտեմ Վլադիմիրի	186
Նավասարդյան Էրիկ Վլադիմիրի	187
Նարինյան Գևորգի Արամի	187
Ներսեսյան Արմեն Պետրոսի	188
Ներսիսյան Պյոտր Ներսեսի	188
Ներսիսյան Սուսաննա Գորգենի	189
Շայյան Աճատովի Վաշիկի	190
Շայյան Բոգդան Մակարի	190
Շայյան Հայկ Վլադիմիրի	191
Շայյան Ռուբեն Սարուխանի	191
Շայոնց Հայկ Ավագի	192
Շաղնինց Սուրեն Կոստանդինի	193
Շահմուրայյան Հրաչյակ Տիգրանի	193
Շահմուրայյան Մարտին Տիգրանի	194
Շահմուրադյան Յուրի Ավանեսի	194
Շահնազարյան Ավան Միքայելի	195
Շահնազարյան Մաղղեն Հայրումի	196
Շամիրյան Արթոր Արմենի	197
Շաքարյան Սերգեյ Սլավիկի	198
Չաքմազյան Սամվել Լևոնի	198
Չոփշյան Եղիշե Սիմոնի	199
Պետրոսյան Էդուարդ Ռուբենի	200
Պետրոսյան Վիկտոր Էդուարդի	200
Պետրոսյան Վլադիմիր Արշակի	201
Պետրոսյան Հովհաննես	202
Պողոսյան Ալեքսանդր	202
Պողոսյան Արտաշես Ալեքսանդրի	203
Պողոսյան Միքայել Ավանի	203
Պողոսյան Վիկտորիկ Գրիգորի	204

Զանյան Բոգդան Շամիրի	205
Սահակյան Բակո Սահակի	206
Սահակյան Արտավազդ Ալեքսանդրի	207
Սարգսյան Արմեն Յուրիի	207
Սարգսյան Գորգեն Լևոնի	208
Սարգսյան Հայկ Ալանի	209
Սարգսյան Հայկ Նուրասանի	209
Սարգսյան Մանվել Արմավիրի	210
Սարգսյան Սարիբեկ (Սար) Եղուարդի	211
Սարգսյան Սարգիս Ռուբիի	211
Սարգսյան Սերժ Սեդրակի	212
Սարդարով Սերգեյ Արշակի	213
Սաֆարյան Գրիգորի Ասծատորի	214
Սաֆարյան Էդուարդ Գրիգորի	214
Սաֆարյան Նիկոլայ Սահակի	215
Սաֆարյան Սամվել Վագիմիրի	215
Սաֆարով Եփրեմ Զումշուրի	216
Սևյան Աշոտ Մոլիսանի	216
Ստեփանյան Գորգեն Ներսեսի	217
Ստեփանյան Թևան Աղաջանի	217
Ստեփանյան Սուրեն Ավանեսի	219
Վահյան Արփի Յուրիի	219
Վարդանյան Արմեն Հունանի	220
Վարդանյան Արմենակ Միսիքարի	221
Վարդանյան Սելիք Ենորի	221
Վարդանյան Ռուբեն Կառլենի	222
Վարդանյան Վախթանգ Արմենակի	223
Ուլոնց Մովսես Սիրզայի	224
Ուռումյան Սերգեյ Ալեքսանդրի	224
Փարյան Կարինե Էդուարդի	225
Փիլիպոս Տումեցի	226
Օհանյան Արմեն Հրանտի	226
Օհանյան Հովհաննես Գրիգորի	227

## ԱՐԱՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԵԼքՈՆԻ

(1905-1982)

Ալեքսանդր Մելքոնի Արայան (ծնվ.՝ 1905, գ. Էղիլլո, Ուխտաձոր - մահ.՝ 1982, գ. Էղիլլո), խաղողագործ, Սոցիալիստական աշխատանքի հերոս (1950):

Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Կովկաս է 89-րդ Թաճանյան Հրածգային դիվիզիայի 390-րդ Սևաստոպոլյան հրածգային զնուրում: Աշխատանքային գործունեությունը սկսել է Հաղորդի շրջանի Ղասումյանի անվան կոլտնտեսությունում: 1975թ. եղել է «Բարեկամություն» խաղողագործական սովորությունում:

1949թ. ստացել է 116,8g քերք՝ 3,1 հա խաղողայգուց: Կիրառել է գիտական մեթոդներ՝ ստանալով բարձր քերքի տեսակներ: ԽՍՀՄ գերազանց խորհրդի որոշմամբ 1950թ. արժանացել է Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչման պարգևատրվելով «Մուրճ և մանգադ» ուսկե մեդալով, Լենինի շքանշանով: Ակտիվորեն մասնակցել է ԼՂԻՄ հասարակական կյանքին:




## ԱՐԱԿԱՆՅԱՆ ԱՆԱՀԻՏ ՄԵՐԳԵՅԻ

(1952)

Անահիտ Մերգեյի Արքահամյան (ծնվ.՝ 1952, Երևան Ս. Արքահամյանի ընտանիքում), դոցենտ:

1970թ. ուսկե մեդալով ավարտել է Երևանի թիվ 118 միջնակարգ դպրոցը: 1975թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի Վ. Բերյուսովի անվան ուսուար և օտար լեզուների պետական ինստիտուտը: 1975-1995թթ. աշխատել է որպես Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի օտար լեզուների ամբիոնի դասախոս: 1984թ. սովորել է Լոնդոնի իլինգ քոլեջի լեզուների ուսումնասիրության բարձրագույն դպրոցում: 1995-2010թթ. եղել է ԵՊՀ անգլերենի թիվ 2 ամբիոնի ասիստենտ: 2010թ.-ից աշխատել է որպես ԵՊՀ Դիվանագիտական ծառայության և մասնագիտական հաղորդակցման ամբիոնի դոցենտ, անգլերենի սեկցիայի վարիչ,



2000-2013թք.՝ ընդունելության քննությունների անգլերենի (բանավոր և գրավոր) հանձնաժողովների անդամ, 2007-2013թք.՝ ԵՊՀ հեռակա ուսուցման բաժնի անգլերենի բանավոր քննության հանձնաժողովի նախագահ, 2007-2009թք.՝ ԵՊՀ օտարերկրյա քաղաքացիների համար նախապատրաստական ֆակուլտետի անգլերենի քննության հանձնաժողովի նախագահ: 2008թ. ընդգրկվել է հանրակրթական դպրոցների դասազրերի և ուսուցչի ծերուարկների մրցույթի առարկայական հանձնաժողովի անդամ:



### **ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՆԴՐԱԿԻԿ ԸՓԱՎԴԱԹԻ** (1933-2017)



Անդրանիկ Ծափաղարի Աբրահամյան (ծնվ.՝ 1933, գ.Արփագետիկ - մահ.՝ 2017, ք.Հայրուր), 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ:

Ավարտել է հայրենի գյուղի յորբայա դպրոցը և ուսումը շարունակել հարևան Հին Թաղերի միջնակարգ դպրոցում: 1952թ. ընդունվել է Ստեփանակերտի երկանյա ուսուցչական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժնին: Ինստիտուտն ավարտելու 1954թ. աշխատանքի է անցել Հայրուրի շրջանի Արևշատի դպրոցում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: 1954-1957թք. ծառայել է ԽՍՀՄ պաշտպանության բանակի շարքերում: Զորացրվելուց հետո դասավանել է Արևշատ (Դղնանլար), Արփագետիկ, Խոճաբերդ և Պետրոսաշեն գյուղերում և հեռակա կարգով ավարտել Խ.Արուվյանի անվան մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժնը: Երկար տարիներ աշխատել է կուսակցության Հայրուրի շրջկոմում որպես հրահանգիչ և կազմակերպիչ: 1973-1981թք. եղել է Հայրուրի շրջանային ժողովրության բաժնի վարիչը: 1981-1987թք. աշխատել է որպես շրջանային ուսումնական հայորդումների կազմակերպիչ, խմբագիր: Իր գործունեության տարիներին բազմաթիվ անգամներ հանդես է եկել հանրապետական և շրջանային ուսուցչական կոնֆերանսներում, խորհրդակցություններում: Մանկավարժական անբարար աշխատանքի համար արժանացել է «Հանրապետության լուսավորության աշխատողների գերազանցիկ» կրծքանշանի:



### **ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՇՈՏ ՍԵՐԳԵՅԻ** (1954-2022)

Աշոտ Սերգեյի Աբրահամյան (ծնվ.՝ 1954, գ.Տումի, ակաղյեմիկոս Ս.Աբրահամյանի որդին, մահ.՝ 2022, ք. Երևան), բանասիրական գիտությունների թեկնածու (1980):


1976թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, 1980թ.՝ Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ասպիրանտուրան: 1976թ. դասավանդել է Երևանի Վ. Բերյուտի անվան ուսուց և օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտում: Աշխատել է Հայաստանի գրասերների ընկերությունում, Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում: 1990թ.-ից աշխատում է համալսարանում, ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ է: Հեղինակել է մենագրություն, դասագիրք, մի շարք գիտական հոդվածներ:



### **ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՄՐՄԵԼ ԱՆԴՐԱԿԻԿ** (1959)



Արմեն Անդրանիկի Աբրահամյան (ծնվ.՝ 1959, գ.Արփագետիկ), գեներալ-մայոր: 1984թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը: 1984-1988թք. աշխատել է Արմավիրում (Ռուսաստանի Կրասնորդի երկրամաս)՝ որպես շինարար: 1988թ. վերադարձել է Ղարաբաղ: Մասնակցել է ԼՂՀ նորաստեղծ բանակի կազմավորմանը: 1988թ.-ից մասնակցել է Հայրության կամավորական ջոկատների ստեղծմանը, եղել գնդի շտաբի պետ: 1988-1994թք. մասնակցել է ԼՂՀ Հայրությի, Մարտակերտի, Վարանդայի, Ջրականի, Քարվաճառի և այլ շրջանների ինքնապաշտպանական և ազատավարական մարտերին: Մեծ ներդրում ունի սահմանապահ գործերի ստեղծման գործում: 1991-1997թ. ծառայել է ՀՀ պաշտպանության նախարարության տարբեր ստորաբաժնությունում: 1997-2004թք. նշանակվել է սահմանապահ գորամասի հրամանատար, 1998թ.՝ ԼՂՀ ՊԲ գնդապետ:



2004-2005թթ. եղել է բանակային կորպուսի հրամանատարի տեղակալ: 2005թ. ավարտել է ՌԴ Պաշտպանության նախարարության համագործական ակադեմիան: 2005-2018թթ. գրադեցրել է ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերի հրամանատարի պաշտոնը: 2020թ. կարճ ժամանակ եղել է ԼՂՀ ԱԱԾ պետի առաջին տեղակալ: Պարզեւատրվել է ԼՂՀ «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանով, «Արփորյան համար» մեդալով:



## ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԱՐՄԵՆ ԱՐՏԱՇԵՍԻ (1959)

Արմեն Արտաշեսի Աբրահամյան (ծնվ.՝ 1959, գ.Տումի), գնդապետ:

1966-1976թթ. սովորել է Հայրուրի Մ.Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցում: 1977-1979թթ. ծառայել է ԽՍՀՄ բանակում: 1980- 1987թթ. սովորել և ավարտել է Երևանի Կ.Մարքսի անվան Պոլիտեխնիկական ինստիտուտի մերենաշինության ֆակուլտետը: 1987թ. ընդունվել է Հայրուրի շրջանի «Ազրո-Արդ» միավորում՝ որպես անվտանգության գծով իմանալիք: 1988-1991թթ. եղել է Արցախյան շարժման, ջոկատների ստեղծման մասնակից: 1991թ. մայիսի 1-ից մինչև 1992թ. սեպտեմբերի 1-ը Հայրուրի Պաշտպանական շրջանի ջոկատների, 1992թ. սեպտեմբերի 1-ից մինչև 1994թ. մայիսի 15-ը՝ 1-ին ՊԾ կազմում մասնակցել է ԼՂՀ սահմանների պաշտպանության համար մղվող, այդ քիում՝ Վարանդայի շրջանի, Զրականի, Կովսականի, Միջնավանի, Սանասարի, 1994թ. հունվարին՝ ամիսներին՝ Քարվաճանի Օմար լեռնանցքի ազատազրման մարտերին: 1994թ. հունիս - 1997թ. մայիս ամիսներին հանդիսացել է Հայրուրի 1-ին ՊԾ 5-րդ գումարտակի շտաբի պետ: 1997թ. մայիսին նշանակվել է 1-ին ԱԱԾ Սահմանապահ զորքերի 2-րդ սահմանապահ ջոկատի սպառագինության պետ, 1999թ.՝ պարետատան պարետ: 2004թ. նշանակվել է ՀՀ ԱԱԾ 5070 զորամասի հրամանատարի ժամանակավոր պաշտոնակատար: 2004-2016թթ. եղել է նոյն զորամասի հրամանատար: 2016թ. անցել է զինվորական բռշակի: Արժանացել է մի շաք կառավարական և զինվորական պարգևների: 2017թ. նշանակվել է «Դիմիջան Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրին:




## ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԲՐՈՒՆԻ ՍՄբատի (1936-1997)

Բրուն Սմբատի Աբրահամյան (ծնվ.՝ 1936, գ.Ֆոր - մահ.՝ 1997, Թումիս), ԽՍՀՄ սպորտի պատվավոր վարպետ, Թուրքմենական ԽՍՀ վաստակավոր մարզիչ, ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ:

Ընտանիքի հետ 1940-ական թվականների վերջին տեղափոխվել է Միջնին Ասիա: Զրադվել է ծանրամարտով, ապա դարձել ծանրամարտի մարզիչ: ԽՍՀՄ-ում ստեղծել է յուրօրինակ համակարգ՝

երկրի ամենահեռավոր անկյուններից երեխանների՝ սպորտում ընտրության և ներգրավման համար: Նաև նշանակել է ծանրաձողը բարձրացնելու հատուկ տեխնիկա, որը լրջ զնահատականի է, արժանացել մասնագետների կողմից: Նրա աշակերտները միշտ առանձնանում են իրենց հատուկ տեխնիկայով: 1990թ.-ին ճանաչվել է ԽՍՀՄ լավագույն մարզիչ: Տվել է սպորտի 105 վարպետ, 1 համաշխարհային ունկորդակիր, 5 Եվրոպայի չեմպիոն, աշխարհի 3 չեմպիոն (նրանցից մեկը՝ Ալբիմորադ Օրազդուրդեսը, քառակի):




## ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԵՐՎԱՆԴ ՎԱՆՅԱՅԻ (1933)

Երվանդ Վանյայի Աբրահամյան (ծնվ.՝ 1933, գ.Տումի):

Ավարտել է հայրենի գյուղի դպրոցը և ընդունվել Երևանի գյուղատնտեսական ինստիտուտը: Աշխատանքային գործունեությունը սկսել է Տումու 26 կողմանական ջոկատի անվան կոլտնտեսությունում, ապա գործունեությունը շարունակել է Մեծ Թաղերի Խանկերյանցի անվան խաղողագործական սովորություն: Արցախյան ազատազրման շարժման սկզբից դարձել է Շարժման գաղափարական առաջնորդներից մեկը: Աշխատանքի թերությունը 1960-ական թթ. տեղափոխվել և ողջ գիտակցական կյանքը նվիրել է Մեծ Թաղեր գյուղին: Հեղինակել է «Մեծ Թաղեր» գիրքը:





## ԱՐԱԿԱՍՅԱՆ ՀՈՎՀԵՆ ՍԱՄՎԵԼԻ (1956-2020)

Էմիլ Սամվելի Արքահամյան (ծնվ.՝ 1956, ք.Հայրութ - մահ.՝ 2020, Երևան), գեղանկարիչ, հասարակական գործիչ:

1963-1973թ. սովորել է Հայրութի միջնակարգ դպրոցում: 1973թ. ընդունվել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի արդյունաբերական-քաղաքացիական շինարարական ֆակուլտետը: 1978թ. գորակոցվել է խորհրդային բանակ: 1983-1987թթ. Ստեփանակերտում, Գորիսում, Երևանում մասնակցել է Ակարչական ցուցահանդեսների: Եղել է 1988-1994թթ. Արցախյան ազգային-ազատագրական պայքարի ակտիվ գործիչներից, նախաձեռնել է Հայրութի շրջանի ինքնապաշտպանական ջոկատների ստեղծումը: 1990թ. ընտրվել է Ազգային խորհրդի անդամ: 1990-2002թթ. եղել է ՀՀԴ անդամ, 1988թ.-ից՝ «ԾԵՆ» բարեգործական հասարակական կազմակերպության անդամ, 2005թ.-ից՝ կազմակերպության վարչության անդամ: 1991թ. ընտրվել է ԼՂՀ առաջին գումարման ԳԽ պատգամավոր: Եղել է պաշտպանության և անվտանգության մշտական հանձնաժողովի անդամ:

Զքաղվել է գեղանկարչությամբ: 2001թ.-ից ապրել և ստեղծագործել է Երևան քաղաքում: Նրա 70-ից ավելի գեղանկարներ գտնվում էին Արցախի Հայրութի շրջանում՝ նկարչի արվեստանոցում, մասնավոր հավաքածուներում, ցուցարված էին Հայրութի Ա. Աղբաշյանի անվան հայրենագիտական թանգարանում: 2020թ. պատերազմի արդյունքում Հայրութի շրջանի բռնազարման հետևանքով, նշանակած կտավների ճակատագիրն անհայտ է, դրանցից միայն 30-ի լուսանկարներն են պահպանվել: 2021թ.՝ նկարչի մահից հետո, հրատարակվել է ստեղծագործությունների մի մասն ընդգրկող երկերու կատալոգ՝ նվիրված արվեստագետի ծննդյան 65-ամյակին: Կատալոգում ներկայացված են 1980-ական թվականներից մինչև վերջին շրջանի բնանկարներ, կոմպոզիցիաներ, քաղաքային բնապատկերներ, դիմանկարներ, արստրակցիա, նատյուրմորտ և «Անհայտ ճակատագրով» աշխատանքների լուսանկարներ:



## ԱՐԱԿԱՍՅԱՆ ԷՐԻԿ ՍԱՄՎԵԼԻ (1961-1994)

Էրիկ Սամվելի Արքահամյան (ծնվ.՝ 1961, գ.Տումի, ակադեմիկոս Ս. Արքահամյանի եղբոր որդին - մահ.՝ 1994, Հայրութ), «Մարտական խաչ» առաջին աստիճանի շքանշանակիր:

1978թ. ավարտել է Հայրութի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցը: Ծառայել է Խորհրդային բանակում: Ընդունվել է Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիան: 1989թ. ուսումը րողել է կիսատ վերադարձել Հայրութ և անդամագրվել ազգային ազատագրական շարժմանը: Մասնակցել է Հայրութի շրջանի պաշտպանական մարտերին, նետվել ամենաքեժ մարտական կետերը: Նա հատուկ ջոկատի հրամանատար էր, իսկ 1994թ. օպերատիվ ծառայության շտարի պետ:



## ԱՐԱԿԱՍՅԱՆ ԼԻԱՆԱ ՌՈՒԴԻԿԻ (1975)



Լիանա Ռուդիկի Արքահամյան (ծնվ.՝ 1975, գ.Տյար), ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու (2004), ԱրՊՀ դոցենտ (2008):

1982-1992թթ. սովորել և ավարտել է Հայրութի միջնակարգ դպրոցը: 1992թ. ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը, 1997թ.՝ ավարտել Արցախի պետական համալսարանը «Մարեմատիկա և ինֆորմատիկա» մասնագիտությամբ, ստանալով մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ուսուցչի որակավորում: 1997-2001թթ. եղել է Արցախի պետական համալսարանի բնագիտական ֆակուլտետի ամբիոնի ասպիրանտ: 1999-2001թթ. համատեղության կարգով դասավանդել է ԱրՊՀ մաթեմատիկայի ամբիոնում որպես փորձուույց: 2018թ. սեպտեմբերին նշանակվել է մաթեմատիկայի ամբիոնի վարիչի պաշտոնակատար:





## ԱՐՎԱԿԱՆՑԱՆ ԼՅՈՒԹԵՐՆ ՍՄԹԱՑԻ (1941)

Լյութեն Սմբատի Արքահամյան (ծնվ.՝ 1941, գ. Տումի), հասարակական գործիչ:

1947թ. ընտանիքի հետ տեղափոխվել է ՃՇ-  
կենտրոն Հայութք: 1948-1958թթ. ստորել է Հայ-  
ութքի միջնակարգ դպրոցում: 1963թ. ավարտել է  
Երևանի զյուղատնտեսական ինստիտուտը:

1963-1969թթ. աշխատել է Հարբուրի շրջխորհրդի գործկունում, 1969-1970թթ.՝ շրջկունում, որպես հրահանգիչ: 1972թ. ընդունվել և ավարտել է Բարձրի քարձրագույն կուսակցական դպրոցը: 1972-1978թթ. եղել է շրջկոմի կազմբաժնի վարիչ, կուսշրջկոմի երեխորդ քարտուղար: 1978թ. Կևորկովյան կադրային քաղաքականության զիներից է: Ազատվել է քարտուղարի պաշտոնից և նշանակվել զյուղվարչության գլխավոր զյուղատնտես: 1980-1985թթ. աշխատել է որպես Բանաձորի պետառնտեսության տնօրեն, 1986թ.՝ զյուղվարչությունում, գլխավոր զյուղատնտես: 2001-2007թթ. եղել է զյուղվարչության պետ: Պարզևատրվել է «Պատվո նշան» շքանշանով:



## ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ ԱՆԴՐԱՆԻԿԻ (1966)

Կարեն Անդրանիկի Աբրահամյան (ծնվ.՝ 1966, գ.Խոջաբերդ), ԱՀ ՊԲ հրամանատար (2018-2020), գեներալ-մայոր (2014):

1973-1984թ. սովորել է Հայդրոիդի Ս.Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցում: 1984թ. ընդունվել է Երևանի ժողովներական ինստիտուտի ֆինանսահաշվառման ֆակուլտետը: 1-ին կուրսն ավարտելուց հետո 1985-1987թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1990թ. ավարտել է ուսումը՝ տնտեսագետի որակավորմամբ: 1990-1992թթ. աշխատել է Հայդրոիդի շրջանի խնայքանկում:



որպես վարկավորման իրահանգիչ, զիսավոր հաշվապահ, այնուհետև նույն խնայքանիկի կառավարիչ:

1991թ. ակտիվորեն ներգրավվել է Հայրութի կամագորական ինքնապաշտպանական ուժերին, 1992թ. աշնանը, որպես շարքային, զինվորագրվել նոր կազմավորված Հայրութի պաշտպանական շրջանին: Այնուհետև նոյն զորամասում զբաղեցրել է դասակի, ապա՝ մարտկոցի հրամանատարի, հրետանու շտարի պետի, հրետանու պետի, իսկ 1996-1998թթ. պաշտպանական շրջանի շտարի պետ-հրամանատարի տեղակալ պաշտոնները: 1998թ. օգոստոսին ընդունվել է ՌԴ ԶՈՒ համագորային ակադեմիան և այն ավարտել գերազանցության դիպլոմով: 2001թ. նշանակվել է զորամասի շտարի պետ-հրամանատարի տեղակալ: 2003թ. դիկտենտերին նշանակվել է զորամասի հրամանատար: 2006թ. օգոստոսին նշանակվել է կորպուսի շտարի պետ-հրամանատարի տեղակալ: 2010-2011թթ. ստորել է ՌԴ ԶՈՒ Գլխավոր շտարի ակադեմիայում՝ այն ավարտելով ոսկե մեդալով: 2011թ. օգոստոսից մինչև 2015թ. նոյեմբեր զբաղեցրել է ՀՀ ԶՈՒ ինժեներական զորքերի պետ-վարչության պետի պաշտոնը: 2015թ. նոյեմբերին նշանակվել է բանակային կորպուսի հրամանատար: 2017թ. սեպտեմբերի 7-ին նշանակվել է ՊԲ հրամանատարի 1-ին տեղակալ-շտարի պետ: 2018-2020թթ. եղել է ԱՀ ՊԲ հրամանատար:



## ԱՐՎԱԿԱՆ ՆԵՐՍԵՍ ԴԻԿՈՒԱՅՆ (1920-2004)

Ներսէս Նիկոլայի Արքահամյան (ծնվ.՝ 1920, գ. Տումի - մահ.՝ 2004, գ. Տումի), 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ:

Նախնական կրթությունը ստանալուց հետո ընդունվել և ավարտել է Հայրութի մանկավարժական տեխնիկումը։ Անմիջապես աշխատանքի է անցել հայրենի գյուղի դպրոցում։ Ապա կրթությունը շարունակել է Երևանի պետհամալսարանի բանասիրական ֆակուլտետում։ Հայրենական մեծ պատերազմը սկսվելուց կիսատ է բռնել համալսարանական կրթությունը և մեկնել ուազմաճակատ։ Պատերազմի ավարտից հետո մանկավարժական աշխատանքի է ամցել



Տումու միջնակարգ դպրոցում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ, հեռակա կարգով շարունակելով ուսումը բուհում: Երեք տարի անց նշանակվել է Տումու միջնակարգ դպրոցի տնօրին: Մանկավարժական թեղմնավոր գործունեության համար արժանացել է Հանրապետության վաստակավոր ուսուցչի կոչման, բազմից խրախուսավել և պարգևատրվել պատվոգրերով: Մանկավարժական - մերողական և մասնագիտական հոդվածներ է տպագրել շրջանային և հանրապետական թերթերում:



## ԱՐՐԱՎԱՄՅԱՆ ՍՎԻԳԵԼ ԳՅԱՆՉՈՒՄԻ (1931-1991)

Սամվել Գյանջումի Արրահամյան (ծնվ.՝ 1931, գ.Տումի) (ականավոր լեզվաբան Սերգեյ Արրահամյանի կրտսեր եղբայրը), հասարակական գործիչ:

Ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: Ընդունվել և 1958թ. ավարտել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտը: Գործուղվել է Ստավրոսի երկրամաս՝ որպես գյուղատնտես: Այնուհետև աշխատել է Հաղորդում, ապա՝ նշանակվել Տումու կղղունտեսության նախագահ: 1968-1969թթ.՝ եղել է Հաղորդի շրջկենտրոնի կղղունտեսության նախագահ, 1973-1986թթ.՝ Մեծ թաղերի կղղունտեսության նախագահ, խաղողագործական սովորող տնօրին: 1991թ. կալանավորվել է որպես Արցախի ազատագրական պայքարի ակտիվ մասնակից: Պահվել է Շուշիի բերդում, ենթարկվել տանջանքների և խոշտանգումների: Որդին՝ Էրիկը և փեսան՝ Շահենը, ազատարտի նահատակներից են: Հետմահու պարզեատրվել է «Ախիքար Գոշ» մեդալով:




## ԱՐՐԱՎԱՄՅԱՆ ՍԵՐԳԵԼ ԳՅԱՆՉՈՒՄԻ (1925-2005)

Սերգեյ Գյանջումի Արրահամյան (ծնվ.՝ 1925, գ.Տումի - մահ.՝ 2005, Երևան), լեզվաբան, բանասիրական գիտությունների թեկնածու (1953), դոկտոր (1966), պրոֆեսոր (1970), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1996):

1942-1944թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: 1950թ. ավարտել է ԵՊՀ բանասիրական ֆակուլտետը: 1953-1959թթ. աշխատել է որպես ՀՀ ԳԱԱ Հրաշյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, 1959-1992թթ.՝ բաժնի փարիչ, 1967-1970թթ.՝ ՀԽՍՀ մանկավարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտի բաժնի փարիչ: Դասավանդել է Կիրովականի (1970-1971), Լենինականի Մ.Նալբանդյանի (1953-1958) և Երևանի Խ.Աբովյանի (1972-1992) անվան հայրանության մանկավարժական ինստիտուտներում: 1992թ.-ից եղել է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի խմբի ղեկավար:

Հիմնական աշխատությունները վերաբերում են արդի հայերենի կառուցվածքներ, ոճարանությանը, բառարանագրությանը, լեզվի ուսումնասիրման մեթոդաբանությանը, հայերենի կանոնարկման, լեզվաշինության, լեզվաբանաբանության, լեզվի ուսումնա իմնահարցերին: Կատարել է նաև բառարանագրական աշխատանք: Արժեքավոր ներդրում ունի հատկապես հայերենի խորի մասերի գիտական բնության, շարահյուսության առանցքային խնդիրների մշակման, դասագրքերի (ձեռնարկների) պատրաստման բնագավառներում: Գրել է գիտամեթոդական բնույթի բազմաթիվ հոդվածները: 2001թ. Ս.Արրահամյանի անունով է կոչվել ծննդավարի միջնակարգ դպրոցը:



## ԱՐԱԿԱՆՅԱՆ ՍՄԻԱ ԲՐՈՒՆՈՅԻ

(1985)

Սմբատ Բրունոյի Արքահամյան (ծնվ.՝ 1985, Աշխարհ, Թուրքմենստան)՝ արմատներով Ցոր գյուղից, ԽՍՀՄ սպորտի վարպետ Բրուն Արքահամյանի դուռըն, ծանրամարտիկ, բարերար:

Ընտանիքի հետ տեղափոխվել է Մոսկվա, որտեղ էլ կրթուրյուն է ստուգել: Հաճախել է սպորտային դպրոց, պարապել հումա-հոռմետական ոճի ըմբշամարտով: Ծանր քաշային կարգում դարձել է Թուրքմենստանի համբավետուրյան ծանրամարտի չեմպիոն (մի քանի տարի անընդմեջ), այնուհետև նաև՝ Եվրոպայի չեմպիոն: Թուրքմենստանի ծանրամարտի ֆեդերացիայի անդամ է, լավագույն մարզիչներից մեկը: Վերջին տարիներին հաճախ էր այցելել Արցախ և գ. Ցոր: Զրադարձում է զորագործությամբ: Բարեկարգել և նորացրել է պատրիկ ավերգած Ցորը, հիմնել խաղողի, նուան, խնձորի այգիներ: Ցորի անկումից հետո 100 հա խաղողի նոր այգիներ է հիմնադրել Ասկերանի շրջանում և աշխատում է Խաչենի տարածքում հիմնադրել նոր Ցոր գյուղը:



## ԱՐԱԿԱՆՅԱՆ ՍՄԻԱ ԳՅԱՆՉՈՒՄԻ

(1911-1987)

Սմբատ Գյանջումի Արքահամյան (ծնվ.՝ 1911, գ. Տումի - մահ.՝ 1987, Հայոցուր), 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ:

Նախնական կրթուրյունը ստացել է ծննդավայրում: 1925-1930 թթ. սովորել է Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումում: Ավարտելով տեխնիկումը՝ անցել է մանկավարժական աշխատանքի 1930-1935 թթ. աշխատել է Ռիստաձորի և Հայոցուրի դպրոցներում որպես քիմիայի և կենսաբանուրյան ուսուցիչ: 1935 թ. ընդունվել և 1939 թ. գերազանց դիպլոմով ավարտել է Ռյազանի մանկավարժական ինստիտուտը: 1939-1941 թթ. աշխատել է Հայոցուրի շրջանի կրթամարտում որպես տեսուչ: 1941-1942 թթ. եղել է Տոլի միջնակարգ դպրոցի ուսուցիչ:



Պողի ուսմավարը, 1942-1948 թթ.: Մեծ Թաղերի և Տումու միջնակարգ դպրոցների տնօրենը: 1948 թ. մինչև իր կյանքի վերջը՝ 1987 թ., եղել է Հայոցուրի միջնակարգ դպրոցի քիմիայի և կենսաբանուրյան մասնագետը: Մանկավարժության ասպարեզում ցուցաբերած գերազանց ծառայությունների համար արժանացել է «Համբավետուրյան ժողովրդական լուսավորության գերազանցիկ» կրծքանշանի, 1965 թ.: «Վաստակավոր ուսուցիչ» կոչման: Պարգևատրվել «Պատվո նշան» շքանշանով, մի շարք մեդալներով, հանրապետական և այլ պատվոգրերով:



## ԱԴԱՆՅԱՆ ՆՈՒԱ ՅՈՒՐԻԿԻ

(1966)

Նոնա Յուրիի Ադանյան (Սարգսյան) (ծնվ.՝ 1966, գ. Պետքանց), կենսաբանական գիտությունների թեկնածու (2000), դոցենտ:

Ավարտել է Հայոցուրի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցը: Ուսումը շարունակել է Երևանի պետական համալսարանի կենսաբանուրյան ֆակուլտետում և ավարտել գերազանցուրյան կարմիր դիպլոմով: Ուսումնառությունն ու գիտական գործունեությունը շարունակել է նոյն ֆակուլտետում: Մինչ այժմ դասախոսում է ԵՊՀ կենսաբանուրյան ֆակուլտետում: Հեղինակել է շուրջ 112 գիտական աշխատանք:



## ԱԹԱՅԱՆ ԱՐՄԵՆ ԱՐՃԱԿԻ

(1922-...)

Արմեն Արշակի Արայան (ծնվ.՝ 1922, Երևան, մեծքաղեցի բանաստեղծ, արձակագիր, բարգմանիչ, հասարակական գործիչ Արշակ Արայանի որդին), նկարիչ:

1941 թ. ավարտել է Երևանի գեղարվեստի ուսումնարանը, 1952 թ.՝ Երևանի գեղարվեստի ինս-

տիտուլը: 1954թ. ստեղծագործել է Կիևում, 1965թ.՝ Երևանում, դասավանդել ԵԳԻ-ում: 1941-1945թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին:

Հեղինակել է քննակարներ, դիմանկարներ և նատյուրմորտներ, որոնց բնորոշ է քննական պայծառ երփնազիրը: Գործերից են՝ «Ամպամած օր. Սևան» (1953), «Աշունը Հայաստանի լեռներում» (1956), «Առագաստներ» (1963), «Ամառային հովիկ» (1965, մասնավոր հավաքածու, Լոնդոն), «Զեռագործ ամող կիմր» (1972), «Զեռագործուհին» (1973, Հայաստանի ազգային պատկերասրահ), «Զմեռ» (2003):



## ԱԹԱՅԱՆ ԱՐԵՎԱԿ ԳԵՎՈՐԳԻ (1877-1938)

Արշակ Գևորգի Արայան (ծնվ.՝ 1877, գ.Մեծ Թաղեր - մահ.՝ 1938), բանաստեղծ, արձակագիր, քարզմանիչ, հասարակական գործիչ, ԽՍՀՄ գրողների միուրյան անդամ (1935):



Սովորել է Վաղարշապատի Գևորգյան ճեմարան, Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում և Շուշիի թեմական դպրոցում: 1898-1902թթ. ծառայել է ցարական բանակում: 1903-1904թթ. որպես սրբագրիչ աշխատել է «Մուրճ» ամսագրի խմբագրությունում (Թիֆլիս): 1904-1907թթ. դասավանդել է Իրանի Սավրա գյուղի դպրոցում: Այստեղ գրի է առել Սալմաստի բոլոր 23 հայկական գյուղերի վիճակագրությունը, հավաքել ու գրի առել ժողովրդական երգն ու բանահյուսթյունը: 1907-1911թթ. դասավանդել է Նոր Ջուղայի դպրոցներում, ապա ղեկավարել ուսու-պարսկական քանի Սպահանի բաժանմունքը: Այդ տարիներին եղել է նաև քառածայն երգչախմբի ղեկավար, մեներգիչ և երասան՝ հյուրախաղերի եկած Սիրանույշի և Արմեն Արմենյանի խմբերում: Գրել է դրամատիկական երկեր, որոնցից «Սասունցի Դավիթ»-ը Արմեն Արմենյանը քեմադրել է նախ Թեհրանում (1922), ապա՝ Ալեքսանդրապոլում: 1923թ. ընտանիքով վերադարձել է Հայաստան, դասավանդել Երևանում, Լենինականում, Ստեփանակերում: Եղել է «Խորհրդային Հայաստան» թերթի պատասխանատու քարտուղար, լուսողկոմատի քածնի վարիչ, գյուղատնտեսական բանկի գլխավոր հաշվապահ: Անհիմն բռնադատվել է, 1938թ. զնդակահարվել 1955թ. հետմահու արդարացվել:

## ԱԹԱՅԱՆ ԵՂԻԾԵ ԼԵՎՈՆԻ (1919-2016)

Եղիշե Լևոնի Արայան (ծնվ.՝ 1919, գ.Քարագլիս - մահ.՝ 2016, ք. Ստեփանակերտ), ԼՂՀ վաստակավոր բժիշկ:

Հանրակրթական ուսումը գերազանցությամբ ավարտել է գիշերօրիկ դպրոցում: 1939թ. կամավորագրվել է և մեկնել ուսումնակատ: 1942թ. փետրվարին ծանր վիրավորվել է և միայն երկարատև բուժումից հետո նոյն թվականի օգոստոսին զորացրվել: 1942-1946թթ. սովորել է Բաքվի բժշկական ինստիտուտում: 1946-1951թթ. գրադեցրել է Հայրուրի շրջանի Սևան թաղերի բժշկական ամբողյանության վարիչի պաշտոնը:

1951թ. նշանակվել է Սևան թաղերի նորաստեղծ հիվանդանոցի գլխավոր բժիշկ, աշխատել մինչև 1953 թվականը: 1953թ. նշանակվել է Ստեփանակերտի մարզային հիվանդանոցի թերապևտիկ բաժանմունքի վարիչ: 1964-1967թթ. գրադեցրել է մարզագործածնի վարիչի պաշտոնը: 1967թ. կրկին նշանակվել է Ստեփանակերտի մարզային հիվանդանոցի թերապևտիկ բաժանմունքի վարիչ: 1967-2004թթ. աշխատել է ԼՂՄ մարզագործածնի, ԼՂՀ առողջապահության նախարարության գլխավոր թերապևտ: 1980-2004թթ. աշխատել է Ստեփանակերտի քաղաքային պոլիկլինիկայում՝ որպես սրտաբան: 1953-1999թթ. համատեղության կարգով դասավանդել է Ստեփանակերտի բժշկական ուսումնարանում: 2005-2009թթ. գրադեցրել է Հայրենական մեծ պատերազմի և աշխատանքի վետերանների հասարակական կազմակերպության փոխնախագահի պաշտոնը: Կարարայոյան շարժման ակտիվ մասնակից էր: Արժանացել է բազմաթիվ պարգևների, այդ թվում՝ «Կարմիր աստղ», «Կարմիր դրոշ» շքանշանների, «Արիության համար», «Հայրենիքի համար», «Լենինգրադի պաշտպանության համար», նոր ժամանակներում՝ «Վաշագան Բարեպաշտ» և «Երախտագիտություն» մեդալների:



## ԱԹԱՅԻՆ ՌԱԺԱՅԵԼ ԱՐԾԱԿԻ (1907-1990)

Ուսաբայի Արշակի Արայան (ծնվ.՝ 1907, Նոր Ջուղա, մեծքաղեցի Արշակ Արայանի ընտանիքում - մահ.՝ 1990, Երևան), արձակագիր, գրականագետ, մանկավարժ, քարգմանիչ, բանասիրական գիտությունների թեկնածու (1948), ԽՍՀՄ գրողների միուրյան անդամ (1934):

Միջնակարգ կրթություն ստացել է Նոր Ջուղայի հայկական դպրոցում և անգիտական բոլեցում: 1923թ. ընտանիքի հետ տեղափոխվել է Հայաստան: 1927թ. ավարտել է Երևանի պետական համալսարանը: 1923-1925թ. որպես անգերենի քարգմանիչ աշխատել է Արմենայում (այժմունը՝ Արմենպետս), 1925-1928թ.՝ «Ավանգարդ» թերթում որպես պատասխանատու քարտուղար, 1928-1934թ.՝ «Խորհրդային Հայաստան» օրաթերթում որպես բաժնի վարիչ, ապա պատասխանատու քարտուղար, 1934-1935թ.՝ Պետհրատում որպես գեղարվեստական գրականության բաժնի վարիչ և գլխավոր խմբագիր: 1943-1944թ. ծառայել է Խորհրդային բանակում, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին: 1944-1983թ. աշխատել է ճանկարժական գիտությունների գիտահետազոտական ինստիտուտում՝ որպես ավագ գիտաշխատող: 1948-1957թ. դասախոսել է Երևանի ուսուաց և ուսուար լեզուների մանկավարժական ինստիտուտում, վարել հայ և ուսուար գրականությունների ամբիոնը: Հեղինակել է մանկավարժական-զրականագիտական աշխատություններ՝ հայերեն և ռուսերեն: Կազմել է (հեղինակակցությամբ) գրականության դասագիրը 5-րդ դասարանի համար (հրատ. 1969-1979թ.): Ստեղծագործություններից են՝ «Մայա» (վիպակ, 1962), «Պանա Սմիռնի կյանքը և ստեղծագործությունը» (1954), «Զարքոնք» (1958), «Ապարտակ» (1963), «Մրիկի ընով» (1964), «Աշակերտների գեղագիտական դաստիարակությունը» (1974) և այլ բազմաթիվ գործեր:

## ԱԹԱՅԻՆ ՌՈԲԵՐՏ ԱՐԾԱԿԻ (1915-1994)

Ռոբերտ Արշակի Արայան (ծնվ. 1915, Թիֆլիս - մահ.՝ 1994, Երևան) (քանաստղ, արձակագիր, քարգմանիչ, հասարակական գործիչ մեծքաղեցի Արշակ Արայանի որդին), երաժշտագետ,

կոմպոզիտոր, բանահավաք և երաժշտության ուսուցիչ, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ (1961):

1941թ. ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան: 1944թ. դասավանդել է նույն կոնսերվատորիայում, եղել երաժշտության տեսության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր (1977): Ուսումնափրեկ է հայկական ժողովրդական և միջնադարյան երաժշտությունը, խազային նոտագրությունը, կազմել է խմբագրել Կոմիտասի երկերի ակադեմիական հրատարակությունը, գրել կամերային գործիքային և վոկալ երկեր, մշակել ժողովրդական և գուսանական երգեր, միջնադարյան մեղեդիներ:



## ԱԼՎԵՐԴԻ ԳԵՂՐԳԻ ԱՊԱԼՈՒՄԻ

(1928-...)

Գեղրգի Աղալումի Ալավերդյան (ծնվ.՝ 1928, գ. Կարմրակում), 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ, Հայաստանի աշխարհագրական ընկերության գիտական խորհրդի անդամ (1992):

Նախնական կրթությունը ստացել է Կարմրակումի յորամյա դպրոցում: 1949թ. ավարտել է Հայրութի միջնակարգ դպրոցը, ուսումը շարտնակել Քարվի մանկավարժական ինստիտուտի աշխարհագրության ֆակուլտետում: 1953թ. աշխատանքի է անցել Հայրութի Ս. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցում՝ որպես աշխարհագրության ուսուցիչ: 1954թ. դեկանական է Հայրութի շրջանի աշխարհագրության ուսուցիչների սեմինար: 2000թ. մանկավարժական ընթերցումներում «Դաստիարակչական և ճանաչողական ուսակությունների զարգացման ուղիները աշխարհագրության դասավանդման ընթացքում» թեմայով հանդես գալու համար գրավել է առաջին տեղ: 1960թ.-ից հանրապետության աշխարհագրական ընկերության անդամ էր: Իր երկարամյա և եռանդուն աշխատանքի համար արժանացել է հանրապետության «Լուսավորության աշխատողների գերազանցիկ» կոչում: «Ուսուցիչ-մերողիստ» կոչման:





## ԱԼՎԵՐԴՅԱՆ ՅՈՒՐԻ ԴԱՎԻԹԻ (1941)

Յորի Դավիթի Ալվերդյան (ծնվ.՝ 1941, գ. Հին Թաղեր), տնտեսագիտական գիտությունների թեկնածու (1975), պրոֆեսոր:

1958թ. ավարտել է զյուղի միջնակարգ դպրոցը, ընդունվել Երևանի պիտական համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը: 1963թ.-ից մի շարք պատասխանատու պաշտոններ է գտնել Հայաստանի ֆինանսների նախարարության համակարգությամբ: Որոշ ժամանակ ապրել է Տաշքենդ քաղաքում և աշխատել պետական եկամուտների վարչությունում՝ որպես պետ: Վերադառնալով Երևան, պաշտոնավարել է ՀՀ Էկոնոմիկայի և ֆինանսների նախարարության՝ ակադեմիկոս Աղոնցի անվան գիտահետազոտական ինստիտուտում որպես առաջատար գիտաշխատող: Ծորց երկու տասնամյակ դասախուել է Հայաստանի տնտեսագիտական համալսարանում: Հաճարվել է Երևանի ֆինանսարանակային և բռնայական համալսարանի հիմնադիրն ու ռեկտորը: Հեղինակել է 50-ից ավելի գիտական հոդվածներ, մենագրություններ:



## ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱԼԲԵՐՏ ԳԱՐԵԳԻՆԻ (1950-2020)



Ալեքս Գարեգինի Ալեքսանյան (ծնվ.՝ 1950, Բաքու՝ Հակակո գյուղից Գարեգին Ալեքսանյանի ընտանիքում - մահ.՝ 2020, Ստեփանակերտ), ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր (2007), պրոֆեսոր (2008):

1968թ. ավարտել է Երևանի թիվ 69 միջնակարգ դպրոցը, 1974թ.՝ Մոսկվայի ինժեներաֆիզիկական ինստիտուտը՝ ինժեներ ֆիզիկոսի որակավորմանը: Ասպիրանտուրան ավարտել է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Պ.Ն.Լեբեդյանի անվան ֆիզիկայի ինստիտուտում:

Աշխատել է որպես կրտսեր, ապա՝ ավագ գիտաշխատող ՀՀ ԳԱԱ ուղղոֆիզիկայի և էկուուրնիկայի, այնուհետև՝ ֆիզիկայի կիրառման պրո-

լեմների ինստիտուտներում: 1993թ. հրավիրվել է ԱրՊՀ՝ դասախոսական աշխատանքի: Աշխատանքները զեկուցվել են մի շարք միջազգային կոնֆերանսներում (ԱՄՆ, Շվեյցարիա, Չինաստան, Ռուսաստան): 1993թ. ընտրվել է Էկուուրնիկայի նյութերի հետազոտողների հանրության անդամ (ԱՄՆ): 1999թ. ստացել է ՌԴ բնական գիտությունների ակադեմիայի հայկական բաժանմունքի պատվավոր դոկտորի և պատվավոր պրոֆեսորի կոչումներ, ընտրվել ՌԲԳԱ ակադեմիկոս: Կյանքի վերջին տարիներին, զուգահեռ աշխատում էր Արցախի գիտական կենտրոնում, որպես բնական գիտությունների սեկտորի վարիչ:



## ԱԼԹՈՒՆՅԱՆ ՌՈՒԴՐԻԿ ՄԵԴՐԱԿԻ (1952)



Ռուդիկ Մեդրակի Ալթունյան (ծնվ.՝ 1952, գ. Սեծ Թաղեր), հասարակական գործիչ:

1986թ. ավարտել է Լենինգրադի ինժեներա-շինարարական ինստիտուտը՝ ինժեներ-շինարարի մասնագիտությամբ: 1969-1970թթ. աշխատել է Մեծ Թաղերի խաղողագործական խորհութեանությունում: 1972թ. աշխատել է Երևանի Վ.Ի.Լենինի անվան «Հայէլեկտրոգործարան»-ում, 1974-1976թթ.՝ «Լենգազերմկառուցում» տրեստում: 1991-1993թթ. աշխատել է Լենճանշին շինարարական վարչության թիվ 7 տրեստի գլխավոր ինժեներ: 1993թ.-ից գրադենում է «Դորոժնիկ-92» ԲԲԸ գլխավոր տնօրենի պաշտոնը: Պարզեւատրվել է «Պետերբուրգի շինարար» II աստիճանի շքանշանով:





## **ԱՐԹՈՒՅՑԱՆ ՕԼՅԱ ՌԱՖԻԿԻ**

Օյա Ռաֆիկի Ալբունյան (ծնվ.՝ 1976, գ. Մեծ Թաղեր):

1983-1994թթ. սպորել և ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 1994-1999թթ.՝ ՀՀ Գործիք «Սյունիք» ինստիտուտի հրավարանական ֆակուլտետը: 2012-2014թթ. ավարտել է Մ.Մաշտոց համալսարանի հրավագիտուրյան ֆակուլտետը՝ ստանալով մագիստրոսի աստիճան:

1999թ. հանձնելով համապատասխան քննությունները ստուգել է փաստարանական գործունեության իրականացնելու արտոնագիրը: 2001թ. ԼՂՀ փաստարանների միության ընդիանուր ժողովի կողմից ընտրվել է կարգապահական հանձնաժողովի անդամ, 2002թ.՝ կարգապահական հանձնաժողովի նախագահ: 2002թ. կարգապահական հանձնաժողովի անդամների կողմից ընտրվել է ԼՂՀ փաստարանների պալատի համբային պաշտպանի գրասենյակի ղեկավար՝ չորս տարի ժամկետով: 2011թ. ընտրվել է որակավորման հանձնաժողովի անդամ, այնուհետև որակավորման հանձնաժողովի նախագահ: 2014թ. ընտրվել է ԼՂՀ փաստարանների պալատի նախագահ՝ չորս տարի ժամկետով, 2018թ. վերընտրվել է ԱՀ փաստարանների պալատի նախագահ՝ չորս տարի ժամկետով: 2004թ. աշխատանքի է ընդունվել Մ.Մաշտոց համալսարանում, որպես դասախու:



## ԱՀԱՐՈՆՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԵՍՅՈՒՆԻ (1925-1986)

Ակերսանդր Սեմյոնի Ահարոնյան (ծնվ.՝ 1925, գ.Խոճաբերդ - մահ.՝ 1986, Տաշքեն), փիլիսոփայական գիտությունների ռուկանու (1972):

1943թ. ավարտել է Հին Թաղերի միջնակարգ դպրոցը: 1943թ. զորակոչվել է Խորհրդային բանակ, ծառայել մինչև 1950թ.: 1954թ. ավարտել է Տաշրենի իրավաբանական ինստիտուտը: 1961թ. ընդունվել է Լենինգրադի պետական համալսարանի ասպիրանտուրան: 1972-1986թթ. աշխատել է որպես Տաշրենի անու-



կան մանկավարժական ինստիտուտի փիլիսոփայության ամբիոնի վարիչ, պրոռեկտոր: Հեղինակել է մենագրություններ, բազմաթիվ գիտական հոդվածներ, որոնք նվիրված են վարքի, կուլտուրայի, գեղագիտության, բարյագիտության հարցերին:

### Չոհվել է ավտովրարից:



## ԱՂԱԲԵԿՅԱՆ ԱՐԹՈՒՐ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ (1963)

Արքուր Ալեքսանդրի Աղարքեկյան (ծնվ.՝ 1963 գ. Մեծ Թաղեր), ՀՀ և ԱՀ պետական, ռազմական գործիչ, ՀՀ ԶՈՒ գեներալ-լեյտենանտ, «Արցախի հերոս» (2017):

1986թ. ավարտել է պոլիտեխնիկական ինստիտուտը՝ ինժեներ-էլեկտրատեխնիկի մասնագիտությամբ: 1982-1986թթ. ուսմանը զուգընթաց, աշխատել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի էլեկտրական մեքենաների ամրինում՝ որպես լաբորատոր: 1986-1988թթ. եղել է Հայոցուղմեքենայացում գիտաարտադրական միավորման գիտական աշխատող: 1988-1991թթ. աշխատել է Ստեփանակերտի կոնդենսատորների գործարանի Հայոցուղի մասնաճյուղում՝ որպես արտադրամասի պետ: 1988-1994թթ. գործոն մասնակցություն է ունեցել Արցախյան ազատամարտին: 1991թ. եղել է Հայոցուղի շրջանի կամավորական ջոկատների համակարգող, շրջանի պաշտպանական ուժերի առաջին հրամանատար: 1992-1996թթ. եղել է ԼՂՀ ՊԲ առաջին պաշտպանական շրջանի հրամանատար, 1996-1997թթ.՝ ՀՀ զինված ուժերի 1-ին բանակային կորպուսի հրամանատարի տեղակալ, 1997-1999թթ.՝ ՀՀ զինված ուժերի հարավ-արևելյան բրիգադի հրամանատար: 2000-2007թթ. ՀՀ նախազահի հրամանագործ, եղել է ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ: 2007թ. մայիսին համամասնական ընտրակագործվ ՀՀԴ կուսակցության ցանկով ընտրվել է ՀՀ ազգային ժողովի պատգամավոր, ղեկավարել ՀՀ ԱԺ պաշտպանության, ազգային անվտանգության և ներքին գործերի մշտական հանձնաժողովը: 2012-2017թթ. գրանցերել է ԼՂՀ փոխվարչապետի պաշտոնը: 2017-2019թթ. եղել է ԱՀ Նախազահի խորհրդական:

Պարզեատրվել է ՀՀ, ԱՀ և արտերկրների մի շարք մեղալներով և շրանցաներով:



## ԱՊԱԶՈՒՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՐԳԱՐԻ

(1904-...)

Ալեքսանդր Մարգարի Աղաջանյան (1904, գ.Թաղասեռ), ռազմական բժիշկ, գնդապետ:

1922թ. Թաղասեռի դպրոցն ավարտելուց հետո մեկնել է Թիֆլիս՝ աշխատելու: 1923թ. ընդունվել է Երևանի հայկական գինուրական դպրոց (հետեւակի քաֆին): Այնուհետև գործուղվել է Թիֆլիսի՝ ռազմարարական դասընթացներ ուսումնասիրերու: 1930-1934թ. եղել է քաղաքաստող տարբեր գորամասներում: 1939թ. ավարտել է Լենինգրադի Ս.Մ.Կիրովի անվան ռազմարժեկական ակադեմիան, նշանակվել 38-րդ ավտոտրանսպորտային գնդի սամանապայտը: Հայրենական մեծ պատերազմի առաջին օրերից նշանակվել է Արևմտյան ռազմաճակատի 38-րդ ավտոտրանսպորտային գնդի սամանապայտը: Վետ, 1942-1945թ. եղել է Կարմիր բանակի գնդի, դիվիզիայի և կորպուսի բուժառաջուրյան պետ: Աշխատուն մասնակցել է Բելոռուսիայի, Լիտվայի ազատազրման, Քյոնիգսբերգի գրավման համար մղված մարտերին: Հեռավոր Արևելքում մասնակցել է Կվանտումյան բանակի դեմ ծափակած մարտերին, մասնակցել Մանչուրիայի ազատագրմանը: Պատերազմից հետո աշխատել է Կրասնոդարի և Բարձրի ռազմական հոսպիտալներում:



## ԱՊԱԶՈՒՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԻՎԱՆԻ

(1905-1952)

Սուրեն Իվանի Աղաջանյան (ծնվ.՝ 1905, գ.Ազու - մահ.՝ 1952, Մոսկվա), ինժեներա-տեխնիկական ծառայության գեներալ-մայոր (1944):

Ընտանիքի հետ տեղափոխվել է Բաքու, աշխատել տեղի նավթահանքերում: 1920թ. մեկնել է Մոսկվա, աշխատանքի անցել «Յավա» գործարանում: 1931-1934թ. եղել է Մոսխորհուրդի պատրամավոր, 1937թ.՝ Մոսկվայի արդյունաբերական գործարաններից մեկի կուսկոմիտեի քարտուղար, 1937-1938թ.՝ Մոսկվայի քաղկոմի անդամ, 1939թ.՝ ինժեներական հասողություն գորամասի հրամանատար: 1941թ. դեկանություն է ԽՍՀՄ մի շաբաթ ավագին գործարաններու:

Մոսկվայում, Տագանրոգում, Գորկիում, Թբիլիսիում: 1942-1952թ. դեկանություն է Գորկու ավագին գործարանը:

Նրա դեկանությած միավորումները քշնամուն ծանր հարվածներ են հասցրել Բելառուսական ռազմաճակատում և Կիևի համար մղված մարտերում: Պարզեւատրվել է մեղալներով, շքանշաններով:



## ԱՊԱԶՈՒՅԱՆ ԿԱՄ ԱՐԳԱՐԻ

(1971)



Կամ Արգարի Աղաջանյան (ծնվ.՝ 1971, գ.Էղիլլու, Ուխտաձոր), գեներալ-լեյտենանտ (2020):

1989թ. ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը, 1992թ.՝ Ստեփանակերտի հաշվապահական դպրոցը, 2001թ.՝ Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանի իրավաբանական ֆակուլտետը:

1989-1991թ. ծառայել է Խորհրդային բանակի շարքերում: Մասնակցել է պաշտպանական և հարձակողական գործողություններին՝ Հայրություն, Զրականում, Վարանդյանում: 1992-1993թ. նշանակվել է ՊԲ դասակի, 1993-1995թ.՝ վաշտի հրամանատար, 1995-1996թ.՝ գումարտակի հրամանատարի տեղակալ, 1996-1997թ.՝ հրամանատար, 1997-1999թ.՝ Հայրությի ՊԾ հրամանատարի տեղակալ, 1999-2003թ.՝ հրամանատար, 2003-2004թ.՝ Ն դիվիզիայի հրամանատարի տեղակալ, 2004թ.-ից՝ հրամանատար: 2008թ. հովանիս գրադեցրել է ՊԲ հրամանատարի տեղակալի, 2010-2013թ.՝ ՀՀ ԶՈՒ 1-ին բանակային կորպուսի հրամանատարի պաշտոնները: 2013թ. նշանակվել է ԼՂՀ ոստիկանության պետ, 2020թ.՝ ԱԱԾ-ի տնօրին: Պարզեւատրվել է «Մարտական խաչ» առաջին և երկրորդ աստիճանի շքանշաններով:





### ԱՄԻՐՅԱՆ ՎԱՀԱՆ ՀՐԵՍԻ

(1939)

Վահան Հրամանի Ամիրյան (ծնվ.՝ 1939, գ.Հին Թաղեր), հասարակական գործիչ, Հայաստանի և ԽՍՀՄ ժուռալիստների միությունների անդամ (1968):

1956թ. ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը: Ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը: Մինչև 1989թ. ապրել և աշխատել է Երևանում: Ակտիվութեան մասնակցել է Արցախյան շարժմամբ: 1989թ. առաջադրվել է Հին Թաղերի կողմանական տարրությունում վարչության նախագահ: Արցախյան գոյամարտի տարիներին կարապեց է համախմբել Հին Թաղերի ենթաշրջանի բնակչության ուժերը և կազմակերպել ինքնապաշտպանական մարտեր: Ծրջանի հարավի 14 գյուղերը ենթարկվել են դեպորտացիայի, բայց նրա շնորհիվ Հին Թաղեր, Խճաքերդ, Արփավանիկ գյուղերը մնացել են անփած, շեն ու կանգուն: Մինչև 1996թ. դեկալարել է հայրենի գյուղի տնտեսությունը: 1997թ. տեղափոխվել է Երևան: 2007թ. հրատարակել է «Դիզանավայր Լեռան զավակները»՝ երրորդ գիրքը:



### ԱՄԻՐՅԱՆ ՄԵՅՐԱՆ ԳՐԻԳՈՐԻ

(1946)

Մեյրան Գրիգորի Ամիրյան (ծնվ.՝ 1946, գ.Ազոյ), ԼՂՀ վաստակավոր իրավաբան (2010), արդարադատության 1-ին դասի խորհրդական, գնդապետ:

1953-1961թ. սովորել է Ազդիսի ուրամյա դպրոցում, 1961-1965թ.՝ Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի մերենաշնորհյում բաժնում, 1965-1970թ.՝ Բարձր Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի մարենատիկայի ֆակուլտետում: 1971-1972թ. ծառայել է Խորհրդային բանակի ավիացիոն գորամասում: 1973-1976թ. աշխատել է Կոմերիտմիության Հաղորդի շրջկոմում՝ որպես բաժ-



նի վարիչ, ապա շրջանի կոմերիտմիության կազմակերպության քարտուղար: 1976-1981թթ. եղել է կուսակցության Հաղորդի շրջկոմի հրահանգիչ, բաժնի վարիչ: 1975-1980թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում: 1982թ. կուսակցության մարզկոմի որշմանք աշխատանքի է նշանակվել ԼՂՀ մարզային դատախազության մարմիններում: 1984թ. գերազանցությամբ ավարտել է Մոսկվայի ԽՍՀՄ դատախազության բարձրագույն դպրոցը: 1982-2002թթ. աշխատել է Ասկերանի շրջանի դատախազի օգնական, շրջանի դատախազ, ԼՂՀ դատախազի օգնական, քննչական բաժնի ավագ դատախազ, քննչական բաժնի պետ: 2002-2011թթ. ԼՂՀ Ազգային ժողովի որշմանք նշանակվել և աշխատել է ԼՂՀ ընդհանուր իրավաբանության Ստեփանակերտի 1-ին ատյանի դատարանի նախագահ: 2011-2016թթ. եղել է ԼՂՀ գերազանց դատարանի նախագահի ավագ խորհրդական: 2016թ.-ից ԱՀ վաստարանների պալատում աշխատում է որպես վաստարան: 1993թ.-ից համատեղության կարգով աշխատում է ԱրՊՀ Խրավունիքի ամբիոնում՝ որպես ավագ դասախոս: Հեղինակել է մի շարք գիտա-վերլուծական հոդվածներ: Պարգևատրվել է մեդալ-ներով, կառավարական պարգևներով:



### ԱՄԻՐՅԱՆՅԱՆ ԱՐԴԱ ՄՐԱԾԵՍԻ

(1958)

Արդա Արտաշեսի Ամիրյանյան (ծնվ.՝ 1958, գ. Սևան Թաղեր), ավագ դասախոս:

1965-1975թթ. սովորել է Ստեփանակերտի թիվ 3 միջնակարգ դպրոցում: 1975-1977թ. աշխատել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում՝ որպես գործակարգավորիչ: 1977թ. ընդունվել է Բարձր պետական մանկավարժական ինստիտուտի ուսաց լեզվի և գրականության ֆակուլտետը և ավարտել այն 1982թ.: 1982-2000թթ. աշխատել է Մարտունու շրջանի Սոս գյուղի միջնակարգ դպրոցում, Ստեփանակերտի թիվ 5 և 10 դպրոցներում՝ որպես ուսաց լեզվի և գրականության ուսուցչությի: 2000թ. աշխատում է ԱրՊՀ ուսաց լեզվի և գրականության ամբիոնում՝ որպես դասախոս: Հեղինակ է մի շարք գիտամեթոդական հոդվածների, ծեռնարկի:





## ԱՆԴՐՁԱՆՑԱՆ ԱՐԹՈՒՐ ԱՐՏԱՇԵՍԻ (1964)

Արքուր Արտաշեսի Ամիրջանյան (ծնվ.՝ 1964, թ. Ստեփանակերտ) (տումեցի անասնաբույժ Արտաշես Ամիրջանյանի որդին), հասարակական գործիչ:


1982թ. ավարտել է Ստեփանակերտի թիվ 3  
միջնակարգ դպրոցը և ընդունվել Աղրբեջանական  
ժողովրդական տնտեսության համալսարանը:  
1988թ. տեղափոխվել և ավարտել է Երևանի ժո-  
ղովրդական-տնտեսության համալսարանը: 1983-1985թթ. ծառայել է  
Խորհրդային Միության բանակի շարքերում: Համալսարանի ավարտելուց  
հետո աշխատանքի է անցել ԼՂՀ Ազգարդի անտառային ծեռնարկության  
պլանավորման և Էկոնոմիկայի բաժնի վարիչի պաշտոնում: Կամավորա-  
կան ջոկատների և ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի կազմում ակտի-  
վորեն մասնակցել է ազգային-ազատագրական պայքարին և ԼՂՀ ՊԲ  
գինված ուժերի կազմավարման գործընթացին: 1997թ. զորացրվելուց հետո  
աշխատանքի է անցել ԼՂՀ ֆինանսների նախարարությունում: 1999թ.  
նշանակվել է ֆինանսական վերահսկողության տեսչության պետ, 2021թ.  
ԱՀ ֆինանսների փոխնախարար:



## ԱՐԴՅԱՆՑԱՆ ԱՐՄԵՆ ՀԱՅԱՍՏԻՒ (1939-2007)

Արմեն Հայաստի Ամիրջանյան (ծնվ.՝ 1939,  
Հաղորդ -մահ.՝ 2007, ը. Ստեփանակերտ):

Տեղի միջնակարգն ավարտելոց հետո ընդունվել է Ստեփանակերտի զյուղատնտեսական տեխնիկումը, որն ավարտել է 1959թ.: 1965թ. ավարտել է Հայկական զյուղատնտեսական ինստիտուտը և աշխատանքի անցել Հայքուրուս՝ որպես զյուսավոր ինժեներ: 1975թ. ավարտել է Մոսկվայի գիտահետազոտական տեխնոլոգիական ինստիտուտի ասահոսաւուրում: 1977թ. -



## ԱՄԻՐՁԱՆՑԱՆ ԱՐՄԵՆ ԱՐՏԱՇԵՍԻ (1958)

Արտեն Արտաշեսի Ամիրջանյան (ծնվ.՝ 1958,  
ք. Հաղորդ), իրավաբան:

1975թ. ավարտել է Հայոց պահական միջնակարգ դպրոցը, 1981թ.՝ Ռիգայի քաղաքացիական ավիացիայի հնատիտուութը: 1981-1982թթ. աշխատել է Գրոզնի քաղաքի միավորված ավիացիոն ջոկատում՝ որպես ինժեներ: 1983-2001թթ. ծառայել է ԼՂՀ Ներքին գործերի նախարարությունում՝ որպես անձնազրային սեղանի պետ, պրոֆիլակտիկ բաժանմունքի պետ, միլիարդի պաշտոնակատար, միլիոնի տեղակալ, ավագ քննիչ: 1989թ. ընդունվել է ԽՍՀՄ ՆԳՆ Կարագանդայի ոստիկանության բարձրագույն դպրոցի հեռակա բաժինը: 1994թ. ավարտել է Դնիպրի Ռուսական ոստիկանության բարձրագույն դպրոցը և ստացել իրավաբանի մասնագիտություն: 2002թ. ԼՂՀ Ազգային ժողովի կողմից նշանակվել է ԼՂՀ առաջին ատյանի դատարանի դատավոր:

**ԱՐՄԵՆՅԱՆ ԱՐՏԱՀԵՍ ԻՐԱԹԻ  
(1923-2003)**

Արտաշես Խբարի Ամիրջանյան (ծնվ.՝ 1923, գ.Տումի - մահ.՝ 2003, Ստեփանակերտ), անասնաբույզ:

Նախնական կրթությունը ստացել է գյուղի միջնակարգ դպրոցում: 1939-1941թ. սովորել է Բաքվի նավային տեխնիկումում: 1942-1945թ. ծառայել է Խորհրդային բանակի շարքերում, 89-րդ Հայկական թաման-յան դիվիզիայում: 1943թ. ծանր վիրավորվել է Կերչում: Հայրենական մեծ

պատերազմի 2-րդ կարգի հաշմանդամ էր: 1946-1949թ. աշխատել է Ստեփանակերտի քաղյուրիրդում՝ որպես ավագ տեսուչ: 1954թ. տվորել է Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտի անասնաբուժական ֆակուլտետում: 1954-1961թթ. Մեծ թաղեր գյուղում աշխատել է որպես ավագ անասնաբուժ: 1961-1964թթ. եղել է Ստեփանակերտի զոճալ փորձակայանի ավագ գիտաշխատող: 1967-1977թթ. աշխատել է որպես սովորութեանիկումի գիտակոր անասնաբուժ, 1977-1979թթ.՝ Սունցինկայի խոզարուժական համալիրում՝ որպես տնտեսագետ: 1979-1997թթ. դասավանդել է Ստեփանակերտի գյուղտեսնիկումում:

Պարզւատրութեան է Հայրենական պատերազմի մեջաներով, շքանշաններով:



### ԱՄԻՐՁԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ ԵՐՎԱՆԴԻ (1960)

Գագիկ Երվանդի Ամիրջանյան (ծնվ.՝ 1960, Երևան՝ տումեցու ընտանիքում), ոստիկանության փոխզմբապետ:

Ավարտել է Երևանի թիվ 77 միջնակարգ դպրոցը, 1983թ.՝ Երևանի Բրյուտովի անվան պետական մանկավարժական ինստիտուտը: 1983-1988թթ. որպես ուսաց լեզվի և գրականության ուսուցիչ աշխատել է Աշոտարակի շրջանում: 1989թ. Լենինգրադում ավարտել է ԽՍՀՄ ՆԳՆ քրեական հետախուզության բարձրագույն դասընթացները: Աշխատանքի է անցել Հայաստանի ՆԳՆ մարմիններում, քրեական հետախուզության բաժնում՝ որպես հատուկ կարևոր գործերով ավագ օպերիագոր:



### ԱՄԻՐՁԱՆՅԱՆ ԵՐՎԱՆԴ ՍԱՄՍՈՆԻ (1930)

Երվանդ Սամսոնի Ամիրջանյան (ծնվ.՝ 1930, գ. Տումի):

1951-1953թթ. ծառայել է Խորհրդային բանակում: Ավարտել է սպայական ուսումնարանը, ստացել լեյտենանտի կոչում: 1959թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 1960թ. աշխատանքի է անցել ՀՀ ՆԳՆ համակարգում՝ որպես հետախուզության օպերիագոր, քննիչ, ավագ քննիչ, քննչական բաժնումունքի պետ: 1984-1988թթ. եղել է քննչական վարչության ավագ քննիչ:



### ԱՄԻՐՁԱՆՅԱՆ ԹԵՄՈՒՐ ԻՐԱՄՅԻ (1919-1999)

Թեմուր Իրամյի Ամիրջանյան (ծնվ.՝ 1919, գ. Տումի - մահ.՝ 1992, Ստեփանակերտ), 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ:

1934թ. ավարտել է ծննդավայրի յորամյա դպրոցը: Ուսումը շարունակել է Շուշիի մանկավարժական ուսումնարանում, այնուհետև ընդունվել Բարփի մանկավարժական ինստիտուտի աշխարհագրության ֆակուլտետը: 1941թ. մանկավարժական աշխատանքի է անցել Շուշիի մանկավարժական ուսումնարանում: 1944թ. աշխատանքը շարունակել է Շուշիի (հետագայում՝ Ստեփանակերտի) երկամյա ուսուցչական ինստիտուտում, եղել է քնագիտա-աշխարհագրական ֆակուլտետի դեկանը: Ուսուցչական ինստիտուտի լուծարումից հետո երկար տարիներ աշխարհագրություն է դասավանդել Ստեփանակերտի դպրոցներում: 1992թ.-ից մինչև կյանքի վերջը աշխատանքը շարունակել է Արցախի պետական համալսարանում, ստացել աշխարհագրության գծով դոցենտի գիտական կոչում: Հեղինակել է մի շարք գիտամեթոդական հոդվածներ:



## ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ԼԻԼԻԹ ՀՐԱՆՏԻ (1959)

Լիլիթ Հրանտի Ամիրջանյան (ծնվ.՝ 1959, Մարտունու շրջանի գ. Թաղավարդ՝ տունեցի Հրանտ Ամիրջանյանի ընտանիքում), մանրանկարիչ, Հայաստանի նկարիչների միուրյան անդամ (2003):

1967-1977 թթ. սովորել և ավարտել է Երևանի Խ. Դաշտենցի անվան N114 անզելենն թերումով միջնակարգ դպրոցը, 1977-1981 թթ.՝ Երևանի Խ. Արտվանի անվան Հայկական պետական մամկանական համալսարանի գեղարվեստի ֆակուլտետը: 1982 թ. աշխատանքի է, անցել Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում՝ որպես մանրանկարիչ կրկնօրինակներու պատճենագործության համար: 1985 թ.-ից դասավանդում է հայկական ավանդական մանրանկարչության կրկնօրինակներու բուհերի, ուսումնարանների և արվեստի դպրոցների ուսանողներին: Նաև փառում է Վարդենիքյան դասրներացներ հայ և օտարազգի հյուրերի համար Մատենադարանում; 1977-1987 թթ. աշխատել է գրաֆիկայի, իսկ 1985-2018 թթ.՝ առավելապես մանրանկարչության, սրբանկարչության գեղանկարչության բնագավառներում: Կատարել է ոչ միայն կրկնօրինակների հայկական միջնադարյան մանրանկարներից, այլև Աստվածաշնչյան թեմաներով ստեղծագործական մանրանկարներ: 1992-1993 թթ. աշխատել է Նյու Յորքի Հայաստանաց Եկեղեցու Արեւելյան թեմի Առաջնորդարանում՝ որպես մանրանկարիչ: 1995 թ.-ից սկսած (հայկական ճեռագրային ավանդական մանրանկարչության արվեստի 200 տարվա դադարից հետո՝ XIX-XV դ.) հաճան է առն վերականգնել և շարունակել միջնադարյան Ավետարանների պատկերագրման արվեստը՝ ստեղծելով երեք ճեռագիր գիրք: 2000-2008 թթ. ավարտին է հասցել երրորդ Ավետարան Գրիգոր Ավետիքիրազարդումներու ու շրու Ավետարանների ամբողջական տեքստերի ճեռագրումը՝ 155 մազադարյա թերթերով և 24 մանրանկար պատկերներով: 2001 թ. «Պո-Արաք» մշակութային կազմակերպության հրավերով աշխատել է Խոտափայի Պատրիա քաղաքի Առաջնորդարանում՝ վարպետության դասընթաց վարելով խոտափի փորձառու նկարիչներին հայկական ավանդական մանրանկարչության կրկնօրինակնան արվեստի սկզբունքների և տեխնիկայի վերաբերյալ: 2011 թ. աշխատել է Ֆինլանդիայում՝ Լասիինասատիի «Պորտապասա» քրիստոնեական ինստիտուտում, վարել վարպետության դասընթաց ֆինն փորձառու արվեստագետներին ավանդական հայկական մանրանկարչության սկզբունքների, պատկերագրության և տեխնիկայի վերաբեր-

յալ: 2009-2016 թթ. դեկանարել է Գանձասարի Մատենադարանի մասնաճյուղում ցուցադրված թվով 100 ձեռագրերի կրկնօրինակների և մակետների պատրաստման յորամյա պետական ծրագրի գործընթացը: 2007 թ. հեղինակել ու Երևանում հրատարակել է «Հայկական մանրանկարչություն, XX-XXI դ.՝ «Աստվածաշնչյան պատկերագրումներ» գիրքը: 1985-2021 թթ. տպագրել է բազմաթիվ գիտական հոդվածներ՝ Հայաստանի և արտերկրի տարբեր թերթերում, ամսագրերում, պարբերականներում:



## ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ՀՐԱՆՏԻ ԻԲԱՅԻ (1932-1978)

Հրանտ Իբայի Ամիրջանյան (ծնվ.՝ 1932, գ. Տումի - մահ.՝ 1978, Երևան), լրագրող, ԽՍՀՄ և ՀԽՍՀ ժուռնալիստների միուրյունների անդամ (1967):



1956 թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի արևելագիտության բաժինը: 1957 թ. վերադարձել է Արցախ և մանկավարժական աշխատանքի անցել Մարտունու շրջանի Թաղավարդ գյուղում: 1963 թ. ընտանիքով տեղափոխվել է Երևան, աշխատանքի անցել Կույրերի միավորման հրատարակչությունում՝ որպես ամսագրի խմբագիր: Միաժամանակ բրակեցել է հանրապետական ուղղողին, ամսագրերին, թերթերին: Աշխատել է Ռադիոկոմիտեի սիյուռի համար տրվող հաղորդումների բաժնում, «Սովետական Հայաստան» թերթում:



## ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ՅՈՒՐԻԿ ՍԱՎՍՈՒԻ (1942)

Յուրիկ Սամսոնի Ամիրջանյան (ծնվ.՝ 1942, գ. Տումի), դասախոս:

1960 թ. ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: 1964-1969 թթ. ընդունվել և ավարտել է ԵՊՀ պատ-

մուրյան ֆակուլտետի փիլիսոփայուրյան քաժինը: 1969թ. աշխատանքի է անցել Երևանի Կ.Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտում՝ որպես փիլիսոփայուրյան կարիերետի վարիչ, այնուհետև՝ ամբիոնի ասխատենու, 1974թ.-ից՝ որպես ավագ դասախոս: Հեղինակել է մի շարք գիտական հոդվածներ:



## ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ՍԱՄՎԵԼ ՀՐԱՄԻՔ (1961)

Սամվել Հրամիք Ամիրջանյան (ծնվ.՝ 1961, գ. Թաղավարդ՝ տունեցի Հրամատ Ամիրջանյանի ընտանիքում):

1978թ. ավարտել է թիվ 114 դպրոցը, այսուհետև՝ Կ.Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտը: 1983թ. աշխատանքի է անցել «Հայհաստոց» գիտարտադրական միավորումում՝ որպես առաջին կարգի մասնագետ, 1991թ.՝ «Անհենա» ՓԲԸ-ում՝ որպես կոնսորտիումորական բյուրոյի պետ:

Մասնակել է Արցախյան շարժմանը, եղել «Արցախ» հայրենակցական միուրյան, «SOՄ» բարեգործական միուրյան կազմկոմիտեի անդամ: Պատերազմի ժամանակ կատարել է նախագծումներ, մասնակցել փորձարկումներին:

2000թ. ավարտել է Եվրասիա հիմնադրամի կազմակերպած «Բրոքեր» (ոլլերային գրասենյակների մենեջմենթ, մարքեթինգ և կարգավորում) թեմայով դասընթացը: 2002թ. ՀՀ արժեքրերի համամաժողովի որոշմամբ ստացել է արժեքրերի շուկայում մասնագիտական գործունեություն իրականացնելու որակավորում: 2000-2005թ. եղել է «Արժեքրերի կենտրոն» ՍՊԸ բրոքեր, տնօրեն, 2005-2007թ.՝ «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա»-ի տնօրենների խորհրդի անդամ: 2005-2007թ. աշխատել է որպես «Պետական և կորպորատիվ արժեքրերի կենտրոն» ՓԲԸ վերահսկողության քաժնի պետ և բրոքեր, 2007-2009թ.՝ «Զարգացման Հայկական Բանկ» ՓԲԸ սպառողական վարկերի քաժնի ավագ մասնագետ, 2009-2016թ.՝ նոյն քաժնի առաջատար մասնագետ: 2017թ. աշխատանքի է անցել «Արարատքանկ» ՓԲԸ «Զարգացում» մասնաճյուղում՝ որպես սպառողական վարկերի քաժնի առաջատար մասնագետ:



## ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ՍԵՐԳԵՅ ՍՎԵՏՍՈՒՆԻ (1929-2004)

Սերգեյ Սամսոնի Ամիրջանյան (ծնվ.՝ 1929, գ. Տումի - մահ.՝ 2004, Երևան), պատմական գիտուրյանների թեկնածու (1983):

Ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը, ապա՝ Ստեփանակերտի երկամյա ինստիտուտի աշխարհագիտուրյան ֆակուլտետը: Աշխատել է Հայրութի շրջանի տարրեր կրթօջախներում: 1955թ. ավարտել է Երևանի Խ.Արովյանի անվան մասնավարժական ինստիտուտի պատմուրյան ֆակուլտետը: 1965-1993թթ. աշխատել է Երևանի կոռպերատիվ տեխնիկումում, միաժամանակ դասախոսել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի պատմուրյան ամբիոնում:

Հեղինակել է Դիզայնի պատմուրյան վերաբերյալ մի շարք գիտական հոդվածներ և գրքեր: Հիմնադրել է հայրենագիտական և պատմուրյան բանգարան ծննդավայրի դպրոցում:



## ԱՄԻՐՋԱՆՅԱՆ ՍՈՒՍԱՆԱ ՀՐԱՄԻՔ (1958)

Սոսանա Հրամիք Ամիրջանյան (ծնվ.՝ 1958, Երևան՝ տունեցի Հ.Ամիրջանյանի ընտանիքում), բանասիրական գիտուրյանների թեկնածու (1989), դրենու, (1990), հայ լեզվաբանների միուրյան անդամ:

1975թ. ավարտել է Երևանի Մ.Գորկու անվան դպրոցը և ընդունվել Խ.Արովյանի անվան մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը: 1980-1984թթ. ուսումը շարունակել է նոյն ինստիտուտի ասպիրանտուրայում՝ ընդհանուր լեզվաբանուրյան գծով: 1990թ.-ից աշխատել է որպես ասխատենու-դասախոս, 2003թ.-ից՝ դրենու Խ.Արովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց լեզվի և նրա դասավանդման մերողիկայի ամբիոնում: Հեղինակել է մի շարք հայագիտական ձեռնարկներ և տասնյակ հոդվածներ:





## ԱՐԴՅԱՆՅԱՆ ՎԱՀԱԳՆ ԵՐԵՄԻ (1970)

Վահագն Երեմի Ամիրջանյան (ծնվ.՝ 1970, Երևան՝ տունեցու ընտանիքում), տնտեսագիտության և սոցիոլոգիական գիտությունների դոկտոր:

1977-1987թթ. սովորել է Երևանի թիվ 77 միջնակարգ դպրոցում, 1987-1991թթ.՝ Երևանի պետական տնտեսագիտական համալսարանի ֆինանսատեսական ֆակուլտետում՝ ֆինանսներ և վարկ մասնագիտությամբ: 1991-1992թթ. ծառայել է ՀՀ Զինված ուժերում: 1992-1994թթ. աշխատել է ՀՀ կենտրոնական բանկում՝ որպես տնտեսագիտ: 1994-1995թթ. եղել է ՀՀ կենտրոնական բանկի Արտաքինային և միջազգային գործառնությունների վարչության պետի տեղակալ, 1995-1996թթ.՝ վարչության պետ: 1996թ. նշանակվել է Մոսկվայի «Սենատեպ» բանկի ԲԲԸ Արտաքին և միջազգային գործառնությունների բաժնի պետ, 1996-2001թթ.՝ «Սենատեպ» բանկի Երևանյան մասնաճյուղի գործադիր տնօրենի տեղակալ: 2001-2007թթ. եղել է «ITB» Միջազգային առևտրային բանկ ՓԲԸ-ի գործադիր տնօրենի տեղակալ: 2008թ. ընտանիքի հետ տեղափոխվել է Ավստրիա և բնակություն հաստատել այնտեղ: 2007-2009թթ. աշխատել է որպես «Թիրլու Բանկ Արմենիա» ՓԲԸ (Երևան, Հայաստան) գործադիր տնօրեն, 2005-2010թթ.՝ Makarios (MG) Holding GmbH-ի (Վիեննա Ավստրիա) ֆինանսական խորհրդանու, Vienna Insurance Group/Wiener Städtische Versicherung Մանրածախ և մնացած արդյունակություն վաճառքի դեպարտամենտի տնօրեն: 2013-2015թթ. եղել է Վիեննայում Հովի. Շիրազի անվան մեկօրյա հայկական դպրոցի տնօրեն, 2016թ.-ից՝ Ավստրիայի Հայ Առաքելական Եկեղեցական Համայնքի Վարչության Աստեղական: 2015թ.-ից համիլիանում է «E/U Dr. Vahagn Amirjanyan-Vermogensberatung» ֆինանսական խորհրդատվական կազմակերպության հիմնադիր և գլխավոր տնօրեն:



## ԱՅՎԱՋՅԱՆ ԳՐԻՉԱ ՄԵԼԱԿԻ (1926-...)

Գրիչա Մելակի Այվաջյան (ծնվ.՝ 1926, գ.Հին Թաղեր-...), պատմական գիտությունների թեկնածու (1957), դոցենտ:

Ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: 1944-1946թթ. աշխատել է հայրենի գյուղում: 1948թ. մեկնել է Երևան և ընդունվել Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետուր: 1955թ. ավարտել է նոյն ֆակուլտետի ասպիրանտուրան: 1975թ.-ից դասախոսել է Երևանի ժողովնախորհության ամբիոնի դոցենտ:

Հեղինակել է մենագրություններ և բազմաթիվ հոդվածներ:



## ԱՅՎԱՋՅԱՆ ՀԵՆՐԻԿ ՍՈՒՐԵՆԻ (1948)

Հենրիկ Սուրենի Այվաջյան (ծնվ.՝ 1948, գ.Հին Թաղեր), Արդարադատության առաջին դասի պետական խորհրդական:


1955-1965թթ. սովորել է գյուղի դպրոցում: Ծառայել է Խորհրդային բանակում:

1968թ. աշխատանքի է անցել «Կովկասէներգոմոնտաժ» տրեստի Հրազդանի ջէկ-ում՝ որպես շինարար, այնուհետև հայի գործարանում՝ որպես բրիգադավար: 1972-1978թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում՝ իրավագետի մասնագիտությամբ: 1978-1990թթ. աշխատել է Ասկերանի շրջանային դատախազությունում որպես քննիչ: 1980-1981թթ. եղել է ԼՂՄՄ դատախազի օգնական, 1981-1985թթ.՝ ԼՂՄՄ դատախազության քննչական բաժնի պետ: 1986-1991թթ. գրադերել է Մարտակերտի շրջանային դատախազի պաշտոնը: 1991թ. նշանակվել է նորաստեղծ ԼՂՀ դատախազության կարևորագույն գործերի ավագ քննիչի պաշտոնում: Մեկ տարի եղել է Մարտակերտի շրջանի դատավոր: 1995թ. նշանակվել է ԼՂՀ դատախազության ընդհանուր հսկողության բաժ-

նի պետ: Այնուհետև զբաղեցրել է Ասկերանի, ապա՝ Մարտունու շրջանային դատախազի պաշտոնները: 2006թ.-ից ղեկավարել է ԼՂՀ դատախազության բննշական բաժինը: Մասնակել է Արցախյան ազատամարտին:



### Աշոտ Գրաչի (1910-1973)



Աշոտ Գրաչի (Աշոտ Բաղդասարի Գրիգորյան) (ծնվ.՝ 1910, Բաքու՝ մեծքաղեցու ընտանիքում - մահ.՝ 1973, Երևան), բանաստեղծ, բարգմանիչ, ԽՍՀՄ զրոյների միության անդամ (1935): Գրաչի գրական անունը կազմված է բանաստեղծի ազգանուն և անվան սկզբնատառերից:

1929թ. ավարտել է տեղի Ալ.Մյասնիկյանի անվան հայկական դպրոցը, 1933թ.՝ Երևանի պետական համալսարանի պատմազրական ֆակուլտետը: 1933-1946թթ. աշխատել է որպես Բարվի Վ.Ի.Լենինի անվան գրադարանի հայկական բաժնի վարիչ, Աղբեջանի խորհրդային գրողների միության հայկական բաժանմունքի քարտուղար, «Կոմունիստ» հայերեն թերթի արվեստի և գրականության բաժնի վարիչ: 1946թ. տեղափոխվել է Երևան: Բանաստեղծությունները բարգմանվել են ԽՍՀՄ ժողովուրդների մի շարք լեզուներով: Ստեղծագործություններից են՝ «Կոռոնկ» (Բաքու, «Ազերնեշր»), «Ամպարերդ» (հերոսական դրամա), «Իմ գարունը», «Եղբայրության աստիճ տակ», «Երգը թոշում է աշխարհով», «Սարերի սրինգը», «Ծիածանի յոր երգը», «Երկեր» 2 հատորով, Ա, Բ, «Ու՞ր ես, սիրո մոլորակ», «Կոռոնկների աղբյուր»:



### ԱՍՎԴՈՎ ԷԳՈՒԱՐԴ ԱՐՏԱՉԵՍԻ (1923-2004)



Էղուարդ Արտաչեսի Ասվածով (ծնվ.՝ 1923, ք.Մերվ (Մարի), Թուրքմենիայի ԽԽՍՀ՝ հայրություն ընտանիքում - մահ.՝ 2004, Օդինցով, Մոսկվա)

յի մարզ, ՌԴ), գրող, ԽՍՀՄ գրողների միության անդամ (1951), Խորհրդային Սիության հերոս (1998):

Ծնողները եղել են ուսուցիչներ: Հայրը՝ Արտաչես Ասայյանցը (1898-1929), սովորել է Տումակի տեխնոլոգիական ինստիտուտում, եղել է Սոցիալ-հեղափոխական կուսակցության անդամ: 1918թ. ձերքակալվել է Ալբայում, ազատ արձակվել 1919թ.: Աշխատել է Ալբայի նահանգային արտակարգ համամաժորդվում՝ որպես քննչի: Հոր մահից հետո՝ 1929թ., Է.Ասադովը մոր հետ տեղափոխվել է Սվերդլովսկ՝ մայրական պապի՝ Հովհաննես (Դվան) Գալրասի Քյուրյանի մոտ: Ուր տարեկան հասակում գրել է իր առաջին բանաստեղծությունը: 1939թ. տեղափոխվել է Մոսկվա: Դպրոցն ավարտելուց մեկ շաբաթ անց սկսվել է Հայրենական մեծ պատերազմը: Կամավոր մեկնել է ռազմաճակատ: Եղել է ականանետի նշանառող, ապա՝ «Կատյուշայի» մարտկոցի հրամանատարի օգնական Հյուսիսկովկասյան ու Ռուբախնական 4-րդ ուսամաճակատներում: Կովկել է նաև Լենինգրադյան ճակատում: 1944թ. Սևաստոպոլի համար մղված մարտերի ժամանակ դեմքից ծանր վիրավորվել է, կորցրել տեսողությունը: Հետագա ողջ կյանքի ընթացքում կրել է սև կիսադիմակ: 1946-1951թթ. սովորել է Մ.Գորկու անվան գրականության ինստիտուտում, իրատարակել իր բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ «Լուսավոր ճանապարհ» (ոռու.) վերնագրով: Կյանքի վերջին տարիներին ապրել և աշխատել է Կրասնովիդրվո գյուղում: Հեղինակել է 60 գիրք:



### ԱՍՎԴՈՎ ՅՈՒՐԻ ԱՆԴՐԵՅԻ (1951)



Յուրի Անդրեյի Ասվածով (ծնվ.՝ 1951, Բաքու՝ հայրություն ընտանիքում), պատմական գիտությունների թեկնածու, ԽՍՀՄ ժողովածու և լիազոր գործադիր, ԽՍՀՄ միության անդամ (1978), Ուսասատանի ժողովածու և միության անդամ:

1974թ. ավարտել է Աղբեջանի համալսարանի բանախրական ֆակուլտետը: Աշխատել է որպես տարրեր լրատվամիջոցների թրաքիկ՝ Բաքվում, Մայկոպում, Կրասնոդարում, Սումգայիթում, Ստավրովում: 1987թ. հաստատվել է Պյատիգորսկում: 1992թ.-ից ղեկավարել է «Հայ մելիքների և բնակչության պահպանի և զարգացման համար» կողմանական կազմակերպությունը:

Կերի տոհմերի ժառանգների միություն» հասարակական միջազգային հետազոտական կազմակերպությունը և «Բելկովի դրմ» (ռուս.) գրահրատարակչությունը (Պյատիգորսկ, Մոսկվա): 1994թ.-ից եղել է «Բելկովի դրմ» պատմական այնանախ-տարեգրի գլխավոր խմբագիրը:

1994-2000թթ. աշխատել է որպես Մոսկվայի «Ինտեր-Վեսը» գրահրատարակչության Կավճինական մասնաճյուղի ներկավար: 1999թ.-ից դեկավարել է Պյատիգորսկ քաղաքում, այնուհետև՝ Մոսկվայում գործող «Հայ իշխանական և ազնվական ընտանիքների և տոհմերի ժառանգների ասցիացիա» գիտահետազոտական հասարակական հիմնադրամը: Աշխատել է «Պյատիգորսկի հայկական տեղեկագիր», «Տեխնոլոգիական համալսարան», «Մշակույթի աշխարհում», «Լերմանտովսկի Խզվեստիա» «Պյատիգորսկայա Պրավդա», «Արմենիատիկա» (ռուս.), ամսագրերում և այլ հրատարակչություններում՝ որպես լրագրող, գլխավոր խմբագրի տեղակալ և գլխավոր խմբագրի: 2010թ. տեղափոխվել է Մոսկվայի մարզի Բալաշիխա քաղաք: Աշխատել է Մոսկվայի մարզի Ռենտովսկու տեղեկատվական գործակալության փոխտնօքն և, միաժամանակ, Ռենտով քաղաքի «Ռենու» քաղաքային թերթի գլխավոր խմբագրի տեղակալ: Հեղնակել է 17 գիրք, ավելի քան 1500 հրապարակումներ:

2013թ.-ից ապրում է Սակրամենտոյում (ԱՄՆ, Կալիֆորնիա):



## ԱՅԼԱՎԵՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՏԵՓԱՆԻ (1934-2005)



Ալեքսանդր Ստեփանի Ասլանյան (ծնվ.՝ 1934, գ.Նորաշեն – մահ.՝ 2005, ք.Մանկա-Պետերբուրգ) գեներալ-մայոր(1977):

1951թ. ավարտել է Հայոցության միջնակարգ դպրոցը: 1953թ. զորակոչվել է ԽՍՀՄ ԶՈՒ և ուղարկվել Կիևյան հետևակային ուսումնարան, որ մեկ տարի սովորելուց հետո փոխադրվել է Թբիլիսիի ուսումնարան: 1956թ. ավարտել է Թբիլիսիի ուսումնական ուսումնարանը լեյտենանտի կոչումով: 1968թ. ավարտել է Մոսկվայի Ֆրունզեի անվան ուսումնական ակադեմիան: Շառայել է ԽՍՀՄ ԶՈՒ տարրեր ուսումնական օկրուգներում: 1956թ.-ից ծառայել է Բելառուսյան ուսումնական օկրուգում՝ Բորիսով քաղաքում: 1968թ.-ից ծա-

ռայել է Միջինասիական ուսումնական օկրուգում՝ Ալմա-Արայում: Այստեղ ստացել է Պամֆիլովի անվան դիվիզիայի հրամանատարի և քանակային կորպուսի հրամանատարի տեղակալի պաշտոնները:

1988թ. ծառայել է Բարվում, իսկ հոնվարին տեղափոխվել է Լենինգրադյան ուսումնական օկրուգ: 1979-1983թթ. ծառայել է Մոնղոլիայում, եղել է Մոնղոլական ազգային բանակի հրամանատարի խորհրդական:

1990թ. անցել է Թուշակի: Ակտիվ մասնակցություն է ունեցել Սանկտ-Պետերբուրգի հայ համայնքի հոգևոր և հասարակական կյանքի զարգացման գործում:

Արժանացել է բազում շքանշանների, մեդալների:



## ԱՐՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ԱԹԱՎԻ

(1882-196.)

Միքայել Արյան Ասրյան (ծնվ.՝ 1882, Հաղորդ-մահ.՝ Ստեփանակերտ), վիրաբույժ, բժիշկ-մանկավարդ:

Նախնական կրթությունը ստացել է տեղի երկրայա դպրոցում, այնուհետև՝ ավարտել գիմնազիան (միջնակարգ դպրոցը՝ Թիֆլիսում) և ընդունվել Մոսկվայի պետական համալսարանի թժկական ֆակուլտետը: 1911թ. ավարտել է առաջին կարգի դիվլումով և աշխատանքի անցել տեղի հիվանդանոցում՝ որպես վիրաբույժ, 1918-1922թթ.՝ Կարմիր բանակի հոսպիտալներում: Չորացրվելուց հետո անցել է աշխատանքի Թիֆլիսում, որպես գլխավոր վիրաբույժ: Հայրենիքի կանչով Թիֆլիսից վերադարձել է՝ Նարարադ և Նվիրվել մարզում առողջապահության համակարգի ծևավորման գործին: 1927-1948թթ. աշխատել է մարզային հիվանդանոցում՝ որպես գլխավոր վիրաբույժ: Հայրենական պատերազմի տարիներին աշխատել է Էվակուացիոն հոսպիտալում, միաժամանակ դասավանդել թժկական տեխնիկումը «Ընդհանուր վիրաբուժություն» առարկան: Երկարամյա և մանկավարժական գործունեության լեռացքում միշտ եղել է մարզի առողջապահության ոլորտի նվիրյալ և արժանացել բնակչության հարգանքին: Ի նշան մեծ սիրո ու հարգանքի մարզային, (հետազոտության հանրապետական) հիվանդանոցը կոչվել է Ասրյանի անունով: Արժանացել է մի շարք պատվորերի, գովասանագրերի:





## ԱՐՅԱՆ ՄԼՎՎԵԿ ԱՐՄԻԿԻ

(1949)

Ալավիկ Արմիկի Արյան (ծնվ.՝ 1949, գ. Մոխբեն), ԼՂՀ վաստակավոր մանկավարժ (2009):

1950թ. ընտանիքի հետ տեղափոխվել է նոյն շրջամի Թաղու գյուղ: 1963թ. ավարտել է Թաղուտի 8-ամյա դպրոցը, 1966թ.՝ Տողի միջնակարգ դպրոցը: 1966-1970թթ. սովորել է Աղրքեցանի Վ.Ի.Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտում՝ մարեմատիկայի ուսուցչի որակադրությամբ:

Աշխատանքի է ընդունվել Հայոցուրի շրջամի Մեծ Թաղերի միջնակարգ դպրոցում՝ որպես մարեմատիկայի ուսուցիչ: 1971թ. մեկ տարի ծառայել է ԽՍՀՄ զինված ուժերում: Զորացրվելուց հետո տեղափոխվել է քաղաք Ստեփանակերտ, աշխատանքի նշանակվել համար 5 երկարօրյա դպրոցում, իսկ 1975թ.՝ թիվ 1 միջնակարգ դպրոցում՝ որպես մարեմատիկայի ուսուցիչ: 1977-1990թթ. աշխատել է որպես թիվ 1 միջնակարգ դպրոցի տնօրինի տեղակալ՝ ուսումնադասադիրական աշխատանքների գծով, 1990-1993թթ.: Ստեփանակերտի քաղգործկոմի կրթության բաժնում՝ որպես բաժնի վարիչի տեղակալ, 1993-1997թթ. ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարությունում՝ որպես կրթության և գիտության վարչության պետ: 1997-2002թթ., աշխատել է ԼՂՀ կրթության և գիտության, 2002-2012թթ.: ԼՂՀ կրթության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալի պաշտոններում: 2012-2015թթ. եղել է ԼՂՀ կրթության և գիտության նախարարի, իսկ մինչև 2017թ. ԼՂՀ կրթության, գիտության և սպորտի նախարարի պաշտոններում, 2017-2018թթ.: ԼՂՀ նախագահի խորհրդական:

Պարզւատրվել է «Աշխատանքային արիության համար» ԽՍՀՄ մեդալ (1986), ՀՀ կրթության և գիտության նախարարության բարձրագույն պարգևով՝ «Ոսկե հուշամեդալով», այլ պետական և գերատեսչական միշտարք հուշամեդալներով ու պարզւատրվել:



## ԱՎԱԳՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՀՐԱՄԻՔԻ

(1957)

Արարատ Հրամիքի Ավագյան (ծնվ.՝ 1957, գ. Տումի), փոխգնդապետ:

1976-1978թթ. ծառայել է խորհրդային բանակում: Այնուհետև ավարտել է Կապանի շինարարական տեխնիկումը: 1982թ. աշխատանքի է անցել ՆԳՆ հրշեց պահպանության վարչության համակարգում: Հեռակա սովորել է Մոսկվայի ՆԳՆ բարձրագույն հրշեց ինժեներատեխնիկական դպրոցում: 1993թ. աշխատանքի է անցել ՀՀ ՆԳՆ հրշեց պահպանության վարչությունում՝ որպես N7 ՈՀՍ-ի պետ:



## ԱՎԱԳՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՄԵՍՐՈՓԻ

(1923-...)

Արտավազդ Մեսրոպի Ավագյան (ծնվ.՝ 1923, գ. Տումի):

Ավարտել է գյուղի դպրոցը, ապա՝ Հաղորդի եռամյա մանկավարժական ուսումնարանը: Աշխատել է Թաղուտ գյուղի 7-ամյա դպրոցում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: 1941թ. զորակոչվել է բանակ: 1942թ. ծանր վիրավորվել է և զորացրվել որպես երկրորդ կարգի հաշճանքամ: Աշխատել է հայրենի գյուղում՝ որպես գրադարանավար, այնուհետև՝ Վեդու շրջանի մի շարք գյուղերում՝ որպես ուսուցչ լեզվի և գրականության ուսուցիչ, ժողովրաժնի տեսուչ: 1956թ. ավարտել է Երևանի Ժդանովի անվան մանկավարժական ինստիտուտը: 1956-1997թթ. աշխատել է ՀՀ ազգային գրադարանում՝ որպես գիլսափոր մասնագետ, հազվագյուտ գրականության բաժնի վարիչ: Պարզւատրվել է մեդալներով, շքանշաններով:





## ԱՎԱԳՅԱՆ ԲԱԴԳԱՍՄԱՐ ՀԱՅՐԱՊԵՏԻ

(1883-1918)

Բաղրասար Հայրապետի Ավագյան (ծնվ.՝ 1883, գ.Թալուտ - մահ.՝ 1918), քաղաքական գործիչ:

Եղի ուսումնարանն ավարտելուց հետո ընդունվել է Խարկովի ամասնաբուժական ինսիտուտը: Հեռացվել է հեղափոխական գործունեության համար, 1905թ. վերադարձել Բարու և զրադավել ուսուցչությամբ: 1917թ. Փետրվարյան հեղափոխության օրերին հեղափոխական գործունեությամ է ծավալել զինվորների և ուսանողների շրջանում, կազմակերպել ցոյցեր ընդդեմ Ռուսաստանի ժամանակավոր կառավարության: Եղի է զինվորական դեպուտատների խորհրդի անդամ, բանվորների և զինվորների դեպուտատների Բարձի խորհրդի գործկոմի քարտուղար (1918): Բարձում խորհրդային իշխանության հաստատումից հետո նշանակվել է քաղաքի կայազորի պետ: Մուսավարական ապստամբության պարտությունից հետո աշխատել է որպես Բարձի պարետ:

Բարձի 26 կոմիսարների թվում գնդակահարվել է 1918թ. սեպտեմբերի 20-ին:



## ԱՎԱԳՅԱՆ ԲՈՐԻՍ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ

(1951)

Բորիս Համբարձումի Ավագյան (ծնվ.՝ 1951, գ.Տումի):

1972թ. ավարտել է Երևանի Բրյուսովի անվան մանկավարժական ինստիտուտը: Խորհրդային քանակում ծառայելուց հետո աշխատել է Երևանի պոլիտեխնիկական և Բրյուսովի անվան ինստիտուտներում որպես դասախոս: Միաժամանակ ընտրվել է վերջինիս կոմիտետական, ապա՝ կուսակցական կազմակերպության քարտուղար: 1980-ական թվականներին աշխատել է Հայաստանի կոմկուսի 26 կոմիսարների շրջկոմում՝ որպես



բաժնի վարիչ, կուսկենտկոմի հրահանգիչ, սեկոնդի վարիչ: 1990թ. ներկ է «Հական» հրատարակչության փոխտնօրեն, 2000թ.՝ՀՀ կառավարության Տնտեսական բարեփոխումների վերլուծական տեղեկատվական կենտրոնի փոխտնօրեն: Հեղինակել է հրատարակչական նախագծերի վերլուծական հոդվածներ, խմբագրել մեկ տասնյակ գրքեր:



## ԱՎԱԳՅԱՆ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՀԱԿՈԲԻ

(1918-1996)

Համբարձում Հակոբի Ավագյան (ծնվ.՝ 1918, գ.Տումի - մահ.՝ 1996, Երևան):

1930-ական թվականներին աշխատել է Շուշիի տարբեր կրօջախներում: Մասնակցել է Հայրենական պատերազմին, պարզեատրվել է մեղալներով և շրանցաններով: Պատերազմից հետո բնակություն է հաստատել Երևանում: Ավարտել է հեռուսական մանկավարժական ինստիտուտը: Աշխատել է մայրաքաղաքի ոսումնական հաստատություններում, 1969թ.-ից՝ Բրյուսովի անվան մանկավարժական ինստիտուտում՝ որպես ավագ դասախոս և դոցենտ: Հեղինակել է մի շաքր դասագրեր, գիտամեթոդական ձեռնարկներ, կազմարիվ գիտական հոդվածներ:



## ԱՎԱԳՅԱՆ ՌՈՒԲԵՆ ԹԵՄՈՒՐԻ

(1953-2005)

Ռուբեն Թեմուրի Ավագյան (ծնվ.՝ 1953, Երևան՝ հայրութեառ ընտանիքում - մահ.՝ 2005, Երևան), կենսարանական գիտությունների դոկտոր (1991):

1970թ. ավարտել է ԵՊՀ-ին կից ֆիզմաք դպրոցը, 1975թ.՝ ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի կենսաֆիզիկայի քամինը: 1975-1976թթ. աշխատել է

Երևանի բժշկական ինստիտուտում՝ որպես ավագ լաբորանտ, 1976-1979թ.՝ Լենինգրադի Ի.Մ.Սեչենովի անվան ֆիզիոլոգայի և կենսաֆիզիկայի ինստիտուտում՝ նույն պաշտոնում: 1981-1984թ. աշխատել է Կիրովականի մանկավարժական ինստիտուտում, 1984-1987թ.՝ Հայաստանի լուսավորության նախարարությունում, 1987-1996թ.՝ Հայաստանի փոքրարարական կենսաբնության ինստիտուտում: 1993թ. նշանակվել է «Նոյ» ԳՀ կենտրոնի տնօրին: 2001թ.-ից աշխատել է ԱրՊՀ-ում՝ որպես կենսաբնության ամբիոնի վարիչ: Հեղինակել է 35 գիտական և 25 գիտամեթոդական հոդվածներ:



### ԱՎԱԳՅԱՆ ՄԵՐԳԵՅ ԵՓՐԵՄԻ

(1932-1996)



Մերգեյ Եփրեմի Ավագյան (ծնվ.՝ 1932, գ.Տումի-մահ.՝ 1996, Ստեփանակերտ), բժիշկ, բիր-կողորդ-ականջարանի:

1949թ. ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը, դարձել դպրոցի առաջին մեղավակիրը: Ընդունվել և 1959թ. ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտը: Աշխատանքի և անցել Ստեփանակերտի, հետազայտմ՝ Հանրապետական հիմքանացում՝ որպես թիրապետական աշխատանքի ընթացքում անընդիատ բարձրացրել է որպակորման մակարդակը՝ անցնելով վերապատրաստում ԽՍՀՄ առաջար բժշկական գիտահետազոտական հաստատություններում: Երկարամյա նվիրյալ աշխատանքի ընթացքում փրկել է քաղնաքի կյանքեր: Վաստակել է ժողովրդի սերը և իրավամբ համարվում էր «Ժողովրդական բժիշկ»:



### ԱՎԱՆ ԵՎ ԹԱՐԻԽԱՆ ՅՈՒԶԲԱՇԻ ԵՂԲԱՅՐՆԵՐ

Ավան և Թարիխան Յուզբաշի Եղբայրներ, 18-րդ դարի հայ ազատագրական պայքարի ղեկավարներ:

Եղբայրները ղեկավարում էին Դիգակի Մելիք Եզանի գորագունդը: 1726թ. բորբական Սարի Մուստաֆա փաշան Շուշին գրավելուց հետո ներխուժեց Ավան Յուզբաշու ճամբար՝ Սղնախում: Վերջինս ժանր մարտից ու մեծաքանակ զիերից հետո թշնամու մեծաքանակ առավելությունից ետ քաշվեց և նոր ուժեր համախմբելով կենտրոնացավ Տողում: Թուրքերը այդ մարտերում կորցրին 800 զինվոր և ետ շրջվելով նահանջեցին Գանձակ: 1728թ. բորբերը ամրապնդելով իրենց դիրքերը, կրկին շարժվեցին դեպի Ղարաբաղ՝ Դիգակ: Եղբայրները Տողից տեղափոխվեցին Ուստաստան և ծառայության անցան ուսական կառավարության մոտ: Ավան հարյուրապետն ապրել է մինչև 1735թ., քաղված է Աստրախանում: Թարիխան հարյուրապետի մահվան վերաբերյալ տեղեկություններ չեն պահպանվել:



### ԱՎԱՆԵՍՅԱՆ ԻՎԱՆ ԽՈՐԵՆԻ

(1968)



Իվան Խորենի Ավանեսյան (ծնվ.՝ 1968, գ.Քանաձոր), հասարակական գործիչ:

Ավարտել է Բանաձորի միջնակարգ դպրոցը: 1986-1989թ. սովորել է Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի անասնաբուժական ֆակուլտետի հեռակա քաժնում: 1986-1988թ. ծառայել է Խորհրդային բանակի շարքերում: 1988-1990թ. աշխատել է որպես ԽԱՖ-ի վարիչ և սովորության գլխավոր անասնաբուժ: 1992-1994թ. մասնակցել է Արցախյան գյոյապայքարին: Եղել է գումարտակի հրամանատար, ապա ՊԲ հրամանատարի տեղակալ: 1994-1996թ. աշխատել է ԼՂՀ ՆԳ Հաղորության շրջանային քաժնի պետի տեղակալ, ապա պետ: 1997թ. նշանակվել է Հաղորության շրջանային կենտրոնի տնօրին: 1998-2005թ. եղել է Հաղորության համայնքապետ: Ընտրվել է ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավոր: 2017-2018թ. ղեկավարել է Հաղորության շրջանակը:



## ԱՎԱՆԵՍՅԱՆ ԿԱՐԵՆ ԳԱՐԵԳԻՆԻ (1957)

Կարեն Գարեգինի Ավանեսյան (ծնվ.՝ 1957, Բաքու՝ արմատներով Ցոր գյուղից), խորհրդային և ռուսական էստրադայի դերասան, հումորիստ, պարողիստ, կինոդերասան, ՌԴ վաստակավոր դերասան (2009), 1987թ. Էստրադային դերասան-ների համամիուրենական մրցույթի դիմունակիր:

Անյալ դարի 50-ական թվականներին ընտանիքը Հայոցի Ցոր գյուղից տեղափոխվել է Բարու, որտեղ էլ ծնվել է Կ.Ավանեսյանը: Մանկության, պատանեկության, երիտասարդության լավագույն տարիները անց է կացրել Ցոր գյուղում:

Դպրոցն ավարտելուց հետո ծառայել է խորհրդային բանակում: Ընդունվել և 1985թ. ավարտել է Բաքվի արվեստի ինստիտուտը: Դեռ ուսանողական տարիներից մասնակցել է «Աստղերի շքերթ» շոու-ծրագրին: ԱՊՀ երկրներում հաջողության հասած բուհի միակ դերասանն էր: 1982-1985թ. եղել է Աղրկոնցերտի դերասան: Բաքվի հայարափումից հետո ընտանիքի հետ բնակույթուն է հաստատել Մոսկվայում: Մասնակցել է «Նմանակողների շքերթ» շոու-ծրագրին: 1990-1998թթ. աշխատել է Մաշա Ռասպուտինայի խմբում: Որպես զվարճացնող հանդես է եկել նաև այլ ուսական էստրադային երգչների մենահամերգներում: Նկարահանվել է ֆիլմերում և սերիալներում: Մասնակցել է բազմաթիվ հումորային ծրագրերի: Հանդես է եկել «Смехопанорама» և «Аншлаг» հեռուստածրագրում: 2003-2014թթ. աշխատել է ՌԽՍՀ ժողովրդական դերասան Եվգենի Պետրոսյանի «Ծուռ հայելիների» հումորային ծրագրում: Նա միաժամանակ նաև ստեղծագործում է, ինքը էլ հաճախ դառնալով իր երգիծական և հումորիստական գործերի կատարողը:



## ԱՎԱՆԵՍՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ՀԱՅՐԱՊԵՏԻ (1920-1989)

Միքայել Հայրապետի Ավանեսյան (ծնվ.՝ 1920, գ.Թաղոս - մահ.՝ 1989, ք.Ստեփանակերտ), պետական գործիչ:

Ավարտել է գյուղի 7-ամյա դպրոցը, այնուհետև Տողի շրջանի միակ միջնակարգ դպրոցը: 1939թ. ծառայել է Կարմիր բանակի շարքերում: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, վիրավորվել: Պարզեատրվել է 1-ին և 2-րդ կարգի շրանցաններով, մեղաներով:

1948թ. աշխատանքի է անցել կոմիտամիուրյան մարզային կոմիտեում՝ որպես իրահանգիչ: 1949թ. ավարտել է ԼՂ մարզային կոմիտեի կուսակցությանը կից երկամյա գիշերային համալսարանի պատմության ֆակուլտետի հեռակա քաժինը: 1950-1952թթ. աշխատել է Հայոցի շրջանային կոմիտամիուրյան քարտուղար: 1952-1954թթ. եղել է հանրապետության Բաքվի կուսակցական դպրոցի ունինդիր: Վերադառնալուց հետո շարունակել է աշխատանքը շրջանի կուսակցական կառույցներում: 1958թ. տեղափոխվել է Մտեփանակերտ, աշխատել քաղաքային և մարզային կուսակցության կոմիտեում: 1959-1964թթ. ստորել է ԽՄԿԿ Կենտկոմին կից Բաքրձագույն կուսակցության դպրոցում: 1985թ. անցել է քոչակի: Աշխատել է «Գիտելիք» կազմակերպությունում:



## ԱՎԱՆԵՍՅԱՆ ՌԱՖԻԿ ՎԱՆՅԱՅԻ (1930-...)

Ռաֆիկ Վանյայի Ավանեսյան (ծնվ.՝ 1930, գ.Բանաձոր - մահ.՝ Մոսկվա), գեներալ-մայոր:

1947թ. ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: Ծառայել է Խորհրդային բանակի շարքերում: Այնուհետև ընդունվել է Ֆրունզեի անվան ուսումնական ակադեմիան: Լեյտենանտի կոչումով որպես սահմանապահ ուղեկայի պետ ծառայել է ԽՍՀՄ իրանի սահմանային գորամակերում: Ծառայությունը շարունակել է Երևանում, Մոսկվայում: Եղել է Կարելական թերակղզու և Ֆինլանդիայի սահմանապահ վայական Հրամանական գյուղական գործադրությունում:



## ԱՎԵՏԻՍՅԱՆ ՎԱՂԻՄ ՄԵՐԳԵՅԻ

(1937)

Վաղիմ Մերգեյի Ավանեսյան (Ավանեսով) (ծնվ.՝ 1937, ք. Կրասնավոլոսկ՝ ծամձորեցող ընտանիքում), մանկավարժական գիտությունների դոկտոր (1994), պրոֆեսոր (1994), Դաշտավանի Ս.Դ. Ավետիսյանի անվան Ազգային թժշկական համալսարանի Պատվավոր պրոֆեսոր:

1930-ական թվականներին ընտանիքը Ծամձորից տեղափոխվել է Թուրքմենստանի Կրասնավոլոսկ քաղաք: 1959թ. ավարտել է Աշխարաղի պետական համալսարանը: Նրա կողմից ստեղծած ուսումնական թեստերով ու տեքստերով սովորել են շուրջ 13 հազար դասախոսներ և ուսուցիչներ Հայաստանում, Արցախում, Թերոռուսիայում, Ղազախստանում, Ուկրաինայում, Ուզբեկստանում, Ռուսաստանում: Տիրապետում է անզերենին: Դասավանդում է Ուսուաստանի և արտասահմանյան տարրեր բուհերում: Թորակցում է Ուսուաստանի մանկավարժական մամուլին: Հեղինակել է 150 գիտամեթոդական հոդվածներ, մենագրություններ, մանկավարժական ծեռնարկներ: Մի քանի տարի առաջ այցելել էր ճախմիների գյուղ Ծամձոր, վերակառուցել պատենական տունը: 2020թ. ամսանմ այցելել է Արցախ:



## ԱՎԵՏԻՍՅԱՆ ԹԱՎԱՐԱ

ԿՈՆՍԱՆԴՐԻՆԻ

(1918-2012)



Թամարա Կոնսանդրինի Ավետիսյան (ծնվ.՝ 1918, ք. Տաշքենդ, Թուրքմենստան - մահ.՝ 2012, Կիև, Ուկրաինա) (ընտանիքը ծագումով Արցախից էր, մայրը՝ ծնունդով Հայութից), հայագիտորդային և ուկրաինական երգչուիի, Ուկրաինայի Ազգային Ֆիլհարմոնիայի մենակատարությի (1947-1987), աշխարհի ժողովուրդների երգերի հայտնի կատարող, Ուկրաինայի վաստակավոր արտիստուիի (2008), իրեական մշակույթի վաստակավոր գործիչ, ՀՀ Արվեստների ակադեմիա-

յի պատվավոր ակադեմիկոս, «Ուկրաինական Թամար Քազուիի»:

Դպրոցն ավարտելուց հետո սովորել է Տաշքենդի և Մոսկվայի կոնսերվատորիամերում, ինչպես նաև՝ Մոսկվայի հիդրոմելիորացիայի և ավտոճանապարհային ինստիտուտներում: Մոսկվայի կոնսերվատորիայում ընտրել է ժողովրդական երգի ժանրը և հաջողությամբ հյուրախաղերով հանդես եկել որպես Համամիուրենական համերգային միավորման երգչուիի: 1947թ. տեղափոխվել է Կիև և հանդես եկել Ուկրաինայի Ազգային ֆիլհարմոնիայի թեմում, աշխատել մինչև 1987թ.: Իր ստեղծագործական կյանքի ընթացքում կատարել է բազմաթիվ ազգագրական երգեր՝ աշխարհի ժողովուրդների ավելի քան 60 լեզուներով: Անցնելով թշակի, գրադիւ է լրագրությամբ: 1998թ. Կիևում իրատարակել է «Անոնամալին» գիրքը, 2007թ.՝ երկրորդ՝ «Իմ ճակատագիրը երգն է» գիրքը՝ «Ուկրաինայի հայերի միուրյուն» հասարակական կազմակերպության հովանավորչությամբ: Ակադիվ մասնակցություն է ունեցել Ուկրաինայում հայկական մշակույթը զարգացնելու գործում: Այդ առիթով, իր հարցադրույթներից մեկում նա նշել է, որ վաստակավոր արտիստի կոչում ստանալը նա ընկալում է ոչ թե որպես անձնական իրադարձություն, այլ որպես հայուի:



## ԱՎԵՏԻՍՅԱՆ ՀՐԱԶԻԿ ԱՐՏԱՉԵՍԻ

(1938-1986)

Հրաչիկ Արտաշեսի Ավետիսյան (ծնվ.՝ 1938, գ. Տումի - մահ.՝ 1986, ք. Երևան):

1955թ. ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: Ուսումը շարունակել է Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումում: 1958-1961թթ. ծառայել է Խորհրդային բանակում: 1961-1963թթ. աշխատել է Երևանի ԶԷԿ-ում: 1969թ. ավարտել է Երևանի պետական հրավարանական ֆակուլտետը՝ որպես տեսուչ: Ընդունվել է ՆԳՆ ՀՊՎ կադրերի բաժին: 1971-1978թթ. աշխատել է որպես նոյն վարչության բաժանմունքի պետ: 1975-1980թթ. եղել է ՆԳՆ ուսումնարիխզագույն աշխատանքների և բաղպաշտպանության բաժնի պետ:



## ԱՐՁՈՒՄԱՆՅԱՎԱ ԹԵՍՈՒՐ ՄԵՄՐՈՊԻ

(1913-1994)

Թեմուր Մելքոնի Արզումանյան (ծնվ.՝ 1913, գ. Խորմանջուղ, Խաղողագործ, Սոցիալիստական աշխատանքի հեռու (1950):

Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: 1945թ.-ից աշխատել է որպես խաղողագործական օդակի օդակավար՝ Հայրութի շրջանի Խորմանջուղի «Աշխատանք» կողմանը ստեղծված պատում: 1949թ. ստացել է խաղողի ուղղորդային բերք. 4 հա խաղողի այգու յուրաքանչյուր հեկտարից՝ 124,6 գ «Խնձորին» ստրի խաղող: Կախված կլիմայական պայմաններից՝ գործնականում կիրառել է խաղողի ստրայխին զյուղատնտեսական տեխնոլոգիայի գիտական հիմքերը: Պարզևատրվել է Լենինի շրանցանով, «Մուրճ և մանգաղ» ուսկե նեղարկվ: Ակտիվորեն մասնակցել է ԼՂՄՍ-ի տնտեսական և հասարակական կյանքին:



## ԱՐՁՈՒՄԱՆՅԱՎԱ ՀՐԱՅՅԱ ՎԱՂԱՐՃԱԿԻ

(1965)

Հրաշյա Վաղարշակի Արզումանյան (ծնվ.՝ 1965, ք. Հայրութ) տեխնիկական գիտությունների թեկնածու (1995), քաղաքագիտության դոկտոր (2020), Ազգային անվտանգության և ռազմավարության հարցերի մասնագետ:

1982թ. ավարտել է Հայրութի միջնակարգ դպրոցը: 1983-1988թ. ընդունվել և գերազանցությամբ ավարտել է Տագանրոգի (ՌԴ) ուսումնական համալսարանը՝ «Հաշվողական մեթենաներ, համակարգեր, համալիրներ և ցանցեր» մասնագիտությամբ: 1991թ. ընդունվել է նոյն համալսարանի ասպիրանտուրան, գերազանցությամբ ավարտել 1993թ.: 1994-1995թ. Սանկտ Պետերբուրգի տեխնիկական համալսարանում պաշտպանել է թեկնածուական թեզը: Երևանի պետական համալսարանում պաշտպանել է «Քաղաքական-աստվածաբանական տեղաշարժի պարագաներ» ազգային անվտանգության տեսության զարգացման մեջ» թեզը, ստացել քաղաքական-աստվածաբանական տեղաշարժի պարագաների ազգային անվտանգության մասնագիտական պատում: 1995-2001թ. աշխատել է ԼՂՀ ՆԳ նախարարության պահպանության վարչության պետի տեղակալ:



ԼՂՀ ՊԲ շարքերում: Եղել է ԼՂՀ ՊԲ տեղեկատվական տեխնոլոգիաների ծառայության ղեկավար, 2001-2004թ.: ԼՂՀ նախագահին առներեր «Պլանավորման խմբի» գլխավոր մասնագետ, 2004-2006թ.: ԼՂՀ Անվտանգության խորհրդի տեղեկատվական անվտանգության վարչության պետ, 2006-2008թ.: ԼՂՀ Անվտանգության խորհրդի աշխատանքների նախապատրաստման վարչության պետ: 2008-2020թթ. աշխատել է որպես ԼՂՀ արտաքին գործերի նախարարի խորհրդական: 2006-2013թթ. եղել է նաև Սոսկվայի «Ամիկ» հայկական ամսագրի գլխավոր խմբագրի տեղակալ:



## ԱՐՁՈՒՄԱՆՅԱՎԱ ՌՈԲԵՐՏ ՎԵԴՐԱՆԻԿԻ

(1956)

Ռոբերտ Անդրանիկի Արզումանյան (ծնվ.՝ 1956, ք. Ստեփանակերտ՝ հիմքադերու ընտանիքում), փոխգնդապետ:

1963-1973թթ. սովորել է Ստեփանակերտի թիվ 3 ուսուական դպրոցում: 1978թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ռադիոէլեկտրոնիկայի ֆակուլտետը: Զուգահեռաբար 1975-1977թթ. սովորել և ավարտել է նաև հասարակական գիտությունների ֆակուլտետը, ստացել միջազգայնագետի որակավորում: Աշխատանքի է անցել ԼԿԵՄ Ստեփանակերտի քաղաքային կոմիտեում՝ որպես հրահանգիչ, 1979թ.՝ նորաբաց երկարության կայանում՝ որպես ավտոմատիկայի ինժեներ: 1980թ. հրավիրվել է մարզային վարչություն ՆԳ՝ ստանալով լեյտենանտի կոչում: Ծորց երկու տասնամյակ ծառայել է ներքին գործերի համակարգում, գրադեցնելով մի շարք պատասխանատու պաշտոններ: 1991-2001թթ. աշխատել է ԼՂՀ ՆԳ նախարարության պահպանության վարչության պետի տեղակալ:

Մասնակցել է Արցախյան գյուղարտին, անցել բռչակի: Զքաղկել է նաև մանկավարժական գործունեությամբ: Բազմամյա անբախիր աշխատանքի համար արժանացել է խրախուսանքի:





## ԱՐՁՈՒՄԱՅՆԱՅԻՆ ՍՈՍ ՌՈՒԲԵՆԻ (1951-2021)

Սոս Ռուբենի Արզումայնայն (ծնվ.՝ 1951, գ.Հին Թաղեր - 2021, Ստեփանակերտ), Հանրապետության վաստակավոր ոստիցի (2010):

1968թ. գերազանցությամբ ավարտել է ծննդավայրի միջնակարգ դպրոցը: 1968-1972թթ. սովորել է Աղբեջանի Լենինի անվան Մանկավարժական ինստիտուտի ֆիզիկայի բաժնում: Աշխատանքի է նշանակվել հայրենի գյուղի միջնակարգ դպրոցում, 1972-1977թթ. աշխատել է որպես ֆիզիկայի ոստիցի: 1973-1974թթ. ծառայել է խորհրդային բանակի շարքերում:

1977թ. ամուսնացել է և ընտանիքի հետ տեղափոխվել Ստեփանակերտ: 1977-1979թթ. աշխատել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում՝ որպես ֆիզիկայի ամբիոնի լաբորատոր: 1979-1989թթ. գրադեցրել է Ստեփանակերտի քաղղորդկոմի կրոբույան բաժնի դպրոցական տեսչի հաստիքը: 1987-1989թթ. համատեղությամբ եղել է ճյուղային արհմիության աշխատողների քաղաքային խորհրդի նախագահ: 1994-1995թթ. աշխատել է որպես ԼՂՀ ուսուցչների վերապատրաստման և կատարելագործման ինստիտուտի դպրոցական կարինետի վարիչ, 1995թ.՝ ԼՂՀ ԿԳ նախարարությունում՝ որպես մասնագետ, 1997-2004թթ.՝ հանրակրթական վարչության պետ: 2004-2007թթ. ղեկավարել է բարձրագույն և միջին մասնագիտական կրոբույան բաժինը, 2007թ.-ից՝ ԼՂՀ ԿԳՄՆ աշխատակազմի պետական տեսչությունը: 2017-2021թթ. հանդիսացել է ԼՂՀ ԿԳՄՆ նախարարի խորհրդական: Պարզեցած է լուսավորության գերազանցիկ կրծքանշանով, արժանացել պատվոգրերի և հուշամեդալների:



## ԲԱՐԱՅԻՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԻՔԱՅԵԼԻ (1968-1994)

Ալեքսանդր Միքայելի Բարայան (ծնվ.՝ 1968, գ.Վանք -մահ.՝ 1994, Վարանդայի շրջան), «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանակիր:

1986-1988 թվականներին ծառայել է ԽՍՀՄ Զինված ուժերում:

Մասնակցել է Հայրուրի, Ֆիզովի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական նարտերին:



## ԲԱՐԱՅԻՆ ԱՐՄԵՆ ՄԱԿԱՐԻԿԻ (1974-2018)

Արմեն Մակարիկի Բարայան (ծնվ.՝ 1974, Երևան՝ խանձաձորցու ընտանիքում - մահ.՝ 2018), 1-ին կարգի օդաչու, Փոխգնդապետ:

17 տարեկանից հոր հետ մասնակցել է Արցախի ազատագրական պայքարին, հայրենի Խանձաձառոր գյուղի պաշտպանությանը: 1992թ. անդամագրվել է «Արարկիր» կամավորական զորամիավորմանը և մասնակցել Հայրուրի շրջանի Սարինշենի հատվածի մարտական գործողություններին: 1992թ. հոկտեմբերին ջոկատի հիմքի վրա կազմակորվել է Հայրուրի 11-րդ մոտոհրածգային գումարտակը, որի կազմում մասնակցել է շրջանի պաշտպանությանը և ազատագրմանը: 1993թ. զորակոչվել է ՀՀ զինված ուժեր՝ Ժամկետային զինծառայության: 1993թ. ընդունվել և 1996թ. ավարտել է Երևանի ռազմական ակադեմիայի բոհքատեխնիկական ուսումնարանը: Ավարտելոց հետո ծառայության է անցել ՀՀ ՊՆ Ն զորամասում, որպես ինքնարիուային օդակի օդաչու, հրահանգիչ: 1997-2011թթ. ՀՀ ՊՆ տարբեր զորամասերում գրադեցրել է ՌԱԷ-ի ինքնարիուային օդակի օդաչու, հրահանգիչ, ՌԱԷ-ի ինքնարիուային հրամանատարի, տրանսպորտային ջոկատի հրամանատար, Ն զորամասի 2-րդ գրոհային ավիացիոն էւկաորիլիայի ղեկավետի, զորամասի շտաբի պետի տեղակալի, զորամասի գրոհային ավիացիոն էւկաորիլիայի հրամանատարի պաշտոնները: 2014թ. գրադեցրել է ՀՀ ՊՆ Ն զորամասի ավագ ղեկավետի պաշտոնը: Բազմիցս արժանացել է խրախուսանների, պարգևների, մելանջերի: 2018թ. ղեկտեմբերի 4-ին ամենօրյա մարտական ծառայության պլանով ուսումնամարզական բոիչը հրականացնող ՀՀ ԶՈՒ ՍՊԸ-25 մարտական ինքնարիու վրայի է ներարկվել, որտեղ էլ զոհվել է Արմեն Բարայանը:

Փոխգնդապետ Արմեն Բարայանը հայտնի օդաչու, գնդապետ Բորիս Բարայանի եղբորորդին է: Ուսուաստանում տարբեր պաշտոններ գրադե-



րած գնդապետը Հայաստան է վերադարձել 90-ականներին՝ մասնակցելու Արցախյան ազատամարտին: Նա մեծ ներդրում է ունեցել հայկական ռազմական ավիացիայի կազմավորման գործում. եղել է ավիացիայի շտաբի պետ: Բորիս Բարայանը գրիվել է 1995թ. Արցախում՝ L-39 ինքնարիոնվ մարտական առաջադրանք կատարելիս:

Արմեն Բարայանը ռազմական օդաչուի մասնագիտությունն ընտրել է հենց հորեղբոր օրինակով:



### ԹԱՐԱՅԻՆ ՀԱՍՏԵՏ ՀՈՎՍԵՓԻ (1939)



Համեստ Հովսեփի Բարայան (ծնվ.՝ 1939, գ.Տումի), ոստիկանության փոխգնդապետ:

Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո մեկ տարի աշխատել է Տումո կոլտնտեսությունում: 1958-1963թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետում: 1964թ.-ից աշխատել է ՀՀ ՆԳ համակարգում (Երևանի ՆԳ վարչությունում, ՆԳՆ ակադեմիայում):



### ԹԱՐԱՅԻՆ ՀԱՍՏ ՀՈՎՍԵՓԻ (1942-2021)



Համ Հովսեփի Բարայան (ծնվ.՝ 1942, գ.Տումինահան, 1945 թվականի մահ.՝ 2021, Երևան), վարակարան, ԼՂՀ վաստակավոր թժիշկ (2012):


Ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: 1959-1965թթ. ընդունվել և ավարտել է Երևանի թժշկական համալսարանը: Վերապարաստվել է ռազմադաշտային վիրաբուժության քառամյա դասընթացներում:

Աշխատանքի է անցել Հայրութի շրջանային հիվանդանոցում, նախ՝ որպես թժիշկ-լաբորատոր, այսուհետև՝ վարակարան: 1984-1994թթ. եղել է հիվանդանոցի գլխավոր թժիշկ, 1992-1994թթ., միաժամանակ, զինվորական հոսպիտալի պետ: Մասնակցել է Հայրութի, Վարանդայի, Ջրականի, Կովսականի, Կարախանըքյիլի, Կավարի բարձունքի, Սերդահմեղիի ազատագրական մարտերին: 1988-1994թթ. ռազմադաշտային շարժական հոսպիտալներ է ստեղծել Խճարերդում, Ազնխում:

ԼՂՀ առողջապահության ոլորտում ունեցած մեծ ներդրման, մարտական խնդիրների լավագույն կատարման համար պարգևնատրվել է «Վաշագան Բարեպաշտ», «Մարտական ծառայություն» մեդալներով:



### ԹԱՐԱՅԻՆ ՀԵՆՐԻԿ ՀՈՎՍԵՓԻ (1938)



Հենրիկ Հովսեփի Բարայան (ծնվ.՝ 1938, գ.Տումի), փիլիսոփայական գիտությունների թեկնածու:

1960-1962թթ. աշխատել է Երևանի պետական համալսարանի աստրոֆիզիկայի ամբիոնում: 1962թ.-ից աշխատում է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի Դիլջանի բարձրագույն մարտահիմայի ամբիոնում: 1972-1979թթ. եղել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի Դիլջանի մասնաճյուղի տնօրենը: Համատեղությամբ աշխատում է նաև Սանկտ Պետերբուրգի արտաքին տնտեսական կապերի և իրավունքի ինստիտուտի Երևանի մասնաճյուղում, Հայկական քաց համալսարանում:





## ԲԱՐԱՅՆ ԴԱՐԻՔ ՄԵՐԱՅԵԼԻ

(1955)

Դարիք Սիրայելի Բարայան (ծնվ.՝ 1955, Հայոց), փիլիսոփայական գիտությունների թեկնածու (1988), դոցենտ:

1971թ. ավարտել է Վարանդայի թիվ 2 միջնակարգ դպրոցը, 1978թ.՝ Դոճի Ռուսութիւն պետական համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետը: 1981-1992թթ. աշխատել է Ստեփանակերտի մամկանակարգական ինստիտուտում՝ որպես փիլիսոփայության դասախոս: 1990-ական թվականներին տեղափոխվել է Դոճի Ռուսութիւն պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 1996-2004թթ. աշխատել է Դոճի Ռուսութիւն կառավարման թիգնուսի և իրավունքի ինստիտուտում՝ որպես հումանիֆար գիտությունների ամբիոնի վարիչ և իրավաբանական ֆակուլտետի դեկան: 2005-2008թթ. եղել է ՌԴ ՊՆ «Պրոգրես» հասուլ նշանակության թիվ 5 ՎԳՈՒՄՊ երևանյան մասնաճյուղի տնօրեն: 2009թ. նշանակվել է ԱրՊՀ իրավունքի ամբիոնի վարիչ: 2009-2020թթ. աշխատել է Մ.Մաշտոց համալսարանի գիտության և արտարին կապերի գծով պրոռեկտորի պաշտոնում: Հեղինակել է շուրջ 60 գիտական աշխատություն:



## ԲԱՐԱՅՆ ՍՎԵՍՏՈՆ ԲԱՐԱՅԵԼԻ

(1905-1966)

Սամոն Բարաջանի Բարայան (ծնվ.՝ 1905, գ. Ցոր - մահ.՝ 1966, Բարու), հասարակական գործիչ:

Ակքրենական կրթությունը ստացել է տեղի ծխական դպրոցում: Բարվում ավարտել է քանֆակը, այնուհետև ստացել գյուղատնտեսի մասնագիտություն: Վերադարձել է Հայոց, աշխատել մի շարք պատասխանատու պաշտոններում: Շուրջ 15 տարի ղեկավարել է շրջանի գյուղվարչությունը: 1951-1960թթ. աշխատել է որպես Բանաձորի կոլտնտեսության նախագահ: Այդ տարիներին տնտեսությունը դասվել է առաջատարների շարքում, քարձրացել է բանաձորիների և ցորեցիների սոցիալ-տնտեսական մակարդակը: 1961թ. տեղափոխվել է Բարու:

## ԲԱՐԱՅՆՑ ՄԱՐԻՍ ՍԱՐԳՍԻ

(1927-1979)

Մարիա Սարգսի Բարայանց (ծնվ.՝ 1927, Բարու՝ արմատներով Մեծ Թաղեր գյուղից - մահ.՝ 1979, Երևան), փիլիսոփայական գիտությունների թեկնածու (1955), դոցենտ (1962):

1933-1944թթ. սովորել և գերազանցությամբ ավարտել է Բարվի թիվ 137 հայկական միջնակարգ դպրոցը: 1944թ. ընդունվել է Բարվի պետական մանկավարժական ինստիտուտի հայկական բանասիրական ֆակուլտետը: 1946թ.-ից ուսումն շարունակել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում: 1950թ. ընդունվել է ԽԱրովյանի անվան ինստիտուտի ասպիրանտուրան: 1955թ. թեկնածուական ատենախոսություն է պաշտպանել Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանում: 1966թ. իրավիրվել է Երևան և մինչև 1979թ. աշխատել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում:

Հեղինակել է երկու տասնյակ գիտական աշխատանք:




## ԲԱՐԱՅՆ ԱՇՈՏ ԼԵՎՈՆԻ

(1915-2011)



Աշոտ Լևոնի Բաղդայան (ծնվ.՝ 1915, գ. Բանաձոր - մահ.՝ 2011, Մոսկվա), ՌԽՍՀ վաստակավոր կապավոր, Միջազգային Էլեկտրոկապերի միության պատվավոր անդամ:

Ակգրնական կրթությունը ստացել է ծննդավայրի դպրոցում: 1932թ. ընտանիքի հետ տեղափոխվել է Բարու: 1937թ. ավարտել է Անդրեվսկայան Էլեկտրոտեխնիկական կապի ինստիտուտը: Ամբողջ կյանքը նվիրել է ուսումնական և ուսումնական գործությանը: Ինստիտուտում ավարտելուց հետո 1937-1942թթ. աշխատել է Դոճի մարզային կապի գարչությունում: Որպես ինժեներ, Ստալին (այժմ՝ Դոճեցկ) քաղաքի կապի մարզային գարչության ուսումնական տնօրեն: Մասնակցել է 1941-1945թթ. Հայրենական մեծ պատերազմին: Եղել է Ստալինցրադի ու



դիտկենտրոնի տնօրեն: 1943թ. աշխատանքի է տեղափոխվել Մոսկվա՝ Կապի ժողկոմ, ավագ ինժեներից հասել մինչև նախարարի տեղակալի պաշտոնին: Այնուհետև աշխատանքի է անցել տրանսպորտի և կապի նախարարությունում: 1970-1978թթ. եղել է ԽՍՀՄ կապի փոխնախարար: 1972թ. համակարգել է Ռազմիկանականությունների պետական հանձնաժողովի առեղջումը և դեկավարել այն շուրջ 20 տարի: Նշանակալի ներդրում է ունեցել ուսդիրականության, հետագայում նաև՝ ուղեծրի տարածքի ուսդիրականության օգտագործման ուսումնասիրության գործում: Նրա աշխատանքի շնորհիվ Ռուսաստանում սկսեց գործել ժամանակակից ուսդիրականությունը, բջջային կապը:



## ԲԱԴԱՅՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ԻՍԱԿԻ (1918-2001)

Գուրգեն Իսակի Բադայյան (ծնվ.՝ 1918, Բանաձոր - մահ.՝ 2001, Մոսկվա), հասարակական գործիչ:

Աշխատել է ԽՄԿԿ կենտկոմում՝ որպես հրահանգիչ և հասել մինչև Կենտկոմի բաժնի վարիչի պաշտոնի:



## ԲԱԴԱՅՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ ՍԱՄՍՈՆԻ (1914-1987)

Նիկոլայ Սամսոնի Բադայյան (ծնվ.՝ 1914, գ.Բանաձոր - մահ.՝ 1987, Բաքու), գնդապետ:

Ընտանիքի հետ 1930-ական թվականներին տեղափոխվել է Բաքու: Դպրոցն ավարտելուց հետո ծառայության է անցել Կարմիր բանակում: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: 1950թ. աշխատանքի է անցել Աղրբեջանական ԽՍՀ Պետանվտանգության մարմիններում: Կարճ ժամանակում որպես կարգապահ, պարտաճանաչ և արհեստավարժ սպա, հասել է մինչև Աղրբեջանի ՊԱԿ-ի տեղակալի պաշտոնին, ստացել գնդապետի կոչում: Պարզւատրվել է շրանշաններով և մեղալներով, անձնական գենքով: Եղել է բաքվարնակ բանաձորցիների «Բանաձոր» բարեգործա

կան կոմիտեի նախագահը: Նրա անմիջական նախաձեռնությամբ և օգնությամբ 1969թ. կառուցվել է Մեծ հայրենականում զոհված բանաձորցիների հուշահամալիրը և գյուղի ջրի մատակարարման ցանցը:



## ԲԱԴԱՅՅԱՆ ԳԱԼՅԱ ԱՐՏԵՄԻ (1923-2019)

Գալյա Արտեմի Բադայյան (ծնվ.՝ 1923, գ.Մեծ Թաղեր- մահ.՝ 2019, Մեծ Թաղեր), 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ:

1937թ. ավարտել է հայրենի գյուղի 7-րդ դասարանը և ընդունվել Հայրության մանկավարժական ուսումնարանը: 1940թ. ավարտել է ոսումնարանը, աշխատանքի անցել որպես ուսուցիչ: 1941թ.-ից համատեղությամբ աշխատել է դպրոցում, կոլունական արտադրության մեջ, հասարակական վայրերում: 1943թ. ընդունվել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժինը, ավարտել առաջին կարգի դիվլոմով և նորից մանկավարժական աշխատանքի անցել հայրենի գյուղի դպրոցում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: 1948թ. նշանակվել է դպրոցի փոխնօրեն: 1951-1953թթ. աշխատել է կուսակցության Հայրության կոմիտեում՝ որպես քաղկարինեսի վարիչ: 1953թ. կրկին վերադարձել է իր սիրած աշխատանքին: 1953-1989թթ. աշխատել է հայրենի գյուղի կրթօջախում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: Բազմիցս ընտրվել է գյուղական խորհրդի պատգամավոր, շրջանային և մարզային կոնֆերանսների պատվիրակ: Արժանացել է խախոսանքի և պատվորերի, պարզեւորվել «Աշխատանքի վետերան» մեդալով: Հաճապետական կարգի անհատական բոշակառու է:





## ԲԱԴԱՅԱՆ ՎԱՀԱՆ ՄԻՔԱՅԵԼԻ

(1968)

Վահան Միքայելի Բաղդասյան (ծնվ.՝ 1968, գ.Խանձաձոր), ռազմական և քաղաքական գործիչ:

Ավարտել է Խանձաձորի ուրամյա, ապա՝ Հայաստանի Նախան քաղաքի թիվ 9 միջնակարգ դպրոցը; 2001թ. ավարտել է Երևանի Կ.Մարքսի անվան պետական պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետաշինարարական ֆակուլտետը:

1986-1988թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1988թ. մայիսին հիմնել է Հաղորդի պարտիզանական ջոկատը: 1994թ. վիրավորվել է: «Պատերազմի ավարտից հետո՝ 1994թ., նշանակվել է ՀՀ Հաղորդի շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ: 1995թ. նշանակվել է Հաղորդի շրջվարչակազմի ղեկավարի պաշտոնակատար և նոյն բարձրական հրաժարական տվել: 1996-1999թթ. նախաձեռնել և նմանին վերականգնել է հայրենի Խանձաձոր գյուղը, որն ամբողջովին ավերվել էր պատերազմի սկզբին: 1999-2001թթ. աշխատել է Հաղորդի շրջվարչակազմի ղեկավար: 2010թ. մայիսի 23-ին ընտրվել է ՀՀ 5-րդ գումարման Ազգային ժողովի պատգամավոր: Զքաղվել է գործարարությամբ և քարերարությամբ: Ակտիվորեն մասնակցել է Ապրիլյան քառօրյա և 44-օրյա պատերազմներին: Վերջին պատերազմի ժամանակ ծանր վիրավորվել է:

Պարզեւատրվել է շքանշաններով և մեդալներով:



## ԲԱԴԱՅԱՆ ԹԵԼՈՒՐԻ ՎԱՀԱՆԻ

(1927-2001)

Թելուրա Վահանի Բաղդասյան (ծնվ.՝ 1927, գ.Խնձաբերդ - մահ.՝ 2001, Երևան), ճարտարապետ, Հայաստանի ճարտարապետների միուրյան անդամ (1958):

1950թ. ավարտել է Աղբերձանի արդյունաբերական ինստիտուտը: 1967-1985թթ. եղել է «Հայարդնախազիծ» ինստիտուտի գլխավոր մասնագետը: Նախագծել է քաղմարիկ շինություններ Երևանում, Կիրովականում, Հրազդանում, Ջերմուկում, Սևանում, Դիլիջանում:




## ԲԱՎԱՅԱՆ ԲԵՆԻԿ (ԿԱՍՊ) ԵՂԻՉԵԻ

(1955)

Բենիկ (Կամո) Եղիշեի Բաղդասյան (ծնվ.՝ 1955, գ.Բանաձոր), քանասեր, հասարակական գործիչ:

1972թ. գերազանց գնահատականներով ավարտել է Բանաձորի միջնակարգ դպրոցը և ընդունվել Աղբերձանի Վ.Ի.Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության ֆակուլտետը: Հայկական մասնացյուղի՝ ԼՂՄ տեղափոխվելուց հետո շարունակել է ուսումը Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտում: 1976թ. ավարտել է ինստիտուտը: ԼՂ մարզկոմի պրոպագանդայի և ազիտացիայի բաժնի ուղեգործ աշխատանքի անցել Հաղորդի շրջկոմի և շրջխորհրդի գործկոմի օրգան՝ շրջանային «Կուլտնեսական», հետազայտմ՝ «Դիզակ» թերթում: 1977-1978թթ. ծառայել է խորհրդային բանակի շարքերում: Չորացրվելուց հետո շարունակել է աշխատել նոյն թերթում, որպես կոսակցական բաժնի լրագրող: 1983թ. նշանակվել է Հաղորդի Կ.Գ.Հ. տնօրեն, 1989թ.՝ Բանաձորի խոշորագույն (7 զյուղեր) խաղողագործական տվյալների կուտիտեղ կոմիտեի քարտուղար: 1991թ. մայիսին Հաղորդի հարավի 14 զյուղերի բռնատեղահանությունից հետո, շրջկենտրոն Հաղորդում ստեղծվել է բռնատեղահանված երեխաների դպրոց, այնտեղ դասավանդել հայոց լեզու և գրականություն: 1994թ. կեսերից ծառայել է Արցախի բանակում: 1995-2007թթ. եղել է վերածնված Բանաձորի վերակառուցված դպրոցի տնօրենը: 2007թ. անցել է ֆերմերային գործունեության, չմոռանալով լրագրությունը:

Հեղինակել է հայրուրավոր հողվածներ, դիմանկարներ, ուսպորտաժներ, ակնարկներ, որոնք տպագրվել են ինչպես շրջանային, այնպես էլ մարզային «Սովետական Նարարադ», Բարգում լրյուս տեսնող «Կոմնիխս» հայերեն, «Գրական Աղբերձան» թերթերում և ամսագրերում, հնչել են ուղիղ և հեռուստահանության եթերներում: Գրել է «Երկիր իմ Արցախ», «Տագնապներ» «Արցախուիխ», «Սրբազն լեռը, լեռը Դիզակայտ», «21-րդ դար», «Հիմքեր» բանաստեղծությունների շարքերը:





## ԲԱԼՅԱՆ ՔՆԱՐԻԿ ԲՈՂԴԱՆԻ

(1924-...)

Զնարիկ Բողդանի Բալյան (ծնվ.՝ 1924, գ.Խնձօքեղ), բժիշկ-մանկարույժ, ԽՍՀՄ ժողովրդական բժիշկ (1984):

Մասնակցել է Հայութնական մեծ պատերազմին: 1950թ. ավարտել է Ալբրեջանի բժշկական ինստիտուտը: 1950-1953թթ. աշխատել է Ռուբեկական ԽՍՀ Նամանգանյան մարզի Պատականում: 1953թ.-ից աշխատել է Հայութը ավանում. 1953-1983թթ. եղել է տեղամասային բժիշկ-մանկարույժ, 1983թ.-ից՝ Հայութի կենտրոնական հիվանդանոցի մանկական բժիշկ-մանկարույժ, միաժամանակ, 1964թ.-ից՝ Հայութի շրջանի շրջանային մանկարույժ:



## ԲԱԼՅԵՎ ԱՇՈՏ ՄՆԳՐԵՑԻ

(1914-1984)

Աշոտ Անդրեյի Բալյան (ծնվ.՝ 1914, գ.Տող - մահ.՝ 1984, Սամարդանի), Ուգրեկստանի վաստակավոր ճարտարապետ, Սամարդանի պատվավոր քաղաքացի:

Մանուկ հասակում ընտանիքի հետ տեղափոխվել է Ուգրեկստան: Ավարտել է դպրոցը և ընդունվել Միջինասիական արյունաբերական ինստիտուտ: 1938թ. ավարտել է բուհը և աշխատանքային գործունեությունը որպես ճարտարապետ սկսել Ուգրեկենքրգոյի նախագծման գրասենյակում: 1939թ. գործուղվել է Իրան՝ Իրականացնելու ԽՍՀՄ զինված ուժերի գաղտնի առաջարարները: Պատերազմի ավարտից հետո վերադարձել է Ուգրեկստան և աշխատանքի անցել հանրապետության նախարարների խորհրդին առընթեր ճարտարապետության հարցերի վարչությունում:

Բալյանի նախագծերով բազմաթիվ շենքեր են կառուցվել Ուգրեկստանում, Տաջիկստանում, Ղազախստանում: Նրա անունն ընդգրկվել է Ուգրեկստանի քաղաքաշինության Գիտահետազոտական ինստիտուտի նախագծման «Ոսկե գրքում»:




## ԲԱԼՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ՍՈՒՐԵՆԻ

(1931-2020)

Միքայել Սուրենի Բալյան (ծնվ.՝ 1931, գ.Մեծ Թաղեր - մահ.՝ 2020, Հայութը), 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ:

Միջնակարգ կրթուրյունը ստացել է ծննդավայրում: 1953թ. ավարտել է Բարձր մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժինը:

Այնուհետև անցել է մանկավարժական գործունեության: Նախ աշխատել է որպես հայրենի գյուղի ավագ ջոկատավար և հայոց լեզվի ու գրականության ուսուցիչ, 1960թ.-ից՝ փոխտնօրեն: Հանդես է եկել շրջանային և հանրապետական մանկավարժական ընթերցումներում: Հողվածներ է տպագրել «Դիզակ», «Խորհրդային Դարարար», «Առվետական դպրոց» լրագրերում որոնցում ներկայացրել է դպրոցին հուզող հարցերը: Արժանացել է պատվորերի և գովասանագրերի, «Ավագ ուսուցիչ» պատվավոր կոչման:



## ԲԱԼՅԵՅԱՆ ՄԱԿԱՐԻԿ ՍՈՒՐԵՆԻ

(1963)

Մակար Սուրենի Բալյեյան (ծնվ.՝ 1963, գ.Հակալու), փոխզննայատեն:

1970-1973թթ. սովորել է Հակալու գյուղի տարրական դպրոցում, 1973-1978թթ.՝ Թաղուտի ուրամյա դպրոցում, 1978-1980թթ.՝ Տողի միջնակարգ դպրոցում: 1981-1983թթ. ծառայել է ԽՍՀՄ ԶՈՒ-ում: 1986-1989թթ. սովորել է Խարկովի մարզի Վոլչյանսկ քաղաքի մեխանիզացիայի տեխնիկումում:

1990թ. ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմար ֆակուլտետը, 1996թ.՝ ավարտել ԼՂՀ պետական համալսարանի ֆիզմար ֆակուլտետը: 1990-1992թթ. աշխատել է Հակալու գյուղի տարրական դպրոցում: Մասնակցել է Արցախյան ազատամարտին: 1992թ. նշանակվել է Հայութի պաշտպանական շրջանի հրետանու պետ, 1993թ.



հրետանու պետի օգմական, 1994թ.՝ ՍՄ-21 մարտկոցի հրամանատար: 1995թ. մայիսից գեներալ-լեյտենանտ Ք.Իվանյանի միջնորդությամբ տեղափոխվել է ՀՀ ԶՈՒ Կապանի մոտոհրածային բրիգադ՝ որպես դիվիզիոնի հրամանատար: Նոյն թվականի հոկտեմբերից նշանակվել է ՊԲ 10 ԼՀԴ ԽՀԳ դիվիզիոնի հրամանատար: 2002թ. գրադեցրել է 6-րդ ՊԾ հրետանու պետի պաշտոնը: 2003թ. հանդիսացել է ՊԲ ուսումնական հրետանային դիվիզիոնի ավագ դասախոս, այսուհետև նոյն դիվիզիոնի շտաբի պետ: 2010թ. նշանակվել է ՊԲ առանձին տանկային բրիգադի հրետանու պետ: 2012թ.-ից աշխատում է Ստեփանակերտի Ա.Սախարովի անվան թիվ 8 դպրոցում՝ նախ որպես գիմնեկ, ապա՝ տնտեսական աշխատանքների գծով փոխանորդեն: Պարզևատրվել է շքանշանով, մեդալներով:



### ԹԱՎՈՒՆՑ ՀԵՆՐԻԿ ՀՈՎԼԵՖԻ

(1946)



Հենրիկ Հովսեփի Բակոնց (ծնվ.՝ 1946, գ.Տում), նյարդաբան, բժշկական գիտուրյունների դոկտոր (1990), պրոֆեսոր (1993), Էկողոգիայի և կենսագործության անվտանգության միջազգային ակադեմիայի ակադեմիկոս (1999), Ռուբեն ուսումնասիրության միջազգային կազմակերպության անդամ (1996):

1970թ. ավարտել է Երևանի բժշկական ինստիտուտը: 1977-1988թթ. եղել է Երևանի շտապ օգնության կլինիկական հիվանդանոցի բաժանմունքի վարիչ, 1988թ.՝ Երևանի պետական բժշկական համալսարանի գլխուղեղի անորային հիվանդությունների ԿԳՀ վարիչ և Շտապ օգնության կլինիկական հիվանդանոցի անորանյարդարանության կլինիկայի ղեկավար, 1990-1998թթ.՝ «Աղետների նյարդաբանություն» գիտահետազոտական կենտրոնի տնօրեն, 1998թ.՝ Առողջապահության ազգային ինստիտուտի անորանյարդարանություն դասընթացի վարիչ, 1998թ., միաժամանակ՝ «Նախիր» բուժ-առողջարարական միավորման «Անգիոներոլգիա» գիտահետազոտական կենտրոնի ղեկավար, 2000թ.՝ տնօրեն: Աշխատանքները վերաբերում են զիստուղեղի անորային սուր խանգարումների ախտանության մեխանիզմներին, զիստուղեղի արյան շրջանառության խանգարումներին:

### ԹԱՎՈՒՆՑԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԵՐԳԵՅԻ

(1946)



Ալեքսանդր Մերգեյի Բաղրասարյան (ծնվ.՝ 1946, Բաքու) (ազգիտեցի նշանավոր գիտնական Սերգեյ Սամսոնի Բաղրասարյանի որդին), տեխնիկական գիտուրյունների դոկտոր (1999), պրոֆեսոր (2002), ՀՀ ԳԱ արտասահմանյան անդամ:

1964թ. ընդունվել է Մոսկվայի Ֆիզիկայի և տեխնիկայի ինստիտուտը, 1967թ. տեղափոխվել պետական համալսարան, ավարտել 1969թ.՝ տեխնական ֆիզիկոսի մասնագիտությամբ: 1974թ. ընդունվել է ԽՍՀՄ ԳԱ ուղղությունիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի ասպիրանտուրա: 1969-1974թթ. աշխատել է ԽՍՀՄ էլեկտրոնիկայի արդյունաբերության նախարարությունում, 1974-1984թթ.՝ ԽՍՀՄ ԳԱ ուղղությունիկայի ինստիտուտում, 1984-1987թթ.՝ կապի միջոցների արդյունաբերության նախարարությունում: 1987թ. աշխատանքի է անցել «Էլկո» Գիտահետազոտական միավորումում՝ նախ որպես գիտական ղեկավար և զիսավոր կոնսալտունուր, 1990թ.-ից՝ զիսավոր տնօրեն: 1999թ. դարձել է ՌԴ ԳԱ զիսավոր գիտաշխատող, Ա.Ս. Պրոխորովի անվան Խնմեներական ակադեմիայի զիսավոր գիտնական:

Ունի 50 տարվա աշխատանքային փորձ: Անդամակցում է մի շարք կազմակերպությունների: Տարբեր ամսագրերի խմբագրական խորհրդի անդամ է: Արժանացել է բազմաթիվ մեդալների, պարզևների, մրցանակների:



### ԹԱՎՈՒՆՑԱՆ ԲՈՐԻՍ ԻՎԱՆԻ

(1912-...)



Բորիս Իվանի Բաղրասարյան (ծնվ.՝ 1912, գ.Բանածոր (Բանագոր)՝ մահ.՝ ...), ուզմական գործիչ, փոխգնդապետ:

Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղում: 1930թ. ընտանիքի հետ տեղափոխվել է ք.Երևան: Սովորել է Մոսկվայի Ֆրունզեի անվան ուսումնական ակադեմիայում: Մասնակցել է Հայրենական Մարտի պատճենական ազգային մասնակիությանը:

նական պատերազմին: 1948-1953թ. աշխատել է Հայրութի շրջանի սահմանապահ գնդում: Հետագա ծառայողական գործունեությունը շարունակել է Հայկական ԽՍՀ պետանվտանգության նարմիններում:

Արժանացել է բազմաթիվ մերանունների, շքանշանների: Սերունդներն ապրում են ք.Օղեսայում:



## ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԹԱՎԱՐԱ ՄԱԿԱՐԻ

Թաճարա Մակարի Բաղդասարյան (ծնվ.՝ գ.Թաղասեռ), Արցախի վաստակավոր մանկավարժ (2016):


Ավարտել է հայրենի գյուղի միջնակարգ դպրոցը, 1979թ.՝ Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը: Աշխատանքի է նշանակվել Թաղասեռի մանկավարտեգում՝ որպես վարչ, 1980թ.՝ 8-ամյա դպրոցի ուսումնական գծով փոխտնօրեն, միաժամանակ, հայոց լեզվի և գրականության ուսուցչուի: 1982-1988թթ. եղել է նոյն դպրոցի տնօրեն: 1992թ. կրկին նշանակվել է Թաղասեռի միջնակարգ դպրոցի տնօրեն և աշխատել մինչև 1996թ: 1996թ.-ից հայոց լեզու և գրականություն է դասավանդել Թաղասեռի միջնակարգ դպրոցում: Վարել է նաև ստեղծագործական գործունեություն:



## ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ԽՈՐԵՆ ՄԻՄՈՆԻ (1930-2017)

Խորեն Միմոնի Բաղդասարյան (ծնվ.՝ 1930, գ.Տումի-մահ.՝ 2017, Տումի), 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ, բանասեր, Արցախի ԳՄ անդամ:

1938-1948թթ. սովորել է ծննդավայրի միջնակարգ դպրոցում: 1949-1953թթ. ընդունվել և ավարտել է Քարվի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության ֆակուլտետը: Նոյն թվականին գործուղվել է Արցախ, իր մասնագիտությամբ աշխատանքի



անցել հայրենի գյուղի դպրոցում: 1971-1974թ. և 1992-1998թ., միաժամանակ, եղել է դպրոցի փոխտնօրինը:

Հեղինակել է շորջ 60 մասնագիտական ու գրականագիտական, մանկավարժական ու մերոդական, հրապարակախոսական հոդվածներ, տարբեր թեմաներով շափածող ու արձակ բանաստեղծություններ, մանրապատումներ և երգիծապատումներ: Գրել է «Հանելուկներ բառաշխարհից» գիրքը, որն ընդգրկում է մոտ 700 լեզվաբանական բառ-հանելուկ: Արցախյան գյուղարտի ընթացքում շրջանային թերթը պարբերաբար հրատարակել է նոր «Օրինվի էն սիարը...» («Որ արցախորդու») ծավալուն հրապարակախոսությունը: Հեղինակել է «Բարյական դաստիարակությունը գրականության դասերին» ձեռնարկը: Նրա վաստակը զնահատվել է հավոր պատշաճի պարզեցումով և «Աշխատանքային կարմիր դրոշ», «Հոկտեմբերյան հեղափոխություն» և «Լենին» շքանշաններով, «Արիության համար» մեդալով, արժանացել հանրապետության կառավարության պատվորերի և «Հանրապետության լուսավորության աշխատողների գերազանցիկ» կրծքանշանի: 1996թ. ճանաչվել է տարվա լավագույն ուսուցիչ:



## ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՀՐԱՆՏ ՌՈՒԲԵՆԻ (1939)

Հրանտ Ռուբենի Բաղդասարյան (ծնվ.՝ 1939, գ.Քարավլու), լրագրող:

Սովորել է գյուղի ուրամյա դպրոցում: 1956թ. ավարտել է Բանաձորի միջնակարգ դպրոցը, ընդունվել Աղրբեջանի Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտը: 1960թ. ավարտել է բանասիրական ֆակուլտետը՝ հայոց լեզվի և գրականության ուսուցչի որակավորմամբ: Աշխատել է կոմերիտական և կուսակցական մարմիններում: Շորջ 20 տարի հանդիսացել է Բարգում լույս ընծայվող Աղրբեջանի կոմկուսի օրգան «Կոմունիստ» հայերենով հրատարակվող հանրապետական թերթի լավագույն լրագրողներից մեկը: Մինչև թերթի փակվելը՝ 1989թ., Արցախյան շարժումը սկսելուց հետո տեղափոխվել է Ստեփանակերտ և աշխատանքի անցել «Խորհրդային Հարաբաղ» օրաթերթում: Ընտանեկան պայմաններից ելնելով տեղափոխվել է Գերմանիա: Որոշ ժամանակ անց վերադարձել է Երևան: 2013թ. հրատարակել է «Հայերի էրեմիկական մաքրումը, բռնագաղը և ցեղասպանություն Աղրբեջանում՝ 1988-1991թթ.» ստվարածավալ գիրքը:

## ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԵԽՐՈԴ ՄԻՄՈՆԻ (1894-1981)

Մեխրոդ Միմոնի Բաղդասարյան (ծնվ.՝ 1894, գ. Էղիլու՛ Ուխտաձոր - մահ.՝ 1981, գ. Ուխտաձոր), Սոցիալիստական աշխատանքի հերոս:

1949թ. մշակել է 3,5 հա խաղողի այգի: Եղել է Եղիլու՛ «Ղասումյանի» անվան կոլտնտեսության օղակավար. իր խնամած այգուց ստացել յուրաքանչյուր հեկտարից 135,5 ցենտներ բերք, որը եղել է մարզի շրջանի ամենաբարձր ցուցանիշը:

1967թ. հանդիսացել է հաճամիութենական կենսարշակառության մասնակի:



## ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԱՐԳԻՍ (ՄԵՐԳԵՅ) ԻՎԱՆԻ (1923-2001)



Մարգիս (Մերգեյ) Իվանի Բաղդասարյան (ծնվ.՝ 1923, գ. Բանազոր - մահ.՝ 2001, ք. Երևան), Հայաստանի նկարիչների միության անդամ (1954), ՀԽՍՀ վաստակավոր նկարիչ (1962), ՀԽՍՀ ժողովրդական նկարիչ (1978), ճարտարագիտության և քանդակագործության պյուֆետոր (1980):

1930թ. ընտանիքի հետ տեղափոխվել է Երևան: Դպրոցում սովորելուն զուգընթաց հաճախել է Երևանի պիոներների պալատի քանդակի խճակ: Նրա առաջին ուսուցիչները եղել են քանդակագործներ Արա Սարգսյանը և Սուրեն Ստեփանյանը: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, գրացրվել 1946թ.: 1946-1952թ. սովորել է Երևանի գեղարվեստական ինստիտուտում: 1962թ. դասավանդել է Երևանի գեղարվեստարարական ինստիտուտի քանդակի ամբիոնում, 1971թ.՝ որպես դոցենտ: 1985թ. արժանացել է Հայաստանի պետական մրցանակի և ոսկե մելքանիչ:

Ստեղծել է հերոսական, ուժանատիկ պարուսվ աշքի ընկնող դիմաքանդակներ. «Էլմիրա Բաղդասարյան», 1959թ., «Մերու Խանզադյան», 1984թ., «Հունան Ավետիսյան» բրոնզե քանդակը՝ Ղափանում 1959թ., «Ավետիս Խահակյան» բրոնզե քանդակը՝ Երևանում 1965թ., «Հակոբ Պարոնյան»


գրանիտե քանդակը՝ Երևանում 1965թ., «Սենք Ենք, մեր սարերը» կամ «Ղարաբաղցիներ» տուֆե քանդակը՝ Ստեփանակերտում 1967թ., «Դավիթ Բեկ» պղնձե քանդակը՝ Կապանում 1978թ., «Մտածողը» քանդակը՝ Կարսարա, Խոտակյանում, 1966թ., ժողովուրդների քարեկամուրյանը՝ նվիրված հուշարձանը՝ Հունգարիայում 1977թ.: Երևանում կառուցել է 12 հուշարձան: Հեղինակել է 20 մոմումենտներ և 200-ից ավելի քանդակներ: Պարզևատրվել է շրանշաններով, մերակներով:

Գործերից պահպում են Տրետյակովյան պատկերասրահում, Արևելքի ժողովուրդների արվեստի (Մոսկվա), Լիտվայի, Տաջիկստանի քանդարաններում, Հայաստանի Ազգային Պատկերասրահում:

Երկու որդիներից Աշոտը շարունակել է հոր գործը: Տաղանդավոր քանդակագործ է, ապրում է ԱՄՆ-ում:



## ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՄԵՐԳԵՅ ՄԱՍՄՈՆԻ (1913-1994)



Մերգեյ Մասմոնի Բաղդասարյան (ծնվ.՝ 1913, գ. Ազոխ - մահ.՝ 1994, Մոսկվա), Ալրիւ՛ Վ վաստակավոր ուսուցիչ (1963), ֆիզմար գիտությունների դոկտոր (1968), պրոֆեսոր (1969), Գիտության և տեխնիկայի վաստակավոր գործիչ (1984), հեղուկների ֆիզիկայի և քիմիայի բնագավառի նշանագործ գիտնական:

1928-1930թ. սովորել է Գանձակի մանկավարժական տեխնիկումի ֆիզմար ֆակուլտետում: 1930-1934թ. աշխատել է դպրոցում որպես ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչ: 1934-1939թ. սովորել է Ալբրեշտանի Կիրովի անվան պետական համալսարանում: 1939-1941թ. սովորել է նոյն համալսարանի ասպիրանտուրայում: 1941-1945թ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: 1945-1970թ. աշխատել է Ալբրեշտանի Վ.Ի.Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտում դասախոս, դոցենտ, ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկան, էքսպերիմենտալ ֆիզիկայի ամբիոնի վարիչ: 1952թ. պաշտպանել է դիսերտացիա: 1953թ. ստացել է դոցենտի կոչում: 1970-1974թ. գրադերել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ֆիզիկայի ամբիո-

նի վարիչի պաշտոնը: 1974-1988թ. եղել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկայի ֆակուլտետի դեկանը: Նրա դեկավարությամբ նորաստեղծ ինստիտուտում ստեղծվել են ֆիզիկայի լաբորատորիաներ: 1984թ. արժանացել է գիտության և տեխնիկայի աշխատողի պատվագոր կոչման: 1992թ. հրատարակել է մոլեկուլյար ֆիզիկային նվիրված դասագիրք: Հետագա տարիներին տպագրել է տասնյակ գիտական հոդվածներ, մեմագրություններ:

Որդին՝ Ավետանյոց Բաղդասարյանը, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր է: Դուստրը՝ Իրինա Բաղդասարյանը (ծնվ. 1947), ԽՍՀՄ և Ռուսաստանի Դաշնության պետական ստանդարտի ուսուութեանունական արդյունաբերության և կապի արդյունաբերության գլխավոր նախագետ է: Երկրորդ դուստրը՝ Սվետլանա Բաղդասարյանը (ծնվ. 1954), թիմիական գիտությունների բեկոնածու է, ավագ գիտաշխատող, Նորելյան մրցանակի դափնիների, Ն.Ն. Մեմենովի դարրոցի աշակերտ:



## ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍՈՒՐԵՆ ՄԵՄՅՈՆԻ (1927-...)

Սուրեն Մեմյոնի Բաղդասարյան (ծնվ.՝ 1927, գ. Տումի), 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ:

1948թ. ավարտել է Ստեփանակերտի երկամյա մանկավարժական ինստիտուտը: Աշխատանքի է անցել շրջանի Մարիամածոր գյուղի 7-ամյա դպրոցում որպես մաթեմատիկայի ուսուցիչ: 1950-1953թթ. ծառայել է Խորհրդային բանակի շարքերում: Այնուհետև ուսումը շարունակել է Դաշտանի պետական համալսարանի մաթեմատիկայի ֆակուլտետում: 1961թ. ավարտել է ուսումը և վերադառնալով, աշխատանքի անցել Հայութիքի միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ:

Ս. Բաղդասարյանի մանկավարժական փորձը ընդհանրացվել է Ուսուցիչների կատարելագործման հանրապետական ինստիտուտի կողմից և տարածվել հանրապետությունում: Նա՝ որպես մաթեմատիկայի սեկցիայի ղեկավար, ընդհանրացրել է իր և իր գործընկերների աշխատանքային փորձը, որով էլ հանձն է եկել Մոսկվայի համամիութենական ժողովրդա-



կան տնտեսության նվաճումների ցուցահանդեսի բաժանմունքում: Արժանացել է «Մերոդիաս-ուսուցչ» և «Համբավետության լուսավորության աշխատողների գերազանցիկ» կոչումներին, պարգևատրվել պատվոգրերով:



## ԲԱՂԴԱՍԱՐՅՈՎ ՄՐՉԱՎԻՐ ԳՐԻԳՈՐԻ

(1900-1988)

Արշավիր Գրիգորի Բաղրասարյան (ծնվ.՝ 1900, գ. Տող - մահ.՝ 1988, Աշխարհ, Թուրքմենստան), ուազմական գործիչ, փոխգնդապետ:

Սահմանական է Անդրկասպյան 1918-1920թթ. քաղաքացիական պատերազմին: Այնուհետև ծառայությունը շարունակել է ԽՍՀՄ սահմանապահ գործերում, զբաղեցրել տարբեր պաշտոնների: Թուրքմենստանի և Սիցինասիական հանրապետությունների սահմանների պաշտպանության համար երկու անգամ արժանացել է անվանական գեների: 1938-1941թթ. մեկնել է Սինցյան (Չինաստան) հասուկ գործուղման, որտեղ արդեն հասկացել է Հայրենական մեծ պատերազմի անխուսափելիությունը: Պատերազմի սկզբին եղել է Թախտա-Բազարի (Թուրքմենստան) և Սուխումի (Արխագիա) նոնականետի ջոկատների շտարի պետ, Ալմա-Արայում և Զարկենուում (Ղազախստան) գնդի հրամանատար: 1949-1955թթ. անցել է ծառայության Մազարանի մարզի Ծայր Հյուսիսի ՆԳՆ գործերում: Արժանացել է բազմաթիվ մեդալների, շքանշանների: Անցնելով պահեստազոր՝ 19 տարի աշխատել է Թուրքմենստանի ԽՍՀ քաղաքաշտպանությունում:



## ԲԱՂԴԱՍԱՐՅՈՎ ՄԵՐԱՅԵԼ ԱՇՈՏԻ

(1945-2021)

Միքայել Աշոտի Բաղդասարյով (ծնվ.՝ 1945, Բաքու՝ հայրութեցու ընտանիքում - մահ.՝ 2021, Մոսկվա), Խորհրդային և ուսական կրկեսի դերասան, գիշատիչ կենդանիներ վարժեցնող, ՀԽՍՀ վաստակավոր արտիստ (1980), Ո.Դ ժողովրդական արտիստ (1997):

Մանկությունը տևել է Երևանի Կառավարության մանկական դպրոցում:



վարժեցնող: 16 տարեկանից աշխատել է որպես կրկեսի համազգեստավորող: Նոյն կրկեսում հանդես էին գալիս Մարզարիտա Նազարովան և Կոնստանտին Կոստանտինովսկին: Գիշատիչների հետ շփումներում ցուցաբերած տարանոթ հաճար Նազարովայի կողմից ընդգրկվել և 9 տարի աշխատել է վերջինիս խմբում: 1973թ. սկսել է հանդես գալ անկախ ծրագրով: Առաջին մեծ հաջողությանն է հասել «Սասունցի Դավիթ» ատրակցիոնի ներկայացմամբ, որտեղ Ա.Խաչատրյանի «Սպարտակ» բախուի երաժշտության ներքո մանեժ հանեց առյուծներ, վագրեր, հովազներ, յագուարներ, ընձառյուծներ, պումաներ: 1991թ. ներկայացրեց նոր ատրակցիոն «Վագրերի շոու՝՝ 18 ուստորական վագրերի մասնակցությամբ: Որպես գիտափոր օգնական նրա հետ հանդես էր գալիս դուստրը՝ Կարինա Բաղրամյանը, իսկ 1994թ. սկսեց հանդես գալ նաև որդին՝ Արտուր Բաղրամյանը: Վերջիններս 2003թ. արժանացել են ՌԴ վաստակավոր արտիստի կոչման: 2012-2019թթ. Ա.Բաղրամյանը ներկայացրեց կրկեսի գեղարվեստական դեկանվար:



## ԹԱՂԴԱՎԱՐՈՎ ՄԻՔԱՅԵԼ ԽՎԵՏԻ (1959-2020)



Միքայել Խվետի Բաղրամյանը (ծնվ.՝ 1959, Բաքու՝ արմատներով Ազոխ գյուղից - մահ.՝ 2020, Մոսկվա), հասարակական գործիչ, բարերար, Ռուսաստանի բնական գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս (2002):

1976-1981թթ. սովորել և ավարտել է ԽՍՀՄ ՆԳՆ Լենինգրադի բարձրագույն քաղաքական ուսումնարանը: 1981-1992թթ. ծառայել է Կոմիի ԱԽՍՀ ներքին գործերում, փոխզննապետի կոչումով ազատվել ՆԳՆ-ից: 1992-1997թթ. սովորել է Մոսկվայի Էկոնոմիկայի և ինֆորմատիկայի պետական համալսարանում: 1994թ. հիմնել է «Միկա Լիմիթեդ» կազմակերպությունը Անգլիայում: Հիմնական գործունեությունը եղել է նավթամթերքի և բամբակի արտահանումը ԱՊՀ երկրներից: 1997թ. իրականացրել է նավթամթերքի և թեղինի մատակարարությունը ՀՀ: 2001թ. ներդրումներ է կատարել ՀՀ-ում և ԼՂՀ-ում: Ստեղծել է Հրազդանի ցեմենտի գործարանը, Հաղորդի գինու գործարանը, «Միկա-Ղարաբաղ» ուկերչական արտադրության ՓԲԸ:

«Արմավիա» ավիարենկերության և «Հայխնայրանկ»-ի 50% արժեքորերի սեփականատերն էր: Շինարարական աշխատանքներ է իրականացրել Սպիտակում, Հաղորդ շրջկենտրոնում: Ստեղծել է Աշտարակի «Միկա» սպորտային ակումբը: 2004թ. ճանաչվել է ՌԴ և ԱՊՀ երկրների բիզնես էլիտայի 30 ազդեցիկ անդամներից մեկը: Պարզեւարովել է բազմաթիվ մեդալներով:



## ԹԱՂՅԱՆ ԳՐԻՉԵՍ ԼԵՎՈՆԻ

(1953)



Գրիշա Լևոնի Բաղյան (1953, գ.Տումի), անասնաբուժական գիտությունների թեկնածու, պետական աշխատող, Արցախյան շարժման մասնակից, պահեաստագորի սպա:

1970-1976թթ. սովորել և ավարտել է Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտի անասնաբուժական ֆակուլտետը, 1985-1988թթ.՝ ԽՄԿԿ Կենտրոնի առներեր Հասարակական գիտությունների ակադեմիան: 1976-1977թթ. ծառայել է Խորհրդային բանակում: 1976թ. աշխատել է ԼՂՄՍ Հաղորդի շրջանի անասնաբուժական կայանում՝ որպես համաձարակարան, 1977-1981թթ.՝ Հաղորդի շրջանի անասնաբուժական կայանի պետ: 1981-1982թթ. եղել է Հաղորդի շրջնորդի գործկոմի գյուղատնտեսության վարչության պետ, 1982-1985թթ.՝ Հաղորդի շրջկոմի գյուղատնտեսության վարիչ, 1985-1988թթ.՝ ԼՂՄՍ սովորողի տնօրեն, 1988թ.՝ Հաղորդի շրջանային ազրուարդունաբերական միավորման նախագահ, 1988-1990թթ.՝ Հաղորդի շրջկոմի առաջին քարտուղար: 1989թ. դարձել է Արցախի Ազգային խորհրդի անդամ, «Արցախ» հայրենակցական միության նախագահության և Երկրապահ կամավորական միության անդամ: 1990թ. մայիսի 20-ին ընտրվել է ՀՀ Գերագույն խորհրդի պատգամանար, ՀՀ Գև Արցախի հարցերի հատուկ հանձնաժողովի և ազգարային ու գյուղի զարգացման հարցերի մշտական հանձնաժողովի անդամ, «Արցախ» պատգամագիրական խմբի քարտուղար: 1995-1998թթ. եղել է Հայսպառմիության մթերումների և արդյունաբերության վարչության պետ: 1998-2004թթ. Հայսպառմիության ազրուարդունաբերական կառավարչության պետ: 2004-2005թթ. եղել է ՀՀ գյուղատնտեսության

նախարարության աշխատակազմի անասնաբուժական, անասնաբուժական և գյուղկենդանիների համարակալման, հաշվառման գործակալության պետ, 2005-2007թթ.<sup>3</sup> ՀՀ ԳՆ անասնաբուժական պետական տեսչության պետ, 2007-2011թթ.<sup>4</sup> ՀՀ ԳՆ սննդամբերի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչության պետ:



## ԹԱՂՈՒՑ ՀՈՎՍԵՓ (1915-1977)

Հովսեփ Բաղդոնց (ծնվ.՝ 1915, գ. Տումի-մահ.՝ 1977, ք. Երևան), բժիշկ-յարդարան:

1934թ. ավարտել է Տումոն միջնակարգ դպրոցը, այնուհետև ուսումը շարունակել Ծուշի մանկավարժական ուսումնարանում: 1935-1940թթ. սովորել է Դադաստանի բժշկական ինստիտուտում:

Ազարտելուց հետո վերադարձել է Ստեփանակերտ և աշխատանքի անցել Ստեփանակերտի մարզային հիվանդանոցում: 1940թ. գորակոչվել է Կարմիր բանակ, ծառայել Մինչև Հայրենական մեծ պատերազմի ավարտը: Վերադարձել է Երևան և աշխատել որպես բժիշկ: 1954թ. աշխատել է ՀԽՍՀ ՆԳ նախարարությունում որպես բժիշկ-նյարդարան, իսկ 1952-1967թթ. Երևանի 1-ին և 2-րդ հիվանդանոցներում: Երկար տարիներ եղել է Հայաստանի փորձագիտական համամաժողովի բժիշկ-նյարդարանը:



## ԹԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ ՎԼԱԴԻՍԼԻՔ (1967-2015)

Արմեն Վլադիմիրի Բարխուդարյան (ծնվ.՝ 1967, Բարսեղ հաղորդուեցի (անասնաբուժական գիտությունների բեկնածու Վլադիմիր Բարխուդարյանի որդիին) - մահ.՝ 2015, Մոսկվա):

Աշխատանքի բերումով ընտանիքը Հայրությաց տեղափոխվել է Բարսեղ: Նախնական կրթությունն ստացել է Բարվում, 1983-1984թթ. ուսումը շարու-



նակել Հայրությի Մ.Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցում: 1984թ. հոնվարին ընտանիքի հետ տեղափոխվել է ՌԴ Կալուգա քաղաք: Ավարտել է տեղի դպրոցը, նոյն թվականին ընդունվել Մոսկվայի տրանսպորտային ինժեներների ինստիտուտը:

Մոսկվայում իիմնադրել է «Ավինեքս» ընկերությունը: Հետագայում հեղինակել է նաև այլ գործարարական նախագծեր: Ֆուտբոլի մեծ սիրահար էր, ստործել է Մինի-ֆուտբոլի միջազգային սիրողական լիգան ու սկսել ֆուտբոլային տարրեր մրցաշարեր կազմակերպել Մոսկվայում, արտերկում, ինչպես նաև՝ Արցախում: 2012թ. նրա հրավերով 1990թ. աշխարհի առաջնորդյան ՖԻՖԱ-ի լավագույն ուժքարկու Սալվատորե Ակիլաշին այցելել է Արցախ և մասնակցել ֆուտբոլային մրցաշարի: Մոսկվայում ուներ նաև «Դիզակ» թիմը, որը մասնակցում էր ոչ միայն մոսկվյան, այլև՝ միջազգային մրցաշարերի: Թիմը եղել է նաև Արցախում, մասնակցել Ղարաբաղի գավարի խաղարկությանը: Մինի-ֆուտբոլի արցախցի բարերարն ամեն տարի այցելում էր Արցախ և հիշարժան օրերին կազմակերպում տարրեր մրցաշարեր: Ամեն անգամ իր հետ թերում էր նաև ուսաստանարնակ ընկերներին, սպորտային մեկնարանների, բրակիցների: Ա.Բարխուդարյանն օգնում էր Արցախյան ազատամարտի մասնակիցներին, հաշմանդաններին, գովկածների ընտանիքներին, սպորտի վետերաններին: Ապրելով Ռուսաստանում՝ միշտ ճգնել է իր մերժումն ունենալ Արցախում: Հեղինակել է ուսերեն տպագրությամբ «Դիզակայտի կանչը» և այլ գրքեր:



## ԹԵԳԼԱՐՅԱՆ ԺԱՆՆԱ ՌԱՖԻԿԻ (1955)



Ժաննա Ռաֆիկի Թեգլարյան (ծնվ.՝ 1955, գ.Խնձօքերդ), բանաստեղծուհի, բանասիրական գիտությունների բեկնածու Վլադիմիր Բարխուդարյանի որդիին) - մահ.՝ 2003):

1977թ. ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը: Աշխատել է որպես ուսուցչուհի Հայրությաց շրջանի Քարագլուխ, Առաքել գյուղերում: Որոշ ժամանակ աշխատել է ԼՂՄ մշակույթի մարզային վարչությունում՝

որպես բաժնի վարիչ, ապա՝ մարզային ռադիոհեռուստատեսության գրական հաղորդումների խմբագիր: 1999թ.-ից դասախոսում է Ստեփանակերտի Գ.Նարեկացի համալսարանում: 1977թ. հրատարակել է իր առաջին բանաստեղծությունները, ակնարկները, էսսենները: Ստեղծագործությունները հրատարակվել են 1993թ., 1995թ., 2004թ. և 2010թ.: Արժանացել է ԱՀ Եղիշի անվան մրցանակի:



## ԹԵԳԱՎՐՅԱՎԻ ՎՈԼՈԴՅԱՎ ԲԵԳԼԱՐԻ (1950-2013)



Վոլոդյա Բեգլարի Բեգլարյան (ծնվ.) 1950, գ. Այգեստան (Քոշքեկ) – մահ.՝ 2013, ք. Ստեփանակերտ), հասարակական գործիչ, գործարար:

Ավարտել է Երևանի շինարարական ուսումնարանի կահույքի բաժնը:

1970թ. աշխատանքի է անցել Ստեփանակերտի կահույքի ֆարբիկայում՝ որպես գլխավոր տեխնոլոգ, այնուհետև՝ արտադրամասի պետ: 1988թ. ընդգրկվել է «Կոռունկ» հասարակական-քաղաքական կազմակերպության հասարակական կարգի պահպանման հանձնաժողովի կազմում՝ Յու.Զահանգիրյանի, Ա.Լաշինյանի հետ միասին: 1989թ. եղել է «Հիշատակ» հասարակական-քարեզործական հիմնադրամի շորս հիմնադիր անդամներից մեկը: «Նարարադյան շարժման առաջին ամիսներին կարգ ու կանոնի պահպանման նպատակով ստեղծված «Բանվորական խումբ» շարժման ակտիվացների միավորման նախագահի (Ռ. Գարբինյանի) տեղակալն էր: 1996թ. ստեղծել է «Դիզակ» ընկերությունը, որը 2000թ. վերանվանվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության, իհմք դնելով Արցախում ժամանակակից պոլիգրաֆիկական գործին և գունավոր տպագրությանը:




## ԳԱՍՊԱՐՅԱՆ (ԿԱՍՊԱՐՈՎ) ԱՇՈՏ ԶՈՒՄԾՈՒՄԻ (1909-1993)

Աշոտ Զումշումի Գասպարյան (Կասպարով) (ծնվ.) 1909, գ. Քյուրաքաղ (Դուդուկշի) - մահ.՝ 1993, գ. Քյուրաքաղ), ԽՍՀՄ հերոս:

1931թ. գորակողվել է բանակ Բարվի քանչ-ի կողմից: 1934թ. ավարտել է Ս.Օրջոնիկիձեի անվան հետևակային ուսումնարանը (Բարս), 1935թ.՝ Օրենբուրգի Կ.Վորոշիլովի անվան դիտողաչափության դարպանը: Հայրենական պատերազմին մասնակցել է 1941թ. հունիսի 22-ից: Աշխի է ընկել Բելոռուսիայում և Ուկրաինայում պարտիզանական ջոկատներին զեղքով և սննդով մատակարարելու գործում: Գերազանց ավիալուսանկարիչ էր: Օրյունս ոմքակոծումների արդյունքների հաջող լուսանկարման համար պարզեատրվել է Կարմիր դրոշի շրանշանով: Հաջող ոմքակոծել է Դնեպրի անցումները, Վյազմա, Օրյուն, Սմոլենսկ, Լվով, Բյույանսկ, Մինսկ, Վելիչինկի, Տիգլիտ, Քյոնիգսբեր և այլ երկարուղային կայարաններում հակառակորդի գորքի ու տեխնիկայի կուտակումները: Բեղլինի ոմքակոծման համար կատարել է 16 թոփք: Պարտիզաններին օգնելու նպատակով կատարել է 80 գիշերային մարտական թոփք, հակառակորդի խոր թիկունքից դրս հանել 420 վիրավոր պարտիզանի և երեխաների: Մինսկյան 1-ին պարտիզանական բրիգադի հրամանատարության կողմից ընդգրկվել է Պատվավոր պարտիզանների ցուցակում, պարզեատրվել «Հայրենական պատերազմի պարտիզան 1-ին աստիճանի» մեդալով: Կատարել է շորջ 305 մարտական թոփք: Զորացրվել է 1946թ.: 1946-1958թթ. եղել է Քյուրաքաղի, 1962-1965թթ.՝ Հայուրի կոլտնտեսության նախագահ, ապա՝ Հայուրի շրջմթերման գրասենյակի տնօրին:





## ԳԱՍՊԱՐՅԱՆ ԱՐՄԵՆ ԼԵՆՈՅԻ

(1961-1993)

Արմեն (Արմենչո) Լենոյի Գասպարյան (ծնվ.՝ 1961, գ.Տող-մահ՝ 1993, Արցախ), ազատամարտիկ-հրամանատար, «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշակիր:

1978թ. ավարտելով դպրոցը՝ ուսումը շարունակել է Երևանի 21-րդ տեխնիկական ուսումնարանում, որտեղ ստացել է խառատի մասնագիտություն: 1980-1982 թթ. ծառայել է Խորհրդային բանակում՝ Գերմանիայում, որպես կապավոր:

Արցախյան պայքարի առաջին իսկ օրերից Արմենը զենք է վերցրել պաշտպանելու իր հայրենիքը: «Վրեժ» ջոկատի կազմում առաջին կարևոր հաղթանակը 1991թ. հոկտեմբերի 30-ին՝ նախահարձակ գրձողությամբ Տող գյուղի ազատագրումն էր: 1992թ. հովհանն կազմակորվեց Տողի գումարտակը, նշանակվեց գումարտակի հրամանատարի տեղակալ, իսկ սեպտեմբերից՝ հրամանատար: 1991-1993-ին մասնակցել է Հաղորդի (Արևշատ, Խամաձոր, Սարինշեն և այլն), Մարտակերտի, Ամարասի հովտի գյուղերի ազատագրական մարտերին, Կրկժանի ռազմական հենակետի ճնշման գրձողություններին:



## ԳԱՍՊԱՐՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ ՍՈՒՐԵՆԻ

(1927-...)

Էդուարդ Սուրենի Գասպարյան (ծնվ.՝ 1927, գ.Մեծ Թափեր), Աղբյու՛ վաստակավոր անասնաբույժ, անասնաբուժական գիտությունների թեկնածու, դոցենտ:

1954թ. ավարտել է Երևանի Անասնաբուժական ինստիտուտը: 1978-1985թթ. եղել է ԼՂԻՄ մարզկոմի գյուղատնտեսության բաժնի վարիչ, 1985-1987թթ.՝ Ստեփանակերտի համայիրի գոտիական փորձարարական կայանի տնօրին: 1987-1994թթ. աշխատել է որպես «Ղարաբաղ» գիտա-արտադրական միավորման տնօրին: Արտադրյան մեջ ներդրվել են նրա մի շարք գիտական առաջարկություններ՝ կանխելու կենսանիների տարատեսակ հիվանդություններ:



## ԳԱՍՊԱՐՅԱՆ ՀԵՆՐԻԿ ՄՈՎՍԵՍԻ

(1910-1995)

Հենրիկ Մովսեսի Գասպարյան (ծնվ.՝ 1910, Թբիլիսի՝ Թաղասեռ գյուղից Մովսես Մելքոնի Գասպարյանի ընտանիքում - մահ՝ 1995), Չախմատի Անդրկովկասի չեմպիոն (1935), կոմպոզիցիայի գծով Խորհրդային Միության վեցակի չեմպիոն, Հայաստանի տասակի չեմպիոն, ԽՍՀՄ սպորտի վարպետ (1936, առաջին հայ շախմատիստը), միջազգային վարպետ (1950), միջազգային կարգի մրցավար (1956), ԽՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ (1956), շախմատային կոմպոզիցիայի գծով միջազգային գրումայստեր (1972):

Հայրը նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղում: Տեղափոխվել է Բաքու, այնուհետև Թիֆլիս: 16-ամյա Հենրիկը սենսացիոն հաղթանակ է տանում Թիֆլիսի՝ 600 հոգու մասնակցությամբ կայացած մրցաշարում: 3 տարի անց արդեն ընդգրկվում է Թիֆլիսի շախմատի հավաքականի կազմում, որտեղ նոյնական փայլուն հաղթանակներ է տանում: Հրապարակել է մոտ 500 կոմպոզիցիա, որոնցից 100-ից ավելին համայնքենական և միջազգային մրցանակաբաշխություններում նվաճել են առաջին մրցանակներ: Նախկինում ՀՀ կրթության և գիտության նախարարության համակարգում գործող շախմատի մասնագիտացած դպրոցը կոչվում էր Հ.Գասպարյանի անունով: 2005թ. հունիսից Երևանում գործող շախմատի և շաշկու օլիմպիական մարզադպրոցը կոչվել է Հ.Գասպարյանի անունով: 2010թ. բողոքվել է Հ.Գասպարյանի 100-ամյակին նվիրված նամականիշ:

Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, արժանացել 2-րդ աստիճանի մեդալի:



370

Հ. Գասպարյան  
1910-1995

Խ. Կազարյան  
1900



## ԳԱՍՊԱՐՅԱՆ ՌՈՒԶԱՆ ԷԴՈՒԱՐԴԻ (1961)

Ռուզան (Ռոզա) Էդուարդի Գասպարյան (ծնվ.՝ 1961, գ. Դդվանլար՝ Արևշատ), դերասանուհի: 1979թ. ավարտել է Եղեղյակերտի հայկական դրամատիկական թատրոնին կից գործող դրամատիկ դերասանի ստուդիան, 2013թ.՝ Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համարաբանի թանաժրական ֆակուլտետը: Ստուդիայում սովորելու տարիներին՝ 1981-1983թթ., միաժամանակ, խաղացել է թատրոնի թեմադրույյուններում՝ Զովիկ (Ա. Պապայան՝ «Աշխարհն, այո, շուռ է եկել»), Աղջիկ (Օ. Ռույյուն՝ «Երջանիկ արքայազմը»): Աշխատամքային կենսագործյանն սկսել է 1983թ.-ին՝ Ղարմետաքսկոմքինասուում՝ որպես բանվորուհի: Աշխատամքին զուգընթաց մասնակցել է Ղարմետաքսկոմքինասի ժողովրդական թատրոնի թեմադրույյուններին, որոնք ներկայացվել են՝ Ղարմետաքսկոմքինասի թատերասերների, ինչպես նաև՝ զյուղական թնակավայրերի համովատեսի դատին: Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնում աշխատանքային գործունեությունը սկսել է 2007թ.-ից՝ որպես դերասանուհի՝ Նրա լավագույն դերակատարումներից են՝ Խազնադար (Գ. Տեր-Գրիգորյան՝ «Զգուշացեք, նա դեռ կա»), Զարա (Ս. Խալարյան՝ «Մերը պահարան չի հարցնում»), Դացա (Բ. Նուշիչ՝ «Տիկին մինհատուիր»), Սեծ մամ (Վ. Օվյան՝ «Ակամա մեղավորներ»), Նամ, Տատ, Կիրակոսի կին (Վ. Օվյան՝ Աշխարհը Լոռվա ձորերում), Անտառի ոդի (Ս. Ակսակով՝ «Ակվան ճաղիկ»), Յասաման (Ն. Արգարյան՝ «Երկնքից երեք խնձոր ընկավ»), Պարուիի (Մուրացան՝ «Ռուզան») և այլն: Նվարահանվել է նաև՝ Նատալյա Բեյյասվելմեի «Երե բոլոր...», Զիվան Ավետիսյանի «Ընդհատված մանկություն», Հրանտ Մովսիսյանի՝ ՀԱԵ Արցախի թեմի վերաբացման 30-ամյակին նվիրված «Միստիկ երկիր Առան» և այլ կինոնկարներում: Ասմոնեով ակտիվորեն մասնակցել է թատրոնի, ինչպես նաև համարադրային գրական-երաժշտական և հումորային ծրագրերին: 2007թ.-ից աշխատում է Ստեփանակերտի Վ. Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնում՝ որպես երկրորդ կարգի դերասանուհի:



## ԳՅՈՒԼԻՇԱՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ԲԱԲԱՅԻ (1910-1996)

Գյուլիսն Բաբայի Գյուլիշանյան (ծնվ.՝ 1910, գ. Առաքել - մահ.՝ 1996, գ. Առաքել), հասարակական գործիչ:

Սկզբնական կրությունը ստացել է զյուղում: 1930թ. ավարտել է Բաբկի մանկավարժական տեխնիկումը: Աշխատանքի է անցել ԱրքենԱՀ լուսավորույթյան նախարարությունում որպես տեսուչ: 1937-1939թթ. աշխատել է Բանաձոր և Առարյուղ զյուղերում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: 1939թ. զրակուշվել է խորհրդային բանակ: Եղել է զնիվ քաղաքանի հրահանգիչ: 1945թ. հաղթանակը դիմավորել է Պարզապարվել և Կարմիր դրոշի և Կարմիր աստղի շքանշաններով: Զորացրվել է 1946թ.: 1946-1951թթ. աշխատել է Հաղորդիքի կուսարչկոնում: 1951-1957թթ. եղել է շրջադարձանու տեսուչ: Հեռակա կարգով ավարտել է Աղյութաջանի պետական մանկավարժական ինստիտուտը: 1955թ. նշանակվել է Բանաձորի միջնակարգ դպրոցի տնօրեն: 1960թ. նեկավարել է Բանաձորի Կ. Մարքսի անվան կոլտնտեսությունը: 1964թ. հաստատվել է ծննդավայր Առարյունում, շարունակել իր մանկավարժական գործունեությունը: 1991թ. Հաղորդի հարավային զյուղերի բնիվ տեղահանությունից հետո բնակություն է հաստատել Կրամանվոլսկ քաղաքում: 1995թ. վերադարձել է Արցախ՝ հայրենի Առարյուղ:



## ԳՅՈՒԼԻՇԱՆՅԱՆ ՎԱԼԵՐԻԿ ԳՈՒՐԳԵՆԻ (1949)

Վալերիկ Գյուլիսնի Գյուլիշանյան (ծնվ.՝ 1949, գ. Առաքել), բժիշկ:

1966թ. ուսեւ մեղալով ավարտել է Բանաձորի միջնակարգ դպրոցը: Ընդունվել և 1974թ. ավարտել է Աղյութաջանի Նարիմանովի անվան թշվական համալսարանի բուժական ֆակուլտետը: 1974-1976թթ. ծառայել է Խորհրդային բանակի սահմանապահ զորքերում: 1977թ. բանակից զո-



բացրվելոց հետո աշխատանքի է անցել Ստեփանակերտի քաղաքային պոլիկլինիկայում՝ որպես բժիշկ-կոստրվածքաբան: 1977թ. նշանակվել է մարզային հիվանդանոցի վճասվածքաբանության քաժանմունքի վարիչ: Երկարատև և անբասիր գործունեության համար արժանացել է պատվորերի, «Երախտագիտություն» մեդալի: Որդին՝ Գորգեն Գյուլշանյանը, նույնականացնելու բժիշկ է, աշխատում է նույն հիվանդանոցում որպես նկրովիրառույժ:



## ԳՐԻԳՈՐՅԱՆ ԱՆԱՏՈԼԻ ՄԱՐԳԱՐԻ

(1948)

Անատոլի Մարգարի Գրիգորյան (ծնվ.՝ 1948, գ.Հին Թաղեր), բժիշկ:

Ավարտել է զյուղի միջնակարգ դպրոցը: 1966-1972թթ. սովորել է Երևանի բժշկական ինստիտուտի բուժական ֆակուլտետում, ստացել «Բուժական գործ» մասնագիտությունը: 1972-1975թթ. ծառայել է Խորհրդային բանակում, զորացրվելոց հետո վերադարձել է Հայաստան: 1975թ. բանակային պրակտիկա ձեռք բերած բժիշկը նշանակվել է «Սասիսի բժշկական կենտրոն» ինֆեկցիոն բաժնումունքի վարիչ, որտեղ աշխատել է շուրջ 23 տարի: 1998թ. ստանձնել է նույն կենտրոնի տնօրենի պաշտոնը: Զբաղվել է հասարակական ակտիվ գործունեությամբ: Արցախյան շարժման ակտիվ գործիչներից է, «Արցախ» հայրենակցական միության անդամ: Հայաստանարնակ Հին Թաղեր հայրենակցական համայնքի ղեկավարմերից էր:



## ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ ՊԵՏՐՈՍԻ

(1905-1952)

Գարեգին Պետրոսի Գրիգորյան (ծնվ. 1905, գ.Տումի - մահ.՝ 1952, Երևան):

1924թ. ավարտել է Տումու զյուղական դպրոցը, այնուհետև միլիցիայի Անդրկովկասյան մարզային դպրոցը: 1927-1930թթ. ծառայել է Խորհրդային բանակում: 1930-1934թթ. աշխատել է Հայոցութի բանվորազյուղացիական միլիցիայի շարքերում: 1937-1940թթ. եղել է Քրեական հետախուզության բաժնի պետ, ԼՂՄ ՆԳԺԿ միլիցիայի վարչության պետի տեղակալ: 1938թ. Ալբրեժանի ՆԳԺԿ նախարարի հրամանով նշանակվել է ԼՂՄ ՆԳԺԿ միլիցիայի վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար: 1947թ. փոխադրվել է Հայաստան, ՀԽՍՀ ՆԳՆ տնօրինության ներք ժամանակավորապես նշանակվել ՆԳ Ն1 կենտրոնական բանտի պետի տեղակալ՝ օպերատիվ գծով: 1948-1950թթ. եղել է ՀԽՍՀ ՆԳՆ Վարդենիսի շրջանային բաժնի պետ, 1950-1952թթ.՝ ՀԽՍՀ ՆԳՆ պարետության պարետ: Երևանում իր անձնութաց ծառայության շնորհիվ վաստակեց Քաջ Գարեգին անունը: Վարդենիսի ալբրեժանցի առաջին քարտուղարը դրսի հրահրմանը զրաքարտազիր ուղարկեց Մոսկվա՝ իր Վարդենիսի ՆԳ բաժնի պետ Գրիգորյանը ներկայ է ալբրեժանցի բնակչությանը: Արդյունքում Գ. Գրիգորյանը խիստ նկատողություն ստացավ ազգային խորականության համար, իսկ օպերատիվ առաջադրանքը հաջողությամբ իրականացնելուց հետո՝ վերադարձի ճանապարհին, 1952թ. դիվունքրերի 24-ին գոհվեց ավտովրարից: Կասկած չկար, որ ազերիների մատը խառն էր սպանության մեջ: Զոհվելու նախօրենին քննարկվել էր Գ. Գրիգորյանին Հայաստանի ՆԳՆ ներքին գորքերի հրամանատար նշանակելու հարցը:





## ԳՐԻԳՈՐՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԳԱՐԵԳԻՆԻ (1935)

Գրիգոր Գարեգինի Գրիգորյան (մավ.՝ 1935, Հարբութ' լեզնդար տոմեցի Գարեգին Գրիգորյանի ընտանիքում), գեներալ-մայոր:



1953թ. ավարտել է Երևանի Մոռավյանի անվան միջնակարգ դպրոցը: Ընդունվել և 1958թ. գերազանցությամբ ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Աշխատանքային գործունեությունն սկսել է Հայաստանի պետական անվտանգության մարտիններում: 1960-1964թթ. աշխատել է Երևանի պետական համալսարանի գիտահետազոտական կրիմինալիստիկայի լաբորատորիայում՝ որպես ավագ գիտաշխատող: 1964-1984թթ. աշխատել է ՀՀ ազգային անվտանգության մարտիններում: Լինելով հանրապետական կոմիտեի կողեզրայի անդամ՝ ոպերատիվ բաժնի պետի պաշտոնում 1984թ. գործունվել է ներքին գործերի նախարարություն և նշանակվել նախարարի տեղակալ: 1992թ. ՀՀ նախագահի որոշմամբ նշանակվել է ՀՀ պաշտպանության նորաստեղծ նախարարության նախարարի տեղակալ և սահմանապահ գորքերի հրամանատար, լայնածավալ աշխատանք ծավալել պատմության մեջ առաջին անգամ ՀՀ սահմանապահ գորքերի ստեղծման գործում: Հետագայում, կառուցվածքային փոփոխությունների հետ կապված, նշանակվել է ՀՀ զիրավոր սահմանապահ կոմիտար: 1993թ. նշանակվել է ՊՆ ռազմական հակահետախուզական վարչության պետ: 1995-2003թթ. եղել է ազգային անվտանգության նախարարի առաջին տեղակալ, 2003-2005թթ.՝ ՀՀ ԱԱԾ տնօրենի առաջին տեղակալ:

Ակտիվ մասնակցություն է ունեցել Հայաստանի գինված ուժերի ստեղծման, հատկապես՝ հատուկ գնդի կազմավորման գործում: 1988-1993թթ. մասնակցել է Հայաստանի և Ալբրեթանի միջև բանակցային գործընթացին՝ կապված սահմանամերձ գոտում գինադադարի, երկարուղային ճանապարհների անխափան գործելու, Ղարաբաղյան հիմնախնդրի և սահմանային վիճակարույց հարցերի հետ: 1990-1991թթ. եղել է Գորիսի և Մեղրու հատուկ շրջանների արտակարգ իրավիճակի պարետ: Արժանացել է շրանցանների և մերայների, պարզեատրվել է անվանական գեներով:



**ԳՐԻԳՈՐՅԱՆ ԵՐՎԱՆԴ ԳԵՐԱՍԻՄԻ**  
*(1941-2001)*

Երվանդ Գերասիմի Գրիգորյան (ծնվ.՝ 1941 թ. Տումի - մահ.՝ 2001, Երևան):

Ապարտել է Հայաստանի գյուղատնտեսական ինստիտուտը: Սովորել է Բույսերի պաշտպանության գիտահետազոտական ինստիտուտի ասպիրանտուրայում: 1984թ. մինչև կյանքի վերջին օրերեք դեկապարել է նոյն կենտրոնի վճառատուների դժմ պայքարի նոր մերուդների լարորատորիան: 1996-1999թ. եղել է ԳՀԻ տնօրենի տեղակալ: Գիտական գեկուցումներով հանդես է եկել արտասահմանյան մի շարք երկրներում, ակտիվ մասնակցել է «Բույսերի պաշտպանության և կարանդիսի մասին» օրենքի նախագծի կազմաներ: Ետինակել է շորջ 60 գիտական աշխատանք:



ԳՐԻԳՈՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ ՍԱՄՎԵԼԻ  
(1929-2016)



Սամվել Սամվելի Գրիգորյան (ծնվ.՝ 1929, գ. Վանք - մահ.՝ 2016, Մոսկվա), ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր (1965), պրոֆեսոր (1968), ԽՍՀՄ ԳԱ բորակից անդամ (1987), ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (2000), Ռուսաստանի ԳԱ ակադեմիկոս (2000), Աստղագիտության միջազգային ակադեմիայի անդամ (1972), ԽՍՀՄ և Ռուսաստանի տեսական և կիրառական մեխանիկայի Ազգային կոմիտեի, ինչպես նաև կիրառական մաթեմատիկայի և մեխանիկայի Միջազգային ասոցիացիայի անդամ, Ռուսաստանի հրեհուների և հրետանու ԳԱ ակադեմիկոս (1993):

Նախնական կրթությունն ստացել է Արցախի և Քարվի դպրոցներում: 1948-1953թ. սովորել է Մոսկվայի Լոմնոսովի անվան պետական համալսարանի մեխանիկայի և մարենատիկայի ֆակուլտետում: Հեղինակել է 70 գյուտ և արտոնագիր: Եղել է մի շարք ամսագրերի, այդ թվում՝ «Կիրառական մարենատիկա» և «Մեխանիկա», «Կիրառական մեխանիկա» և տեխնի-

կական ֆիզիկա» խմբագրական կոլեգիաների անդամ: 1990-ական թվականներին՝ ԽՍՀՄ փլուզումից հետո, ակտիվորեն զբաղվել է հասարակական գործունեությամբ, հիմնականում՝ Ռուսաստանում հայկական սփյուռքի խնդիրներով: Նա Մոսկվայի Հայ համայնքի առաջին հիմնադիրն էր և դեկապարը, Համաշխարհային հայկական կոնգրեսի խորհրդի համահմարները և անդամը: Պարգևատրվել է Ռուսաստանի հայերի միուրյան բարձրագույն՝ «Արծարե խաչ» շքանշանով, ինչպես նաև ԽՍՀՄ ԳԱ Մ.Ա.Լավրենտևի, Ս.Ա.Չապլիգինի և այլ մրցանակներով: Մեծ համբավ էր վայելում Արցախի պետական համալսարանում՝ լինելով նրա պատվավոր պատվելու ժամանակ:



## ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱԼԵՐԻ ՆԵՐՍԵՍԻ (1943-1991)



Վալերի Ներսեսի Գրիգորյան (ծնվ.՝ 1943, գ.Խնձորերդ - մահ.՝ 1991), հասարակական գործիչ:

Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Շուշիի մամկանարժական տեխնիկումը: Ավարտել է Երևանի Խ.Աբրյանի անվան մանկավարժական ինստիտուտի ֆիզմաք ֆակուլտետը: 1961թ. դասավանդել է Խնձորերդի 8-ամյա դպրոցում: 1962-1965թթ. ծառայել է ԽՍՀՄ ԶՈՒ-ում: 1966թ. ավարտել է Մոսկվայի բարձրագույն կուսակցական դպրոցը: Աշխատել է Հաղորդի կոմերիտական կազմակերպությունում՝ որպես առաջին քարտուղար: Այսուհետև հրավիրվել է Մտեփանակերտ՝ աշխատելու մարզկոմում՝ որպես հրահանգիչ: 1989թ. ներգրավված էր Ա.Վլուկու դեկանարությամբ հասուն կառավարման կոմիտեի աշխատանքներում: Լեռնային Ղարաբաղի պատվիրակության կազմում մեկնել է Մոսկվա և Երևան: 1990թ. հուլիսին ելույր է ունեցել նաև ԽՍՀԿ ԽVIII համագումարում, որտեղ ըննարկումներ են ծավալվել ղարաբաղյան խնդիր շուրջ: 1991թ. հուլիսի 20-ին, բուն ըննարկումների արդյունքում, Լեռնային Ղարաբաղի պատվիրակություն ուղարկվեց Աղրթնական դեկանարության հետ քանակությունների: Սպանվել է Բարվից վերադառնալիս՝ օրը ցերեկով:



## ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԱՐԴԱՆ ՎԱԼԵՐԻ

(1970)

Վարդան Վալերիի Գրիգորյան (ծնվ.՝ 1970, Հայպուր), գրող, հասարակական գործիչ:

1987թ. ավարտել է Մտեփանակերտի Ա.Գրիգորյելովի անվան միջնակարգ դպրոցը: 1988թ. զրակոչվել է ԽՍՀՄ զինված ուժեր:

1989թ. ընդունվել և 1993թ. ավարտել է Սիմֆերոպոլի բարձրագույն ուսումնական շինարական դպրոցը:

2001-2003թթ. սովորել է Օդեսայի ներքին գործերի ինստիտուտի իրավագիտության ֆակուլտետում: 2011թ. ավարտել է Եվրոպական համալսարանի Ղրիմի մասնաճյուղի ֆինանսատնտեսական անվտանգության մասնագետների վերապատրաստման դասընթացները: 2006թ. աշխատել է Ներքին գործերի նախարարությունում՝ Սիմֆերոպոլի քաղաքային վարչական կենտրոնական տարածաշրջանային գրասենյակում, ապա իր շահքով ազատվել ներքին գործերի նախարարությունից: 2008-2013թթ. աշխատել է Սիմֆերոպոլի մասնավոր և կոմունալ ծնոնարկություններում:

1990թ.-ից ակտիվորեն ներգրավված է Ղրիմի հայ հասարակության սոցիալական և ծախկության կյանքում: 2006-2007թթ. աշխատել է որպես համայնքի նախագահի տեղակալ-օգնական, 2009-2011թթ.՝ Սիմֆերոպոլի հիմ հայկական գերեզմանատան տնօրեն, եղել է գործկոմի և Ազգային խորհրդի անդամ: Համայնքի տպագիր օրգանի՝ «Մասիսի աղավնի» ամսագրի խմբագրության անդամ է (ուսումնական աշխատանքներով՝ Հայրենական մեծ պատերազմի ժամանակ անհայտ կորած և մահացած հայ մարտիկների բաղնան և զոհվելու վայրերի մասին տեղեկություններ հավաքագրելով):

Պարբերաբար տպագրում է Ղրիմի Հանրապետության էլեկտրոնային և տպագիր մաճուրում: Հեղինակել է «Հայրենական մեծ պատերազմ. Հայերը Ղրիմի համար մղվող մարտերում» (Սիմֆերոպոլ, 2009), «Պատմական ակնարկ. «Ղրիմի (Արևելյան) պատերազմը 1853-1856թթ. և հայեր», (ամսագիր «Ղրիմի պատմական ժառանգությունը», 2004):





## ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԻԳԵՆ ՍԱՄՎԵԼԻ (1951-1993)

Վիգեն Սամվելի Գրիգորյան (ծնվ.՝ 1951, գ.Տող- մահ.՝ 1993), ազատամարտիկ, Արցախյան պատերազմի ակտիվ մասնակից, ԼՂՀ «Մարտական խաչ» II աստիճանի շքանշամակիր:

1972թ. ավարտել է Բարձրի Լենինի անվան պետական մանկավարժական համալսարանը: Աշխատանքի է անցել Տողի միջնակարգ դպրոցում որպես հայոց լեզվի ուսուցիչ: 1972-1973թթ. ծառայել է ԽՍՀՄ ԶՈՒ-ում: 1974-1976թթ. եղել է Մոխրենեսի ուրամյա դպրոցի փոխտնօրեն, 1976-1982թթ.՝ տնօրեն, 1982-1992թթ.՝ Տողի միջնակարգ դպրոցի ուսումնառաստիարակչական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ: 1991թ. դեկտեմբերի 28-ին Տողի թիվ 36 ընտրատարածքից ընտրվել է ԼՂՀ առաջին գումարման Գերազույն խորհրդի պատգամավոր: 1988թ. Արցախյան շարժման սկզբից դարձել է Հաղորդի շրջանի ամենակտիվ գործիչներից մեկը: «Պատերազմի տարիներին հանդիպել է Մ.Մելքոնյանի հետ, մշակել ենտագա գործողությունների ծրագիրը: 1992թ. ստեղծել է «Վրեժ» ֆիդայական խումբը, որը մեծ դեր է կատարել Հաղորդի և շրջակա շրջանների հայ բնակչության պաշտպանության գործում: 1991թ. վերջին ընտրվել է ԼՂՀ 1-ին գումարման ԳԽ պատգամավոր: 1993թ. զոհվել է ականի պայրյունից:



## ԳՐԻԳՈՐՅԱՆ ՎԼԱԴԻՄԵՐ ՌՈՒԲԵՆԻ (1928-2005)

Վլադիմիր Ռուբենի Գրիգորյան (ծնվ.՝ 1928, գ.Խանձոր - մահ.՝ 2005, ք.Ստեփանակերտ), մանկավարժ, ԽՍՀՄ լուսավորության գերազանցիկ:

Տեղի յորամյա դպրոցը ավարտելուց հետո ուսումը շարունակել է ՀՀ Թաղերի միջնակարգ դպրոցում: 1951թ. ավարտել է Ստեփանակերտի երկամյա ուսուցչական ինստիտուտի ֆիզմարդական բաժնում:



կուլտետը և այդ տարվանից ել աշխատել է Ստեփանակերտ քաղաքի Կրկժան քաղամասի յորամյա դպրոցում: 1954թ. ընդունվել է Բարձրի մանկավարժական ինստիտուտի հայկական բաժնի ֆիզիկամարեմատիկական ֆակուլտետը և ավարտել 1957թ.: 1956-1959թթ. դասավանդել է Ստեփանակերտի երեկոյան դպրոցում, իսկ 1959-1963թթ. աշխատել է մարգողկրբաժնում՝ որպես դպրոցական տեսուչ: 1963-1967թթ. նշանակվել է ուսուցիչների կատարելագործման նարզային ինստիտուտի տնօրեն, 1967-1971թթ.<sup>1</sup> Ստեփանակերտի գիշերօրիկ դպրոցի տնօրեն, 1971-1978թթ. Ստեփանակերտի ժողկրության բաժնի վարիչ: 1978թ. մինչև 1992թ. օժանդակ գիշերօրիկ դպրոցում աշխատել է որպես տնօրեն, 1992թ.-ից՝ թիվ 4 դպրոցի տնօրեն: Ակտիվ մանկավարժական և հասարակական գործունեության համար արժանացել է կառավարական պարգևների և դրվագների:



## ԳՈՒՐՋԻՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ ԳԵՂՐԳԻԻ (1922-1995)

Նիկոլայ Գեղրգիի Գուրջյանց (ծնվ.՝ 1922, ք.Աշխարաղ՝ մեծքաղերցու ընտանիքում - մահ.՝ 1995, ք.Աշխարաղ), պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԹԽՍՀ մշակույթի վաստակավոր աշխատող:



Ավարտել է միջնակարգ դպրոցը: 1940թ. ընդունվել է Աշխարաղի մանկավարժական ինստիտուտը, երստեռն ավարտել 1942թ. և ստացել ուսուցիչ մասնագիտություն: 1942թ. մեկնել է ուզմանակատ, սովորել Օղովրդի հետևակային ուսումնարանում: Մասնակցել է Կորսկի ճակատամարտին, Կիևի ազատագրմանը: 1944թ. վիրավորվել է: 1954-1963թթ. աշխատել է Թուրքմենստանի Ա.Ա.Գորկու անվան պետական համալսարանի մարքսիզմ-լենինիզմի ամբիոնում: 1963-1978թթ. եղել է Թուրքմենական պոլիտեխնիկական ինստիտուտի ԽՍՀԿ պատմության ամբիոնի դոցենտ և վարիչ: 1978-1992թթ. դեկանակել է Թուրքմենական պետական մանկավարժական արվեստի ինստիտուտի հասարակական գիտությունների ամբիոնը: 1992-1993թթ. եղել է Աշխարաղի պետական կոնսերվատորիայի ամբիոնի դոցենտ: 1993թ. իր կամքով ազատվել է աշխատանքից:



## ԳԵՎՈՐԳՅԱՆ ԼՅՈՎԱ ՍԱՄՎԵԼԻ

(1959)

Լյովա Սամվելի Գևորգյան (ծնվ.՝ 1959, գ.Ապրիլ), փոխգործապետ (2009), հասարակական գործիչ:

1966-1976թթ. սովորել է Ազգիսի միջնակարգ դպրոցում: 1976-1980թթ. սովորել է Ստեփանակերտի մարմատիկական ինստիտուտի ֆիզմաք ֆակուլտետի մարեմատիկայի բաժնում: 1980թ. ուղարկով աշխատել է ԱղրևնԱՀ Շամախու շրջանի Մայսարիի 8-ամյա դպրոցում՝ որպես մարեմատիկայի ուսուցիչ: 1982թ. տեղափոխվել և մինչև

1985թ. աշխատել է Հայպուրի շրջանի Ազախ գյուղի միջնակարգ դպրոցում: 1985-1991թթ. աշխատել է Ստեփանակերտի մանկապատանեկան շահմատի մարզադպրոցում՝ որպես մարզիչ, 1991թ.-ից՝ Ստեփանակերտի Խ.Արուլյանի անվան թիվ 1 դպրոցում՝ որպես մարեմատիկայի ուսուցիչ: Մասնակցել է Արցախյան պատերազմին: 1992թ. զբաղեցրել է Հայպուրի պաշտպանական շրջանի հրետանու պետի պաշտոնը: 1993թ. նշանակվել է հակատանկային մարտկոցի հրամանատար: Պատերազմից հետո ակտիվ մասնակցել է բանակաշինության գործընթացին: 1995թ. գեներալ Խվանյանի միջնորդությանը տեղափոխվել է ՀՀ ՇՈՒ Կապանի բրիգադ՝ որպես դիվիզիոնի շտարի պետ: 1995թ. նշանակվել է 10 ԼՀԴ ԽՀԳ շտարի պետի տեղակալ՝ շտարի պետի պաշտոնակատար: 2009թ.-ից եղել է Ստեփանակերտի արհեստագործական ուսումնարանի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով փոխտօնեն, 2011թ.-ից՝ Ստեփանակերտի թիվ 9 դպրոցի տնօրեն: 2016թ. ԱՀ նախազարի կողմանց պարգևատրվել է Երախտագիտության մեդալով:



## ԳԵՎՈՐԳՅԱՆ ՊԱՎԵԼ ՍԱՄՎԵԼԻ

(1963)

Պավել Սամվելի Գևորգյան (ծնվ.՝ 1963, գ.Ապրիլ), ֆիզիկամարեմատիկական գիտությունների դոկտոր (2001), պրոֆեսոր, ՌԴ կառավարության մրցանակի դափնեկիր, ՌԴ բարձրագույն կրթության պատվավոր աշխատող, ՌԴ գիտու-



թյան և կրթության նախարարության մարեմատիկայի գիտա-մեթոդական խորհրդի միջնակարգ դպրոցի և մանկավարժական բուհերի բաժանմունքի նախագահ, Մ.Լոմնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի մեխմաք ֆակուլտետի դիսերտացիոն խորհրդի անդամ:

1980թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի մեխմատիկա-մաթեմատիկական ֆակուլտետը: 1984թ. հարթել է Հայաստանի մարեմատիկական ուսանողական օլիմպիադայում: Եղել է ՍՍՀՄ համամիութենական ուսանողական մարեմատիկական օլիմպիադայի Հայաստանի ազգային հավաքականի անդամ (ք. Վիլնյու): 1984թ. տեղափոխվել և 1985թ. գերազանցությամբ ավարտել է Մ.Լոմնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի մեխմատիկա-մաթեմատիկական ֆակուլտետը, ընդունվել նոյն ֆակուլտետի ասպիրանտուրան:

1987-1988թթ. համատեղության կարգով աշխատել է Մոսկվայի Էներգետիկական ինստիտուտի բարձրագույն մարեմատիկայի հասուն դասընթացների ամբիոնում՝ որպես դասախոս: 1989-1994թթ. եղել է Արցախի պետական համալսարանի բարձրագույն մարեմատիկայի ամբիոնի դասախոս, 1994-1996թթ.՝ բնագիտական ֆակուլտետի դեկան, 1996-2000թթ.՝ ԱրՊՀ ռեկտոր: 2000-2015թթ. աշխատել է որպես Մոսկվայի Էներգետիկական ինստիտուտի բարձրագույն մարեմատիկայի ամբիոնի պրոֆեսոր, միաժամանակ, 2008-2016թթ.՝ Աշխատանքի և սոցիալական հարաբերությունների ակադեմիայի բարձրագույն և կիրառական մարեմատիկայի ամբիոնի վարիչ (ք.Մոսկվա), 2015թ.-ից՝ Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի մարեմատիկական ամբիոնի վարիչ: 2015-2016թթ. եղել է Մոսկվայի պետական մանկավարժական համալսարանի պրոռեկտոր: Հեղինակել է մի շարք գիտական հոդվածներ, մենագրություններ ու գրքեր:



## ԳԱՎԻԵԼՅԱՆ ԼԵՎՈՆ ԱՐԱՄԻ

(1947)

Լևոն Արամի Դանիելյան (ծնվ.՝ 1947, գ.Տումի), մանկավարժ:

Ավարտել է Խ.Արուլյանի անվան ինստիտուտի մարեմատիկայի ֆակուլտետը: 1968-1969թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1970թ. դասա-



վանդել է Երևանի թիվ 82 դպրոցում: Աշխատել է որպես թիվ 149 դպրոցի ուսմասվար, 1981թ.-ից՝ տնօրեն: 1996թ. նշանակվել է Երևանի թիվ 132 միջնակարգ դպրոցի տնօրեն: Ավարտել է Մոսկվայի մանկաբարժական ինստիտուտի ֆրանսերենի արագացված դասընթացները: Ալժիրում ֆրանսերենով մարեմատիկա է դասավանդել: Պարզևատրվել է ՀՀ նախագահի պատվողությունը, արժանացել «Տարվա լավագույն տնօրեն» կոչմանը:



### ԴԱՆԻԵԼՅԱՆ ՄԱՐՍԻՄ ԱՎԱՆԵՍԻ (1938)



Մարսիմ Ավանեսի Դանիելյան (ծնվ.՝ 1938, գ. Տումի), տնտեսագիտուրյան թեկնածու (1974), դոցենտ:

1958-1963թթ. ընդունվել և գերազանցուրյամբ ավարտել է Հայկական գյուղատնտեսական ինստիտուտը:

1964թ.-ից աշխատել է Հայկական գյուղատնտեսական ակադեմիայում: Հեղինակել է բազմաթիվ գիտական աշխատություններ:



### ԴԱՎԹՅԱՆ ԳԵՂՐԳԻ ԽԵԶԱՏՈՒՐԻ (1939)

Գեղրգի Խաչատուրի Դավթյան (ծնվ.՝ 1939, գ. Կարմրակուճ), հասարակական գործիչ:

1954թ. ավարտել է Կարմրակուճի 7-ամյա դպրոցը, 1958թ.՝ Հաղորդի միջնակարգ դպրոցը: 1958-1962թթ. ծառայել է Խորհրդային բաժնի շարքերում: 1962-1965թթ. աշխատել է մայրաբաղարի մի շարք կազմակերպություններում: 1965-1970թթ. սովորել է Հայաստանի գյուղատնտեսական ինստիտուտի հեռակա բաժնում: 1970-1973թթ. աշխատել է որպես կուսակցության ԼՀ մարզկոմի հրահանգի: 1973-1974թթ. եղել է կուսակցության Հաղորդի շրջկոմի երկրորդ քարտուղար: Ավարտել է կուսակցական բարձ-

րագույն դպրոցը Մոսկվայում, կրկին աշխատանքի անցել ԼՂ կուսակցության մարզկոմում: 1977-1979թթ. եղել է Ստեփանակերտի սովորութեանի կոմիտեն: 1980-1982թթ. աշխատել է որպես մարզային ազորիմիական լարորատորիայի վարիչ: Երեք տարի ղեկավարել է Հաղորդի շրջանի Տողի «Հոկտեմբեր» խոշորացված խաղողագործական սովորությունը: 1986-1992թթ. աշխատել է ԼՂՄ ազորարդյունաբերական կոմիտեում, ղեկավարել տարբեր բաժիններ:



### ԴԱՎԹՅԱՆ ԲԱՀԱՏՈՒՐ ՂԵՎՈՆԴԻ (1937)



Բահատուր Ղևոնդի Դավթյան (ծնվ.՝ 1937, գ. Քարին (Արփազետիկ)), 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ:

Յորամյա կրթությունը ստացել է հայրենի գյուղում: 1956թ. ավարտել է հարևան Հին Թաղեր գյուղի միջնակարգ դպրոցը, 1961թ.՝ Բարվի մանկաբարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: Աշխատանքային գործունեությունը սկսել է Հաղորդի շրջանի Արևշատ (Դոլանլար), Բանաձոր և Ուկեվագ (Խանարատ) գյուղերի միջնակարգ դպրոցներում: 1969թ. աշխատել է Ստեփանակերտի կրթության բաղաբային բաժնում որպես դպրոցական տեսուչ: Եղել է բաղարի թիվ 1 դպրոցի տնօրենը, այնուհետև՝ կրթության մարզային բաժնի դպրոցական տեսուչը: 1989թ. նշանակվել է կրթության մարզային բաժնի վարիչի տեղակալ, 1992թ.՝ ԼՂՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կազմակորումից հետո, նախարարի տեղակալ: 1994-1995թթ. միաժամանակ վարել է Արցախի պետական համալսարանի ռեկտորի պաշտոնը: 1996թ. նշանակվել է ԼՂՀ Կաղորերի վերապատրաստման և ատեսատավորման հանրապետական ինստիտուտի տնօրեն, իսկ նրա լուծարումից հետո աշխատել է ԼՂՀ ԿԳ նախարարությանը կից ստեղծված ծրագրամերողակորման և տեսչագործման վարչության պետ: Պարբերական մամուլում հրապարակել է 4 տասնյակից ավելի գիտական, մանկավարժական, մեթոդական և գործնական նշանակության հոդվածներ, խմբագրել մեթոդական ուղեցույցներ և ձեռնարկներ: Հեղինակը է «Ֆիզիկայի զարմանայի աշխարհում», «Ֆիզիկան աղյուսակներում» մե-

բողական ձեռնարկների և համահեղինակ՝ Արցախի գոկած ուսուցիչ - ազատամարտիկներին նվիրված «Դաս հայրենյաց» գրքի՝ Հանրապետության և ԽՍՀՄ լուսավորության աշխատողների գերազանցիկ է: Պարզաբանվել է «Աշխատանքային արդիության համար» մեջալով, պատվոգրերով:



## ԳԱՎԻԴՅԱՆ ԱՐԱՄ ԼԵՆԻԿԻ

(1970)



Արամ Լենիկի Դավիթյան (ծնվ.՝ 1970, Երևան՝ հայրութեղի, մասնագիտությամբ ինժեներ, Լենիկ Դավիթյանի ընտանիքում), ատամաքույժ, Երևանի Մ.Հերացու անվան պետական թժշկական համալսարանի պրոֆեսոր (2016):

1987թ. ընդունվել է Երևանի Մ.Հերացու անվան պետական թժշկական համալսարանը: Այնուհետև սովորել է Սովորայում, ԱՄՆ-ում, Եվրոպայում: 1995-1997թ. աշխատել է Մոսկվայի պետական թժշկա-ստոմատոլոգիական համալսարանում: 2002թ.-ից Մոսկվայի «Ավրորա» ստոմատոլոգիական կլինիկական վերապատրաստման և զարգացման կենտրոնի հիմնադիրն ու տնօրինն է: Հայտնի մասնագետ է ատամաքության բնագավառում, երույթներ է ունենում աշխարհի տարբեր երկրներում: Համագործակցություն է Չիկագոյի Ժամանակակից Ստոմատոլոգիական Կենտրոնի հետ, ինչպես նաև Nobel Biocare կազմակերպության ուսական ներկայացուցչության խորհրդատվությանը:

Հեղինակել է մի շարք մասնագիտական գրքեր, 120-ից ավելի հոդվածներ, միկրովիրաբուժության բնագավառում մի շարք գործիքներ և նորամուծություններ:



## ԳԱՎԻԴՅՈՎ ԲՈՐԻՔ ԱՐԿԱԴԻ

(1965)

Բորիս (Բորյա) Արկադի Դավիթյան (ծնվ.՝ 1965, Հայրություն) գեներալ-մայոր (2008):

1989թ. ավարտել է Մոսկվայի Տիմիրյազևի անվան զյուղատնտեսական ակադեմիան, 2002թ. ՌԴ համագորային ռազմական ակադեմիան: 1989-1992թ. աշխատել է Հայրության շրջադրծության մեջամասնությամբ: 1991-1992թ. եղել է Հայրությի ինքնապաշտպանական ջոկատի ազատամարտիկ, 1992-1994թ.՝ Հայրությի գումարտակի դասակի հրամանատար, ապա Ն գորամասի շտաբի պետի տեղակալ: Մասնակցել է Հայրությի շրջանի գյուղական կառավագանության և ազատագրական մարտերին: 1994-1995թ. եղել է առանձին մոտոհրածգային գորամասի օվերատիվ բաժանմունքի, 1995-1998թ.՝ Ն գորամասերի շտաբերի պետ, 1998-2000թ.՝ հրամանատարի տեղակալ, 2002թ.-ից՝ Ն գորամասի հրամանատար:



## ԵԳԱՆՅԱՆ ԱԼԵՔՍԱՆ ՄԵԼԻՔՍԵԹԻ

(1917-1994)



Ալեքսան Մելիքսեթի Եգանյան (ծնվ.՝ 1917, գ.Խօճաբերդ - մահ.՝ 1994, Երևան), մանկավարժական գիտությունների թեկնածու (1961), դոցենտ (1966):

Տարրական կրթությունը ստացել է հայրենի զյուղում, 7-ամյա կրթությունը՝ Բարքում: 1932-1935թ. աշխատել է ՀՀ Գորիսի շրջանում որպես բարտաշ բանվոր: 1934-1935թ. սովորել է Շուշիի մանկավարժական տեխնիկականության մասնակիությունում: 1935թ. ընդունվել է Երևանի Խ.Արքյանի անվան մանկավարժական ինստիտուտի ֆիզմար ֆակուլտետը: Ուսումնառությանը գործնարար 1936-1939թ. աշխատել է ՀՀ Թալինի միջնակարգ դպրոցում՝ որպես մաթեմատիկայի ուսուցիչ: 1939-1940թ. ծառայել է բանակում: 1941-1945թ. դարձյալ աշխատել է Թալինի միջնակարգ դպրո-



ցում, 1945-1952թթ.՝ Թալինի շրջանի ժողկրթաժնում որպես դպրոցական տեսուչ և ԿԲԴ-ի արհմիության շրջկոմի նախագահ: 1952-1953թթ. Երևանի շրջանային ժողկրթաժնում վարել է դպրոցական տեսչի պաշտոն, միաժամանակ դասախոսել մանկավարժական ինստիտուտում: 1945-1964թթ. եղել է Երևանի մանկավարժական ինստիտուտի ֆիզմար ֆակուլտետի հեռակա քածնի դեկանը:

Հեղինակել է բազմաթիվ աշխատություններ, 22 տպագրված մենագրություն և դասագիրք: Տիրապետում էր գրաքարին, ոուսերենին, գերմաներենին, իին հունարենին:



### ԵԳԱՆՅԱՆ ԳԱԳԻԿ ԿԻՄ

(1956)



Գագիկ Կիմի Եգանյան (ծնվ.՝ 1956, գ. Առաքել), ՀՀ պետական գործիչ, ՀՀ միզրացիոն պետական ծառայության պետ (1999-2018): Հայրական կողմից սերում է Արցախի Մելիք-Եգանյան մելիքական տոհմից, իսկ մայրական կողմից՝ Միկոյան տոհմից, որից սերել են խորհրդային համակարգի ամենանշանավոր պետական գործիչներից մեկը՝ Անաստաս Միկոյանը, և նրա եղբայր, ճանաչված ավիակոնսուլտուրություն, հոչակավոր ՄԻԳ ռազմական կործանիչների ստեղծող Արտեմ Միկոյանը:

2003-2010թթ. եղել է Եվրոպայի խորհրդի միզրացիայի նվիրապական կոմիտեի (CDMG) բյուրոյի անդամ, 2008-2009թթ.՝ նույն կոմիտեի բյուրոյի փոխնախագահ: 2015թ. աշխատել է որպես ՀՀ միզրացիոն պետական ծառայության պետ, դեկանարել ՌԴ դաշնային միզրացիոն ծառայության հետ բանակցությունները, որոնց արդյունքում հանվել է դեպի Ռուսաստան Հայաստանի 28 հազար քաղաքացիների մուտքի արգելանքը: 2018թ. դեկտեմբերին ընտրվել է Հայաստանի Հանրային խորհրդի անդամ, Ժողովրդագրության և գենդերի ծցուական հանձնաժողովի նախագահ: 2002թ. նախաձեռնել ու հիմնադրել է ապաստան հայողությի համար նախատեսված հատուկ կացարանը:



### ԵԳԱՆՅԱՆ ԿԻՄ ԵՐԵՄԻ

(1929-...)

Կիմ Երեմի Եգանյան (ծնվ.՝ 1929, գ. Առաքել - մահ.՝ Երևան), հասարակական գործիչ:

Սովորել է Առաքելի ուրամյա դպրոցում: Հայրենական պատերազմից հետո 1946թ. ավարտել է Քանաճորի միջնակարգ դպրոցը: Եգանյանների այս ճյուղը մելիք Արամի շառավիդներից է, որը մելիքանիստ Տողից տեղափոխվել էր Առաքել: Եգանյան տոհմի ներկայիս բոլոր ճյուղերը նրան կոչում են նահապետ: Սովորել է Երևանի ժողովնախական ինստիտուտում: Հայկական ԽՍՀ-ում 1960-ական թվականներին զբաղեցրել է բարձր պաշտոններ: Եղել է Սահմանակի կուսարչկոմի քարտուղար, ապա Սահմանակի և Գուգարքի շրջանների տարածքային արտադրական վարչության պետ: 1974-1981թթ. զբաղեցրել է Կրասնոսելյանի, 1986թ.՝ Վարդենիսի կուսարչկոմի առաջին քարտուղարի, 1986-1990թթ.՝ ՀՀ ազուարդյունաբերական համայիրի նախագահի տեղակալի, ապա՝ ՀՀ զուրկնախարարի գլխավոր խորհրդականի պաշտոնները:



### ԵԳԱՆՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ՆԻԿՈԼԱՅԻ

(1903-1978)

Միքայել Նիկոլայի Եգանյան (ծնվ.՝ 1903, գ. Տող - մահ.՝ 1978, Երևան), տնտեսագետ, տնտեսագիտության դրվագ (1965), պրոֆեսոր (1972):

1931թ. ավարտել է Մոսկվայի կրթական ակադեմիան: 1963-1965թթ. եղել է Երևանի մանկավարժական ինստիտուտի պրոֆեսոր: 1976-1978թթ. աշխատել է որպես Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի տնտեսագիտության ամբիոնի պրոֆեսոր:





### ԵՂՅԱՆ ԳՐԻԳՈՐ ԵՂԻԻ

(1921-...)

Գրիգոր Եղիի Եղյան (ծնվ.՝ 1921, գ. Տումիի-...)։ Ավարտել է Շուշիի ուսուցչական ինստիտուտը: 1941թ. աշխատել է Հաղբուրի շրջանի Ծամճոր գյուղի միջնակարգ դպրոցում, որպես ուսմասվար: 1942թ. մեկնել է ռազմաճական: Պատերազմը ավարտելուց հետո բարձրագույն կրթուրյուն է ստացել Երևանում, այնուհետև աշխատել է Հայաստանի տարբեր շրջաններում՝ որպես դպրոցի ուսմասվար և տնօրին: 1961-1991թթ. եղել է Արովյանի շրջանի ժողովրածի վարչի տեղակալ և արհմիության շրջկոմի նախագահ:



### ԵՂՅԱՆ ՍԱՎՈՎԵԼ ԵՂԻԻ

(1918-1992)

Սամվել Եղիի Եղյան (ծնվ.՝ 1918, գ. Տումի-մահ.՝ 1992), ռազմական գործիչ:

Գյուղի դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Բարձր մանկավարժական ուսումնարանը: Աշխատանքի է անցել Հաղբուրի շրջանի Խնձօրեր գյուղի դպրոցում՝ որպես ոուսաց լեզվի ուսուցիչ: 1938թ. կամագոր ընդունվել է Կարմիր բանակի շարքերը: Ավարտել է Սարատովի տանկային ուսումնարանը: Մարշալ Բարձրանյանի կորպուսում ծառայել է որպես տանկային գումարտակի հրամանատար: 1943թ. մեկնել է ռազմաճական: Նշանակվել է Ավշարյանի հետևակային գնդի շտաբի պետ: Եղել է Ակնայի, ապա՝ Դիլիջանի շրջանի գինեկոմ, Բարձր պետհամալսարանի ռազմագիտուրյան ամբիոնի վարիչ:



### ԵՂՅԱՆ ՄԵՐԳԵՅ ԹԵՎԱՆԻ

(1914-1980)

Մերգեյ Թևանի Եղյան (ծնվ.՝ 1914, գ. Տումի - մահ.՝ 1980), գնդապետ:

1931-1934թթ. սովորել է Բարձր մանկավարժական ինստիտուտում: Աշխատել է Տումու միջնակարգ դպրոցում որպես ոուսաց լեզվի ուսուցիչ, Հողեր գյուղում՝ դպրոցի տնօրին: 1939-1948թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1945-1948թթ. սովորել է Կիևի ռազմական ակադեմիայում: 1948-1955թթ. ծառայել է ՊԱԿ-ում, 1955-1980թթ.՝ Կիրովականի ներքին գործերի նարմիններում:



### ԶԱԼԻՆՅԱՆ ԻԼՅԱԶ ԱՍՐԻԻ

(1899-1968)

Իլյազ Ասրիի Զալինյան (ծնվ.՝ 1899, գ. Էղիլյու՝ Ուխտաձոր - մահ.՝ 1968, Էղիլյու), Սոցիալիստական աշխատանքի հերոս (1948):

1930թ. անդամագրվել է նորաստեղծ Էղիլյու «Դրուժբա» կոլտնտեսությանը: Իրեն ամրացված 3,7 հեկտար խաղողայգու յուրաքանչյուր հեկտարից ստացել է 111g խաղող: Ստեղծել է խաղողի նոր սորտեր և պտղատուայգիներ:



### ԶԱԽԱՐՅԱՆ ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐԻ

(1899-...)

Արամ Գրիգորի Զախարյան (ծնվ.՝ 1899, ք. Բարձր՝ բանագուցու ընտանիքում - մահ.՝ գ. Բանագուց, բժիշկ), Արամ:

Ավարտել է Բարձր արական դպրոցը, 1925թ.՝ Աղբեջանի պետական համալսարանի թշնակական ֆակուլտետը: 1927թ.-ից եղել է Ֆիզիոլոգիայի ամ-



բիոնի գիտաշխատող: Միաժամանակ դասախոսություններ է կարդացել նույն համալսարանի աշխատավորական ֆակուլտետում: Գիտական աշխատանքը գրելիս համագործակցել է հայտնի պրոֆեսորներ Ռ.Ա.Գյանցեցյանի, Ն.Ա.Պոպովի, Ա.Մ.Լևինի հետ: Հեղինակել է 5 գիտական աշխատանք՝ նվիրված ֆիզիոլոգիային: 1930-1932թթ. աշխատել է Հայոցութիւնի շրջանում և Ստեփանակերտում: Աշխատել է նաև Կասպիական նավատորմում՝ որպես դաստարձիչ: 1916թ.-ից գրադիվել է հասարակական գործունեությամբ: Տիրապետել է ինտերնացիոնալ էսպերանտո (արհեստական միջազգային լեզու) լեզվին, որը դասավանդել է 1917-1923թթ. հասուկ կուրսերում: Տիրապետել է ոռուերն, գերմաներն և բուրգերն լեզուներին:



### ԶԱԽԱՐՅԱՆ ՄԱՅԻՍ ԱՐԱՄԻ (1928-...)

Մայիս Արամի Զախարյան (ծնվ.՝ 1928, Բարու) (քանազորցի քժիշկ Զախարյանի որդին), վաստակավոր իրավաբան, ուսումնառության գնդապետ:

Աշխատել է Աղրբեջանի ՆԳՆ մարմիններում, այնուհետև Բարպից տեղափոխվել է Երևան: Եղել է քրեակատարողական հիմնարկների ղեկավար: Երկար տարիներ գրադեցրել է ՀԽՍՀ Սինհատրների խորհրդի առաջին քածնի վարիչի պաշտոնը: Պարզեւատրվել է մեղամեռվ, շրանշաններով:



### ԶԱՔԱՐՅԱՆ ԱՐՏՎԿ ԲՈՐԻՄԻ

(1974)

Արտակ Բորիսի Զաքարյան (ծնվ.՝ 1974, Երևան՝ մեծքաղերցի Բորիս Զաքարյանի ընտանիքում), քաղաքական գործիչ, քաղաքական գիտությունների թեկնածու:

1996թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի մարենաստիկական կիրառնետիկայի և հետազոտությունների ավտոմատացման ֆակուլտետը՝ մարենաստիկոսի որակավորմամբ: 2000թ. ավարտել է ՀՀ պետական կառավարման դպրոցը՝ տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մասնակիութիւն, պետական ծառայողի որակավորմամբ: 1996-1998թթ. ծառայել է ՀՀ զինված ուժերում:

1999-2001թթ. աշխատել է որպես ՀՀ Կառավարությանն առընթեր տարածշրջանային ինտեգրացման վարչության կրթամշակութային բաժնի պետ, 2001-2008թթ.՝ «ՀՀ Գնումների աջակցման կենտրոն պետական գնումների գործակալություն» ՊՈԱԿ-ի առաջատար նախագետ, 2008թ.՝ ՀՀ ԱԳՆ սիյուռնի հետ կապերի պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար: 2002-2005թթ. եղել է ՀՀ պետական կառավարման ակադեմիայի քաղաքագիտության ամբողջի դասախոս, 2004-2009թթ.՝ Երևանի պետական համալսարանի և Հայ-ոռոսական (Արագոնական) պետական համալսարանի քաղաքագիտության ամբողջի դասախոս: Հեղինակել է բազմաթիվ գիտական հոդվածներ: Զքաղվել է հասարակական և քաղաքական գործունեությամբ:



### ԶԱՔԱՐՅԱՆ ՎԱԼԵՐԻ ԲՈԳԴԻԱՆԻ

(1948)

Վալերի Բոգդանի Զաքարյան (ծնվ.՝ 1948, գ.Հին Թաղեր), փոխգնդապետ:

Ավարտել է զյուղի միջնակարգ դպրոցի 8-րդ դասարանը: Այնուհետև տեղափոխվել է Բարու, ավարտել թիվ 177 հայկական միջնակարգ դպրոցը: 1967-1974թթ. սովորել է Մոսկվայի նավքի, թի-



միայի և զագի արդյունաբերության ինստիտուտում, ստացել ինժեներ-տեխնոլոգի որակափորում: Ավարտելուց հետո գործուղվել է Թուրքմենահայի Կրասնավոդսկ քաղաքի նավագործարան: Զենարկության թիվ 1 նավթի սկզբնական վերարտադրության արտադրամասում աշխատել է որպես տեղամասի պետ, ինչ տարի անց դեկավարել նույն խոշոր արտադրամասը: Կրասնովոդսկի մարզային կոմունիտական կազմակերպության կողմից 1981թ. գործուղվել է Ներքին գործերի վարչություն՝ որպես քաղաքամի տեսուչ: 1985թ. ստացել է ներքին գործերի կապիտանի կոչում և նշանակվել քաղաքամի պետի տեղակալ: 1988թ. ընտանիքով տեղափոխվել է Հայաստան և աշխատանքի անցել Հրազդանի ջրանային միացյալ հրեց մասում՝ որպես պետի քաղաքով տեղակալ: 1994թ. տեղափոխվել է Գյումրի և ծառայության անցել նորատեղ՝ Հայոց քանակի ավելացիոն գումարութակության որպես հրամանատարի տեղակալ, այնուհետև Երևանի ավագիուն գնդի հրամանատարի տեղակալ: Արժանացել է քաղմարիվ պարգևների:

## ԶՈՒՐԱԲՈՎ ԳԵՐԱՍԻՄ ԳԵՐԱՍԻՄ (1894-1958)

Գերասիմ Գերասիմի Զուրաբով (ծնվ.՝ 1894, գ. Շակուտի - մահ.՝ 1958, Լենինգրադ, ՌԽՖՍՀ), հիդրոտեխնիկ, տեխնիկական գիտությունների դոկտոր (1943), դոցենտ (1944), ԽՍՀՄ-ում առաջին հիդրոտեխնիկական բունենքի նախագծման տեխնիկական պայմանների և նորմերի մշակողը:

1924թ. ավարտել է Լենինգրադի հաղորդակցության ճամապարհների ինստիտուտը: 1924-1930թթ. Լենինգրադում դեկավարել և կառուցել է երկարբունեն 6 կամուրջ: 1930-1935թթ. եղել է հիդրոնախազիծ համամիութենական պետական նախագծային ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի հիդրոտեխնիկայի կառույցների քամի վարիչ, 1935-1958թթ.: Հիդրոտեխնիկայի Համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի ավագ գիտաշխատող:

Աշխատանքները վերաբերում են ճնշումային բունենքի նախաշարքած երեսապատճան փայտե քաղմաններուն ամրակապերի, բունենքի կառուցման ցիկլայնության կիրառության հարցերին:

## ԹԱԻՐՈՎ ՎԼԱԴԻՄԻՐ ՔՐԻՍՏԱԿՈՎԻ

(1894-1938)

Վլադիմիր Թրիստափորի Թաիրով (Ռուբեն Արտեմի Տեր-Գրիգորյան), (ծնվ.՝ 1894, գ. Խորմանցուղ - մահ.՝ 1938, Մոսկվա), դիվանագետ, 2-րդ կարգի գինովորական կոմիսար:

Մանկության տարիներն անց է կացրել հարազարդ զյուղում: 10 տարեկանում մահացել է մայրը, 4 եղբայրների և 2 քոյրերի հետ տեղափոխվել է Բաքով՝ թերու մոտ: Զնոպնի սովորել է առևտրական ուսումնարանում, իսկ ամառային ամիսներն անցկացրել հարազարդ զյուղում: 1915թ. ընդունվել է Կիևի առևտրական ինստիտուտը: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ինստիտուտն էվակուացվել է Սարատով: Այստեղ երկու ամսվ ճերբակալվել է սոցիալ-դեմոկրատական շարժման մասնակից լինելու պատճառով: Բանտից ազատվելուց հետո տեղափոխվել է Մոսկվա և ընդունվել առևտրային ինստիտուտը (այժմ՝ Գ.Ա.Պետսանովի անվան ժողովնետության ինստիտուտ): Ինստիտուտն ավարտելուց հետո նշանակվել է Մոսկվայում գործող 4-րդ քանակի պետական հանձնակատար: Եղել է ՌԽՖՍՀ պետական քանակի կառավարիչը և միաժամանակ Մոսկվայա քաղաքավայրի ֆինանսների ամերամ: 1918թ. ընդունվել է Կարմիր քանակի շարքերը և պայքարել Կամչինյան դիվիզիայի 10-րդ քանակում: 1918թ. նշանակվել է Կամչինյանի մարզի գինովորական հեղափոխության հարավային ճակատի խմբի ղեկավար: 1919թ. հունիսին եղել է 9-րդ և 10-րդ քանակի շտաբի կոմիսար: Երկու անգամ վիրավորվել է Բալաշով և Կամչին քաղաքների ազատազրման ժամանակ: Արիության և խիզախության համար կրկնակի պարզեւարվել է Կարմիր Դրոշի շքանշանով: 1922թ. խիզախի հրամանատարը աշխատել է լեգենդար Բուղդանիի քանակում՝ որպես քաղաքական կոմիսար: Ընդունվել Մ.Վ.Ֆրունզեի անվան Զինվորական ակադեմիան, որն ավարտելուց հետո նշանակվել է Զինաստանում ԽՍՀՄ դեսպան: Երկար ժամանակ աշխատել է նաև ֆրանսիական դեսպանատանը: Տիրապետել է ուստի նաև վրացերեն, ֆրանսերեն, պարսկերեն և անգլերեն լեզուներին: Եղել է նշանավոր խորհրդային ուսումնական ինստիտուտում Ռիխսարդ Զորգեի ուսուցիչներից: Մեկ տարի անց մեկնել է Խարարովսկ, դարձել Հեռավոր Արևելքի Կարմիր քանակի գինովորական խորհրդի անդամ, որտեղ աշխատում էր լեգենդար հրամանատար մարշալ Վ.Կ.Բլուխերը: 1935թ. նշանակվել է ԽՍՀՄ դեսպանը Մոնղոլիայի ժողովրդական հանրապետությունում, աշխատել 2 տարի: Խորհրդային



դեկապարույնը բարձր է գնահատել Թափրովի աշխատանքը՝ կապված դեսպանի աշխատանքի հետ և 1937թ. նրան պարզեցվածքը է Լենինի շքանշանով: 5 ամիս անց հետ է կանչվել Մոսկվա և 1937թ. շասներով Կազանի կայարան, ճերքակալվել Կոնջ հետ: Գնդակահարվել է 1938թ., հետմահու արդարացվել՝ 1956թ.:



**ԹԱՐՄԱՆՅԱՆ ՍՈՅԱ (ԱՐԲՈՒՀԻ)  
ՅԱԿԱՎԻ  
(1953)**

Ավարտել է զյուղի միջնակարգ դպրոցը: Ռատմանը շարունակել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության ֆակուլտետում:

Ծորչ քանինեց տարի դասավանդել է Ուխտածորի, Արևշատի և Բանաձորի դպրոցներում: Եղել է Բանաձորի միջնակարգ դպրոցի փոխտնօրինը: Նարձել է շրջանային և մարզային ասմունքի փառատնների մրցանակակիր: Նրա բանաստեղծությունները տպագրվել են շրջանային և մարզային թերթերում: Հայրութիւ 14 զյուղերի բռնատեղահանությունից հետո՝ 1991թ., ընտանիքով տեղափոխվել է Ուկրաինա: Ապրում է Կրիվոյ Ռոգ քաղաքում: Վաստակաշատ մանկավարժը երկար տարիներ հայերեն է դասավանդում քաղաքի Մ.Մաշտոցի անվան հայկական կիրակնօրյա դպրոցում: Հայ համայնքի երեխաների մեջ ձգտում է վառ պահել սերը դեսի հայրենիքը և մայրենի լեզուն: Հեղինակել է բանաստեղծական ելեկո գիր:



## ԺԱՄՀԱՐՅԱՆ ԳԱՐԻԿ ԳՐԻԳՈՐԻ



Գարիկ Գրիգորի Ժամհարյան (ծնվ.՝ 1956 դ. Մեծ Թաղեր), գնդապետ, հասարակական գործիչ:

1973թ. ավարտել է Մեծ Թաղերի միջնակարգ դպրոցը: 1974-1976թթ. ծառայել է Խորհրդային բանակում: 1982թ. ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը, ստացել հայոց լեզվի և գրականուրբյան ուսուցչի մասնագիտություն: 1982-1990թթ. աշխատել է ԼՂ կոմերտմիուրյան մարմիններում: 1990-1992թթ. աշխատել է որպես ուսուցիչ: 1992թ.-ից ծառայել է ՊԲ շարքերում: 2001-2011թթ. գրադեցրել է ՊԲ ԱՀՏՍ բաժնի պետի պաշտոնը: 2011-2020թթ. աշխատել է ԱՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի, այնուհետև՝ տեղակալի պաշտոնում:

Պարզեատրվել է մի շաբթ մեղալներով



## ԺԱՄՀԱՐՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ԲԱԼՈԾԻՒ

Սիրայել Բախչիկի Ժամհարյան (ծնվ.՝ 1899,  
Հաղորդ - մահ.՝ 1956, ք. Բաքո), միլիոնյայի մայոր,  
Պետական ակադեմիայի փոխգնդապետ:

1914թ. ավարտել է Հաղորդի երկդասյա ոռւսական ուսումնարանը:

1914-1916թթ. աշխատել է Աշխարադի երկարուղային Թեզեն կայանում: Չորահավաքի համար կանչվել է Սպիտակ բանակ, եղել է 1-ին Կառակումյան գումարտակի շարքային: Մեկ ամիս անց փախել է ք. Մերք: Այնուհետև անցել է ծառայության Կարմիր բանակում. 1919-1920թթ.՝ ք. Պոլտորացկում, Շուշիում, Հայրություն: 1923թ. եղել է ք. Մտեփանակերտի Հատուկ նշանակության (ԿՕԻ ուս.) ջոկատի հրահանգիչ: Ծառայությունը շարունակել է ՆԳ Արտակարգ հանձնաժողովում, Միացյալ պետական քաղաքական վարչությունում, Ներքին գործերի ժողկոմինիստրություն, Պետա-

կան անվտանգության ժողովրդական կոմիսարիատում, պետանվտանգության նախարարությունում: 1938-1939թթ. եղել է ԼՎԻՄ Պետական քաղաքական վարչության պետի տեղակալ, Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի վարչության պետ, 1938-1940թթ.<sup>1</sup> Այրևան Ներքին Գործերի ժողովրդական կոմիսարիատի Հրեց ծառայության վարչության պետի տեղակալ, 1942-1943թթ.<sup>2</sup> Կասպիական ավազանի ջրային վարչության պետ, 1950թ.<sup>3</sup> Բարձրի հատուկ հաղորդակցության պետ: 1954թ. անցել է բոշակի: Արժանացել է, մի շարք շքանշանների:



## ԻՇԽԱՆ ԵՍԱՅԻ (ԱՐՈՒ-ՄՈՒՏԵ)

(...-853)

Եսայի (Արու-Մուտե) իշխան (ծնվ.՝ անհայտ - մահ.՝ 853), ազատագրական շարժման գործիչ:

Արցախի հարավային անառիկ դարսաս հանդիսացող Դիզակի տիրակալ Եսայի Արու Մուտե Իշխանը 8-9-րդ դարերում դիմագրավել է արաբական կործանարար արշավանքներին, հաղթել Բուղայի 200 հազարանոց բանակին: Նրա հաղթանակներից հետո, 150 տարի՝ այս գորավոր տարածքը պահպանել է իր անկախությունը օտար նվաճողներից: Դարձել է դավաճանության գոհ: Ստանալով խալիքի իրովարտակը՝ հաշտության պայմանագիր կնքելու համար Բուղայի գորագնդերի հետ մեկնել է Դիզակից, հայտնվել թշնամու ծուղակում: 853թ. ուղարկվել է Բաղդադ՝ որպես գերի: Նրա իշխանական սերունդը հետագայում շարունակել է ապրել անմատչելի ամրոցի մոտ՝ Տումի գյուղում:



## ԻՇԽԱՆ ՎԵԼԻԶԱՆ

Չորավար Վելիջան Խումարեանը 15-րդ դարի սկզբին հիմնադրել է Դիզակի գավառի Ցրի բերդը՝ Ցոր գյուղի թիկունքի լեռան վրա: Բնակչությունը պարսիկների բազմաթիվ ասպատակություններից հետո այստեղ էին եկել Սյունիքի Ցոր քաղաքից: 1478թ. գարնանը կազմակերպել է Ցրի բերդի պաշտպանությունը պարսիկներից: Երկար պաշտումից հետո, թշնամին

բացել է բերդի ջրի խողովակները և նավը լցնելով ապականել ջրմուղը: Վերջին մարտն ավարտվել է պաշարվածների պարտությամբ: Սուրբ ծեռքին զոհվել են նաև հզոր գորավարը: Նրա դիակը ողջ մնացած ցորեցիներն ամփոփել են Դիզակի Վանք գյուղի Սպիտակ խաչ եկեղեցու գերեզմանատանը: Գերեզմանաբարը պահպանվել է առ այսօր. «Այս է հանգիստ քարեպաշտ Վելիջանայ, որ կեսարի, ժամանակավ ի Ծրիսոս փոխեցավ»: Մյուս երեսին հայրը գրել է տվել. «Ես Ալիջան՝ որդի Զարալայ, կանգնեցրի զիսաս փրկություն հոգոյ որդոյ իմոյ Վելիջանին, յիշեցեր բվին Ձիւ» (1478):



## ԻՇԽԱՆՅԱՆ ՎՅԱԶԵՄԱՎ ՄԵՐԳԵՅԻ (1954)

Վյաչեսլավ Սերգեյի Իշխանյան (ծնվ.՝ 1954, Տաշքեն՝ շրակուտեցի Իշխանյան Սերգեյ Իշխանի որդին), ինժեներ, հասարակական գործիչ:

Ավարտել է Տաշքենի տրանսպորտային ինստիտուտը, ինժեներ-ջերմաէլեկտրիկի մասնագիտությամբ: Բարձրագույն կրթություն է ստացել Ռուսականայի Նախարարների խորհրդին կից տնտեսական դեկավարների դասընթացներում: Ավարտել է Աշխարադի Կուսակցության և տնտեսական դեկավարների համալսարանը: 1999թ. մասնակցել է հայերի Հանաշխարհային կոնգրեսին: 2001թ.-ից այդ կոնգրեսի անդամ է: Աշխարադի քայլուրիդի պատգամավոր է: 1983-1986թթ. աշխատել է «Աշխարաջերմ» տրեստում՝ որպես գիլավոր ինժեներ, այսուհետև տրեստի դեկավար: Մեծ ներդրում է ունեցել Աշխարադի ջերմամատակարարման զարգացման մեջ: Թուրքմենստանի կառավարության որոշմամբ ցուցաբերել է մեծ օգնություն երկրաշարժից հետո Սպիտակի վերականգնման համար: Բազմից պարզաւորվել է կառավարության կողմից:



## ԼԱՆՅԱՆ ԱՐՏԵՄ ԲՈԳԴԱՆԻ

(1879-19..)

Արտեմ Բոգդանի Լալայան (ծնվ.՝ 1879, գ.Հաղբուր - մահ.՝ 19..., Թբիլիսի), ազատազրական պայքարի մարտիկ:

Սովորել է Շուշիի ռեալական ուսումնարանում: 1897թ. աշխատել է Բաքվի Կրասիլնիկովի նավային գործարանի գրասենյակում: 1905 - 1906թթ. հայ-բուրքական ընդհարությունների ժամանակ ակտիվութեան մասնակցել է Շուշի քաղաքի ինքնապաշտպանությանը և հայրենի եզրքի կողմերին, լիներով՝ Դիզակի շրջանի հրամանատար Մօրուր Խէջոյի օգնականը: Ֆարական իշխանությունների հետապնդումից խոյս տալով՝ 1907թ. անցել է Պարսկաստան: 1909թ. ճանանակցել է Իրանական հեղափոխությանը: 1914թ. տեղափոխվել է Հայաստան և դարձել կամավորական: Առաջին աշխարհամարտի տարիներին բուրքերի դեմ կռվել է Քեռու ջոկատում, նշանակվել հայկական գորախսմից 4-րդ հեծյալ հարյուրյակի հրամանատար: Վաճի ճակատամարտում վիրավորվել է երկու ոտքից: 1917թ. վերադարձել է հարազատ գյուղ, նշանակվել Դիզակի գավառի միլիցիայի պետ: Մեկ ամսում մրան հաջողվել է ստեղծել կարգ ու կանոն: 1918թ. մարտի 20-ին Հայութի բյուրոյի 1-ին նիստամ, որում առաջին հերքին դրված էր ինքնապաշտպանության խնդիրը, Լալայանը ընտրվել է Դիզակի շրջանի հրամանատարի օգնական և միաժամանակ գավառական կոմիսար: Որպես Դիզակի ինքնապաշտպանական ուժերի հրամանատար՝ դեկավարել և անձանք մասնակցել է բազմաթիվ մարտերի: 1924թ. ձերքակալվել է Խորհրդային իշխանության կողմից և արտորվել Ռուսաստանի խորքերը, այնուհետև՝ 1942թ. Ղազախստան: Պատերազմն ավարտելուց հետո վերադարձել է Թբիլիսի և 1961թ.-ից անցել բռչակի: Կյանքի վերջին տարիներին ապրել է Թբիլիսիում:



## ԽԱՆՅԱՆ ՍՈՒԿՐԱՏ ԱԴԱԼՅԱՐԻ

(1930)

Սուկրատ Աղալարի Խանյան (ծնվ.՝ 1930, գ.Ակնաղբյուր), բանասիրական գիտությունների դոկտոր (2002), պրոֆեսոր (2004), ԽՍՀՄ (1958), ԼՂՀ (1994), Հայաստանի (2002) ԳՄ անդամ, Գիտության վաստակավոր գործիչ (2005):

1944թ. ավարտել է հայրենի գյուղի յրամյա, այնուհետև հարեւան Եղիլու, Ռիստաձոր գյուղի միջնակարգ դպրոցները: 1947-1948թթ. աշխատել է հայրենի գյուղում՝ որպես կոմերչնական կերպության քարտուղար և կուլտուրայի տան վարչի: 1949-1953թթ. սովորել և ավարտել է Բաքվի Վ.Ի.Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը: 1950թ. «Կոմունիստ» թերթում տպագրվել է առաջին բանաստեղծությունը՝ նվիրված Հայութնական մեծ պատերազմում զրիված ավագ եղբոր՝ բանաստեղծ Սուրեն Խանյանի հիշատակին: 1953-1962թթ. աշխատել է Բաքվում հրատարակվող «Կոմունիստ» հայերեն հանրապետական թերթի խմբագրությունում՝ որպես լրագրող: 1962-1965թթ. սովորել է Բաքվի Վ.Ի.Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի սասպիրանսություն՝ «Հայ գրականություն» մասնագիտության գծով, միաժամանակ, դասավանդել է հայոց լեզվի և գրականության բաժնում: 1969թ. Բաքվում Վ.Ի.Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հայկական բաժնու վակվելուց հետո տեղափոխվել է Ստեփանակերտ և շարունակել դասախոսական աշխատանքը Արցախի պետական համալսարանի հայոց լեզվի և գրականության ամբիոնում որպես դոցենտ, 1991թ.-ից՝ պրոֆեսոր: 1959թ. տպագրել է բանաստեղծությունների առաջին ժողովածուն՝ «Կարկաչ» խորագրով: Այնուհետև լրիս են տեսել «Բարեկամություն» (1963), «Սիրտս ձեզ հետ է» (1966), «Արևար» (1968), «Լեռների երզը» (1972), «Իմ նվերը» (1973), «Քո անոնից» (1980), «Կանաչ ծիփանք» (1981), «Կարոտի կրակներ» (1991), «Արցախյան ղողանջներ» (1991), «Արցախի արծիվը» (1995), «Սիեր» (1995), «Իմ ծիածանը» (2000), «Նահատակ Լուս» (2003), «Ամարասի կանքելը» (2005), «Սիրո ճանփա» (2007), «Տարիներ» (2010), «Կրակ չէ, ինչ է» (2019) ժողովածուները: «Արցախի արծիվը» պոեմի համար 1992թ. արժանացել է ԼՂՀ նախարարների խորհրդի Եղիշեի անվան մրցանակի, իսկ «Արցախյան պատերազմ» և հայ պրեզիդիում ուսումնասիրությունը 1998թ. շահել է ԼՂՀ Գրողների միուրյան Մուրացանի անվան մրցանակը: ԱԽանյանը «Մսրու Մաշտոց» և «Մարշալ Բաղրամյան» շքանշանների ասպետ է: 2020թ. արժանացել է ԼՂՀ ԳՄ «Գրիգոր Նարեկացի» մեդալի:





ԽԱՂՅԱՆ ՀԱՐԻ ԵՏ ԽՈՎՐԱՄԻ

(1950)

Համես Սովորատի Խանյան (ծնվ.՝ 1950, գ.Ակնարքյուր), տեխնիկական գիտությունների թեկնածու, գիտատեխնիկական տեղեկատվության տեխնոլոգիաների Ամերիկյան բնկերության անդամ:

Գյուղի ութամյա դպրոցի երկրորդ դասարան  
ավարտելուց հետո ընտանիքի հետ տեղափոխվել  
է Բարու և կրույքյոնը շարունակել Բարվի թիվ  
152, ապա՝ 177-րդ հայկական դպրոցներում

Ավարտել է Բարձի 175-րդ դպրոցը: 9-րդ դասարանում տվյալներու ժամանակ մասնակցել է Մոսկվայի Ֆիզիկատեխնիկական ինստիտուտի Բարձրագույն կազմակերպած օլիմպիադային և արժանացել մրցանակի: Օլիմպիադան կազմակերպողմերի խորհրդով ավարտել է նաև Մոսկվայի Ֆիզտեխի հեռակա դպրոցը: 1968թ. ընդունվել է Մոսկվայի Ֆիզիկատեխնիկական՝ Եվրոպայում և ԱՄՆ-ում ճանաչված միակ ինստիտուտը: Բուհն ավարտելուց հետո հրավիրվել է Մոսկվայի ավիոնոտորների կենտրոնական գիտահետազոտական ինստիտուտա, որտեղ աշխատում է առ աւոր:

Պ.Բ.Քարանըվի անվան ավիացիոն շարժիչների կենտրոնական ինստիտուտի ավագ գլուխաստող է, դիմամիկ շափումների բայցին ազդանշանի մշակման ողբարձության մասնագետ: Գազատուրբինային շարժիչների կատարելագործման ուղղությամբ հասել է մեծ հաջողությունների և ճանաչվելով միայն Ռուսաստանում, այլև ԱՄՆ-ում Ֆրանսիայում, Չինաստանում: Հայտնագործություններն ԱՄՆ-ում ընդունվել են «Համեստ Խանճան բանածև» անունով: Խասախոսությունների և գլուխաստորվների է հրավիրվում Ֆինլանդիայից, Բելգիայից, Չինաստանից և այլ երկրներից: Օդագնացության տեխնիկայի զարգացման գործում անծնական ներդրումների շնորհիվ արժանացել է ՌԴ գլուխաստության նախարարության պատվորերի:



ԽՄՆՅԱՆ ԿԱՐԵՆ ՍՈԿՐԱՏԻ

(1961)

Կարեն Սոլյարսի Խանյան (ծնվ.՝ 1961, ք.Քարստ, Սոլյարս Խանյանի ընտանիքում) բանասիրական գիտությունների թեկնածու (2000), դոցենտ:

1969-1972թթ. սովորել է Բաքվի թիվ 43 դպրոցում: Ընտանիքի հետ Սուեֆանակերտ տեղափոխվելուց հետո ուսումը շարունակել է նախ թիվ 8, ապա՝ թիվ 3 դպրոցներում: 1980-1985թթ. սովորել է Երևանի Վ. Բրյուսովի անվան ուսուաց և արտասահմանյան լեզուների պետական մանկավարժական ինստիտուտի ուսուաց լեզվի և գրականության ու մանկավարժության ֆակուլտետում: 1985-1998թթ. աշխատել է Սուեֆանակերտ քաղաքի և Ասկերանի շրջանի գյուղական դպրոցներում՝ որպես ուսուաց լեզվի և գրականության ուսուցիչ: 1999-2000թթ. դասավանդել է Սուեֆանակերտի Մ.Մաշտոց համալսարանում, 2000-2003թթ.՝ Արցախի պետական համալսարանում: 2005-2008թթ. աշխատել է որպես Խ. Արովյանի անվան ՀՊՄՀ ուսու և արտասահմանյան գրականության ամբիոնի դասախոս, 2008-2010թթ.՝ ամբիոնի ասիստենտ, 2010թ.-ից՝ ամբիոնի լուցենտ, 2009-2012թթ.՝ բանասիրական ֆակուլտետի ուսումնական աշխատանքների գծով դիվանի տեղակալ, 2012թ.-ից՝ Գիտության և միջազգային համագործակցության հարցերով դիվանի տեղակալ:

Հեղինակել է մի շարք հրապարակումներ՝ «Վ.Զվարինցևան և հայ գրականությունը», Ստեփանակերտ, 1998թ., «Կորսային և ստոգողական աշխատանքների թեմատիկա ուսու գրականությունից» (մերոդական ծեռնարկ), Եր., 2005թ., (ոռուերեն), «Գրականագիտական տերմինների ուսուհայերեն համառոտ բառարան», Երևան, 2006թ., «Ուսու-հայերեն գրականագիտական համառոտ բառարան», Եր., 2008թ., «Ուսու գրականությունը և հայ բննադատական միտքը XIX-XX դարերում (հոդվածների ժողովածու»), Երևան, 2012թ., (ոռուերեն), Ուսումնական ծրագիր բակալավրիատի համար «Ուսու մանկական գրականություն», Երևան, 2015թ., (ոռուերեն), Ուսումնական ծրագիր բակալավրիատի համար «Ուսու գրական բննադատության պատմություն», Երևան, 2015թ., (ոռուերեն), «Ուսական պոեզիան 19-րդ դահի հայ բննադատական մորքի զնահատմամբ», 2016, «Հովհաննես Թումանյանը և ոռուական պոեզիան», Երևան, 2019:





## ԽԱՆՔԵՐՅԱՆՑ ԱՐՄԵՆԱԿ ԱՐՏԵՍԻ

(1901-1950)

Արմենակ Արտեսի Խանքերյանց (Սերգեյ Ալեքսանդրի Խոոյակով) (ծնվ.՝ 1901, գ. Սեծ Թաղեր - մահ.՝ 1950, Սոսկվա), Խորհրդային Մրության ավիացիայի մարշալ (1944), Կարմիր բանակի ռազմաօդային ուժերի հրամանատարի տեղակալ և շտաբի պետ:

1916թ. տեղափոխվել է Բարու, աշխատել նավթահանքերում՝ որպես հեռախոսավարի աշակերտ: Այնուեղ էլ երիտասարդ Արմենակը ծանոքացել է Ստալինի հետ: 1917թ. կամավոր անդամագրվել է Կարմիր զվարդիային: 1918թ. մասնակցել է բոյկիլյան «Խոկրա» թերթի լույս ընծայմամբ: Մասնակցել է նաև Բարվի կոմունայի պաշտպանությանը, 1918-1920թթ. Ռուսաստանի քաղաքացիական պատերազմին: Մարտերից ճեկում մահացու վիրավորված ուստ ընկերոջ և հրամանատարի՝ Սերգեյ Խոոյակովի խնդրանքով Խանքերյանցը համաձայնել է նրա փոխարեն և նրա անունով դեկավարել մարտը: Ռազմավարական հմտությունների շնորհիվ Խանքերյանց-Խոոյակովը ջոկատը դուրս է բերել շրջափակումից:

1922թ. ավարտել է Թիֆլիսի հրամկազմի վերապատրաստման ու կատարելագործման հեծելազորային դասընթացները: 1924թ. դարձել է կապականական դպրոցի պետ, 1928-1931թթ.՝ կազակական զնի շտաբի պետ: 1928թ. ամուսնացել է Վարվարա Լեյսակի հետ: 1931-1936թթ. ավարտել է Մոսկվայի Ն. Ժոկովսկու անվան ռազմաօդային ակադեմիան:

1940թ. մասնակցել է Արևմտյան Բելառուսիայի և Արևմտյան Ուկրանյայի վերամիավորման համար մղված մարտերին: 1943թ. կորոյդնացրել է ավիացիայի գործողությունները Կուրսկի և 'Դնեստրի ողողություններում: Խորկովի մատուցյներում թշնամու ոմքակոծությունից զոհվել է նրա 14-ամյա որդին՝ Վիկտորը: Երկրորդ աշխարհամարտի ավարտից (1945թ. սեպտեմբերի 2) հետո դեկավարել է Անդրբայկալյան-Ամուրյան զինվորական օկրուգի 12-րդ ՌՕՌւ-ն: 1945թ. կեղծ մեղադրանքով ձերքակալվել է Զիտայում և չորսուկես տարի ստալինյան զնուաններում անցկացնելուց հետո՝ 1950թ., զնդակահարվել: Հետմահու արդարացվել է 1956թ. նոյեմբերին: 1965թ. վերականգնվել է նրա մարշալի կոչումը: 1980թ. ծննդավայրում բացվել էր մարշալի տուն-քանդարանը:



## ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՐՏԵՍԻ

(1923-1976)

Ալեքսանդր Արտեսի Խաչատրյան (ծնվ.՝ 1923, գ. Էղվար՝ Ուխտաձոր - մահ.՝ 1976, Մոսկվա), տեխնիկական գիտությունների դոկտոր (1969), պրոֆեսոր (1969):

Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո զորակոչվել է Խորհրդային բանակ, մասնակցել Հայրենական պատերազմին: 1943թ. ծանր վիրավորվել է և զորացրվել բանակից որպես հաշմանդամ: Ավարտել է Բարվի ինդուստրիալ ինստիտուտը, 1949թ. ընդունվել Մոսկվայի Էներգետիկայի ինստիտուտի ասպիրանտուրան:

1969-1976թթ. աշխատել է Մոսկվայի Էներգետիկայի համամիութենական գիտահետազոտական ինստիտուտում՝ որպես լաբորատորիայի վարիչ: Միաժամանակ դասավանդել է Մոսկվայի Էներգետիկայի ինստիտուտում և եղել այդ ինստիտուտի գիտական խորհրդի անդամ: Հրատարակել է էներգետիկայի հիմնահարցերին նվիրված 50-ից ավելի գիտական աշխատություն: Որպես փորձագետ անմիջական մասնակցություն է ունեցել էներգետիկ համակարգերի և էներգետիկայինների փորձարկումներին:



## ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՐՏԵՍԻ ՄՈՎԱՏԵՍԻ

(1962)

Արմեն Մովսեսի Խաչատրյան (ծնվ.՝ 1962, գ. Տումի), իրավաբանական գիտությունների թեկնածու (1987):


1978թ. ավարտել է Երևանի N114 միջնակարգ դպրոցը: 1979-1983թթ. սովորել և ավարտել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 1983-1986թթ. սովորել է նոյյն ֆակուլտետի «Պատմության և իրավունքի տեսության ու պատմության» ամբիոնին կից ասավիրանություն: 1987թ. աշխատանքի է անցել ՀԽՍՀ Գև ճախագահության իրավաբանական բաժնում՝ որպես ավագ ուժերենտ, ապա՝ ավագ իրահանգիչ: 1990թ.-ից աշխատել է ՀՀ կառավարության տնտեսական բարեփոխումների և սեփականաշնորհման գծով պետական հանձնաժողովում՝ որպես տնտեսական



բարեփոխումների իրավական ապահովման քաժնի վարիչ, 1992-1996թ.՝ ՀՀ նախագահի աշխատակազմի իրավաբանական քաժնի վարիչ: 1996թ. նշանակվել է ՀՀ զիսավոր դատախազի տեղակալ: Եղել է դատախազության «Օրինականություն» եռամսյա պարբերականի խմբագրական խորհրդի նախագահը: Դատախազության կողեզիայի անդամ է, համակարգի աշխատողների ատեստավորման հանձնաժողովի նախագահ: Մասնակցել է համաշխարհային իրավական, հանցագործության և բրաբիզմնի դեմ պայքարի կազմակերպման ուղղությամբ սիմպոզիումների: ՀՀ նախագահի 1997թ. իրամանագրով արժանացել է արդարադատության երկրորդ դասի պետական խորհրդականի դասային աստիճանի: Հեղմակել է մի շարք մենագրություններ և գիտա-իրավական հոդվածներ:



### ԽԱՉԱՏՐՅԱՆ ԽԵՂԻԿ ՄԱՐԴԻՔ (1914-1989)



Խաչիկ Մարդիկի Խաչատրյան (ծնվ.՝ 1914, գ.Տումի - մահ.՝ 1989, Երևան), Փառի երեք աստիճանի շքանշանակիր, աշխատանքի վետերան:

Ավարտել է Տումո միջնակարգ դպրոցը, ընդունվել Կիրովականի մանկավարժական տեխնիկումը: Երիտասարդ տարիքից կադրերի խիստ պակասության պատճառով աշխատել է որպես դպրոցի տնօրեն: Հետազոտմ ավարտել է Բարվի մանկավարժական ինստիտուտը: Աշխատել է դպրոցի տնօրեն Սեծ Թաղեռում, Հին Թաղերում: Մասնակցել է ուսու-ֆինանսան պատերազմին, Սեծ Հայրենականին: Եղել է քաղաքական գծով զորամասի իրամանատարի տեղակալ: Ղրիմի թերակղզու ծանր մարտերից մեկի ժամանակ (Սևաստոպոլում) ծանր վիրավորվել է, շորջ մեկ տարի բուժվել ուսամական հոսպիտալում: Պատերազմից հետո վերադարձել է որպես հաղորդ: Արժանացել է մեղալների, պարզեների: Հայրենական մեծ պատերազմի առաջին կարգի հաշմանդամ է: 1953թ. ընտանիքով տեղափոխվել է Երևան: Ծուրջ 32 տարի աշխատել է Երևանի թիվ 61 դպրոցի ուսմասվար, ապա երեխյան դպրոցի տնօրեն: Նարարադի և հայրենի Տումո դպրոցներին օգնում էր մերժական գրականությամբ, գրենական պիտույքներով: Եղել է տումեցի ակադեմիկոս Սերգեյ Գյանջումի Արքահամայն ուսուցիչը:

### ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՐՎԱՆԴԻ (1965)

Հարուրյուն Երվանդի Խաչատրյան (ծնվ.՝ 1965, Երևան՝ տումեցու ընտանիքում), պետական-քաղաքական գործիչ:

1992թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը՝ ինժեներ կոնստրուկտորի որակավորմամբ: 1982-1991թթ. աշխատել է ԵրՍՍ ԳՀԻ փորձարարական գործարանում: 1983-1985թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1991թ. ընտրվել է Երևանի Արարկիի շրջխորհրդի քարտուղար: 1993թ. եղել է Արարկիի շրջգործկոմի նախագահի առաջին տեղակալը: 1995թ. ընտրվել է ՀՀ ԱԺ պատգամավոր, ԱԺ պետա-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ: Նեկավարել է ՀՀ սեփականաշնորհման նախարարության պետական գույքի տնօրինման վարչությունը: 2001թ. աշխատել է «Հայուսագարդ» ՓԲԸ «Արագածոտն» մասնաճյուղի փոխտնօրեն:



### ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄԵՀՐԻՆ ՄՈՎՍԵՍԻ (1930)



Միհրան Մովսեսի Խաչատրյան (ծնվ.՝ 1930, գ.Էղվար՝ Ռիխտանոր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր (1990), պրոֆեսոր (1991):

1949թ. ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: Ընդունվել է 1953թ. ավարտել է Երևանի Խ.Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության ֆակուլտետը: 1953-1968թթ. աշխատել է Լեռնային Նարարադում՝ որպես կոմերիտմարզկոմի առաջին քարտուղար, կուսակցության պրոպագանիզայի և ազիտացիայի բաժնի վարիչ, նաև հեռուստատեսության և ռադիոհաղործությունների մարզային կոմիտեի գլխավոր խմբագիր: 1960-1962թթ. ընդունվել և ավարտել է ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր քարձրագույն կուսակցական դպրոցը: Նարարադում աշխատելու տարիներին քազմից ընտրվել է մարզային խորհրդի պատգամավոր և այլ ընտրովի



մարմիններում: 1968թ. տեղափոխվել է Երևան, ՀԽՍՀ քարձրագույն և միջնակարգ մասնագիտական կրթուրյան նախարարության ուղևորով աշխատանքի անցել Երևանի պետական համալսարանի փիլիսոփայության ամբիոնում:

Հեղինակել է մենագրություններ և տասնյակ գիտական ուսումնասիրություններ: Երկար ժամանակ եղել է նաև «Փիլիսոփայական հարցեր» միջրուսական ժողովածովի պատասխանառու քարտուղար: Համալսարանում միաժամանակ աշխատել է որպես արտասահմանյան քաղաքացիների ուսուցման գծով դեկան: Պարզեւարքվել է մեդալներով, պատվորերով:



### ԽԱՉԱՏՐՅԱՆ ՄՈՎԻԵՍ ՄԱՐՏԻՐՈՍԻ (1923-1989)

Մովիս Մարտիրոսի Խաչատրյան (ծնվ.՝ 1923, գ. Տումի - մահ.՝ 1989, Երևան), Հանրապետության վաստակավոր իրավաբան, իրավաբանական գիտությունների թեկնածու (1961), դրենու (1966):

Ավարտել է Տումու միջնակարգ դպրոցը: 1940-1942թ. որպես քարտուղար աշխատել է Տումու կոլտնտեսարքունում: 1942թ. գորակոշվել է բանակ: Եղել է դիպուկահարների ջոկատի, վաշտի հրամանատար: Մարտական սխրանքների համար պարզեւարքվել է շքանշաններով և մեդալներով: 1944-1947թթ. աշխատել է Տումու միջնակարգ դպրոցում՝ որպես գինեկել: 1952թ. ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը, աշխատանքի անցել համալսարանում: Դասախոսել է իրավաբանական ֆակուլտետում:



### ԽԱՉԱՏՐՅԱՆ ՊԵՏՐՈՍ ԽԱՉԱՏՐՈՒԹԻՒՆ

(1914-1964)

Պետրոս Խաչատրյան (ծնվ.՝ 1914, գ. Տումի - մահ.՝ 1964, Բաքու), ինժեներ:

Տարրական կրթուրյունը ստացել է հայրենի գյուղում, այնուհետև ուսումը շարունակել Տողի 7-ամյա դպրոցում, Բաքվում: Սառայել է Խորհրդային բանակում: Ստացել է քարձրագույն կրթություն: Աշխատել է Բաքվի՝ Աղրբեջանի նախագծային ինստիտուտում՝ որպես գիլավոր ինժեներ: Հեղինակել է մի շարք յուրահատուկ նախագծեր:




### ԽԱՉԱՏՐՅԱՆ ՌՈԲԵՐՏ ՆԻԿՈԼԱՅԻ

(1949-1997)

Ռոբերտ Նիկոլայի Խաչատրյան (ծնվ.՝ 1949, գ. Տումի - մահ.՝ 1997, Ստեփանակերտ), վիրաբերություն:

1966թ. ուսկե մեդալով ավարտել է Տումու միջնակարգ դպրոցը: Ընդունվել և 1974թ. ավարտել է Երևանի թշկական ինստիտուտը: Գործունվել է Հեռավոր Արևելյան Ռատուրի երկրամաս: 1977թ. վերադարձել է Ստեփանակերտ և աշխատանքի անցել ԼՂԻՄ ուսուցչարանական դիսպանսերում՝ որպես բաժանմունքի վարիչ, այնուհետև՝ գլխավոր քիմիկ: Ակտիվ մասնակցել է Արցախի ազգային ազատագրական շարժմանը: ՊԱԿ մարմինների կողմից ենթարկվել է ետապնդումների և հալածանքի: Արցախյան պատերազմի տարիներին եղել է Կարմիր Շուկայի, ապա՝ Հաղորդի ուսումնական հոսպիտալի պետը: Բուժժառայության կապիտանը և հիվանդանոցի գլխավոր վիրաբույժը փրկել է հարյուրավոր ազատամարտիկների կյանք:





## ԽԱՉԻՅԱՆ ԱԼԵՔՍԵՅ ՄԵՐԳԵՅԻ

(1928)

Ալեքսեյ Մերգեյի Խաչիյան (ծնվ.՝ 1928, Հաղովոր), տեխնիկական գիտությունների թեկնածու (1955), պրոֆեսոր (1987), ՌԴ գիտության և տեխնիկայի բնագավառի մրցանակի դափնիկիր, Զերմատեխմիկայի և ներքին այրման շարժիչների տեսության գիտական:

1945թ. ընդունվել է Բարձրի կենտրոնական դպրոցը: Ավագ դասարանում տարված էր սպորտային մարմնամարզությամբ: 1941թ. քաղաքային մրցություններում զրադեցրել է առաջին տեղը: 1950թ. ավարտել է Աղրեջանի ինստիտուտիալ ինստիտուտը՝ «Մերքնաներ և մերքնաների տնտեսության» մասնագիտությամբ: 1950թ. ընդունվել է Մոսկվայի մեքենատրանսպորտային ինստիտուտը, ավարտել որպես «Ներքին այրման շարժիչների» մասնագետ: 1952-1959թթ. աշխատել է գիտահետազոտական ավտոմոբիլային և մեքենաճանապարհային ինստիտուտում՝ որպես ավագ ինժեներ, այնուհետև՝ խմբի ղեկավար, կրտսեր գիտաշխատող, ավագ գիտաշխատող: 1959-1963թթ. եղել է ԽԱՀՍ Գազպրոմի Համամիութենական ինստիտուտի ավագ գիտաշխատող, 1963-1984թթ.: Մոսկվայի Ավտոճանապարհային ինստիտուտի ղոցենտ, այնուհետև ավտոտրակտորային շարժիչների և ջերմատեխնիկայի ամբիոնի պրոֆեսոր: Համահեղինակ է 4 դասագրքի, հեղինակ և համահեղինակ 150 հոդվածների և միջազգային կոնֆերանսների գեկույցների, համահեղինակ 5 մենագրությունների, 12 հեղինակային վկայությունների:



## ԽԱՉԻՅԱՆ ԷԳՈՒԱՐԴ ԵՓՐԵՄԻ

(1933)

Էդուարդ Եփրեմի Խաչիյան (ծնվ.՝ 1933, գ.Առաքել), երկրաբան, տեխնիկական գիտությունների դրկտոր (1972), պրոֆեսոր (1978), ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս (1996), ՀՀ գիտության վաստակավոր գործիչ:

1950թ. ավարտել է Բանաձորի միջնակարգ դպրոցը: Ընդունվել և 1956թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի աշխարհագրության ֆակուլտետը:

1956-1997թթ. աշխատել է որպես լարորատորիայի վարիչ, սեյսմակայուն շինարարության ինստիտուտի (ԳՀԻ) գիտության գծով տնօրենի տեղակալ, 1972-1988թթ.՝ ԵՊԱԿ ՀՀ-ի և ԵՊՀ պրոֆեսոր, 1997թ.-ից՝ ԵՊՀ ամբիոնի վարիչ, 1997թ.-ից՝ ՀՀ ԳԱԱ ԵԳԻ գիտակող գիտաշխատող:

Հեղինակել է ավելի քան 250 տպագրված գիտական աշխատանքներ, այդ թվում 12 մենագրություն, 5 հեղինակային արտոնագրեր, 15 նորմատիվա-հրահանգական փաստաթղթեր, 60 գիտական հոդվածներ՝ անգերեն լեզվով տպագրված տարբեր երկրներում:



## ԽԱՉԻՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ԻՇԽԱՆԻ

(1941-2021)

Միքայել Իշխանի Խաչյան (ծնվ.՝ 1941, գ.Հարաշեն (Հախովյու)- մահ.՝ 2021, Երևան), 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ, գրող:

Ավարտել է Ուխտաձորի միջնակարգ դպրոցը: Ծառայել է խորհրդային բանակի շարքերում: Զորացրվելուց հետո ընդունվել և 1967թ. ավարտել է Բարձրի Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետը: Աշխատանքի է անցել հարազատ դպրոցում: Ծորց 50 տարի աշխատել է Հայության շրջանի Ուխտաձորի միջնակարգ դպրոցում և ավելի քան 20 տարի եղել նոյն դպրոցի տնօրենը: Հրատարակել է բանաստեղծությունների և պատմվածքների 9 գիրք:



## ԽԱՍՏԵՏՅԱՆ ԱՐՓԻԿ ՌՈՒԲԵՆԻ

(1948)

Արփիկ Ռուբենի Խաստետյան (ծնվ.՝ 1948, գ. Մեծ Թաղեր), ՀՆՀ վաստակավոր մանկավարժ (2005), ԽՍՀՄ ժուռալիստների միուրյան անդամ:

1955-1966թթ. սովորել է գյուղի դպրոցում: Ավարելոց հետո անմիջապես աշխատամբի է ամցել դպրոցում որպես ջոկատավար: 1968-1972թթ. ընդունվել և ավարտել է Աղբքեչանի Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության ֆակուլտետի հեռակա բաժնը: 1969-1991թթ. աշխատել է շրջանային «Կոլտնտեսական» թերթի խմբագրությունում որպես գրական աշխատող, բաժնի վարիչ, այսուհետև խմբագիր: 1991թ.-ին մինչև բոշակի անցնելը հայոց լեզու և գրականություն է դասավանդել Հայուրի Մ.Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցում: 2000-2005թթ. եղել է ԼՆՀ Ազգային ժողովի պատգամավոր:



## ԽԱՍՏԵՏՅԱՆ ՌԱՅԱ ՌՈՒԲԵՆԻ

(1935)

Ռայա Ռուբենի Խաստետյան (ծնվ.՝ 1935, գ. Մեծ Թաղեր), արձակագիր, լրագրող, քարզմանիչ, ՀԽՍՀ վաստակավոր ժուռալիստ (1982), Հայաստանի գրողների միուրյան անդամ (1985):

1958թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի քանախիրական ֆակուլտետի ժուռալիստիկայի բաժնը: Աշխատել է Հայաստանի գրողների միուրյունում, Գրական թերթում: Վարել է քննադատության, արթատի և գիտության, հրապարակախոսության բաժինները: Գրական մամուլում տպագրել է քազմաքիլ հոդվածներ, ակնարկներ, հարցազրոյցներ, գրախոսություններ՝ նվիրված արվեստի և գիտության, մշակույթի հարցերին, ինչպես նաև պատմվածքներ ու քարզմանություններ (1982): Արժանացել է Ֆ.Նանսենի անվան ոսկե մեդալի (2010), ՀԳՄ Ե.Չարենցի անվան գրական մրցանակի՝ Վ. Բիկովի «Աղետի նշան» և «Քարհանք» վիպակների քարզմանության համար (1991):



## ԿԱՅՅԱՆ ԺԵՆԵՎԱ ՇԱՍԻՐԻ

(1924-2016)

Ժենյա Շամիրի Կաֆյան (ծնվ.՝ 1924, գ. Վանք-մահ.՝ 2016, ք. Ստեփանակերտ), Արցախի վաստակաշատ ուսուցչուհի:

1941թ.-ին գերազանցությամբ և գովասանագրով ավարտելով դպրոցը՝ ցանկացել էր ուսումը շարունակել Երևանի թշքական ինստիտուտում: Հայրը դատերը հորդորել է ընդունվել մանկավարժական ինստիտուտ: Արդյունքում նա ընդունվել է Բարվի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական բաժնը:

1946թ.-ին ավարտելով ուսումը, աշխատանքի է անցել Հայուրի շրջանի Շամձոր գյուղի միջնակարգ դպրոցում, որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի:

Անուսոն՝ վաստակավոր թիշկ Եղիշե Արայանի հետ ծանոթացել է նոյն տարրում: Անուսանալուց հետո տեղափոխվել է անուսու հայրենի գյուղ՝ Մեծ Թաղեր: 1953թ. ընտանիքը տեղափոխվել է ք. Ստեփանակերտ: Ստեփանակերտում ընդունվել է աշխատանքի թիվ 1 միջնակարգ դպրոցում: Մի քանի տասնամյակ Ստեփանակերտի համար 1 միջնակարգ դպրոցում գրավել է սերունդների կորուրյան և դաստիարակության գործու: Հատկապես մեծ է նրա ավանդը խորհրդային հասարակարգում հայոց լեզվի և գրականության նկատմամբ սերունդների մեջ սիրո սերմանումը:



## ԿԱՅՅԱՆ ՄԱՆՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

(1924-2009)

Մանվել Հարությունի Կաֆյան (ծնվ.՝ 1924՝ տումեցու ընտանիքում - մահ.՝ 2009, Երևան), գնդապետ:

1941թ. ընդունվել է Սամարդանի մանկավարժական ինստիտուտը: 1943թ. գրակոչվել է քանակ: Սովորել է Լենինգրադի ուսումնարանում, ծառայել որպես հրետանային մարտկոցի հրամանատարը: 1945թ. ծառայության է ան-



ցել Թուրքմենստանի ռազմական օկրուզում: 1962թ. գորացրվել է և մշտական բնակություն հաստատել Երևանում: 1969-1975թթ. աշխատել է ԴՕՍՊԱՖ-ի Հայաստանի բաժանմունքում՝ որպես պետի տեղակալ: Պարգևատրվել է մարտական մեդալներով, շքանշաններով:



### ԿՈՆՏԱՎԻՅԱՆ ԱՐԱՐԵԼ

(1805-...)

Առարել Կոնտավանյան (ծնվ.՝ 1805, գ.Թաղուտ), վարդապետ: Կյանքի մեծ մասն անց է կացրել Գտշավանքում: Գրել է «Արցախի պատմություն» աշխատուրյունը: Նրանից օգտվել է Բաֆֆին իր «Խամսայի մելիքություններ»-ը գրելիս: Ծուր 18 տարի գրել է պատմագիտական և ազատագրական մի ձեռագիր աշխատուրյուն, որից մի փոքր հատոր՝ «Դիգակի մելիքությունը», լույս է տեսել 1913թ. Վաղարշապատում: 2 ձեռագիր պահպում է Մատևնադարանում: Վարդապետն իր մորը՝ Մարիամին, այրիանալուց հետո 14 տարի պահել է իր մոտ՝ Գտշավանքում: 1884թ. Լոռ ծանրացել է վարդապետի հետ, նրա ձեռագրերին, բարձր գնահատել լրանք: 1868թ. երկրաշարժից ավերվել է միանավ, զմբերավոր եկեղեցին, որից հետո լրել է Գտշավանքը և ամուսնացել: Մահացել է խոր ծերության հասակում:



### ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐԱՄԱՅԻՆ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ

(1930)

Արամայիս Հովհաննեսի Հակոբյան (ծնվ.՝ 1930, գ.Տումի), գյուղատնտեսական գիտությունների թեկնածու:

Ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը, 1956թ.՝ Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտը: 1956-1960թթ. աշխատել է Եջմիածնի շրջանում՝ որպես անասնաբույժ: 1960թ. որպես գիտաշխատող ընդունվել է Երևանի անասնաբու



ժական-անասնաբուժական գիտահետազոտական ինստիտուտի մեղվաբուծության բաժինը: Հեղինակել է 50-ից ավելի գիտական հոդվածներ, բազմաթիվ ուսումնականագործական առաջարկություններ:




### ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՎԱԴԻՎ ՍՈՒՐԵՆԻ

(1930)

Արկադիա Սուրենի Հակոբյան (ծնվ.՝ 1930, գ.Տում):

1955թ. ավարտել է Բաքվի պոլիտեխնիկական ինստիտուտը՝ ինժեների մասնագիտությամբ: Որպես երիտասարդ մասնագետ գործուղվել է ք.Աշխարադ: 1957թ. նշանակվել է թիվ 10 ավտոպարկի գլխավոր ինժեներ, 1965թ.՝ Թուրքմենստան ԽՍՀ Ավտո-տրանսպորտային և խճուղային ճանապարհների արտադրատեխնիկական բաժնի տնօրեն, ապա՝ նախարարության կոլեգիայի անդամ, 1974-1992թթ.՝ նույն գերատեսչության նախարարի տեղակալ:



### ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆ ՎԼԱԴԻՄԻՐԻ

(1941-1990)

Արմեն Վլադիմիրի Հակոբյան (ծնվ.՝ 1941, գ.Կարմրակուճ - մահ.՝ 1990, Ստեփանակերտ), քանդակագործ, ԽՍՀՄ նկարիչների միության անդամ (1978):



1947-1957թթ. սովորել է Ստեփանակերտի Գրիգորյանի անվան թիվ 3 միջնակարգ դպրոցում: 1961թ. մեկնել է Աշխարադ: 1962-1964թթ. ծառայել է խորհրդային բանակում: 1965-1968թթ. սովորել է Դուստուովի Գրեկովի անվան գեղարվեստական ուսումնարանի բանակի բաժնում, միաժամանակ նաև՝ Վորոնեժի մանկավարժական ինստի-

139

տուսի պատմության ֆակուլտետում: Այնուհետև վերադարձել է հայրենիք, 1969-1971 թթ. աշխատել որպես քանդակագործ Ստեփանակերտի արտադրա-ստեղծագործական կոմբինատում: Այդ տարիներին կերտել է Հայրենական մեծ պատերազմում զոհված արցախցիների հիշատակի հուշա-ձաններ Վանք և Կարմրակում զյուղերում: 1971 թ. մեկնել է Ալբայի երկրա-մաս, հաստատվել Բառնաով քաղաքում: Աշխատել է երկրամասի տարրեր արվեստանոցներում, մասնակցել քաղաքիվ ցուցահանդիսների, դասա-վանդել Նովոարքայսկի գեղարվեստական ուսումնարանում: Մեծ Հայրենա-կանին նվիրված հուշարձաններ է տեղադրել Ելցինի և Պերվոմայի քա-դարձերում, մի շարք բնակավայրերում: 1977 թ. մարզկոմի 1-ին քարտուղար Գևորգովի հրավերով վերադարձել է հայրենիք: Այդ ընթացքում տարրեր շրջաններում ղեկավարել է ԼՂ նկարչչների ստեղծագործական քաժան-սունքը, այնուհետև՝ միությունը, լսելի դարձել հայ արվեստագետի ճայնը Աղբեցանում: Դասավանդել է նաև Ստեփանակերտի Հ. Գյորջյանի ան-վան արվեստի մանկական դպրոցում: 1988 թ. ակտիվորեն մերգրավել է Ղարաբաղյան շարժմանը, եղել է «Կոռումկ» կոմիտեի հիմնադիր-անդամնե-րից մեկը, այդ անվան և կոտնկի պատկերով կրծքանշանի հեղինակը: 1988 թ. Արցախի ճտավորականների պատվիրակության կազմում մեկնել է Մոսկվա՝ Կենտկոմ, Հայաստանի հետ Արցախի վերամիավորման պահան-ջով: Չոհելի է 1990 թ. հունվարի 2-ին՝ աղբեջանական զինված սայրամբից Ստեփանակերտի փողոցները դրւու եկած խաղաղ բնակչությանը պաշտ-պանելու բանակցության ժամանակ: 1988 թ. մասնակցել է Խուսանի քանդա-կագործական սիմպոզիումին, կերտել «Արցախ» քանդակը, որն արժանա-ցել է հասուն մրցանակի: 1989 թ. Ստեփանակերտում տեղադրվել է նրա՝ Սպիտակի երկրաշարժի և Սումգայիթի զոհերի հիշատակին նվիրված հո-ակորողը: Հետմահու արժանացել է մի շարք պարզների:



## ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ (1932)

Արմենակ Հովհաննեսի Հակոբյան (ծնվ.՝ 1932, գ. Տումի), ճարտարապետ:

Ավարտել է զյուղի միջնակարգ դպրոցը, ծառա-յության անցել խորհրդային քանակում: 1953-1956 թթ. աշխատել է Վարանդա քաղաքում: 1962 թ.

ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի ճարտարապետու-թյան բաժինը: Գծագրություն է դասավանդել Երևանի մերենաշինական տեխնիկումում: Աշխատել է Երևանի պետական նախագծային ինստիտու-տում՝ որպես զյուղավոր մասնագետ, զյուղավոր ճարտարապետ: Նախագծել է պետական շենքեր և գործարաններ՝ Բաքու, Տաշքենդ, Վոլգոգրադ, Երևան, Արցախ քաղաքներում, Տումի, Մեծ Մաղեր զյուղերի, Երևանում՝ Զարբախի և այլ բնակավայրերի մի շարք շինություններ:



## ՀԱԿՈԲՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ ՀԱՅՐԱՊԵՏԻ

(1886-1960)

Արշակ Հայրապետի Հակոբյան (ծնվ.՝ 1886, գ. Էղիշա՝ Վարդաշատ - մահ.՝ 1960, Երևան), բժիշկ, ֆիզիոլոգ, ֆիզիոթերապևտ, բժշկական գի-տուրյունների դրկոտր (1936), պրոֆեսոր (1939), ՀԽՍՀ գիտուրյունների վաստակավոր գործիչ:

Միջնակարգ կրթություն ստացել է Բաքվում: Գիմնազիան ավարտելուց հետո մեկնել է Բեռլին: 1911 թ. ավարտել է Բեռլինի համալսարանի բժշկա-կան ֆակուլտետը: Վերադարձել է Կիև և աշխատանքի անցել տեղի հի-փանդանցներից մեկում: 1914 թ. գործուղել է Բեռլին, վերապատրաստվել նյարդային հիվանդությունների և ֆիզիոթերապիայի գծով: Առաջին հա-մաշխարհային պատերազմի սկզբին գորակուղել է գործող քանակ որպես բժիշկ: 1917 թ. տեղափոխվել է Կովկաս, 1918 թ.՝ Բաքու, 1919 թ.՝ Երևան: 1919 թ. ապրել է Երևանում, մասնակցել ՇՊՀ բժշկական ֆակուլտետի հիմ-նադրմանը: Մինչև 1936 թ. եղել է ԵԲԻ-ում իր իմանած ֆիզիոլոգիայի, 1936-1960 թթ.՝ նյարդախտաբանության ամբիոնների վարիչը: Զբաղել է նաև կուրորտաբանության հարցերով, նախատել «Արգնի», «Ջերմուկ» և Վա-նաձորի առողջարանների կազմակերպմանը: 1935 թ. Ռ. Ն. Գյանջեցյանի հետ համատեղ իրատարակել է «Հայաստանի առողջարանների ու հանգստյան տների տեղեկատու» ձեռնարկը, իսկ Գ. Ի. Միրզոյանի հետ՝ «Պերիֆերիկ ներվային համակարգության արավմատիկ վնասվածքներ» համառոտ ձեռնարկը: Մինչև 1989 թ. նրա անունով էր կոչվում Երևանի կու-րորտաբանության և ֆիզիկական բժշկության ԳՀԵ-ն: Պարզեատրվել է մի շարք մեխանիկական և շրանչաներով:





## ՀԱԿՈԲՅԱՆ ԴԱՎԻԹ ԷԳԻԿԻ

(1982)

Դավիթ Էղիկի Հակոբյան (ծնվ.՝ 1982, գ.Տումի), իրավաբան:

2000թ. գերազանցությամբ ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, 2008թ.՝ Արցախի պետական համալսարանի իրավագիտության բաժինը և ստացել մագիստրոսի աստիճան: 2005թ. ծառայության ընդունվել ԼՂՀ կառավարությանն առընթեր արտակարգ իրավիճակների վարչությունում՝ որպես քաղաքացիության վարչության ավագ սպա և ստացել լեյտենանտի սկզբնական գիմնիվորական կոչումը: 2007թ. նշանակվել է նոյն վարչության կառավարման կետի պետի, 2009թ.՝ ԼՂՀ Շահումյանի շրջանի բնակչության և տարածքների պաշտպանության բաժնի պետի պաշտոններին: 2010թ. ստանձնել է ԼՂՀ ՓԾ տնօրենի ավագ օգնականի, 2012թ.՝ ԼՂՀ ԿԱ ՓԾ իրավաբանական բաժնի պետի, 2014թ.՝ ԼՂՀ ԿԱ արտակարգ իրավիճակների պետական ծառայության տնօրենի աշխատակազմի ղեկավարի պաշտոններին: Ունի փրկարարական ծառայության փոխգնդապետի կոչում: 2009թ.-ից հանդիսանում է Արցախի պետական համալսարանի «Իրավումքի» ամբիոնի դասախոս: 2017թ. ավարտել է ՀՀ Արդարադատության ակադեմիան: Պարզւատրվել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, ԱՀ արտակարգ իրավիճակների պետական ծառայության մերձականության: 2018թ. ԱՀ Ազգային ժողովի որոշմամբ նշանակվել է ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատավոր:



## ՀԱԿՈԲՅԱՆ ԷԳՈՒԱՐԴ ԶԱՎԵՆԻ

(1948)

Էղուարդ Զավենի Հակոբյան (ծնվ.՝ 1948, գ.Հինգ Թաղեր), գեներալ:

Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո աշխատանքի է անցել զյուղական ակումբում: 1970թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 1975թ., ստանա-



լով իրավաբանի կոչում, գործուղվել է ՀՀ գերազույն դատարան: Իննը տարի պաշտոնավարել է ՀԱԱՀ Գերազույն դատարանում: 1984թ. գրադեցրել է Ամսախայի, ապա՝ Սևանի շրջանային դատախազի տեղակալի պաշտոնը: Այնուհետև նշանակվել է Գորիսի միջշրջանային դատախազ: Աշխատանքային գործունեությունը շարունակել է ՀՀ դատախազությունում: 1992թ. նշանակվել է Գյումրու կայազորի գինվորական դատախազ, 1996թ.՝ Երևանի կայազորի գինվորական դատախազի տեղակալ: 2000թ. ստանձնել է Զանգեզուրի, 2003թ.՝ Երևանի կայազորի գինվորական դատախազի պաշտոնը: Արժանացել է կառավարական պարգևների:

Հեղինակել է բանաստեղծական երկու՝ «Անվերջ Երազ» և «Սիր արական» ժողովածուները:



## ՀԱԿՈԲՅԱՆ ԼԵՌՆԻԿ ՄԱՆՎԵԼԻ

(1970)

Լեռնիկ Մանվելի Հակոբյան (ծնվ.՝ 1970, գ.Քարինգ), բանասիրական գիտությունների թեկնածու, ՀՀ և ԼՂՀ ԳՄ անդամ:

1978-1988թթ. սովորել է Ստեփանակերտի Հովհաննեսի անվան թիվ 9 միջնակարգ դպրոցում: 1988-1993թթ. ընդունվել և ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը, 1993-1996թթ.՝ նոյն համալսարանի ասպիրանտուրան: 1992-1996թթ. ծառայել է ԼՂՀ ՊԲ-ում: 2000թ. ավարտել է «Գրիգոր Նարեկացի» համալսարանի իրավաբանության ֆակուլտետը: 1996-2005թթ. աշխատել է Ստեփանակերտի քաղաքապետարանում, ԼՂՀ կառավարության աշխատակազմում, ԼՂՀ արտադրական ներքանության և քաղաքաշնորհյան նախարարությունում: 2005-2007թթ. գրադեցրել է ԿԳՆ Լեզվի տեսչության պետի պաշտոնը: 2008-2009թթ. եղել է ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար: 2010թ. նշանակվել է ԼՂՀ վարչապետի խորհրդական: Հեղինակել է հինգ գիրք:





## ՀԱԿՈԲՅԱՆ ՀԱՍՏԵՏ ԲԱԶԵԻ

(1955)

Համեստ Բազեի Հակոբյան (ծնվ.՝ 1955, գ. Տումի), գնդապետ:

1975թ. ավարտել է Երևանի կոռպերատիվ տեխնիկումը: 1975-1977թթ. ծառայել է Խորհրդային բանակում: 1989թ. ավարտել է Մոսկվայի ներքին գործերի նախարարության ակադեմիայի բարձրագույն ինժեներատեխնիկական ֆակուլտետը: 1990-1995թթ. եղել է Վանաձորի հրշեց կայազրի պետը: 1996թ. նշանակվել է ՀՀ ՆԳՆ հրշեց պահպանության վարչության պետի տեղակալ: 2000թ. Երևանի Կենտրոն համայնքի թիվ 1 հրշեց մասի պետ, 2003թ.՝ ՀՀ ԿԱ Ահ-Վ Երևանի գորամասի հրամանատար:



## ՀԱԿՈԲՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԻՇԽԱՆԻ

(1901-1986)

Սուրեն Իշխանի Հակոբյան (ծնվ.՝ 1901, գ. Տումի - մահ.՝ 1986, Մոսկվա), ճարտարագետ-մեխանիկ, տեխնիկական գիտությունների թեկնածու (1941), պրոֆեսոր (1963):



Ավարտել է Շուշիի ռեալական ուսումնարանը: 1920թ. դասավանդել է Հաղորդի շրջանի գյուղեղում: 1924թ. աշխատանքի է անցել ԼՂԱՄ կրթության վարչությունում՝ որպես տեսուչ: 1936թ. ավարտել է Մոսկվայի բարձրագույն տեխնիկական ուսումնարանը: 1936-1972թթ. աշխատել է Մոսկվայի Տրակտորների պետական համամիության գՀԻ-ում, 1950-1963թթ.՝ որպես տնօրեն: Հակոբյանի նախաձեռնությամբ 1967թ. Եղվարդում կազմակերպվել է այդ ինստիտուտի հարավային մասնաճյուղը, որի պրոֆեսոր-խորհրդականն էր 1972-1976թթ.: Մեծ ավանդ ունի տրակտորաշինության զարգացման գործում: Դուստրը՝ Նելլին, երաժշտական մրցույթների դափնեկիր է, բնակում է Անգլիայում, Լոնդոնի Թագավորական կոնսերվատորիայի պրոֆեսոր է:

## ՀԱԿՈԲՅԱՆ ՎԱՐԴԱՆ (ՄԱՍՎԻԿ) ՍԱՐԳՍԻ

(1948)

Վարդան (Մասվիկ) Սարգսի Հակոբյան (ծնվ.՝ 1948, գ. Արփազետիկ), բանաստեղծ, դրամատուրգ, բանասիրական գիտությունների դոկտոր (1998), պղոփառը, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ (2005), ԱՀ պետական օրիններգի հեղինակ, Հայաստանի ԳՄ անդամ (1982):



1969թ. ավարտել է Բարձր մանկավարժական ինստիտուտը: 1969-1983թթ. աշխատել է Ստեփանակերտի «Սովետական Դարարադ» օրաթերթում, 1976-1983թթ.՝ որպես գլխավոր խմբագիր տեղակալ: 1983-1991թթ. եղել է գրողների միության Լեռնային «Հարարադի մարզային քաժանհնունիքի պատասխանատու քարտուղար», 1991թ.՝ ԼՂՀ գրողների միության նախագահ, միաժամանակ՝ միության պաշտոնարերը «Եղիշի լույս»-ի գլխավոր խմբագիր: Վարդան անունը կը բեր է Հ.Շիրազը: Նրա «Հայելիներ» (1979) և «Քո սերը քո տունն է» (1981), «Ես հրաժարվում եմ ինձանից», «Արցախյան բալլարդ» պիեսները բեմադրվել են Ստեփանակերտի Վ.Փափազյանի անվան հայկական դրամատիկական, Հայաստանի պետական և ժողովրդական թատրոններում: Հիմնադրել և խմբագրել է «Արցախ» (1989) երկանյա և «Պլոյ-Պուղ» (1991) երգիծական հանդեսները: Ստեղծագործությունները տպագրվել են ուսուերեն, ուկրաիներեն, վրացերեն, անգլերեն և այլ լեզուներով: Պարզևատրվել է մեդալներով, արժանացել մի շարք մրցանակների:



## ՀԱՄԲԱՐՁՈՒՅՑԱՆ ԵԳԻՉԵ ԱՌԱՍՅԻ

(1906-1995)



Եղիշե Առաստամի Համբարձումյան (ծնվ.՝ 1906, գ. Ցոր - մահ.՝ 1995, ք. Ստեփանակերտ), հասարակական-քաղաքական գործիչ, Հանրապետության նշանակության անհատական բոշակառու:

Ավարտել է գյուղի դպրոցը: 16 տարեկան դառնալուն պես՝ ընտանիքին օգնելու նպատակով, իոր հետ մեկնել է Բաքու, աշխատանքի անցել «Ազեր-

նավք» շինարարական վարչություններից մեկում: Այնտեղ ընդունվել է կոմիտամբուրյան շարքերը, 1928թ.: անդամագրվել կոմունիստական կուսակցությանը:

1980թ. ընտրվել է Ցոր գյուղի նախագահ, այնուհետև եղել է հողշրջավարչության քարտուղար, Հաղորդի կուսարչկոմի հաշվառման քածնի վարիչ, շրջանային «Կոլտնետեսական» թերթի խմբագիր: 10 տարի եղել է Հաղորդի կուսարչկոմի առաջին քարտուղար: 1952-1957թթ. աշխատել է Մարտակերտի կուսարչկոմի առաջին քարտուղար: 15 տարի եղել է մարզային խարձակի գործկոմի կոմունալ քածնի վարիչ: Մարզային կուսակցական կազմակերպության վերջին կոնֆերանսում ընտրվել է Այրբեջանի կոմիտուսի Լեռնային Ղարաբաղի մարզային կոմիտեի անդամ: Եղել է կուսակցության մարզկոմին կից կուսակցական վերահսկողության հանձնաժողովի անդամ: Պարզեատրվել է մեղալներով, շքանշաններով:

### ՀԱՄԱՐՁՈՒՄՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ԲԱՀԱՏՈՒՐԻ (1966)

Միքայել Բահատուրի Համբարձումյան (ծնվ.՝ 1966, գ. Բանաձոր):


1973-1983թթ. սովորել է Ստեփանակերտի Ե. Զարենցի անվան թիվ 7 միջնակարգ դպրոցում, 1984-1992թթ.՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետում: 1985-1987թթ. ծառայել է Խորհրդային քանակում: 1987-1990թթ. աշխատել է պատանի քանասերերի մարզային կայանում որպես խմբակավար, 1990թ.: Ստեփանակերտի ուսուցիչների կատարելագործման մարզային ինստիտուտում՝ որպես ավագ լարորանտ: 1991թ. նշանակվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկայի կարինետի վարիչ: 1992-1993թթ. ծառայել է առաջին ՊԾ-ում: 1993թ. եղել է ԼՂՀ մարսային վարչության կազմակերպատեսչական քածնի վարիչ, 1994-1995թթ.: ՊԲ ՀՕՊ գնդի ավագ օպերատոր: 1995թ. ընտրվել է ԼՂՀ 2-րդ գումարման Գև պատգամագոր, Էլունոմիկայի, ֆինանսների և բյուջեի հարցերի հանձնաժողովի անդամ: 1997-1998թթ. եղել է ԱԺ աշխատակազմի տեխնիկական քածնի վարիչ: 1999-2005թթ. աշխատել է որպես Սարատով

քաղաքի «Ռոսպել-Վոլգա» ՓԲԸ տեխնիկական մենեջեր: 2005թ.-ից դասախոսել է Ստեփանակերտի «Գրիգոր Նարեկացի» համալսարանում: 2006թ.-ից եղել է ՀՀ Կրթության ազգային ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղի ինֆորմատիկայի մասնագետ: 2011թ. նշանակվել է ԼՂՀ ԿԳՆ աշխատակազմի մասնագիտական կրթության և գիտության քածնի վարիչ, 2012թ.: ԼՂՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ:

### ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐԴՎԻԿ ՄԻՔԱՅԵԼԻ (1961)

Արծվիկ Միքայելի Հայրապետյան (ծնվ.՝ 1961, գ. Հին Թաղեր), միլիցիայի փոխգնդապետ:

1968-1978թթ. սովորել է գյուղի միջնակարգ դպրոցում: 1978-1983թթ. ընդունվել և ավարտել է Երևանի Կ. Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի Էլեկտրոտեխնիկական ֆակուլտետը: Ավարտելուց հետո վերադարձել է շրջան և երկու տարի աշխատել Արևշատ գյուղում: 1985թ. աշխատանքի է ընդունվել Ստեփանակերտի Էլեկտրոտեխնիկական գործարանի Հաղորդի մասնաճյուղում՝ որպես գլխավոր ինժեներ, այնուհետև՝ տնօրին: 1988-1989թթ. աշխատել է ՀՀ Հրազդան քաղաքի «Շուշան» գործարանի Հաղորդում տեղակայված նորարարաց «Ախրամար» կոռպուրատիվում՝ որպես տնօրին: 1989թ. Արցախի շրջափակման հետ կապված կոռպուրատիվի փակման պատճառով տեղափոխվել է ԿԿ Հաղորդի շրջկոմ և մինչև 1990թ. աշխատել որպես շրջկոմի հրահանգիչ: 1990թ. աշխատանքի է անցել Հաղորդի շրջանի միլիցիայի քածնում՝ որպես քածնի պետի տեղակալ: 1993-1996թ. ծառայել է ԼՂՀ Ազգային անվտանգության Հաղորդի շրջանի բաժանմունքում: 1996-2001թթ. աշխատել է որպես Հաղորդի Ավտոշարայաց պետ: 2001-2013թթ. եղել է Հաղորդի Ոստիկանության շրջանի պետի տեղակալ, 2013-2018թթ.՝ նոյն քածնի պետ: 2018թ. անցել է բռշակի: Անբախի ծառայության համար արժանացել է բազմաթիվ խրախուսանների, պարզեատրվելի, «Մարտական ծառայություն» մելայի:





## ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ (1945-2014)

Էդուարդ Քրիստափորի Հայրապետյան (ծնվ.՝ 1945, Հաղբուր՝ արմատներով Ասկերանի շրջանի Խաչմազ գյուղից - մահ.՝ 2014, Ստեփանակերտ), իրավաբան, միլիցիայի փոխգնդապետ:

1952թ. ընդունվել է Հաղբուրի միջնակարգ դպրոցը: Հայրն աշխատում էր ԼՂՄ ոստիկանության համակարգում, և աշխատանքի հետ կապված՝ ընտանիքով նոյն տարում տեղափոխվել է

ԼՂ Մարտունի ավանը: Ուսումը շարունակել է Մարտունու միջնակարգ դպրոցում: 1961-1963թ. սովորել է Ստեփանակերտի թ. 21 շինարարական ուսումնարանում: Միաժամանակ ավարտել է քանի քրիստոնությունը: 1963թ. սկսել է աշխատել Ստեփանակերտի թ. 59 շինվարչությունում, այնուհետև՝ Մարտունու ժողովատարանում՝ որպես դատական կատարածու: 1964-1967թթ. ծառայել է ԽՍՀՄ քանակի շարքերում: Ծառայությունից հետո՝ 1967թ. սեպտեմբերին, ընդունվել է ՆԳՆ Սարատովի Զերժինսկու անվան ուսամբական ուսումնարանի պետականությունում՝ այնուհետև՝ Մարտունու ժողովատարանում՝ որպես դատական կատարածու: 1969թ. ավարտել այն՝ ստանալով միլիցիայի լեյտենանտի կոչում և ավտոտրանսպորտի շահագործման տեխնիկի մասնագիտություն: 1974-1979թթ. հեռակա կարգով սովորել է ԽՍՀՄ ՆԳՆ Ակադեմիայում, ստացել իրավաբանի մասնագիտություն:

1969-1999թ. աշխատել է ԼՂՀ ՆԳՆ պետականութեաչուրյան համակարգում՝ գրադեნերով տարբեր պաշտոններ՝ ԼՂ ՆԳՎ Հաղբուրի շրջանի ավագ ավտոտեսուչ, ԼՂՀ ՆԳՎ պետականութեաչուրյան ավագ ինժեներ, ավագ ավտոտեսուչ, ԼՂՄ պետականութեաչուրյան պետ, հաշվարկայինքննչական, կազմիրահանգչական և անալիտիկ քաժանմունքների պետ: Ծառայության ընթացքում արժանացել է քազմարիվ խրախուսանքների և գերատեսչական պարզեների: 1999թ. անցել է բռչակի:

2000-2014թ. աշխատել է «Արցախսազ» ՊՓ-ում՝ որպես իրավախորհրդատու:



## ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՌՈԲԵՐՏ ՔՐԻՍՏԱՓՈՐԻ (1950-2013)

Ռոբերտ Քրիստափորի Հայրապետյան (ծնվ.՝ 1950, Հաղբուր՝ արմատներով Ասկերանի շրջանի Խաչմազ գյուղից - մահ.՝ 2013, թ. Ստեփանակերտ), Արդարադատության գեներալ-մայոր:

1967թ. ավարտել է միջնակարգ դպրոցը, 1973թ.՝ Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը:

1973թ.-ից աշխատել է դատախազությունում՝ որպես քննիչ, վարչության դատախազ, շրջանի դատախազ, շրջանային դատախազի առաջին տեղակալ:

1991-1993թթ. աշխատել է որպես ԼՂՀ գլխավոր դատախազի պաշտոնակատար: 1993թ. ընտրվել է ԼՂՀ Գերագույն դատարանի նախագահի տեղակալ: 1994թ. դեկանարել է ԼՂՀ նախագահի աշխատակազմի իրավաբանական ծառայությունը: 1997թ. նշանակվել է ԼՂՀ արդարադատության պետական դեպարտամենտի ղեկավար: Կառավարությունում կառուցվածքային բարեփոխումների կապակցությամբ 2004թ. նշանակվել է ԼՂՀ արդարադատության նախարար: Ունի արդարադատության երրորդ դասի պետական խորհրդականի դասային կոչում (Արդարադատության գեներալ-մայոր) և առաջին դասի դատավորի որակավորման աստիճան:



## ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՌՈԲԵՐՏ (1940)

Ռոբերտ Հայրապետյան (ծնվ.՝ 1940, գ. Կարմրակուն, ԼՂՀ մշակույթի վաստակավոր գործիչ (2005)):

Դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումի անասնաբուժական-անասնաբուժական ֆակուլտետը: 1962թ. սկսել է իր մասնագիտական գործունեությունը Հաղբուրի շրջանում: Սակայն նրա տաղանդը բացահայտվել է երաժշտության մեջ: Մի ճեղքին բժշկական



նշտարն էր, մյուսում դուրսկն ու շվին, հետագայում նաև՝ կլարմետը: «Առավոտը ամտառում» նվազը ԽՍՀՄ համամիտքենական փառատոնում արժանացել է ամենաբարձր մրցանակների: 1970թ. աշխատանքի է անցել Հայրութի մշակույթի շրջանային բաժնում՝ որպես Հայրութի մշակույթի տան տնօրեն: Նրա կազմակերպած համերգները, երաժշտական մրցույթները, փառատոնները պարզապես անկրկնելի էին: Բազմից արժանացել է երաժշտական ամենաբարձր մրցանակների Ստեփանակերտում, Բարգում, Մոսկվայում: 1977թ. Սովորում դարձել է Հանամիտքենական փառատոնի դափնինեկիր: Բանաստեղծ Կամո Բալայանի ստեղծագործություններից «Օջախի իմ» Հայրութ և «Գանձասար» բանաստեղծությունների հիման վրա գրել է երգեր: Վերջին տարիներին աշխատել է նաև որպես շրջանային անասնաբուժական կայանի տնօրեն: Ակտիվորեն մասնակցել է Արցախյան շարժմանը:



## ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՍԵՐԱԿ ՊԵՏՐՈՍԻ (1916-1991)



Սեղրակ Պետրոսի Հայրապետյան (ծնվ.՝ 1916, գ. Դոլմանլար՝ Արևշատ - մահ.՝ 1991, ք. Նիժնի Նովգորոդ), ԽՍՀՄ վաստակավոր փորձարկող-օդաչու, մայոր (1966):

1925թ. ընտանիքի հետ տեղափոխվել է Բարս: 1932թ. ավարտել է դպրոցի յոթերորդ դասարանը: Աշխատել է գործարանում որպես խառատ, փականագործ: 1935թ. ավարտել է Բարսի սավանակային դպրոցը, 1936թ.՝ Բարսի աերուակումը, 1937թ.՝ Խորսնի օդաչու-իրահանգիչների դպրոցը, 1938թ.՝ աերոօդաչու-իրահանգիչների աերակումը: Նոյն թվականին գրակոչվել է բանակ: 1940թ. ավարտել է Օդեսայի օդաչուական բարձրագույն դպրոցը: 1940-1941թթ. եղել է 166-րդ ավիացիոն գնդի փորձարկող-օդաչու-իրահանգիչ: Մասնակցել է Հայրենական պատերազմին: 1941-1942թթ. եղել է 721-րդ կործանիչ, 1942-1944թթ.՝ 632-րդ կործանիչ ավիացիոն գնդերի իրամանատար: Պատերազմից հետո ծառայությունը շարունակել է հակաօդային պաշտպանության ավիացիայում: 1945-1967թթ. եղել է Գորկու ավիագործարանի փորձարկող օդաչու: Ապրել է Գորկի քաղաքում:

## ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԷՐՎԱՆԴ ՇԱՄԻՐԻ (1905-1975)

Էրվանդ Շամիրի Հայրապետյան (ծնվ.՝ 1905, գ. Էղիշա՝ Վարդաշատ - մահ.՝ 1975, ք. Լենինգրադ), կենսաբանական գիտությունների դրկուոր (1953), պրոֆեսոր (1953), ԽՍՀՄ ԳԱ Ի. Պավլովի անվան մրցանակակիր (1962), Գիտության վաստակավոր գործիչ:

1909թ. ընտանիքի հետ տեղափոխվել է Տաշքանդ: 1922թ. ընդունվել է տեղի ժողովրդական հիմնադրությունը: 1924թ. ուղարկվել է Լենինգրադ: 1928թ. ավարտել է Լենինգրադի պետական համալսարանի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետի կենսաբանական բաժնը: 1931թ. գործողվել է Գերմանիա՝ գիտելիքների կատարելագործման համար: 1941թ. ծառայել է բանակում: Աշխատել է Լենինգրադի համալսարանում: 1933-1936թթ. եղել է գիտատունների աշխատանքների գծով պրոֆեսոր, 1936-1959թթ.՝ լաբորատորիայի վարիչ, 1959-1975թթ.՝ բարձրագույն նյարդային գործունեության ֆիզիոլոգիայի ամբիոնի վարիչ: 1944թ. դասավանդել է նաև Կիրովի անվան ուազմաքաղաքական ակադեմիայում:

Աշխատանքները վերաբերում են տարածական վերլուծության և կեղև-ընդերային փոխհարաբերության հարցերին: Կ. Բիկովի հետ բացահայտել է գիտությունի կենսի կապը ներքին օրգանների հետ: Զրադվել է նաև բիոնիկայի հարցերով: Հեղինակել է 220 գիտական աշխատանքներ:



## ՀԱՅՐՅԱՆ ՄՐՄԵՆ ԹԵՎԱՆԻ (1910-1966)



Արմեն Թևանի Հայրյան (ծնվ.՝ 1910, գ. Տող - մահ.՝ 1966, Տաշքենդ), Խորհրդային Սիրության հերոս (1944), բանակի ավիացիայի գեներալ:

1920-ական թվականներին ընտանիքի հետ տեղափոխվել է Միջին Ասիա: Աշխատել է Սամարանդի «Դեհկան» գործարանում: 1931թ. անդամագրվել է Կարմիր բանակին: Սովորել է Էնգելսի

անվան ուղղմաօդային ուսումնարանում: Ավարտելուց հետո չորս տարի աշխատել է ավիացիոն գորածառում որպես մեխանիկ: 1941թ. մասնակցել է Տիրասպոլի պաշտպանական մարտերին: 1942թ. Սերձմունկովյան շրջանում իր գրոհող ջոկատով ոմքակոծել և ոչնչացրել է թշնամու 20 ավտոմեքենա, 400 զինվոր ու սպա: Իր 6 ինքնարիոների գրոհող էսկադրիլիայով ոմքակոծել է Բրյանսկի թշնամու ավիաբազան և ոչնչացրել 44 ինքնարիո: Ստալինգրադի ուղղանակատում ոչնչացրել է թշնամու 17 մարտական ինքնարիո և արժանացել Կարմիր ասուղի շքանշամի: 1943թ. նշանակվել է 503-րդ գրոհային ավիագնդի հրամանատար: Հերոսի կոչման արժանացել է Սևաստոպոլի ազգատագրման ժամանակ ցուցարերած խիզախորյան համար:

1946-1948թթ. սովորել է բարձրագույն հրամանատարական դասընթաց-ներում: 1951թ. գորացրվել է մայորի կոչումով և աշխատել Տաշքենյի քաղ-սովորում:



### ՀԱՅՐՅԱՆ ԼԵՎՈՆ ԱՐՏԱՎԵՏԻ (1961)



Լուն Արտաշեսի Հայրյան (ծնվ.՝ 1961, գ.Մեծ Թաղեր), հասարակական գործիչ:

1978թ. ավարտել է Մեծ Թաղերի միջնակարգ դպրոցը:

1978-1984թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետում: 1984-1986թթ. եղել է Հայրյուրի շրջանի Ռիխտածոր գյուղի միջնակարգ դպրոցի ֆիզիկայի և մարեմսատիկայի ուսուցիչ, ուսմասվար: 1986-1992թթ. աշխատել է Մեծ Թաղերի միջնակարգ դպրոցում:

Եղել է Արցախյան ազգային-ազատագրական շարժման մասնակից:

1988-1992թթ.՝ Ստեփանակերտի կոնյենսատորների գործարանի Մեծ Թաղերի մասնաճյուղի տեխնոլոգ: 1992-1995թթ.՝ «Ակնունի» գորգագործական փոքր ձեռնարկության տնօրեն, 1995-1997թթ.՝ Մեծ Թաղերի գյուղատես, 1997-1999թթ.՝ «Ակնունի» գորգագործական փոքր ձեռնարկության տնօրեն:

2000թ. ընտրվել է ԼՂՀ 3-րդ գումարման Ազգային ժողովի պատգամավոր: Եղել է Ազգային ժողովի պետական-իրավական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ:

2007թ.-ից՝ «Մեծ Թաղեր» ՍՊԸ տնօրեն:



### ՀԱՅՐԻՅԱՆ ԷՌԻԱ ՎԼԱԴԻՄԻՐԻ

(1959)

Էռնա Վլադիմիրի Հայրյան (ծնվ.՝ 1959, ք.Հայրուր), իրավաբան, Եվրասիական տնտեսական միության դատարանի դատավոր:

1977-1982թթ. սովորել և ավարտել է ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետը: 1978-1979թթ. եղել է Նոտարական գրասենյակի պետական նոտար, 1983-1985թթ.՝ Երևանի Էլեկտրատեխնիկական գործարանի իրավայուրիդական, 1989-1996թթ.՝ Երևանի Սպանդարյանի շրջանի իրավաբանական կոնսուլտացիայի փաստաբան, 2005-2006թթ.՝ ՀՀ ԿԸՀ անդամ: 2005-2008թթ. աշխատել է որպես ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի դատավոր, 2008-2009թթ.՝ Երևանի քաղաքացիական դատարանի նախագահ: 2009թ. նշանակվել է ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի դատավոր, 2015թ.՝ ԵԱՏՄ դատավոր:



### ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԱՐՄՈ

(1884-1957)

Արտ Հովհաննիսյան (ծնվ.՝ 1884, գ.Վանք - մահ.՝ Բաքու), գյուղատնտես:

Սովորել է գյուղի դպրոցում, ապա Շուշիի քաղաքային ուսումնարանում: Մի քանի տարի աշխատել է Քարվում: 1909թ.-ից Սանկտ Պետերբուրգում ստացել է գյուղատնտեսական բարձրագույն կրթություն: Վերադարձել է Արցախ, աշխատել Զրականի շրջանում: 1923թ. նշանակվել է Ստեփանակերտում հիմնադրված գյուղատնտեսական տեխնիկումի տնօրեն, 1927թ.՝ մարզկոլխոզմիության վարչության գլխավոր գյուղատնտես:

1932թ. Մարտակերտում ստեղծել է մարզի առաջին մերենատրակտորային կայանը: 1933թ. տեղափոխվել է Բաքրու և մինչև 1957թ. աշխատել «Ազովվայութենատում»՝ որպես գլխավոր գյուղատնտես:



## ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱԼԵՔՍԱՆԻ

(1916-)

Հովհաննես Ալեքսանի Հովհաննիսյան (ծնվ.՝ 1916, գ. Կարմրակուճ - մահ.՝ ...), վաստակավոր ուսուցիչ:

Սկզբնական կրթությունը ստացել է Կարմրակուճի, ապա ուսումը շարունակել Հաղորդի միջնակարգ դպրոցում: Սովորել է Հաղորդի մանկավարժական տեխնիկումում և աշխատանքի անցել Կարմրակուճի 7-ամյա դպրոցում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: 1937-1938թթ. ուսումնական տարում ընդունվել է Խ.Արովյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության բաժինը: 1941թ. 4-րդ կուրսի ուսանող էր, երր գորակոչվեց խորհրդային բանակ: 1946թ. վերադարձել է հայրենի գյուղ, նշանակվել դպրոցի տնօրեն, միաժամանակ դասավանդել հայոց լեզվու և գրականություն: 1949-1953թթ. աշխատել է Հաղպատի միջնակարգ դպրոցում, որպես վիճակումորեն: 1954թ. մինչև կյանքի վերջը աշխատել է Կարմրակուճի 8-ամյա դպրոցում, որպես տնօրեն: Մանկավարժության ասպարեզում ցուցաբերած գերազանց ծառայությունների համար արժանացել է «Վաստակավոր ուսուցչի» կոչման:



## ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՄԱՐԳՈ ՀԱԿՈԲԻ

(1923-2018)



Մարգո Հակոբի Հովհաննիսյան (ծնվ.՝ 1923, գ. Բանաձոր-մահ.՝ 2018, Բանաձոր), 20-րդ դարի Արցախի լավագույն ուսուցչուհի, Արցախի ամենաերկարակյաց մանկավարժը (մանկավարժական ստագը՝ 68 տարի):

1940թ. ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը:

1941թ. ընդունվել է Շուշիի երկանյա ուսուցչական ինստիտուտը: 1942թ. ուղարկվել է Ղու-Արխածի 8-ամյա դպրոցը՝ որպես պատմության ուսուցչուհի: 1944թ.-ից աշխատել է Խանճաձորի 7-ամյա դպրոցում որպես փիլիսոփեան, ապա՝ տնօրեն: 1946թ. ընդունվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետը, ավարտել 1-ին կարգի դիպոլոմով: Աշխատել է Առաքելի 8-ամյա և Բանաձորի միջնակարգ դպրոցներում: 1950թ. նշանակվել է Ծամուրի նորաստեղծ միջնակարգ դպրոցի տնօրեն: 1956թ. կրկին վերադարձել է Բանաձոր և մինչև 1991թ. աշխատել որպես պատմության ուսուցչուհի, այնուհետև՝ տնօրեն: Գյուղի տեղահանուրյունից հետո մնացել է Հաղորդում և աշխատել Կարմրակուճի դպրոցում: 1994թ. Բանաձորի ազատազրումից հետո վերադարձել և մինչև 2008թ. աշխատել է նորակառույց դպրոցում:



## ՀՈՎՍԵՓՅԱՆ ԵՓՐԵՄ ԻՎԱՆԻ

(1896-1968)



Եփրեմ Իվանի Հովսեփյան (ծնվ.՝ 1896, Հաղորդ - մահ.՝ 1968), քաղաքացիական պատերազմի մասնակից:

Մասնակցել է Բալախովիչի բանդաների մասնակի ոչնչացմանը: Անկավարել է Աղավերդու պղնձաձուլական տեղամասերը: Սովորել է մուկովյան Գունավոր մետաղների և ուլու պետական ինստիտուտում, 1922թ.՝ դեկանակների և խորհրդային աշխատողների կուրսերում, 1928-1932թթ.՝ Արյունարերական ակադեմիայում: Եղել է «Էլեկտրոցին» մետալորդիական կոմբինատի շինարարության ղեկավարն ու առաջին տնօրենը:

Մեղադրվել է Գերմանիայի և ԱՄՆ-ի օգտին լրտեսություն կատարելու մեջ և 1940թ. ԽՍՀՄՆԳԺԿ հասուկ նիստում դատավարության 8 տարվա ուղիղ աշխատանքային ճամբարի՝ Կոմիտամ երկարգծի շինարարությունում: 1948թ. արտրվել է: Գաղտնի մնկանել է Մոսկվա՝ ընտանիքի մոտ և, քարցնելով իր անցյալը, որպես բանվոր աշխատել մետալորդիայի ինստիտուտում: Արդարացվել է 1956թ.:



## ՀՈՎՍԵՓՅԱՆ ԽՈՐԵՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ

(1964)

Խորեն Ալեքսանդրի Հովսեփյան (ծնվ.՝ 1964, գ. Ակնարյուր), գնդապետ, Մարտական խաչ 1-ին աստիճանի շքանշանակիր:

Ավարտել է գյուղի դպրոցը: Ծառայել է Խորհրդային բանակում: Արցախյան շարժման հենց սկզբից հասկացել է որ պետք է գիտել: Գյուղում առաջինն է սկսել զենք հայրային և ջոկատ ստեղծել: Գյուղը շրջապատված լինելով աղբքանական բնակավայրերով, 1988-1991թթ. դիմակայել է թշնամու պաշարմանը: 1992թ. Խ.Հովսեփյանի զիսավորությամբ ջոկատը հարձակվել են աղբեցանական զյուղերում դիրքավորված ՕՍՇ-ի վրա և քշել: Տիրապետել է աղբեցանական ինչն էլ օգնել է բափանցել թշնամու դիրքեր, ոչնչացնել զորախումը և ազատազրել զյուղեր: Լեզվի իմացությունը օգնում էր նաև գտնել և փրկել զերի ընկած արցանցիներին: Կարողանում էր ճիշտ հաշվարկել ուժերը, ընտրել լավագույն մարտավարությունը և հարված հասցել թշնամուն: Անենածանր մարտերում կարողացել է ժամանակին ճիշտ որոշումներ կայացնել պահպանել զինվորների կյանքը: Ակնարյուրի ջոկատը դարձել է Արցախի ինքնապաշտպանական բանակի Հաղորդիքի գումարտակի 1-ին վաշտը՝ Հովսեփյանի հրամանատարությամբ: Վաշտը մասնակցել է Վարանդայի համար մղված գրեթե բոլոր մարտական գործոդրություններին, Մարտակերտի, Քարվաճառի ազատազրմանը: Պատերազմի ավարտից հետո նշանակվել է պաշտպանական շրջանի հրամանատարի տեղակալ, 2005թ.: 9-րդ պաշտպանական շրջանի հրամանատար: 2007թ. ուղարկվել է Սոսկվա՝ սովորելու ՌԴ ԶՈՒ համագորային ակադեմիայում: 2008թ. վերադարձել է Արցախ, նշանակվել դիվիզիայի հրամանատար: 2013թ. անցել է բռչակի: Զքաղվում էր գործարարությամբ: Ստեղծել է մերենատրակտորային կայան, օգնում էր հող օգտագործողներին:



## ՀՈՎՍԵՓՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ՄԻՌՆԻ

(1923-2003)

Միքայել Միքնի Հովսեփյան (ծնվ.՝ 1923, գ.Ակնարյուր - մահ.՝ 2003, Երևան), փիլիսոփայական գիտությունների դոկտոր (1960), պրոֆեսոր (1969):

1937թ. ընդունվել է Հայորդիքի մանկավարժական ուսումնարանը, 1940թ.՝ Աղբեցանի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետում: Սոցիալական պայմաններից ենթալով՝ բողոք է ինստիտուտը, վերադարձել հայրենի գյուղ, աշխատանքի անցել որպես ուսուցիչ: 1941թ. կամավոր մեկնել է ուզմանակատ, 1943թ.՝ ծանր վիրավորվել և գորացրվել՝ որպես պատերազմի երկրորդ կարգի հաշմանդամ: 1944-1949թթ. ընդունվել և ավարտել է Բարձր մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: 1949-1950թթ. աշխատել է Հայորդիքի ժողովրածնում որպես տեսուչ: 1950-1953թթ. եղել է Ուխտաձորի միջնակարգ դպրոցի տնօրին: 1953թ. ընդունվել է Լեմինգրադի պետական համալսարանի ասվիլիանության և ավարտելուց հետո աշխատանքի անցել Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտում:

Հեղինակել է մնացորդություններ և բազմարիվ գիտական հոդվածներ: Պարզևատրվել է շքանշաններով, մեդալներով: Օրինակելի ասմունքը երգը գրել է պատմվածքները: Երկար ժամանակ խմբագրել է Երևանի «Պոլիտեխնիկ» թերթը:



## ՀՈՎՍԵՓՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ ԹԵՎՈՍԻ

(1916-1969)

Վլադիմիր Թևոսի Հովսեփյան (ծնվ.՝ 1916, Ակնարյուր - մահ.՝ 1969, Սանկտ Պետերբուրգ), թշնական գիտությունների դոկտոր:

Վաղ հասակում ընտանիքի հետ տեղափոխվել է Բարձր: Սովորել է քաղաքի կենտրոնական հայկական դպրոցում, այսուհետև ընդունվել թժկական ինստիտուտի վիրաբուժական բաժնը: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Ստա-



լինգրադի հոսպիտալներից հասել է մինչև Բեռլին: Արժանացել է գնդապետի աստիճանի: Բժշկական հարուստ փորձը լուսաբանել է տեսական-զիտական հոդվածներում, որոնք տպագրվել են ոչ միայն խորհրդային, այլև արտասահմանյան մամուլում: Աշխատանքը շարունակել է Լենինգրադի բժշկական գիտությունների ակադեմիայում՝ որպես Էպիդեմիայի ամբիոնի վարիչ:

Հեղինակել է 100-ից ավելի ուսումնասիրություններ և հոդվածներ:



### ՀՈՒԹՈՒՄՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ

ԹԵՇԻՎՈՒՆԻ

(1924-1995)



Ալեքսանդր Թեմիամինի Հուռումյան (ծնվ.՝ 1924, գ.Մեծ Թաղեր -մահ.՝ 1995, Երևան), ուսումնական գործիչ, գեներալ-մայոր:

1941թ. կամավոր մեկնել է ռազմածակատ: 1941-1943թթ. մասնակցել է Կովկասի պաշտպանական մարտերին: 1944թ. ավարտել է Մախաչկալայի հետևակային ուսումնարանը: 1949-1952թթ. ստորել է ռազմական ակադեմիայում:

1953-1957թթ. եղել է Հյուսիսկովկասան ռազմական օկրուզի կազմակերպական բաժանմունքի ղեկավար, 1957-1964թթ.՝ Գերմանիայում բրիգադի ղիպիգիայի բիկունիքի գծով հրամանատարի տեղակալ: 1964-1974թթ. գրադեցրել է Անդրկովկասայան ռազմական օկրուզի բանակի բիկունիքի շտարի պետի, 1974-1980թթ.՝ Շիտայում Անդրբայկալյան Լենինի շրանշանակիր օկրուզի բիկունիքի պետի պաշտոնները: 1985թ.-ից աշխատել է Հայկական ԽՍՀ առևտրի նախարարությունում՝ որպես բաժնի վարիչ: Պարզսատրվել է շրանշաններով և մերամներով:



### ՂԱԶԱՆՉՅԱՆ ՄԵԴԱ ՄԻՔԱՅԵԼԻ

(1945-1993)



Մեդա Միքայելի Ղազանչյան (ծնվ.՝ 1945, Վարսնդա՝ հայոցուքու ընտանիքում - մահ.՝ 1993, ք.Ստեփանակերտ), դասախոս, Արցախյան շարժման ակտիվիստ:

Միջնակարգ կրթույնը ստացել է Վարանդյան: 1963թ. ավարտել է Աղբեջանի Կիրովի անվան պետական համալսարանի բանափրական ֆակուլտետի հեռակա բաժնը: Թուն ավարտելուց հետո աշխատել է Լենինի անվան Աղբեջանի պետական մանկավարժական ինստիտուտում, այսուհետև՝ Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ուսաց լեզվի և օտար լեզուների ամբիոնում՝ որպես դասախոս: Եղել է հեռակա բաժնի դեկան:



### ՂԱԶԱՐՅԱՆ ԱՇՈՏ ՍԵՐԺԻԿԻ

(1974-2020)



Աշոտ Սերժիկի Ղազարյան (ծնվ.՝ 1974, Հաղորդ - մահ.՝ 2020, Հաղորդի շրջան), գնդապետ:

Ընտանիքի հետ տեղափոխվել է Երևան, սովորել Երևանի թիվ 95 միջնակարգ դպրոցում: Ավարտելուց հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 1995թ. առաջնազդի գորամաներից մեկում նշանակվել է դասակի հրամանատար, հետազոտությունը կազմակերպվել է Հանկու Պետրոսյանի ուղարկությունում՝ ուսումնական ակադեմիայում:

2007թ. նշանակվել է տանկային գորամասի հրամանատար, պարգևատրվել է «Մարտական ծառայության», «Վազգեն Սարգսյան», «Գարեգին Նժդիկ» «Անրասիր ծառայության համար» պատշին և երկրորդ աստիճանի մեդալներով: Նրա հրամանատարությամբ գործող տանկային գորամասը 2010թ. պարզաւարվել է «ՀՀ ԶՈՒ լավագույն տանկային գորամաս» պատվո որոշով:

Մասնակցել է Արցախյան բռնոր պատերազմներին, զոհվել 2020թ. հոկտեմբերի 16-ին իր ծննդավայրում՝ Բայրաքրարի հարվածից: Հուղարկավորվել է Եռաբրուր գինուրական պանթեոնում: ՀՀ նախագահի հրամանագրով հայրենիքի պաշտպանության և անվտանգության ապահովման գործում ներդրած ավանդի, մարտական գործությունների ընթացքում ցուցաբերած արիության և նվիրումի համար հետմահու արժանացել է «Մարտական խաչ» 1-ին աստիճանի շքանշանի:



## ԴԱԶԱՐՅԱՆ ՄՐԵԱԼՈՒՅ

(1901-1989)

Արշալույս Ղազարյան (ծնվ.՝ 1901թ., գ. Տումի -մահ.՝ 1989, ք. Ստեփանակերտ), վաստակաշատ մանկավարժ:


Սկզբնական կրթությունը ստացել է Տումի գյուղի առաջին աստիճանի դպրոցում (1-3-րդ դասարաններ), այնուհետև ավարտել Շոշիի Մարիամ Ռուկայյան օրինրարական դպրոցը և մանկավարժական աշխատանքի անցել հարազատ գյուղի տարրական դպրոցում (1-4-րդ դասարաններ): Պրակտիկ մանկավարժական գործունեության տարիներին ավարտել է նաև Բարձի մանկավարժական ինստիտուտի մանկավարժական ֆակուլտետը: Ըուրջ 4 տասնյակ աշխատել է Տումու միջնակարգ դպրոցում որպես դասվար, ուսումնադասաստիարակչական աշխատանքների գծով տեսօրենի տեղակալ, միաժամանակ դեկանական է դպրոցի տարրական դասարանների մերողմիավորումը: Խսկ 1970-ականներին եղել է Ստեփանակերտի քաղաքային ժողովրածնի վարիչ: Բեղուն մանկավարժական և հասարակական գործունեության համար պարզւատրվել է շքանշաններով, գրվասանագրերով:



## ՂԱԶԱՐՅԱՆ ԽՈՐԵՆ ԻՍԱԿՅԱԿԻ (1928-2017)

Խորեն Խսահակի Ղազարյան (ծնվ.՝ 1928, գ. Տումի-մահ.՝ 2017, Տումի), 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ:

Միջնակարգ կրթությունն ստացել է հայրենի գյուղում: 1949թ. ավարտել է Ստեփանակերտի երկամյա ուսուցչական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: 1949-1951թթ. աշխատել է Արևշատի (Դոլանլար) յորամյա դպրոցում:



1951-1954թ. ծառայել է Խորհրդային բանակի՝ ԳԴՀ-ում տեղակայված զորամասում որպես ավտոտեխնիկ: Զորացրվելուց հետո՝ 1955թ.-ից աշխատել է Ուխտաձորի և Մեծ Թաղերի միջնակարգ դպրոցներում՝ որպես ուսուցիչ: 1957թ. հեռակա կարգով ավարտել է Բարձի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: 1955-1957թթ. աշխատել է Բլուրանի յորամյա դպրոցում՝ որպես տնօրեն: 1957-1960թթ. դասավանդել է Ուխտաձորի, Ակնադրյուրի դպրոցներում: 1960-1982թթ. աշխատել է որպես Ակնադրյուրի յորամյա դպրոցի տնօրեն: Նրա նախաձեռնությամբ կառուցվել է դպրոցական տիպային շենք, առանձին ալբոմներում գրվել է Ակնադրյուր գյուղի և դպրոցի պատմությունը, ստեղծվել պատմության թանգարան 4 բաժնով և 2000 ցուցանմուշով: 1982-1989թթ. եղել է Տումու միջնակարգ դպրոցի տնօրեն, ապա դասավանդել է նոյն դպրոցում մինչև 1995թ.:

Հանրապետական թերթերում և ամսագրերում հանդես է եկել տասնյակ ուսումնաներունական հորվածներով: Հրատարակել է «Արբուլադ-Ակնադրյուր» «Տումի» գրքերը: «Տումի պատմաաշխարհագրական ակնարկներ» գիրքն, որը լույս էր տեսել 2003թ., 2005թ. արժանացել է ԼՂՀ Կառավարության Եղիշեի անվան ամենամյա մրցանակի: Պարզւատրվել է «Աշխատանքի վետերան» մեդալով, արժանացել «Հանրապետության ժողովրդական գերազանցիկ» կրծքանշանի: Բազմից հանդես է եկել մանկավարժական ընթերցումներում:




## ՂԱԶՄՅԱՆ ՌՈՒԲԵՐՏ ՄԵԼԻՎԿԻ

(1956)

Ռոբերտ Մելիսակի Ղազմյան (ծնվ.՝ 1956, գ. Հին Թաղեր), մաքնամատիկական գիտությունների թեկնածու:

1972թ. ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: Մեկնել է Նալիկ և ընդունվել Կարարդինա-Բարկարիայի պետական համալսարանի մաքնամատիկայի ֆակուլտետը: Ավարտելուց հետո աշխատանքի է անցել նոյն համալսարանի հիմունյինամիկայի լաբորատորիայում՝ որպես ավագ գիտաշխատող: Այնուհետև տեղափոխվել է համալսարանի հաշվողական կենտրոն և ստանձնել ծրագավորման բյուրոյի պետի պաշտոնը: Միաժամանակ դասավանդել է մաքնամատիկա: Եղել է Կարարդինա-Բարկարիայի պետական համալսարանին առընթեր մաքնամատիկական թեքունով լիցեյի տնօրենի տեղակալը:



## ՂԱԶՄՅԱՆ ՌՈՍԻԱՆ ԱՌՈՒՇՅԱՔԻ

(1949)

Ռոման Առուշյանի Ղազմյան (ծնվ.՝ 1949, Բարձր՝ ինքաղեցու ընտանիքում), տեխնիկական գիտությունների թեկնածու:

Գերազանց գնահատականներով ավարտել է Բարձրի թիվ 54 ուսուական միջնակարգ դպրոցը: 1965թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: 1995թ. մշտական բնակություն է հաստատել Սոսկ-վայում:



## ՂԱՐԱՄԱՆՅԱՆ ԵՐՎԱՆԴ ԱՎԵՏԻՄԻ

(1920-2008)

Երվանդ Ավետիսի Ղարամանյան (ծնվ.՝ 1920, գ. Առարել-մահ.՝ 2008, գ. Առարել), 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ:

Միջնակարգ կրթությունը ստացել է Բանաձորի միջնակարգ դպրոցում: 1937թ. ընդունվել է Բարձրի մանկավարժական ինստիտուտը, սակայն 3-րդ կուրսի ընմուրյունները հանձնելիս սկսվել է Հայրենական մեծ պատերազմը և շատերի հետ նա էլ մեկնել է ռազմաճակատ: 1946թ. գորացրվել է, վերադարձել հայրենի Առաքել գյուղ: Հեռակա կարգով ավարտել է ինստիտուտը: 1946-1966թթ. աշխատել է Զրականի միջնակարգ դպրոցում՝ որպես ուսուցիչ, 1966-1988թթ. Բանաձորի միջնակարգ դպրոցում՝ որպես տնօրեն, այնուհետև՝ հայրենի գյուղի դպրոցում որպես ուսուցիչ: 1991թ. տեղի ունեցած բռնազարքի և գյուղերի հայարավման հետևանքով տեղափոխվել է, 1996թ.՝ նորից վերադարձել և աշխատանքի անցել հայրենի գյուղում: Բանաձորի միջնակարգ դպրոցում բացել է պատմության բանգարան, իսկ դպրոցը դարձել է ոսուցիչների կատարելագործման հանրապետական ինստիտուտի հենակետային դպրոց:


Հեղինակել է գիտամանկավարժական և ուսումնամեթոդական բնույթի բազմաթիվ հոդվածներ: Հասարակական ակտիվության, հայրենասիրական և ազգանպաստ գործունեության համար արժանացել է «Հանրապետության վաստակավոր ուսուցիչ» կոչմանը: Ունի հուշագրությունների 6 գիրք, որոնցում նկարագրված են Ղարաբաղյան շարժումը, զարդի փշոտ ճամփանները և հայ ժողովրդի վերածնունդը: Նրանցից մեկը՝ «Վերածնված Առարելի համառոտ պատմությունը», նվիրված է հարազատ գյուղին:



## ՂԱՐԻՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ ԾԱՏՈՒՐԻ (1937- 2021)

Արտաշես Ծատուրի Ղարիյան (ծնվ.՝ 1937, գ. Մեծ Թաղեր - մահ.՝ 2021, Ստեփանակերտ), բանաստեղծ, ԼՂՀ գրողների միուրյան անդամ, Հայաստանի գրողների միուրյան անդամ (1985):

1957թ. ավարտել է միջնակարգ դպրոցը: Ուսումը շարունակել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետում: Աշխատել է «Սովետական Հայաստան», «Ազանգարդ» թերթում, «Պատմա - բանասիրական հանդեսում», «Նորր» ամսագրում:



2007թ.-ից աշխատել է «Առանձակ» գիտահետազոտական կենտրոնում, որպես գլխավոր գիտաշխատող: Հեղինակ է 220 հոդված և 10 մենագրույն:



## ՂՈՒՅՑԱՆ ՄԱՐԻԵՏԱ ՍՈՒՐԵՆԻ (1947)

Մարիետա Սուրենի Ղույյան (ծնվ. 1947, գ. Բանաձոր), Խորհրդային միուրյան մերոդիստ:

Ուկե մեղարվ ավարտել է միջնակարգ դպրոցը, կարմիր դիպլոմով՝ Բարձի Մանկավարժական ինստիտուտի Ֆիզմաթ բաժինը: Աշխատել է Բանաձորի միջնակարգ դպրոցում՝ որպես փոխտնօրեն: Բարձի տեսչուսագիտական տեխնիկումում դասավանդել է Ֆիզիկա: Սումգայիթյան ոճրագործություններից հետո ընտանիքով տեղափոխվել է Երևան, ապա՝ Գերմանիա: Ֆիզիկա և մարեմատիկա է դասավանդում Ռոտենբուրգի Յակոբ Գրիմ գիմնազիայում:



## ՂՈՒՅՑԱՆ ՌԱԶՄԻԿ ՍՈՒՐԵՆԻ (1960-2010)

Ռազմիկ Սուրենի Ղույյան (ծնվ.՝ 1960, գ. Բանաձոր-մահ.՝ 2010, ք. Սանկտ Պետերբուրգ, բաղ-ված է Բանաձորում), վիրաբույժ, բարերար:

Գերազանց ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը և 1979թ. գրակոչվել Խորհրդային բանակ: 1980-1981թթ. մասնակցել է Աֆղանական պատերազմին: Երկու անգամ վիրաբույժ է: Պարգևատրվել է մեղադրություն, պատվոգրերով: 1982թ. ընդունվել է Երևանի Մ.Հերացու անվան բժշկական ինստիտուտը: 1984-1988թթ. աշխատել է մայրաքաղաքի կենտրոնական հիվանդանոցում:



## ՂԱՐՈՒՅՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՌՈՒԲԵՆԻ (1929-2016)

Ալեքսանդր Ռուբենի Ղարույյան (ծնվ.՝ 1929, գ. Մեծ Թաղեր-մահ.՝ 2016, ք. Սոսկվա), տեխնիկական գիտուրյունների դրկուր (1977), «Ռուսաստանի Դաշնուրյան նավթի և գազի արդյունաբերության վաստակավոր աշխատող» (1995), «Կուրանի գիտուրյան վաստակավոր գործիչ» (1997), ԽՍՀՄ-ում նավթի արդյունահանման ջերմային մեթոդների մշակման հիմնադիրներից:

1953թ. ավարտել է Ալբրեթզանի Ազգիբեկովի անվան, 1960թ.՝ Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանները: 1960թ. մի խումբ խորհրդային գիտնականների հետ գործուղվել է Հնդկաստան: 1968թ. ստանձնել է Սևծովյան Նավարդյունաբերության պետի պաշտոնը: 1970թ. աշխատել է ԽՍՀՄ գիտարտարական միավորների պահուստի պաշտոնում:

1993թ. անմիջական մասնակցությամբ կազմակերպել է Կուրանի պետական տեխնոլոգիական համալսարանի նավթի և գազի բաժինը: Նրա ակտիվ մասնակցությամբ բացվել է ասպիրանտուրա «Նավթի և գազի հանքավայրերի մշակում և շահագործում» մասնագիտությամբ:

1989թ. մեկնել է Լենինգրադ և բժշկական ինստիտուտում ստացել վիրաբույժի որակավորում: 1990թ. աշխատել է Կոլպինոյի մեքենաշինական գործարանի հիվանդանոցում: 1993թ. աշխատել է Սանկտ Պետերբուրգի Ի.Գանելիձեի անվան գիտահետազոտական ինստիտուտում որպես վիրաբույժ: Ստեղծել է մասնավոր վիրաբուժական կլինիկա: Չբաղվել է գործարությամբ ու բարերարությամբ:



### ՂՈՒՅԱՆ ԶՈՒՅՑԱՆ ՍՈՒՐԵՆԻ (1949)

Զույա Սուրենի Ղույան (ծնվ. 1949, գ.Քանազով), գնդապետ:

Ավարտել է Քանազորի միջնակարգ դպրոցը: Աշխատել է Քանազորի միջնակարգ դպրոցում՝ որպես ավագ ջոկատավարութիւն: Այնուհետև աշխատանքի է անցել Բաքվի, ապա Երևանի կապի նախարարությունների հատուկ բաժնում: ՀՀ հատուկ բաժնի գնդապետ է: Արժանացել է մնալու ների:



### ՂՈՒՅԱՆ ՍՎԵՏԼԱՆԱՆ ՍՈՒՐԵՆԻ (1953)

Սվետլանա Սուրենի Ղույան (Ղուլյան) (ծնվ.՝ 1953, գ.Քանազոր (Քանաձոր)), բանաստեղծուհի, արձակագիր, նկարչուհի:

Ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժնը: 1970թ. հայրենի գյուղի դպրոցում աշխատել է որպես ավագ ջոկատավարութիւն, այնուհետև ուսուց լեզվի և գրականության ուսուցութիւն: 1980-ական թվականներին բնակություն է հաստատել ք.Երևանում: 1984թ. գերազանցությամբ



ավարտել է մարքսիզմ-լենինիզմ համալսարանի երեսիկայի բաժնը, 1992թ.՝ էքստենն, Երևանի Քրյուսովի անվան օտար լեզուների պետական ինստիտուտի ուսուց լեզու և գրականություն բաժնը: Աշխատել է թիվ 39 դպրոցում՝ որպես ուսուելունի ուսուցուիկ, այնուհետև անցել է աշխատանքի Հայաստանի ազգային պատկերասրահում: Հեղինակել է 7 գիրք, 2000-2010թթ.: Խայերեն և ուսուելուն բանաստեղծությունների հինգ ժողովածու: Նրա «Քանաձոր» պատմագիտական գիրքը ծանրակշիռ տեղ ունի Արցախի պատմության մեջ: Հուշարձանագետ Շ.Ալրոշյանն այն այսպես է քննուշել. «Քանաձոր» աշխատությունը գյուղի բառարանն է, «Նարաբանի հանրագիտարանը», իսկ ՀՀ ԳԱԱ Արևելագիտության բաժնի վարիչ, պրոֆեսոր Ալեքսան Հակոբյանն այն համարել է լուրջ ներդրում արդի հայագիտության մեջ: «Քանաձոր-օցախ» (373 էջ) պատմափաստավագրագրական գրքի ուսուելուն տարրերակը հրատարակվել է ՀՀ ԳԱԱ Արևելագիտության բաժնի գիտխորհրդի որոշմամբ ու ճանաչվել ուսումնական ծեռնարկ հումանիտար ֆակուլտետների ուսանողների համար:



### ՂՈՒԿԱՍՅԱՆ ՄԵՐԺԻԿ ԱՐՏԱԾԻ (1956)

Մերժիկ Արտաշի Ղուկասյան (ծնվ.՝ 1956, գ.Թաղուտ), ֆիզիկական կուլտուրայի վաստակավոր գործիչ (2016):



1973թ. ավարտել է գյուղի դպրոցը, ուսումը շարունակել Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումում: Ավարտելուց հետո ընդունվել է Երևանի ֆիզիկական կուլտուրայի ինստիտուտը: Վերադարձել է Հայրություն և 1980թ. աշխատանքի անցել Հայրությի շրջանում, որպես սպորտկոմիտեի նախագահ: 1982թ. ավարտել է ինստիտուտը: Սասնակցել է շրջանային, մարզային, հանրապետության ըմբշամարտի նրգումներին և գրավել առաջնային տեղեր: 42 տարի ղեկավարել է Հայրությի շրջանի սպորտկոմիտեն: Սասնակցել է Արցախյան գյուղայրարին: Եղել է գումարտակի շտարի պետի տեղակալ: Սարտական գործողությունների ժամանակ վիրաբորվել է: Արժանացել է մեդալների:

## ՄԱԳՈՒՆՑ ՅՈՒԹԻ ՊԱՎԵԼԻ

(1937-2007)

Յուրի Պավելի Մադոնց (ծնվ.՝ 1937, Հաղորդ - մահ.՝ 2007, Հաղորդ), լրագրող:

1953թ. գերազանց գնահատականներով ավարտել է միջնակարգ դպրոցը, այնուհետև Երևանի պետական համալսարանի բանահրական ֆակուլտետը: Շուրջ 15 տարի աշխատել է ՌԴ Կրասնոյարսկի երկրամասում: 1973թ. վերադարձել է Արցախ: Աշխատանքի է անցել ԼՂ նարզելումում որպես հրահանգիչ: 1976թ. գործուղիվ է Հաղորդ, որպես շրջանային թերթի խմբագրի տեղակալ, կուսակցական բաժնի վարիչ: Պատերազմից հետո նշանակվել է թերթի խմբագրի և մինչև 2007թ. դեկանվարել այն:



## ՄԱՅԻՆՅԱՆ ԼՅՈՒԹԱՎ ՌԱՖԻԿԻ

(1966)

Լյուրա Ռաֆիկի Մայիսյան (ծնվ.՝ 1966, ք.Հաղորդ), ԼՂ վաստակավոր մանկավարժ (2011):

1973-1983թթ. սովորել է Հաղորդի Ս.Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցում: Ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության ֆակուլտետը: 1987-1989թթ. աշխատել է Պլեքանց գյուղի 8-ամյա դպրոցում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի: 1989թ. սկսել է դասավանդել շրջկենտրոն Հաղորդում: 2007թ. «Հավագույն ուսուցիչ, լավագույն մանկավարժական փորձ» մրցույթում ճանաչվել է հաղորդ և արժանացել «Տարվա լավագույն ուսուցիչ» կոչմանը: 2015թ. պարգևատրվել է ՀՀ Սփյուռքի նախարարության «Մայրենի դեսպան» մեդալով:



## ՄԱՅԻՆՅԱՆ ՌԱՖԻԿ ԱՎԱԳԻՆԻ

(1927-2000)

Ռաֆիկ Ավագինի Մայիսյան (ծնվ.՝ 1927, գ.Հողեր - մահ.՝ 2000, Լեհաստան), կենսաբանական գիտությունների դոկտոր (1968), պրոֆեսոր (1977):

Ավարտել է Բարվի համալսարանի կենսաբանական ֆակուլտետը: 1954-1957թթ. աշխատել է Սևանի հիդրոկենսարանական կայանում: 1957-1980թթ. եղել է Բարվի համալսարանի կենսաբանական ֆակուլտետի ամբիոնի վարիչը: 1983-1993թթ. աշխատել է որպես Երևանի պետհամալսարանի կենսաբանական ֆակուլտետի ամբիոնի վարիչ, 1993-1998թթ.՝ ամբիոնի պրոֆեսոր: Աշխատանքները վերաբերում են ձկնորսության ոլորտի խնդիրներին, Արարատյան դաշտի արհեստական ջրամբարներում քառավիլ գենոֆոնի պահպանմանը, դրանց բուժման կենսաբանական և տեխնիկական խնդիրներին:



## ՄԱՆՎԵԼՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ԱՎԱՆԵՍԻ

(1884-1931)

Միքայել Ավանեսի Մանվելյան (ծնվ.՝ 1884, գ.Խանձածոր - մահ.՝ 1931, Հաղորդ), 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ:



Հայրենի գյուղում գրածանաշ դառնալուց հետո տեղափոխվել է Շուշի, ապա՝ Երևան: Սովորել է տեղի հոգևոր սեմինարիայում: Բարձրագույն կրթուրյունը ստացել է Պետերբուրգում, ավարտել է համալսարանի բնագիտական ֆակուլտետը: Չրավարարվելով համալսարանական կրթուրյամբ՝ մասնագիտական որակավորման բարձրացում է անցել Դորպատի հանրահայտ համալսարանում: Վերադարձել է Հայաստան, գրանվել ուսուցչությամբ նախ՝ Ղարաբիլսայում (Վանաձոր), այնուհետև՝ Ալեքսանդրապոլում (Գյումրի): Այսուանենայինիվ, հայրենիքի կանչը նրան ետ է թերել Արցախ: Աշխատանքի է անցել Հաղորդի դպրոցում՝ որպես կենսաբանության ուսուցիչ, այնուհետև՝ տնօրին: Առաջինն է հայտնաբերել 1931թ. բռնկված համաճարակը, անմիջական օգնություն ցուցաբերել վարակվածներին:



## ՄԱՐԴԱՆՅԱՆ ԳՐԻՉԱ ԼԱԶՐԻ (1916-1995)

Գրիշա Լազրի Մարդանյան (ծնվ.՝ 1916, գ. Տումանյան, Հայրուր), հասարակական գործիչ:

Ավարտել է Տումու յորամյա դպրոցը, 1937թ.՝ Հայրուրի մանկավարժական ուսումնարանը: 1940-1945թթ. մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Աշխատել է Հին Թաղերի դպրոցում՝ որպես ուսուցիչ, Դրախտիկում՝ ուսմասվար, Զրակուսում՝ դպրոցի տնօրեն: Այնուհետև եղել է Հայրուրի կուսաքզոմի բաժնի վարիչ, շրջանային ժողովրածնի վարիչ, շրջանային «Կոլտնտեսական» թերթի և շրջանային ռազմական ուղղիղադրդումների խմբագիր: 1982թ. նշանակվել է Հայրուրի շրջանային պատմաերկրագիտական բանգարանի տնօրեն:



## ՄԵԼԻՔ ԵԳԱՆ (...-1744)

Սելիք Եգան (ծնվ.՝ ... - մահ.՝ 1744), քաղաքական-ռազմական գործիչ, դիվանագետ, Դիզակի մելիքուրյան տիրակալ, Խամսայի մելիքությունների ընդհանուր կառավարիչ, Սելիք-Եգանյաններ տոհմի հիմնադիր:

«Սելիք» արարերենից նշանակում է տիրակալ: Եգանը Հովհաննես հատուկ անվան աղճատված ձևու է սյունեցիների բարբառում: Եգանի հայրը եղել է Գոշավանի վանահայր Դուկաս վարդապետը (ծննդ. անհայտ. - մահ.՝ 1715): 1717թ. Եգանն ընտրվել է Տող գյուղի տանուտեր: Պարսկատանի Թահմասպ 2-րդ շահին ռազմական աջակցություն ցուցաբերելու համար 1723թ. ստացել է մելիքի տիտղոս: 1724թ. Կոստանդնուպոլիսի պայմանագրով հայկական բնակավայրերի, այդ թվում՝ Արցախի Օսմանյան կայսրության անցնելով, Եգանը գրկվել է մելիքի տիտղոսից: Թուրքերը հայարնակ մարզերից ծերրակալել և Թուրքիա են արտորել 7.500 զինվոր ու սպա: Միայն Եգանին է հաջողվել փրկազնով կանխել Արցախի զինվորականների արտօրը: Նայիր շահը Եգանի խորհրդով ու աջակցությամբ կարողացել է հոսանքի հիմքեր ստեղծել դեպի Հայաստան նոր արշավանքի համար. 1734թ. մեկնել է Սամսուն Պետերուրուր, բանակցել քագուի Աննա

Յոհանովնայի հետ, խոստանալով դեպի Հայաստան արշավանքի ժամանակ շանցնել 1724թ. պայմանագրով հաստատված Ռուսաստանի սահմանը, իսկ արշավանքի ժամանակ անձամբ պաշտպանելով ուսմերի անվտանգությունը, ներդրումները, շահերը: Սելիք Եգանը երկու անգամ այցելել է Պետերբուրգ: Երկրորդ անգամ հանդիպել է քագուի Ելիզավետա Պետրովնայի հետ, բանակցել Ռուսաստանի հովանավորության շուրջ:



## ՄԵԼԻՔ ԵՍԱՅԻ

Եսայի Սելիք (մելիք Եգանի որդին), ազատագրական շարժման գործիչ: 1745թ. եղել է Դիզակի մելիքը: 18-րդ դարի կեսերից Խամսայի մելիքների մեջ սկսվեցին ներքին գժտությունները և քայլումները: Դրա հիմնական կազմակերպիչները Շուշի Փանահ խանը և նրա դաշնակից մելիք Շահնազարն էին: Դիզակի, Գյուլիստանի և Զրաբերդի մելիքները դիմադրում էին Վարանդայի և Խաչենի մելիքներին, որոնք պաշտպանում էին Շուշիում նստավայր գտած անկոչ, կեղծ Փանահ խանին: Դաշնակիցները համատեղ գրագնդերով մի քանի անգամ փորձեցին ծնկի բերել Դիզակի անպարտ մելիքին, բայց դա նրանց չհաջողվեց: 1768թ. Ղարաբաղի խան հոչակցեց Փանահի որդի Իբրահիմը, ում օրոք թշնամանը Սելիք Եսայու հանդեպ ավելի խորացավ: Զկարողանալով ծնկի բերել Դիզակի մելիքությանը, Իբրահիմ խանը մատնազիր ուղարկեց պարսից արքունիքը: 1781թ. շահի հզոր բանակն անցնելով Արաքսը, ներխուժեց Դիզակի մելիքության տարածք: Դիմելով խորամանկության, պարսիկներն առաջարկեցին Սելիք Եսայուն հարցերը լուծել բանակցությունների միջոցով: Դիզակի խորհստ մելիքը հավատաց պարսիկներին: Արյունքում շորայվեց ու բանտարկվեց: Օրեր շարունակ նվաստացնելուց հետո պարսից դահիճները «շնչահեղձ» արեցին Սելիք-Եսայուն: Նրա տապանաքարը գտնվում է մելիքանիստ Տող գյուղում:





**ՍԵԼԻՔՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՆԻԿՈԼԱՅԻ**  
*(1877-1969)*



## ՄԵԼԻՔՅԱՆ ՀԱՅԿ ԱՎԵՏԻՔԻ (1980)

Հայկ Ավետիքի Մելիքյան (ծնվ.՝ 1980, Երևան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, բանաստեղծ Սոկրատ Խանյանի թոռ), դաշնակահար, ՀՀ վաստակավոր արտիստ (2013):

Ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դաշնամուրային բաժինը (այսուհետուր Ս.Գորգեանովի դասարան), այնոհետու՝ առեղծառարձնամաս ուժին (առողջեսու

**Վ.Ածեմյանի դասարան:** Նրա միջազգային բնելով տեղի է ունեցել 2000թ. Հոռոմում՝ «Concerto di Concerti» 20-րդ դարի և ժամանակակից երաժշտության միջազգային փառատոնի շրջանակներում։ Բազմաթիվ միջազգային դաշնամուրային և կոմպոզիտորական մրցույթների դափնեկիր է։ Հայ և արտասահմանյան շատ կոմպոզիտորների ստեղծագործությունների առաջին կատարողն է։ Հյուրախաղերով հանդես է գալիս Եվրոպայի, Ասիայի, Հյուսիսային և Հարավային Ամերիկաների տարբեր երկրներում։ **Հ.Մնիքյանի** նախաձեռնությամբ 2009թ. Երևանում մեկնարկել է 1900+ նախագիծ-համերգաշարը՝ նվիրված 20-րդ դարի և ժամանակակից համաշխատահամբ ուսանամուրային երաժշտությանը։



## ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ԱՍԱՏՈՒԹ ԲԱԽՉԻԲ (1912-1954)

Ասատոր (Լեկապե) Բախչի Սելրումյան  
(ծնվ.՝ 1912, գ.Տումի - մահ.՝ 1954, Երևան), բանա-  
սիրական գիտությունների բեկնածու, ՀԽՍՀ ԳԱ  
անդամ:

Ավարտել է Փ.Թերլեմեզյանի անվան նկարչական ուսումնարանը: 18 տարեկանից բրդակցել է «Եղինիկ» օրաթերթին, այնուհետև՝ «Խորհրդային Հայաստան» թերթին: Հետագայում դարձել է նոյն թերթի գրական բաժնի ղեկավարը: 1934թ. խմբագրել է «Երևանի բանվոր» օրաթերթը: 1936թ. գործուղվար է Մոսկվա: Վերադարձել է Երևան և աշխա-

տեղ Երևանի գրադարանում՝ որպես տնօրեն: Ապա նշանակվել է Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարանի գիտքարտուղար, փոխտնօրեն: Հայրենական մեծ պատերազմից հետո գրականություն է դասավանդել ԵՊՀ-ում:



### ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ԱՐՏԵՄ ԲՈԳԴԻԿՅԱՆ (1951)

Արտեմ Բոգդանի Մելքումյան (ծնվ.՝ 1951, ք. Հաղբուր)՝ կիմուովերատոր:

1969-1970թթ. սովորել է Կիևի քաղաքացիայի ինժեներների ինստիտուտում, 1970-1972թթ. Երևանի պոլիտեխնիկ ինստիտուտում: 1972թ. աշխատել է Հայֆիլմում: 1980թ. ավարտել է Մոսկվայի կիմինատուրաֆիզիայի ինստիտուտը: Աշխատել է նաև «Լենֆիլմում»: Լավագույն գեղարվեստական ֆիլմերից են՝ «Արարան որերորդ օրը» (1980), «Երազ» (1981), «Տասներեքերորդ առաջյալ» (1987), «Վերադարձ ավետյաց երկիր» (1991), «Լուրյան սիմֆոնիան» (2001), վավերագրական՝ «Տարվա եղանակները», «Սատաղ»:



### ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ԳՅՈՒԼԻ ԲԱԽՉԻ (1903-...)

Գյուլի Բախչի Մելքումյան (ծնվ.՝ 1903, գ. Տումի - մահ.՝ Երևան), գյուղատնտեսական գիտությունների թեկնածու:

Նախնական կրթությունը ստացել է Ծովի քաղաքում: Ավարտել է Երևանի գյուղատնտեսական համալսարանի գյուղատնտեսության ֆակուլտետը: Աշխատել է գիտա-հետազոտական հիմնարկում՝ որպես գյուղատնտես: Աղբեջանում մաս-



նագետների պակասի պատճառով 1935թ. ուղարկվել է Բաքու և աշխատանքի անցել Աղբեջանի գյուղատնտեսության նախարարության բույների պաշտպանության բաժնում: Ծովը երեք տասնամյակ աշխատել է Բաքվում: 1968թ. անցել է կենսարշակի և վերադարձել Երևան:



### ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ԱԼԱՎԵՐԴԻՔԻ (1915-2007)

Գուրգեն Ալահիկերդի Մելքումյան (ծնվ.՝ 1915, գ. Զարագլուխ - մահ.՝ 2007, Ստեփանակերտ), հասարակական գործիչ:

1935-1936թթ. դասավանդել է Զարագլիի դպրոցում: 1937-1939թթ. եղել է Հաղբուրի շրջանային «Կոմունիստ» թերթի աշխատակից, այնուհետև՝ պատասխանատու քարտուղար, խմբագիր: Մասնակցել է Խորհրդա-ֆինանսական և Հայրենական մեծ պատերազմներին (մինչև 1945թ. մայիս): 1946թ. աշխատանքի է անցել որպես Հաղբուրի շրջկոմի բաժնի վարիչ, ապա՝ քարտուղար: 1950-1954թթ. եղել է Հաղբուրի կուսարչկոմի առաջին քարտուղար, 1954-1957թթ. ընդունվել և ավարտել է Մոսկվայի կուսակցական բարձրագույն դպրոցը: 1957-1961թթ. եղել է Մարտունու կուսարչկոմի առաջին քարտուղար, 1962-1973թթ.՝ ԼՂՄՍ կոսակցության մարզկոմի ղեկավար: Հանդիսացել է Աղբեջանի ԿԿ կենտկոմի անդամ, 1973-1983թթ.՝ Աղբեջանի արհմիութենական խորհրդի քարտուղար: Երկու անգամ առաջըրյակել է ԽՍՀՄ Գերազույն խորհրդի պատգամավոր:



### ՄԵԼՔՈՒՄՅԱՆ ՓԱՌԱՆՉԵՄ ԲԱԽՉԻ (1916-1976)

Փառանձեմ Բախչի Մելքումյան (ծնվ.՝ 1916, գ. Տումի - մահ.՝ 1976, Երևան), բժշկական գիտուրյունների թեկնածու:

Ավարտել է Երևանի պետական բժշկական ինստիտուտը: Երկար տարիներ աշխատել է Հայկական ԽՍՀ ԳԱ միկրոբիոլոգիայի ինստիտուտում:

Հեղինակել է բազմաթիվ հոդվածներ և մենագրություններ:



## **ՄԵԼՔՈՒՄՈՎ ՎԻԿՏՈՐ ԱՐՏԵՄ** *(1940)*

Վիկտոր Արտեմի Մելքոնյան (ծնվ.՝ 1940, գ. Էղիզու՝ Ուխտաձոր), ատամնաբույժ, պրոֆեսոր, Հայաստանի առողջապահության ընկերության խորհրդի անդամ (1964):

1964թ.-ին ավարտել է Աղբյուջանի թժկական ինստիտուտը: 1964թ. աշխատանքի է անցել Կիրովականի առամնարուժական կյանքի այս որպես բժիշկ, 1969-1978թթ՝ որպես մանկական սոունատոլոգիական բաժանմունքի վարիչ: 1978-1987թթ. եղել է Երևանի թժկական ինստիտուտի սոունատոլոգիայի ամբիոնի ասխատենու, 1988-1990թթ.: Եղիշի օրթոպեդիկ սոունատոլոգիայի ամբիոնի վարիչ, 1991թ.-ից՝ նոյն ամբիոնի պրոֆեսոր: Հեղինակել է շուրջ 100-ից ավելի գիտական հրապարակումներ:



## ՄԵՐԶԱԿԱՆ ԵԳԻԿ ԱՐՄԵՆԻ (1930-2009)

Եղիկ Արսենի Միրզախանյան (ծնվ.՝ 1930, գ. Սևան Թաղեր - մահ.՝ 2009, Երևան), ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու (1954), դոցենտ:

1947թ. ավարտել է Մեծ Թաղերի միջնակարգ դպրոցը և նոյն թվին ընդունվել Բաքվի ինստիտուտի հիմնարկությունը՝ հակուլտետը: 1949թ.՝ ինստիտուտի 3-րդ կուրսում, հիվանդության պատճառով լիբիդոյան զրկվել է տեսողությունից, դադարեցրել է ուսումը և վերադարձել Մեծ Թաղեր: 1956թ. տեղափոխվել է Երևան: Ընդունվել է Երևանի պետական համալսարանի մեխանար ֆակուլտետը: Աշխատել է նոյն համալսարանում: Երկար տարիներ ղեկավարել է համալսարանի մեխանար ֆակուլտետի բարձրագույն հանրահաշվի և երկրաչափության ամբիոնները: ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի տոպոլոգիայի ուղղության ամենանաճանաշված մասնագետներից մեկն էր: 1972թ. հրատա-



## ԱՐՁԱԿԱՆ ՆԱՐԻՆԵ ԵԳԻԿԻ

Նարինե Էղիկի Միրզախանյան (ծնվ. ք. Երևան՝ մեծքաղերցի Էղիկ Արսենի Միրզախանյանի ընտանիքում), Փիգիկամարթեմատիկական պիտույքաների թէկնածու (2007), դոցենտ (2012):

1976-1981թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի Մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետում, 1981-1985թթ.՝ Մոսկվայի պետական համալսարանի Մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետի ասպիրանտուրայում: 1985-2007թթ. եղել է ԵՊՀ Հանրահաշվի և երկրաչափության ամբիոնի դասախոս, 2007-2012թթ.՝ նոյն ամբիոնի ասիստենտ:



ԱՐԵՎԱԿԱՆ ՅԱՆ ԱՊՈՔԱՑՆԱԱ ԵԴԻԿԻ

Ուղարկանա Եղիկի Միրզախանյան (ծնվ.՝ ք.Երևան, մեծքաղերցի Եղիկ Արտենի Միրզախանյանի ընտանիքում), Փիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու (2004):

1983թ. գերազանցությամբ ավարտել է ԵՊՀ մեխանիկա-մարեմատիկական ֆակուլտետը,  
1986թ.՝ Մոսկվայի Մ.Վ.Լոմննուսի անվան պե-

տական համալսարանի մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետի ասպիրանտորան՝ մաթեմատիկա մասնագիտությամբ: 2010թ. մրցութային իիմունքներով ընդունել է Մոսկվայի պետական տնտեսագիտության, վիճակագրության և ինֆորմատիկայի համալսարանի կիրառական մաթեմատիկայի ամբիոնի դրույնի պաշտոնը, 2015թ.-ից՝ Ռուսաստանի Գ.Վ.Պլեխանովի անվան տնտեսագիտական համալսարանի քարձրագույն մաթեմատիկայի ամբիոնի դրույնը: Հեղինակել է հոդվածներ, հրապարակումներ, նաև՝ «Պրոգնոզ» ընկերության հետ համատեղ ստեղծած դիսկրետ մաթեմատիկայի վերաբերյալ էլեկտրոնային դասընթացը:



### ՄԵՐՁՈՅՆ ՆԵԿՈՒՅՑ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ

(1910-2001)

Նիկոլայ Ալեքսանդրի Միրզյան ((ծնվ.՝ 1910, գ. Հարթաշեն (Հայովալու), - մահ.՝ 2001, Սամարդանդ), թժշկական գիտությունների դոկտոր, պրաֆեսոր, Ռուսական Հանրապետության գիտության վաստակավոր գործիչ:

Ավարտել է Ֆերգանայի դեղագործական քոլեջը, ընդունվել Սամարդանդի համալսարանը: Թեկնածուական թեզի պաշտպանությունից հետո աշխատանքի է անցել ֆակուլտետային թերապիայի կիմիկայում: 1941թ. դարձել է ուսամական թժշկական պատերազմի ավարտին վերադարձել է Սամարդանդ: Աշխատել է մալարիայի և թժշկական մակարուժաբանության գիտահետազոտական ինստիտուտում: 1957-1986թթ. եղել է Սամարդանդի պետական թժշկական ինստիտուտի ֆակուլտետային թերապիայի ամբիոնի վարչի: Նեկավարել է Սամարդանդի թժշկական ընկերությունը և թերապիայի հիմնախնդիրների տարածաշրջանային հանձնաժողովը: Համաշխարհային պրակտիկայում առաջին անգամ հայտնաբերել է վիսերալ (ընդրային) լեյշնանիոզի բուժման առաջնային ազդեցությունը: Արժանացել է Հայրենական պատերազմի II աստիճանի շքանշանի (1957), Ռուսեկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի դիպլոմի:



### ՄԵՐՁՈՅՆ ՄԵՐԳԵՅ ԱԼԵՔՍԵՅԻ

(1979-2021)

Մերգեյ Ալեքսեյի Միրզյան (ծնվ.՝ 1979, Հայութ - մահ.՝ 2021, ք. Երևան), գնդապետ (2019):

1996-2007թթ. ծառայել է ԼՂՀ ՊԲ-ում: 2007թ. ավարտել է «Գրիգոր Նարեկացի» համալսարանի «Իրավագիտություն» բաժինը: 2007թ.-ից ծառայել է ԱՀ Ազգային անվտանգության ծառայությունում: 2015թ. գրադեցրել է ԱՀ ԱԱԾ Հաղորդի շրջանային բաժնի պաշտոնը: Արժանացել է մի շարք պետական և գերատեսչական պարգևների: 2019թ. օգոստոսի 12-ին պարզեապրվել է «Վահան-2019» շնորհակալագրով՝ հատուկ սահմանային օպերացիայի ընթացքում ՀՀ Ազգային անվտանգության ծառայության Սահմանապահ գործերի հետ համագործակցության համար: 2020թ. սեպտեմբերի 27-ին Արցախի դեմ սահմանակերպված պատերազմի առաջին խկանագից գնդապետ Միրզյանը գտնվում էր հայրենիքի պաշտպանության առաջին պարագաների վայրքարել է Հաղորդ քաղաքի և շրջանի, Արցախի մյուս բնակավայրերի պաշտպանության համար նվիր մարտերում: ԱՀ պետական սահմանը պաշտպանելիս ցուցաբերած բացառիկ քաջության ու արդիության համար 2020թ. հոկտեմբերի 13-ին ԱՀ Նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Մարտական խաչ» I-ին աստիճանի շքանշանով:



### ՄԿՐՏՉՅԱՆ ՄՐԹՈՒՐ ԱԼԵՎԻ

(1959-1992)

Արքուր Ալեվի Մկրտչյան (ծնվ.՝ 1959, գ. Ուխտաձոր - մահ.՝ 1992, Ստեփանակերտ), Արցախի քաղաքական և պետական գործիչ, ԼՂՀ Գերագույն խորհրդի առաջին նախագահ, ազգագրագետ, պատմական գիտությունների թեկնածու (1988):

1976թ. ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: Ընդունվել է Երևանի պետական համալսարանի



պատմության ֆակուլտետը: Համալսարանն ավարտելուց հետո սովորել է Մոսկվայի Միջլուստ Մակարյանի անվան ազգագրության ինստիտուտի ասպիրանտուրայում: 1981-1983թթ. աշխատել է Հայաստանի ազգագրության պետական բանգարանում: 1986թ. տեղափոխվել է ծննդյավայր և աշխատանքի անցել որպես Հայրութի պատմա-երկրագիտական բանգարանի տնօրեն: Արցախյան շարժման հենց սկզբից դարձել է նրա ակտիվ մասնակից՝ 9 հոգու բոլոր ստորագրելով առաջին նամակն ուղղված Գորբաչովին: 1988թ. փետրվարի 12-ի Հայրածիքի հանրահավաքից հետո Ա. Սկրտչյանի ուղին եղել է սրբություն: Անդամագրել է ՀՅԴ-ին: 1992թ. հունվարին ընտրվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերագույն Խորհրդի առաջին նախագահ: Լ.Հ. Գերագույն Խորհրդի առաջին նախագահ Ա. Սկրտչյանը երկրորդ հայկական հանրապետությունը դեկապարել է ընդամենը 97 օր, սակայն նրա անձը, կյանքի ուղին և ճակատագիրն անջնջելի հետք են բողել հայոց նորագոյն պատմության մեջ: Իսկ ճակատագրի ողբերգականությունը դարձավ այս բոլոր տարիների ընթացքում ամենաբարդ, թերևս, ամենածանր ժամանակաշրջանի ողբերգականության խորհրդանշիցը: Սպանվել է 1992թ. ապրիլի 14-ին:



## ՄԿՐՏՉՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ ՍԱՎՍՈՆԻ

(1930)



Էդուարդ Սամսոնի Մկրտչյան (ծնվ.՝ 1930, գ. Խնձօրերդ), բանասիրական գիտությունների դոկտոր (1999):

1937-1944թթ. սովորել է Խճաքերդի 7-ամյա, 1945-1947թթ.՝ Հին Թաղերի միջնակարգ դպրոցներում: 1950թ. ավարտել է Ստեփանակերտի երկամյա ուսուցչական ինստիտուտի լեզվագրական բաժնը, 1954թ.՝ Երևանի Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի լեզվագրական ֆակուլտետը, 1966թ.՝ նոյն ինստիտուտի ասպիրանտուրան՝ գրաբար մասնագիտությամբ: 1954-1963թթ. աշխատել է Սիսիանի շրջանի Դարրասի միջնակարգ և Լեռնաշենի ուրամյա դպրոցներում՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: 1965-2013թթ. համատեղությամբ հայերենի միշտ առարկաներից դասախոսություններ է կարդացել, դասավանդել Կի-

րվականի հեռակա մանկավարժական, Գորիսի պետական, Հր. Աճառյանի անվան, Մոնթենի անվան, Վարդենիսի և այլ մասնավոր բուհերում, ինչպես նաև՝ Միջիայի Հայեպ, Դամասկոս, Քեսար քաղաքներում: 1966թ-ից աշխատում է Խ. Արովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց լեզվի և նրա դասավանդման մերողիկայի ամբիոնում՝ որպես դասախոս: Գիտական հետաքրքրությունների շրջանակում են հայոց լեզվի պատմության, գրաբարի շարադիյության ուսումնակիրության և գրաբարյան ծեռագրերի բարգմանության խնդիրները: Հրատարակել է «Գրաբարի դասընթաց» ուսումնաօժանդակ ձեռնարկը (2008, 300 էջ): Հեղինակել է բազմաթիվ հոդվածներ:

Եղել է Հայութի շրջանի վերին ենթաշրջանի 7 գյուղերի երևանաբնակների հայրենակցական միության նախագահ, «Դիզակ» հայրենակցական ընկերության անդամ:



## ՄԿՐՏՉՅԱՆ ՇԱՀԵՆ ՄԱԿԻՉԻ

(1936-2020)

Շահեն Մակիչի Մկրտչյան (ծնվ.՝ 1936, գ. Քարինգ (Արփագետիկ) - մահ.՝ 2020, Երևան), պատմաբար, մշակութային գործիչ:

1965թ. ավարտել է Խ. Արովյանի անվան մանկավարժական ինստիտուտը: Աշխատել է որպես բրիգադավար, բրակից: 1965-1972թթ. Եղել է Լեռնային Ղարաբաղի մարզային պետական պատմաերկրագիտական բանգարանի տնօրեն, այնուհետև՝ Հայաստանի պատմության բանգարանի գլուխություն գծով տնօրենի տեղակալ, 1976թ.-ից՝ Հայաստանի ազգային պատկերաբանի մասնաճյուղի (Արա Սարգսյանի և Հակոբ Կողյանի տուն-բանգարան) տնօրեն:

Աշխատանքները հիմնականում վերաբերում են Արցախի պատմության ու մշակույթին, ազատագրական պայքարին: Հրատարակել է «Լեռնային Ղարաբաղի Խնճնավար Մարգ» (1970, հայերեն, ուստերեն, աղբբեշերեն), «Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները» (1980, 1985), «Արցախ. պատմամշակութային համառոտ ակնարկ» (1991), «Լեռնային Ղարաբաղ» (1994, բուղաբերեն, անգլերեն), «Արցախի զանձերը», պատկերագիրը (1997 հայերեն, ուստերեն, անգլե-



րեն, ֆրանտերեն, 2000՝ հայերեն, ուստերեն), «Ծուշի. ողբերգական ճակատագիր քաղաք» (1997՝ ուստերեն, 1999՝ անգլերեն), «Լեռնային Ղարաբաղ. Աղբեջանի իրականության ցեղասպանության անատոմիան» (2003՝ հայերեն, ուստերեն, 2004՝ անգլերեն) և այլ աշխատություններ: Արժանացել է Արցախի կառավարության Եղիշեի անվան ամենամյա մրցանակի, 1998 և 2002, ՀՀ նախագահի մրցանակի («Արցախի գանձերը» գրքի համար), 2002, ՅՈՒՆԵՍԿՕ-ի պատվավոր դրսուրի կոչման, Արցախի Հանրապետության «Մեսրոպ Մաշտոց» շքանշանի, 2001:



### ՄՈՎՍԻՍՅԱՆ ԱՆԴՐԵՅ ՄՈՒՇԵՂԻ

(1930)



Անդրեյ Մուշեղի Մովսիսյան (ծնվ.՝ 1930, գ.Թաղուտ), լրագրող, ԽՍՀՄ և ԼՂՀ լրագրողների միության անդամ:

Միջնակարգ դպրոցն ավարտելոց հետո ընդունվել է Երևանի անասնարուժական-անասնաբուժական ինստիտուտը: Աշխատանքային գործունեությունը սկսել է Ստեփանակերտի անասնաբուժական կայանում: Ապա տեղափոխվել է Ղարմետարարության կոմիտե և աշխատել արտադրամատում: 1958թ. հրավիրվել է աշխատանքի Ստեփանակերտի շրջանի խորհրդային տնտեսությունում՝ որպես անասնաբույժ: Երկու տարի անց նշանակվել է Ստեփանակերտի զյուղաժնի հրահանգչի պաշտոնում: Ակտիվ բրդակցության համար 1961թ. հրավիրվել է «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագրություն և նշանակվել գրական աշխատող, 1977-1992թթ. վարել զյուղաժնի վարչի պաշտոնը: Արժանացել է պետական պարգևների և «Լավագույն հրատարակման համար» մրցանակի:



### ՄՈՎՍԻՍՅԱՆ ԶԱՎԵՆ ՄՈՒՇԵՂԻ

(1929-1999)

Զավեն Մուշեղի Մովսիսյան (ծնվ.՝ 1929, գ.Թաղուտ - մահ.՝ 1999, Ստեփանակերտ), հասարակական գործիչ:

Սովորել է ծննդավայրի դպրոցում, 1946թ. ավարտել Տողի միջնակարգ դպրոցը: 1947թ. տեղափոխվել է Ստեփանակերտ և շարունակել ուսումը արհեստագործական ուսումնարանում: Աշխատանքի է անցել Ղարաբաղի մետարքի կոմիտատում: 1961թ. սովորել է Կուսակցական բարձրագույն դպրոցում: Միաժամանակ հեռակա կարգով ավարտել է Աղբեջանի ժողովնեսության ինստիտուտը: Նշանակվել է Ստեփանակերտի քաղաքային կոմիտեի երկրորդ քարտուղար: Երկար տարիներ ղեկավարել է մարզի արհմիտությունների կոմիտեն: 1973թ. սուամձնել է ԱղբԿ Ստեփանակերտի քաղկոմի առաջնական կազմակերպությունը: Մինչև 1988թ. ղեկավարել է մայրաքաղաքի զարդարական կազմակերպությունը: Արցախի հանրապետության հոչակտական կումիտե ներկա է Ստեփանակերտի քաղաքապետի խորհրդական:



### ՄՈՒՐԱԴՅԱՆ ԻԳՈՐ ՄԱՐԱՏԻ

(1957-2018)



Իգոր Մարատի Մուրադյան (ծնվ.՝ 1957, ք.Օդիսա, Ուկրաինական ԽՍՀ, արմատներով Կարմրակոմ գյուղից - մահ.՝ 2018, Երևան), քաղաքագետ, տնտեսական գիտությունների թեկնածու, Արցախի ազգային-ազատագրական շարժման ճարտարապետ, «Ղարաբաղ» կոմիտեի առաջնորդ:

Հասակ է առել Բարվում: Ավարտել է Մոսկվայի Պետականի անվան զյուղատնտեսական ինստիտուտի արդյունաբերական ֆակուլտետը, այնուհետև՝ համամիութենական սենյի արդյունաբերության ինստիտուտը՝ տնտեսագետի մասնագիտությամբ: Եղել է Գիտահետազոտական համամիութենական ինստիտուտի ավագ գիտաշխատող:



Նախաձեռնել է «Պարաբաղ» կոմիտեի ստեղծումը: 1988թ. մայիսին բողոք է Կոմիտեի կառավարման գործը: 1990-1995թթ. ընտրվել է Գևո պատգամավոր, Գևո Պաշտպանության և ներքին գործերի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ: Հետազոտությունները զվարապես վերաբերում են Սևծովյան-կրվկասյան տարածաշրջանի անվտանգության պայմանների, ոլուկերի և վտանգների վերլուծարանությանը: 2009-2013թթ. եղել է «Իրատես դե ֆակտո» թերթի քաղաքական վելուծարանը, «Թևան» բարեգործական կազմակերպության նախագահը: Հեղինակել է շուրջ 1200 հոդված և 16 աշխատություն:



### **ՄՈՒՐԱԳՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ԱՐՏԵՄԻ** (1921-1993)



Միքայել Արտեմի Մուրագյան (ծնվ.՝ 1921, Հայրուր - մահ.՝ 1993, ք.Երևան), գեներալ-մայոր (1965):

Ավարտել է Բարձրի հետևակային ուսումնարանը: Մասնակցել է Հայրենական պատերազմին առաջին օրերից: Առաջին մարտն ընդունել է Տագանրոդի մատուցեներում: Մասնակցել է պաշտպանական մարտերի Կովկասյան նախալեռներում, Նովոռոսիյսկի մատուցեներում, Բելոյինի ազատագրմանը: 1943թ.-ից որպես գումարտակի հրամանատար, այնուհետև գնդի հրամանատար Թամանյան 89-րդ դիվիզիայի կազմում մարտնչել և հասել է մինչև Բելոյին: Պատերազմից հետո ստվորել է Մ.Վ. Ֆրուելի անվան ուսումնական ակադեմիայում, ավարտել 1955թ. և որպես փոխգնդապետ զրադեցրել տարբեր հրամանատարաշտարային պաշտոններ: Եղել է Լենինականի 4127-րդ դիվիզիայի օպերատիվ ստորաբաժնաման պետի տեղակալ, հատուկ հրամանատարի տեղակալ, Լենինականի 128-րդ հրաձգային գնդի հրամանատար: 1961թ. ԽՍՀՄ քաղաքաշտպանության պետի հրամանով նշանակվել է ՀԽՍՀ քաղաքաշտպանության պետ: Թոշակի անցնելով հետո աշխատել է պատասխանատու պաշտոններում: Եղել է ՀԽՍՀ առաջին քարտուղար Կ.Դեմիրճյանի օգնականը՝ ուսումնական հարցերի գծով, ՀՀ Վետերանների միուրյան նախագահ: Ակտիվ մասնակցել է ԼՂ հարցի կարգավորման:

1988-1993թթ. Հայրուրի շրջան է առարել սմբադմերը, մասնակցել կամագործական ջոկատի կազմավորմանը, Հայրուրի շրջանի գյուղերի միջև ուղղակի կազմավորական նշանակության ճանապարհի («Փրկուրյան ճանապարհ») շինարարությանը, Հայրուր-Ստեփանակերտ-Երևան հեռախոսային կապի ստեղծմանը, ՀՀ-ում բռնագաղթած հաղորդությունների տեղափոխմանը, Վիրավոր ազատամարտիկների բուժապատճենական կազմակերպման աշխատանքներին: Պարզեատրվել է շրանշաններով:



### **ՄՈՒՐԱԳՅԱՆ ՎԻԿՏՈՐ ԱՎԵԼԻ** (1913-2003)



Վիկտոր Ավելի Մուրագյան (ծնվ.՝ 1913, գ.Կարմրակուտ կարմրակուտների Ավելիկ Մուրագյանանի ավագ որդին) - մահ.՝ 2003, Երևան), պատմական գիտությունների դոկտոր (1969), Զեխուսուրակիայի Մշադա Բողևալավ քաղաքի պատվավոր քաղաքացի, Հայաստանի գիտության վաստակավոր գործիչ (1985):

Ավարտել է Բարձրի համալսարանի պատմության ֆակուլտետը: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, եղել գնդի կոմիսար, դիվիզիայի քաղաքանի պետ: 1968թ.-ից աշխատել է որպես մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի ավագ գիտաշխատող: Աշխատությունները վերաբերում են ԽՍՀԿ ազգային քաղաքականությանը Հայրենական պատերազմի տարիներին և հետպատերազմյան շրջանին: Մի շարք աշխատությունների համահեղինակ է, Խորհրդային Հայաստանը Հայրենական մեծ պատերազմի տարիներին (1941-1945) փաստարդերի ու նյութերի ժողովածուն կազմող խմբի ղեկավար: Պարզեատրվել է Կարմիր դրոշի, Կարմիր աստղի շրանշաններով:



## ՄՈՒՐԱԳԻՆԱՅԻՆ ԱՍԼԱՆ ՄԱՐԳԱՄԻ

(1888-1919)

Ապան (Ապանիկ) Մարգամի Մուրագինանյան (ծնվ.՝ 1888, գ.Կարմրակուճ - մահ.՝ 1919, Արցախ), ազգային-ազատազրական շարժման գործիչ:

Ակտիվ մասնակցություն է ունեցել բոլորական հրոսակախմբերից հայկական բնակավայրերի պաշտպանության գործում: 1905-1913 թթ. դեկավարել է կամավորական ջոկատները: Առավել հայտնի է Մամնայի ճակատամարտի ժամանակ ճեղմարդկան փայլուն գործողություններով, երբ նրա գիտակորած քաջերը շրջափակել և ջախչախել են բոլորական բանակը: Քյազիմ թեկի հրամանատարությանը: Ժամանակին ժողովուրդը երգեր է նվիրել նրան: Չոհիւլ է հայ դավաճանի զնդակից, ովքեր հրաժարվել են միանալ Ղարաբաղի ինքնապաշտպանական ջոկատին:



## ՆԱՎԱԱՐԴՅԱՆ ԱՐՏԵՄ ՎԼԱԴԻՄԻՐԻ

(1923-1982)

Արտեմ Վլադիմիրի Նավաարդյան (ծնվ.՝ 1923, Դումուկչի - մահ.՝ 1982, Դումուկչի), հասարակական գործիչ:

1930 թ. սովորել է գյուղի դպրոցում: Այնուհետև ավարտել է Հողերի միջնակարգ դպրոցը: 1940 թ. սովորել է Բարձրի Լենինի անվան ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետում: 1941 թ. առաջին կուրսից գորակովել է բանակ: Ծառայությունն ավարտելուց հետո ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտը, որը ավարտել է 1948 թ.: 1937-1948 թթ. եղել է ՀամԼԿԵՄ անդամ, 1948 թ. ԽՄԿԿ անդամ: 1946-1948 թթ. աշխատել է Ռուդուկչի յորամյա դպրոցի տնօրեն, 1951-1958 թթ. աշխատել է Ուխտաձորի միջնակարգ դպրոցում որպես փիզիկայի, մաթեմատիկայի ուսուցիչ: 1958 թ. ընտրվել է Ուխտաձորի «Դրուժքա» տնտեսության կուսկոմիտեի քարտուղար, ապա 1971 թ. սովորութեան տնօրեն: Պարզեատրվել է մեղալ-ներով, շրանշաներով:



## ՆԱՎԱԱՐԴՅԱՆ ԷՐԻԿ ՎԼԱՎԻՍԻՐԻ

(1949)

Էրիկ Վլադիմիրի Նավաարդյան (ծնվ.՝ 1949, գ. Էղիլլու՝ Ուխտաձոր): 1966 թ. ավարտել է Ուխտաձորի միջնակարգ դպրոցը: 1968 թ. աշխատանքի է անցել Արցախ շինորեստում: Միաժամանակ հեռակա կարգով սովորել է Երևանի պոլիտեխնիկ ինստիտուտի շինարարական բաժնում: 1973 թ. գորակովել է Խորհրդային բանակ: Զորացրվելուց հետո կրկին աշխատել է Արցախ շինորեստում: 1977 թ. աշխատանքի է անցել Աղյուկ ԼՂ մարզկոմի արդյունաբերության և շինարարության բաժնում՝ որպես հրահանգիչ: 1985 թ. նշանակվել է Հաղորդի շրջնորդի գործկոնի նախագահ, 1992 թ. Հաղորդի նորաստեղծ վարչակազմի ղեկավարի տեղակալ: 1995-1999 թթ. գլխավորել է Հաղորդի ճանապարհաշինարարական ընկերությունը: Ապա 1999-2013 թթ. եղել է Արցախի ներգոյի Հաղորդի մասնաճյուղի տնօրեն: 2014 թ.-ից գրադարձել է ֆերմերային տնտեսությանը:



## ՆԱՐԻՆՅԱՆ ԳԵՂՐԳԻ ԱՐԱՄԻ

(1949)


Գեղրգի Արամի Նարինյան (ծնվ.՝ 1949, գ.Տումի), բժշկական գիտությունների թեկնածու:

1977 թ. ավարտել է Երևանի բժշկական համալսարանը: Աշխատանքի է անցել Մեղրիի շրջանային հիվանդանոցում՝ որպես բժիշկ, այնուհետև՝ գլխավոր բժիշկ: Ծառայել է Խորհրդային բանակի շարքերում: Վերադարձել է Արցախ և շրջ 21 տարի աշխատել Մարտունիում, եղել գլխավոր վիրաբույժ: Հեռակա ուսուցմամբ Մոսկվայում ավարտել է բժշկական ասպիրանտուրան: Այժմ ապրում և աշխատում է Մոսկվայում:



## ՆԵՐՍԵՍՅԱՆ ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍԻ (1964)

Արմեն Պետրոսի Ներսեսյան (ծնվ.՝ 1964, Հաղպատ), ֆիզիկոս, Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր (2005), Տոմսկի պոլիտեխնիկական համալսարանի Ֆիզիկա-տեխնիկական ինստիտուտի բարձրագույն մաթեմատիկայի և մաթեմատիկական ֆիզիկայի Փակուլտետի պրոֆեսոր:



1986թ. ավարտել է Երևանի պետական համալսարանը: 1986-1989թ. և 2001թ. աշխատել է Երևանի պետական համալսարանում, 1991-2001թ.՝ Դուրքայի միջուկային հետազոտությունների կենտրոնում, Բոգոյուրովի անվան տեսական ֆիզիկայի լաբորատորիայում՝ որպես գիտաշխատող, իսկ 1995-2001թ.՝ ավագ գիտաշխատող: 2002-2007թ. շարունակել է գործունեությունը Երևանի ֆիզիկայի ինստիտուտում՝ որպես ավագ գիտաշխատող: Նոյն պաշտոնով 2002-2005թ. աշխատել է ԵՊՀ Տեսական ֆիզիկայի ամբիոնում: 2006թ.-ից հանդիսանում է նոյն ամբիոնի առաջատար գիտաշխատող: Արժանացել է «Անամիա Շիրակացի» մեդալի, Ֆիզիկայի բնագավառում ՀՀ Նախագահի մրցանակի (2008):



## ՆԵՐՍԻՍՅԱՆ ՊՅՈՒՏՐ ՆԵՐՍԵՍԻ (1928-...)

Պյուտր Ներսեսի Ներսիսյան (ծնվ.՝ 1928, Հաղպատ), 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ:

Միջնակարգ կրթությունը ստացել է ծննդավայրում: 1950թ. ավարտել է Բարվի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաք ֆակուլտետի ֆիզիկայի բաժինը: 1950-1954թ. ծառայել է ԽՍՀՄ ԶՈՒ շարքերում: Մեկ տարի անց՝ որպես կամավոր, չինական կողմից մասնակցել է Հյուսիսային և Հարավային Կորեաների միջև



տեղի ունեցող պատերազմին: 1954թ. դեկտեմբերից սկսել է իր մանկավարժական գործունեությունը Հաղպատի միջնակարգ դպրոցում՝ որպես ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցիչ: 1960-1961թթ. աշխատել է Հաղպատի կրթության շրջանային բաժնի տեսուչ: 1961-1967թթ. եղել է Հաղպատի միջնակարգ դպրոցի ուսմավար, այնուհետև՝ մինչև 1982թ., դպրոցի տնօրին, իսկ մինչև 1997թ. դպրոցում դասավանդել է մաթեմատիկա: 1997-1998թթ. եղել է Հաղպատի կրթության շրջանային բաժնի մերուկարգինետի վարիչ, միաժամանակ դասավանդել է Հաղպատի դպրոցում: 1965-1985թթ. մասնակցել է «Մաթեմատիկան դպրոցում» համամիութենական ամսագրի մրցութային խմնիքների լուծմանը, ստացել պատվիրտեր: Արժանացել է «Հանրապետության լուսավորության աշխատողների գերազանցիկ» և «Ուսուցիչ-մեռլիստ» կոչումներին:



## ՆԵՐՍԻՍՅԱՆ ՍՈՒՍԱՆՆԱ ԳՈՒՐԳԵՆԻ (1954)

Սուսաննա Գուրգենի Ներսիսյան (ծնվ.՝ 1954, գ.Թաղուտ), Հանրապետության վաստակավոր մանկավարժ (2014):

1971թ. գերազանցությամբ ավարտել է Տոլի միջնակարգ դպրոցը: Ընդունվել և 1975թ. ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաք ֆակուլտետի մաթեմատիկայի բաժնը, ստացել մաթեմատիկայի ուսուցչի ուրակավորում: Աշխատանքի է անցել Մեծ Թաղերի, այնուհետև՝ հայրենի գյուղի հիմնական դպրոցում: 1977թ. ընտանիքով տեղափոխվել է Ստեփանակերտ: Աշխատել է Ասկերանի շրջանի Լեռնավանի, ապա Ստեփանակերտի թիվ 5 դպրոցներում: 1987-2008թթ. եղել է թիվ 10 միջնակարգ դպրոցի փոխտնօրին: 2008թ. տեղափոխվել է Ստեփանակերտի նորաստեղծ թիվ 11 փոխտնօրին: 2010թ. նախական է ԵՊՀ-ին առնելու Ա.Շահինյանի անվան ֆիզմաք դպրոցի Ստեփանակերտի մասնաճյուղի տնօրին:



## ԸԱԴՅԱՆ ԱՆԱՏՈԼԻ ՎԱԶԻԿԻ

(1960)

Անատոլի Վաչիկի Չայյան (ծնվ.՝ 1960, ք.Քարոզ, հինգադարցու ընտանիքում), գնդապետ (2005):

1977թ. ընդունվել է Բարձի բարձրագույն համազգային հրամանատարական ուսումնարանը: Ավարտելուց հետո ստացել է Եյտեմանտի կոչում և ուղարկվել Կիևի ռազմական օկրուգի Կրիվոյ Ռոգի Ն զորամաս՝ նախ դասակի, այնուհետև վաշտի հրամանատարի պաշտոնով: 1987թ. նշանակվել է Զեխուլովակիայում տեղակայված զորամասերից մեջի՝ մոտոհրածային վաշտի հրամանատար, բայց նույն թվականին տեղափոխվել է Անդրկովկասյան գինվորական օկրուգ: 1988թ. նաևնակցել է Սումգայիքի արյունայի իրադարձությունների հետևանքների վերացման գործողություններին: 1989-1992թթ. եղել է ԼՂՀ Մարտակերտի շրջանի գինվորական կոմիսարի տեղակալի պաշտոնակատար և նաևնակցել Մարտակերտի պաշտպանական մարտերին: 1992թ. տեղափոխվել է Հայաստան և ծառայության անցել Երևանի Մաշտոցի շրջանային գինկոմում՝ որպես 2-րդ քաժմի պետի ավագ օգնական: Մնկ տարի անց նշանակվել է գինվորական հավաքականի պետ: 2000-2003թթ. ծառայել է տարբեր զորամասերում՝ որպես շտարի պետ: Արժանացել է բազմաթիվ մեդալների:



## ԸԱԴՅԱՆ ԲՈԳԴԱՆ ՄԱԿԱՐԻ

(1928-...)

Բոգդան Մակարի Չայյան (ծնվ.՝ 1928, գ.Հին Թաղեր), վաստակաշատ մանկավարժ:

1945թ. բարձր առաջադիմությամբ ավարտել է զյուղի միջնակարգ դպրոցը: 1948-1952թթ. ընդունվել և գերազանցությամբ ավարտել է Բարձի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը: Շուրջ տասը տարի Հայրություն և Հին Թաղերում զբաղվել է մանկավարժական գործունեությամբ: 1963թ. ընտանիքով տեղափոխվել է ք.Արարատ և ստանձնել



տնի թիվ 2 միջնակարգ դպրոցի տնօրինությունը: Այդ դպրոցն այսօր կոչվում է Չայյանի դպրոց: 1973թ. նշանակվել է Երևանի Վ.Տերյանի անվան միջնակարգ, 1985թ.՝ թիվ 164 միջնակարգ դպրոցների տնօրեն: Ավարտել է նաև Ս.Արենյանի անվան գրականության ինստիտուտի ասպիրանտուրան: Գրել է մանկավարժական թեմաներով մենագրություններ, հոդվածներ:



## ԸԱԴՅԱՆ ՀԱՅԿ ՎԼԱԴԻՄԻՐԻ

(1967)

Հայկ Վլադիմիրի Չայյան (ծնվ.՝ 1967, գ.Հին Թաղեր), գնդապետ:

1984թ. ընդունվել է Երևանի ժողովնախոսություն ֆինանսահաշվային ֆակուլտետը: 1989թ. աշխատանքի և անցել Հայրություն: 1992թ. եղել է ԼՂՀ պաշտպանության բանակի գինծառայող, հրետանային մարտկոցի հրամանատար: 1993-1998թթ. կարել է հրետանային դիվիզիոնի շտարի պետի, ապա՝ պաշտպանության շրջանի հրետանու պետի պաշտոնները: 1998-2001թթ. ընդունվել և կարմիր դիպլոմով ավարտել է Ո.Դ. Սամելո Պետերության ռազմահրետանային ակադեմիան: 2001-2005թթ. գիտելիքները հարստացրել է ԱՄՆ ռազմական դեպարտամենտում: 2007թ. եղել է ԱՄՆ կենտրոնական հրամանատարությունում ՀՀ գինված ուժերի պետ: Պարզեցած է մեդալներով, շքանշաններով:



## ԸԱԴՅԱՆ ՌՈՒԲԵՆ ՍԱՐՈՒԽԱՆԻ

(1927-1992)

Ռուբեն Սարուխանի Չայյան (ծնվ.՝ 1927, գ.Հին Թաղեր - մահ.՝ 1992, գ.Հին Թաղեր), Աղյուսական վաստակավոր անասնաբույժ:

1944թ. ավարտել է Հին Թաղերի միջնակարգ դպրոցը և ընդունվել Ստեփանակերտի գյուղատն-



տեսական տեխնիկումը: Անասնաբույժի մասնագիտությամբ վերադարձել է հայրենի զյուղ: Աշխատանքային գործունեությանը զուգահեռ շարունակել է ուսումը Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինստիտուտում: 1978թ. ընտրվել է կոլտնտեսության վարչության նախագահ և 21 տարի ղեկավարել Հին Թաղերի Մյասնիկյանի անվան տնտեսությունը: 1992թ. Հին Թաղերից Դիզայնի ստորոտի անտառային կածանով շրջկենտրոն գնալու ճանապարհին ընկել է քշնամու ծովակը: Կնոջ հետ սպանվել է քշնամու դիմահար կրակից: Պարզեատրվել է մեղալներով և քրանչաններով:



## ՇՎԻԹԻՆՑ ՀԱՅԿ ԱՎԱԳԻ (1920-2001)

Հայկ Ավագի Շաղուն (ծնվ.՝ 1920, Հայրուր - մահ.՝ 2001, Մոսկվա), Լորենյա քաղաքի պատվավոր քաղաքացի:

Սովորել է տեղի դպրոցում: 1936թ. ընդունվել է կոմերչիտմիության շարքերը: 1939թ. ծառայության է անցել Կարմիր բանակի շարքերում: Պատերազմի առաջին օրերից մեկնել է ռազմաճակատ: Որպես 864-րդ գեներալիքիտային գնդի 13-րդ մարտկոցի առաջին հաշվարկի հրամանատար աշքի է ընկել Լորենյայի պաշտպանական գծում գերմանա-ֆաշիստական զավթիչների դեմ պայքարում: 1941թ. նրա հրամանատարության տակ գտնվող անձնակազմը հետ է մղել քշնամու բոլոր տանկային գրոհները, որոնք փորձում էին ճեղքել դեպի երկարուղի տանող ճանապարհ: Այս մարտերում ցուցաբերած քաջության և հերոսության համար արժանացել է Կարմիր դրոշի շքանշան: Պատերազմի ժամանակ կատարած սիրանքների հիման վրա նկարահանվել է «Ս տօօց որօգ» գեղարվեստական ֆիլմը: 1946թ. որպես պահեստազորի սպա անցել է բոշակի: 1947թ. աշխատանքային գործունեություն է սկսել ավլիացիոն շարժիչների կենտրոնական ինստիտուտում, նախ որպես հիմներ, այնուհետև՝ խմբի ղեկավար, լաբորատորիայի ղեկավարի տեղակալ: Աշխատանքին գրուած 1953թ. ավարտել է Մոսկվայի պետական տնտեսագիտական ինստիտուտը: 1983թ. անցել է բոշակի: Ակտիվորեն մասնակցել է Մոսկվա և Լորենյա քաղաքների հասարակական-քաղաքական, ռազմահայրենասիրական աշխատանքներին: Արժանացել է մի շարք շքանշանների, մեդալների:



## ՇՎԻԹԻՆՑ ՍՈՒՐԵՆ ԿՈՍՏԱԴԻՔԻՆԻ (1898-1938)

Սուրեն Կոստանդինի Շաղուն (ծնվ.՝ 1898, Զրական - մահ.՝ 1938, Կոմմոնարկա, Մոսկվայի մարզ, ՌԽՖՍՀ), խորհրդային կոսակցական և պետական գործիչ:


Սովորել է Շուշիի ռեալական ուսումնարանում: Հեղափոխական աշխատանք է կատարել և մասնակցել Ալբրեթզանում խորհրդային իշխանության հաստատմանը: 1921թ. մարտին տեղափոխվել է Հայաստան, մասնակցել Զանգեզուրի քաղաքացիական կրիվներին: 1921-1923թթ. եղել է ՀԿ(Բ)կ Երևանի կոմիտեի քարտուղար, 1923-1927թթ. ՀԽԱՀ հողմովկոմատի ջրային տնտեսության վարչության պետ: 1927-1928թթ. ղեկավարել է ջրային տնտեսության Անդրկովկայան վարչությունը: 1928-1931թթ. աշխատել է ՀամԿ(Բ)կ Կենտկոմում: 1931-1932թթ. եղել է Միջինասիական բանքակամախորման նախագահ: 1931թ. գարնանը, որպես ՀամԿ(Բ)կ Միջինասիական բյուրոյի լիազոր, ղեկավարել է Տաջիկստան ներխուժած բասմաշական խմբերի զախշախումը: 1932թ. եղել է ՀամԿ(Բ)կ Միջինասիական բյուրոյի քարտուղար, 1934թ. Տաջիկստանի կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար: 1936թ. ղեկավարել է ՀամԿ(Բ)կ ԿԿ ԿՎՀ ֆինանսական խումբը:



## ՇՎԱՐՈՒՐԱԴՅԱՆ ՀՐԱԶԻԿ ՏԻԳՐԱՆԻ (1937)

Հրաչիկ Տիգրանի Շահմուրայյան (ծնվ.՝ 1937, գ.Հին Թաղեր), տեխնիկական գիտությունների թեկնածու (1954):

Գերազանց գնահատականներով ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: Ընդունվել և 1956թ. ավարտել է Ստեփանակերտի թշչկական ուսումնարանը: 1957թ. զորակուվել և երեք տարի ծառայել է Խորհրդային բանակում: 1960թ. ընդունվել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը, սովորել քիմիա-տեխնոլոգիական աշխատանքներին: Արժանացել է մի շարք շքանշանների, մեդալների:



կան ֆակուլտետում: Հաջողորդամբ ավարտել է ասպիրանտուրան, Ռիգայի պոլիտեխնիկական ինստիտուտում պաշտպանել է դիսերտացիան և ստացել տեխնիկական գիտությունների թեկնածուի աստիճան: Տարիներ շարունակ աշխատել է Հայաստանի գիտական իհմնարկներում, արտադրական ձեռնարկություններում: Դասախոսել է Երևանի ֆինանսարանիկային և բորսայական համալսարանում: Հեղինակել է շուրջ քասմինք գիտական հոդված և թեզ, քասմինք գյուտ և ուղղությալ գաղատորական առաջարկություն:



## ԸՆԿՐՈՒՅՑՎԱՆ ՄԱՔԻՄ ՏԻԳՐԱՆԻ (1929-...)

Մարսիլ Տիգրանի Ծահմուրադյան (ծնվ.՝ 1929, Հին Թաղեր - մահ.՝ Երևան), վիրաբույժ, բժշկական գիտությունների թեկնածու (1969):

Ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: 1946թ. ընդունվել և կարմիր դիպլոմվ ավարտել է Ստեփանակերտի բժշկական ուսումնարանը: 1948թ. ընդունվել է Երևանի բժշկական ինստիտուտը: Երկար տարիներ աշխատել է մայրաբանաբի մի շարք բժշկական իհմնարկներում: Աշխատել է նաև Հայորութի շրջանային հիվանդանոցում: Հեղինակել է բազմաթիվ բժշկական հոդվածներ և աշխատություններ:



## ԸՆԿՐՈՒՅՑՎԱԿ ՅՈՒՐԻ ԱՎԱՆԵՍԻ (1942)



Յուրի Ավանեսի Ծահմուրադյան (ծնվ.՝ 1942՝ իհմբարեցու ընտանիքում), խորհրդային ազգայի ընթիւնիչ, աշխարհի (1970), Եվրոպայի (1966, 1967, 1969), ՍՍՀՄ (1967-1970, 1972) շեմպինն, մարզիչ, ՍՍՀՄ սպորտի վաստակավոր վարպետ

(1970), ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ (1973), մանկավարժական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր, Դաստանի ԽՍՀՄ մշակույթի վաստակավոր գործիչ (1969):

6 տարեկանում ընտանիքի հետ տեղափոխվել է Օրջոնիկիձե, մկնել գրադարանի ազգայի ընթացամարտով: Տարունակել է գրադարանի ընթացամարտով Սախաչկալյանի ԽՍՀՄ վաստակավոր մարզիչ Արմենակ Կարապետյանի հեկավարությամբ: 1966-1972թթ. հանդես է եկել ԽՍՀՄ ազգային հավաքականի դրոշի ներքո: 1968թ. մասնակցել է Մեխմիլոյի Օլխամիական խաղերին: 1968թ. ավարտել է Դաստանի պետական համալսարանը, 1980թ.՝ Մոսկվայի կուսակցական բարձրագույն դպրոցը: 1972-1981թթ. եղել է ազգայի ընթացամարտի ՍՍՀՄ հավաքականի գիտավոր մարզիչ, 1981թ.-ից՝ ՍՍՀՄ Պատգամավորների խորհրդին առընթեր ֆիզիկական մշակույթի և սպորտի կոմիտեի մենամարտային մարզաձևերի վարչության պետի տեղակալ:



## ԸՆԿՐՈՒՅՑՎԱԿ ԱՍԼԵՄ ՄԻՔԱՅԵԼԻ (1877-1955)

Ավան Միքայելի Ծահմազարյան (ծնվ.՝ 1877, գ.Քյուրաբաղ - մահ.՝ 1955), պատմական գիտությունների թեկնածու (1947), հնագետ-դրամագետ:

Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղում: Ուսումը շարունակել է Շուշիի թեմական դպրոցում, որն ավարտելուց հետո ցանկություն է հայտնել խորանալու գյուղատնտեսության մեջ և օգնել հայ գյուղացնեն: Սակայն սոցիալական պայմանների սղության պատճառով նպատակին հասնել չի կարողացել: 1894-1897թթ. ընդունվել և ավարտել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանը: Երեք տարի դասավանդել է Շուշիի թեմական դպրոցում, հրավիրվել և չորս տարի դասավանդել Գևորգյան ճեմարանում: Այնուհետև մեկնել է Պետերբուրգ և ընդունվել տեղի համալսարանի Արևելյան լեզուների ֆակուլտետը: Ավարտել է համալսարանի դասընթացը, 1910թ. մեկնել Բելյին: Դարձել է համալսարանի դասախոսությունների ունկնդիր և միաժամանակ ծանորացել Բելյինի միջնակարգ դպրոցների ծրագրերին և դասավանդման մերության: 1914թ. փետրվարին վերադարձել է հայրենիք և մինչև 1918թ. դադիկային:



սավանդել Ներսիսյան դպրոցում: Այնուհետև նշանակվել է Թիֆլիսի Դուկասյան օրինորդաց դպրոցի տնօրեն: 1920թ. տեղափոխվել է Հայաստան, ապա՝ Պարսկաստան: Դասավանդել է Թեհրանի հայկական դպրոցներում: 1933թ. նորից վերադարձել է հայրենիք, աշխատանքի անցել Երևանի պետական բանգարանում: Միաժամանակ դասավանդել է Երևանի պետական համալսարանում, Պոլիտեխնիկական ինստիտուտում, ինչպես նաև՝ Էջմիածնի հոգևոր ճեմարանում: Դեկանարի է Դվինի պեղումները: Հեղինակել է «Բագրատունյաց նախարարական տոհմի ծագումը», «Արտաշատ», «Արմավիր» և այլ գիտական աշխատորքումներ:



## ԸԱՀՆԱԶԱՐՅԱՆ ՄԱՐԼԵՆ ՀԱՅՐՈՒՄ (1929)

Մարլեն Հայրումի Ծահմազարյան (ծնվ.՝ 1929, գ. Ազորի), 20-րդ դարի Արցախի լավագույն ուսուցիչ, հրապարակախոս, ԱզրևՍՀ մշակույթի վաստակավոր գործիչ (1976), Աշխատանքի փետերան:




Սկզբնական կրթությունը ստացել է տեղի յոթամյա դպրոցում: Ընդունվել և 1950թ. ավարտել է Շուշիի մանկավարժական ուսումնարանը: Աշխատանքի է անցել շրջանի Դոլանլարի Արևշատի յոթամյա դպրոցում՝ որպես դասավար: 1951-1954թթ. ծառայել է խորհրդային բանակի շարքերում: 1954-1963թթ. դասավանդել է Քարոզայի (Այգեստան), Սեհրիշենի (Լուսաձոր) և Խրամորի դպրոցների տարրական դասարաններում: 1962թ. ավարտել է Երևանի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: 1963թ. նշանակվել է Ասկերանի շրջանի Քարագլխիսի 8-ամյա դպրոցի տնօրեն: 1970թ. ընտանիքով Քարագլխիսից տեղափոխվել է Ստեփանակերտ, աշխատանքի անցել մարզկենտրոնի պրոֆետեխնումնարանում՝ նախ որպես դաստիարակ, ապա՝ ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով փոխտնօրեն: 1978-1992թթ. աշխատել է Ստեփանակերտի թիվ 9 միջնակարգ դպրոցում՝ որպես ուսմանքար, արտադասարանական և արտադպրոցական աշխատանքների գծով փոխտնօրեն, պատմության ուսուցիչ: 1995-2008թթ. Խրամորի և Իվանյանի միջնակարգ դպրոցներում դասավանդել է պատմության և իրավունք: Ստեղծել է «Հետաքրքիր հանդիպումների ակումբ» (ՀՀԱ), որի պատվավոր

հյուրերն են եղել գրողներ, ժողովրասաններ, աշխատանքի հերոսներ, արվեստի գործիչներ և այլն: Հարազատ քաղաքի պատմությունը հավերժացնելու նպատակով ստեղծել է «Մեր քաղաքի հուշարձանները» ալբոմը: 12 տարի դեկավարել է դպրոցի «Արձվիկ» աշխատանքային ճամբարը Աստղաշեն գյուղում: Հանձնարկել է տարիվա լավագույն պատմության ուսուցիչ (2000թ.): Թոշակի անցնելուց հետո էլ շարունակել է գիտամանկավարժական գործունեությունն Ասկերանի միջնակարգ դպրոցում և Ուսուցիչների կատարելագործման ինստիտուտում: Մեծ ներդրում է ունեցել պատմության և աշխարհագրության առարկաների թեմատիկ պլանների մշակման քյուն և աշխարհագրության առարկաների թեմատիկ պլանների մշակման գործում: Հեղինակել է 2000-ից ավելի թրակցություններ և հոդվածներ: 2019թ. պարզևատրվել է «Վաշագան Բարենպաշտ» մեջալով: Եղել է Արցախյան շարժման գաղափարակիր:



## ԸԱՄԻՐՅԱՆ ԱՐԹՈՒՐ ԱՐԱՄԻ (1960)

Արթուր Արամի Ծամիրյան (ծնվ.՝ 1960, գ. Տումի):



1977թ. ավարտել է Տումու միջնակարգ դպրոցը: Ուսումը շարունակելու նպատակով տեղափոխվել է Երևան: Սկզբնական շրջանում աշխատել է Երևանի ավտոպահեստանակերի գործարանում: 1979-1981թթ. ծառայել է խորհրդային բանակի շարքերում: Ծառայությունից վերադարձնալով ընդունվել է Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: 1987թ. անցել է աշխատանքի Հայրութի շրջանում, որպես ավագ քննիչ: Մասնակցել է Արցախյան շարժմանը և նարսական գործողություններին: Պատերազմից հետո աշխատանքի է անցել ԼՂՀ պաշտպանության նախարարությունում: 1999թ. շարունակել է ծառայությունը ռազմական ոստիկանության վարչությունում, եղել Ստեփանակերտի բաժնի հետաքրքիր համար պետ, ուսումնական ոստիկանության մայորի կոչումով անցել է թռչակի: Աշխատում է ԱՀ Փաստարանական պալատում՝ որպես փաստարան:



## ԾԱՐԱՅԻՆ ՍԵՐԳԵՅ ՄԱՍՎԻԿԻ

(1974-2020)

Սերգեյ Սլավիկի Շաքարյան (ծնվ.՝ 1974, գ.Այգեստան - մահ.՝ 2020, Արցախ), Արցախի ՊԲ զնդապետ, Արցախի հերոս (2020):



Սովորել է Հաղորդիքի Մ.Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցում: Ուսումը շարունակել է Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումում: Մակայն ուսումն անվարտ է բռնկել և վերադարձել Հաղորդ՝ 17 տարեկանում կամավորագրվել ազատազրական պայքարին և միացել հորը: Վերջինս գոհվել է 1993թ. ակամի պայքարում: Ս.Շաքարյանը մասնակցել է Արցախյան երրորդ պատերազմին: Լինելով հմուտ հրամանատար, կասերել է աղքեցանական զինուժի բազմարիվ տանկային և հետևակային գրոհներ՝ հակառակորդին պատճառելով մեծարիկ կորուստներ: Հարցին, թե հնարավո՞ր է հակամարտության խնդիրը բանակցությունների միջոցով լուծվի՝ գնդապետը պատասխանել էր, թե ինքը խոսքով քննամուն ոչինչ ասել չի կարող, այլ միայն գենրով ու իր ստորարաժանման գործողություններով:

Արժանացել է «Ուսկե արծիվ» շքանշանի:



## ՉԱՐՄԱԶՈՎ ՍԱՄՎԵԼ ԼԵՎՈՆԻ

(1931)

Սամվել Լևոնի Չարմազով (ծնվ.՝ 1931, գ.Մեծ Թաղեր), հասարակական գործիչ:



1950թ. ավարտել է Վարանդայի ուսուական դպրոցը: 1951թ. ընդունվել է Բարձի Կ.Մարքսի անվան ժողովածուստույքան ինստիտուտի «Ֆինանսներ» բաժինը: Աշխատանքի է անցել ԼՂՄ ֆինանսական ոլորտում, զբաղեցրել տարբեր պաշտոններ. եղել է Մարտակերտի և Ստեփանակերտի ֆինքածնների ավագ տեսուչ, Ստեփանակերտի քաղործկոմի ֆինքածնի պետ: 1973-1987թթ. աշխատել է որպես ԼՂՄ պետրանկի կառավարիչ, 1988-1993թթ.՝ ԼՂՀ Պետրանկի պետ: 1993թ. Շուշիի շրջանի պաշտպանության:

կոմիտեի պահանջով նշանակվել է Շուշիի շրջանի Ազրորբանկի վարչության կառավարիչ: Պարգևատրվել է պատվորերով և մեդալներով:



## ՉՈՓՉՅԱՆ ԵՂԻՉԵ ՍԻՄՈՆԻ

(1939)

Եղիշե Սիմոնի Չոփչյան (ծնվ.՝ 1939, գ.Մեծ Թաղեր):

Սովորել է Մեծ Թաղերի միջնակարգ դպրոցում: Դպրոցն ավարտելուց հետո գորակուչվել է խորհրդային բանակ, 3 տարի ծառայել Ուկրաինայում: Ընդունվել և 1946թ. ավարտել է Բարձի հասովկ ուղիկանական վարժարանը: Աշխատանքի է անցել Շահումյանի շրջանային ոստիկանության բաժնում: Երկու տարի ծառայելուց հետո տեղափոխվել է Հաղորդիքի ոստիկանական բաժնի՝ որպես ավտոտեսուչ, այնուհետև՝ տեղամասային տեսուչ: 1973-1977թթ. աշխատել է որպես պետական գույքի հափշտակնան դեմ վարչության տեսուչ, 1977-1986թթ.՝ քրեական հետախուզության օպերատիվ բաժնումների պետ, 1986-1988թթ.՝ Հաղորդիքի ոստիկանական բաժնումների պետ: 1993-1994թթ. նորից անցել է ոստիկանապետի պաշտոնականատարի պաշտոնին: 1990-1992թթ. եղել է շրջանային սպառողական կոմիտեի նախագահի, 1992-1993թթ.՝ ավտոշարայան պետ: 1992-1994թթ. մասնակցել է Արցախյան պատերազմին՝ ոստիկանապետի պաշտոնականատարի պաշտոնում: 1994-1996թթ. աշխատել է որպես շրջանային սպառողական կոմիտեի նախագահ, 1996-1999թթ.՝ ոստիկանապետի տեղակալ՝ քրեական հետախուզության օպերատիվ բաժնումների պետ, 1999-2000թթ.՝ դատական նիստերի կատարածու: 2000թ. որպես թղթակառու անցել է ոստիկանական պահեստագորի շարքեր: 2009թ.-ից եղել է Հաղորդիքի շրջանի ոստիկանության վետերանների միության նախագահ, միաժամանակ, ԼՂՀ Ներքին գործերի վետերանների միության կոմիտեի անդամ: Պարգևատրվել է մի շարք գերատեսչական, խրախուսական շքանշաններով, մարտական ծառայության մեդալով: 1986-1987թթ. գերազանց աշխատանքի՝ հանցագործությունների ամբողջովին բացահայտած համար պարգևատրվել է դիպլոմով: 1964թ.-ից գրադարձել է նաև սամրո մարզաձևով: 10 տարի նաև անցել է Բարձի անցքաղության մրցումներին զբաղեցրել պատվավոր հորիզոնականներ:



## ՊԵՏՐՈՍՅԱՆ ԷԴՈՒԱՐԴ ՌՈՒԲԵՆԻ (1953)

Էղուարդ Ռուբենի Պետրոսյան (ծնվ.՝ 1953, գ. Ջյուրաբաղ), ԼՂՀ վաստակվոր մանկավարձ (2012):

1960-1970թ. սովորել է հայրենի գյուղի դպրոցում: Ավարտել է Երևանի պետական համալսարանը: 1981թ. աշխատանքի է անցել Հաղորդիք շրջանի կամավոր սպորտային ընկերությունում՝ որպես նախազափ: 1982թ. նշանակվել է Հաղորդիք շրջանային՝ պիոներ տան տնօրեն: 1986թ. աշխատանքի է անցել շրջանուղարքաժնում՝ որպես դպրոցական տեսուչ: 1988-1992թթ. եղել է Թաղասենի 8-ամյա դպրոցի տնօրեն: Մասնակցել է Արցախյան գյուղայքարին: 1992-1995թթ. ծառայել է ԼՂՀ պաշտպանության բանակում, և անցել Հաղորդիք գումարտակի հրամանատարի քաղաքով տեղակալ: 1995թ. նշանակվել է Հաղորդիք միջնակարգ դպրոցի փոխտնօրին, 1996թ.՝ տնօրեն: 2005թ. նշանակվել է Հաղորդիք շրջվարչակազմի կորպորյան բաժնի վարիչ: 2016թ. անցել է բոշակի:



## ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԻՏԱԼԻ ԷԴՈՒԱՐԴԻ (1984)

Վիտալի Էղուարդի Պետրոսյան (ծնվ.՝ 1984, ք. Հաղորդ), ԼՂՀ և ՀՀ Գրողների միության անդամ (2009):

2001թ. ավարտել է Հաղորդիք Մ.Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցը: Ավարտել է ԱրՊՀ բանակիրական ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» մասնագիտության հեռակա բաժնը: 2009-2012թթ. սովորել և ավարտել է «Գրիգոր Նաբեկացի» համալսարանի իրավագիտության բաժնը: Աշխատել է Հաղորդիք վարչակազմի «Դիզակ» շրջանային թերթում՝ որպես գրական աշխատող, ապա նշանակվել թերթի խմբագիր: Թողելելով լրագրությունը, 2015թ. աշխատանքի է անցել Բանաճորի դպրոցում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: 2005թ. ճանաչվել է «Արցախի լավագույն երիտասարդ գրող» մրցանակի: Հեղինակել է «Հորիզոնների սահմանագծում», «Զարե ստվերներ», «Պատերազմի դուռը» գրքերը:



## ՊԵՏՐՈՍՅԱՆ ՎԼԱԴԻՄԻՐ ԱՐԾԱԿԻ (1959)

Վլադիմիր Արշակի Պետրոսյան (ծնվ.՝ 1959, ք. Քարուն՝ հաղորդեցու ընտանիքում), հասարակական գործիչ, սոցիոլոգիական գիտությունների թեկնածու:



1980թ. ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: 1980-1981թթ. աշխատել է Նավի և օազի արտահանման «Կիրովնետու»-ի Բնակարանային և կրնունակ ծառայությունների համակարգում: 1983-1986թթ. եղել է Ս.Ս.Կիրովի անվան մշակույթի պալատի մշակութային բաժնի վարիչ, 1986-1987թթ.՝ Բարվի Կիրովի շրջանի թիվ 276 միջնակարգ դպրոցի արտադասարանային և արտադպրոցական կրթական աշխատանքի կազմակերպիչ, 1987-1988թթ.՝ Բարվի Կիրովի շրջանի թիվ 30 միջնակարգ դպրոցի տնօրեն, 1989թ.՝ Երևանի Վ.Վ.Մայակովսկու անվան թիվ 7 դպրոցի պատմության ուսուցիչ, 1989-1990թթ.՝ Հայաստանի Կոմկուտի Սպիտակի շրջանային կոմիտեի Սպիտակ քաղաքի կազմակերպչական բաժնի հրահանգիչ: 1990-1999թթ. դեկանակարել է Հայաստանի սոցազ նախարարության կենսաբոշակառների սոցիալական ծառայությունների կենտրոնը, 1999-2003թթ.՝ Սոսկայի մարզի բնակչության սոցիալական պաշտպանության կոմիտեի Կորուպվակու անվան նյարդահոգերուժական գիշերօրիկ դպրոցը: 2003-2004թթ. եղել է Սոսկայի Արևնտյան վարչական շրջանի բնակչության սոցազատանության վարչության պետ, 2004-2007թթ.՝ Սոսկայի քաղաքային բնակչության սոցազատանության վարչության պետի տեղակալ, 2007-2010թթ.՝ Սոսկայի քաղաքային բնակչության սոցիալաշտապանության գործադիր պետականի պետականի: 2013թ. նշանակվել է Սոսկայի կառավարության բնակչության սոցազ ոլորտի նախարար: Արժանացել է մի շարք պարգևների՝ ԽՍՀՄ ՊՆ ոսկմական շինարարության գերազանցության, ՌԴ Առողջապահության և սոցիալական զարգացման նախարարության պատվոգրերի, «Գերազանցություն սոցիալական և աշխատանքային ոլորտում», Երախտագիտություն Սոսկայի քաղաքապետից և այլն:



## ՊԵՏՐՈՍՈՎ ՀՕՎՀԱՆՆԵՍ

(1781-...)

Հովհաննես Պետրոսով (ծնվ.՝ 1781, գ.Թաղասեն), ռազմական գործիչ։ Պատաճի Հովհաննեսը գերի է ընկել Արցախ արշաված պարսիկներին և վաճառվել եզիպտական թեյքին։ Մանլութերը իրենց այրումին համալրում էին հատուկ ռազմական դաստիարակություն ստացած հավատափոխ քրիստոնյաներով։ Նման դաստիարակություն է ստացել նաև Դիգակի Հովհաննեսը։ 1798թ. լրել է հեծելազորը, միացել Եզիպտոս ներխուժած Նապոլեոնի բանակին, մասնակցել նրա հետագա արշավանքներին։ Արժանացել է «Պատվո լեգեոն» շքանշանի։ 1813թ. գորացրվել է և անցել բոշակի։ 1816թ. դիմել է Ալեքսանդր I-ին, ստացել հայրենիք վերադառնալու բռնլիւթյուն և վերահաստատվել Դիգակի հայրենի Թաղասեռ զյուղում։ Եղել է 1826-1828թթ. ռուս-պարսկական պատերազմի կամսվոր մասնակից։ 1841թ. դիմել է Կովկասի կայազորի հրամանատար Գոյովինին իրեն բոշակի նշանակելու մասին խնդրանքով, որը բավարարվել է։ Ապրել է Թաղասեռում, ունեցել մեծ կալվածք, որն անցել է նրա ժառանգներին։



## ՊՈՂՈՍՅԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ

(1929-...)

Ալեքսանդր Պողոսյան (ծնվ.՝ 1929, գ.Էղվար՝ Ուխտաձոր), ԼՂՀ վաստակավոր մանկավարժ (2010)։

1947թ. ավարտել է ծննդավայրի միջնակարգ դպրոցը։ Ընդունվել և ավարտել է Ստեփանակերտի մանկավարժական երկանյա ինստիտուտի բնագիտաշխարհագրական ֆակուլտետը։ Ծառայել է Խորհրդային բանակի շարքերում։ Երկար տարիներ աշխատել է Ուխտաձորի միջնակարգ դպրոցում՝ որպես ուսմանավար և տնօրին։ Զուգահեռաբար ընդունվել և 1963թ. հեռակա կարգով ավարտել է Երևանի Խ.Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտի քիմիա-կենսաբանության ֆակուլտետը։ Մասնակցել է դպրոցական և գյուղի հասարակական կյանքին։

Ստացել է «Ավագ ուսուցիչ» կոչում։



## ՊՈՂՈՍՅԱՆ ԱՐՏԱՇԵՍ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ

(1922-1997)

Արտաշես Ալեքսանդրի Պողոսյան (ծնվ.՝ 1922, գ.Խնձարեղ - մահ.՝ 1997, Երևան), բանաստեղծ, արձակագիր, բարգմանիչ, ԽՍՀՄ գրողների միության անդամ (1954)։

1942-1946թթ. ծառայել է Խորհրդային բանակում, մասնակցել Հայրենական մեծ պատերազմին։ 1946թ. աշխատել է Բարվի «Կոմունիստ» (հայերեն) թերթի խմբագրությունում, ապա հայրենի Խնձարեղ գյուղում։ 1953թ. ավարտել է Երևանի պետական համալսարանը, 1960թ.՝ Սոսկվայի Գորկու անվան գրականության ինստիտուտը։ Մինչև 1967թ. աշխատել է «Հայֆիլմ» կինոսուսություն՝ որպես ավագ խմբագիր, 1967-1971թթ.՝ ՀԽՍՀ նախարարների խորհրդի մամուլի պետական կոմիտեի բաժնի փարիչ։ 1971-1975թթ. եղել է «Հայաստան» հրատարակչության մանկապատանեկան գրականության խմբագրության փարիչ։ Ուստեղն հրատարակել է «Բախտը դժվար է տրվում» (Սոսկվա, 1966), «Հիմն հողի և արևի» (Սոսկվա, 1975) գրքերը։ Նրա բանաստեղծություններին բնորոշ են քնարականությունը, հայրենասիրական, քաղաքացիական շտանը։ Հեղինակել է «Փորորկից հետո», (1955), «Բախտը դժվար է տրվում», (1967), «Կապույտ հանգրվան», (1972), «Հիմն հողի և արևի», (1975), «Հորովել», (1980), «Բանաստեղծություններ և պոեմներ», (1983) ժողովածուները, «Հրաժեշտ անցյալին» (1978) վեպը։ Թարգմանել է Պարլ Ներսուրյանի, Ալեքսանդր Տվարդովսկու, Ալեքսանդր Բլոկի, Պետրոս Անդրեոսի, Լուչեզար Ստանչևի, Ռասու Հաճառովի ստեղծագործությունները։



## ՊՈՂՈՍՅԱՆ ՄԻՔԱՅԵԼ ԱՍԼԱՆԻ

(1956)

Միքայել (Միխայիլ) Ասլանի Պողոսյան (ծնվ.՝ 1956, Սոսկվա) (արմատներով Հայոցուի շրջանի Ազու գյուղից Ավան Պողոսյանի ընտանիքում, մայրը Շուշիից էր), ավիակոնսուրուլուտոր, Սոսկվայի ավիացիոն ինստիտուտի ուկտոր (2016),



տեխնիկական գիտությունների դոկտոր (2002), պրֆեսոր, ՌԴԱ ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ (2011):

1979թ. գերազանցությամբ ավարտել է Սովորական ավիացիոն ինստիտուտի ինքնարդուաշխնորյան ֆակուլտետը: Աշխատանքի է նշանակվել Մոսկվայի Պ.Օ.Սոլյոսի անվան ավիաշխնական գործարանում՝ որպես ինժեներ-կոնստրուկտոր: Մինչև 1992թ. նոյեմբեր գործարանում և Պ.Օ.Սոլյոսի անվան կոնստրուկտորական բյուրոյում դարձել է գիլավոր կոնստրուկտոր առաջին տեղակալ և այդ պաշտոնը վարել մինչև 1998թ.: 1995թ. եղել է նաև նոյեմբեր կազմակերպության տնօրենների խորհրդի քարտուղար, 1999թ.-ից՝ գիլավոր տնօրեն: 2003թ.-ից արտադրող գործարաններն ընդգրկող կոնցենտր Պողոսյանի դեկավարությամբ դարձել է աշխարհում ճանաչված միավորում: Մ.Պողոսյանի դեկավարման տարիները նշանակալից են նաև ուսական իրականության համար բացառիկ նախագծերի սկզբնավորմամբ: Նախաձեռնել է ընկերության համար բոլորովին նոր մարդատար ինքնարդի ստեղծման գործընթաց: Ներկայումս կոնցենտր կազմում աշխատում է շուրջ 30 000 բարձրակարգ մասնագետ: 2007թ. ընտրվել է ուսական «Ավիաշխնական միավորված ընկերության» դեկավարի առաջին տեղակալ, 2008թ.՝ համատեղության կարգով նշանակվել նաև «Սոլյոսի» հիմնական մրցակից «ՄիԳ» կոնցենտր գիլավոր տնօրեն:

Հեղինակել է 14 գիտական աշխատանք, 11 հայտնագործություն: Դեկավարել է Սոլ-21 «քիզիս-դասի» գերճայնային ուղևորատար ինքնարդի և Սոլ-47 թիվ հակադարձ սլաքածնությամբ ոմքակոծիչի նախագծման աշխատանքները: Լինելով ուսական «Ավիաշխնական միավորված ընկերության» նախագահը, միաժամանակ դեկավարում է նաև երկու առանձին խոշոր կոնցենտր: Արժանացել է ՌԴ պետական մրցանակի (1997), ՌԴ կառավարության մրցանակի (1998), «Պատվո նշան» շքանշանի:



## ՊՈՂՈՍՅԱՆ ՎԻՏԱԼԻԿ ԳՐԻԳՈՐԻ (1955)

Վիտալի Գրիգորի Պողոսյան (ծնվ.՝ 1955, գ.Ազոլի), գնդապետ:

Ավարտել է Ազոլի միջնակարգ դպրոցը: 1972թ. ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հայոց լեզվի և գրականության ֆակուլտետը, ավարտել 1976թ.-ին: Ուղեգործ երեք



տարի աշխատել է Ազրեջանի Խամայիի շրջանի Ռշանի Ռշանի գյուղում: Ուղեգործ ժամկետը լրանալոց հետո 1979թ. տեղափոխվել է Հայրենի շրջան և նշանակվել Դրամստիլի 8-ամյա դպրոցում որպես ուսուցիչ: 1983թ. նշանակվել է նոյն դպրոցի տնօրեն, այնուհետև միջնակարգ դպրոցի տնօրեն:

1987թ. տեղափոխվել է Ազոլի միջնակարգ դպրոց, նշանակվել տնօրեն, աշխատել մինչև 1992թ.: Ուսումնա-դաստիարակչական պրոցեսը կապացել է արտադրական գործունեության հետ: Դպրոցի ուսումնա-փորձական հողամասում կառուցել է ջերմոցային տնտեսություն, ինմենց պուլատու այգի, մատրեկ տրակտորի և մերենայի ուսուցման գործ, աշակերտների մասնակցությամբ ստացել բանջարա-բուսաբանային առատ թերթ: 1988թ.-ից ակտիվորեն ներգրավվել է Ղարաբաղյան շարժմանը: 1992թ. եղել է ինքնապաշտպանական ջոկատներից մեկի հրամանատար, ապա՝ գումարտակի գնդի հրամանատարի բաղդաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ: Պատերազմի պարտից հետո շարունակել է ծառայությունը: 2000-2006թթ. եղել է ՊԲ հյուսի-արևելյան ուղղությամբ տեղակայված խոշոր միավորումներից մեկի հրամանատարը, այնուհետև Ի-ին ՊԾ հրամանատարի տեղակալ, Հաղորդում տեղակայված միավորման հրամանատարի տեղակալ: Չորացրվել է 2010թ.: Պարզեցրվել է մեղադրով, շքանշաններով:



## ԶԱՅՅԱՆ ԲՈԳԴԱՆ ՇԱՄԻՐԻ (1917-2010)

Բոգդան Շամիրի Զանյան (Օհանջանյան) (ծնվ.՝ 1917, գ.Տումի - մահ.՝ 2010, Երևան), բանաստեղծ, ԽՍՀՄ գրողների միուրյան անդամ (1940):

1938թ. ավարտել է Բարվի Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի բանափրական ֆակուլտետը: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: 1941 և 1945-1948թթ. եղել է Լեռնային Ղարաբաղի գրողների մարզային բաժանմունքի պատասխանատու քարտուղարը: 1954-1968թթ. աշխատել է «Խորհրդային Ղարաբաղ» թերթում, 1968թ.-ից՝ ՀԽՍՀ հեռուստատեսության և ռադիոհռորդության պետական կոմիտեում: Եղել է Լեռնային Ղարաբաղ Խորհրդային Հայաստանի Վերամիավորելու կապակցությամբ ԽՍԿԿ, ԽՄԴԽ,



Մու-ին 1965թ. հունիսին նամակ հղած 13 ճամաշված մտավորականների շարքում: Հրատարակել է «Իմ լուսաբացը» (1948), «ճամփաներ» (1957), «Իմ Երևանը» (1960), «Խաղաղ եզերքներ» (1963), «Ես մենակ չեմ» (1964), «ճանապարհ շարժմակվում եմ» (1965), «Լեռներն արձագանքում են» (1967), «Իմ մոտիկ հեռուն» (1968, 1977), «Կանչող հեռուներ» (1974) ժողովածուները, ինչպես նաև «Կյանքը հրացանի փողի տակ» (2001) հուշագրությունը: Եղել է քնարական շնչի բանաստեղծ, ում գործերի հիմքում մայր հայրենիքի ու ժողովոյի հավերժության հավատամքն է:



## ՍԱՀՎԿՅԱՆ ԲՎԿՈ ՍԱՀՎԿԻ (1960)



Բակո Սահակի Սահակյան (ծնվ.՝ 1960, Ստեփանակերտ՝ արվագետիկցու ընտանիքում), քաղաքական գործիչ, ԱՀ երրորդ նախագահ (2007 հուլիսի 19 - 2020 մայիսի 21), գեներալ-գնդապետ:

1977թ. ավարտել է Ստեփանակերտի թիվ 1 միջնակարգ դպրոցը: 1978-1980թթ. ծառայել է Խորհրդային բանակում: 1981թ. աշխատանքի է ընդունվել Ստեփանակերտի թիվ 9 արտադրա-մեխանիզատորական կոմբինատում, որպես փականագործ մեխանիկ: 1982-1990թթ. աշխատել է Ստեփանակերտ քաղաքի հիմնարկներում՝ վարելով տարրեր ընույթի աշխատանքներ՝ բանվորից մինչև նախակարարող: 1988թ.-ից հայտնի է որպես Արցախյան շարժման առաջամարտիկներից: 1990թ.՝ ննդգրկվել է Արցախի Ինքնապաշտպանության ուժերի շարժերում: 1992-1993թթ. եղել է Արցախի Ինքնապաշտպանության ուժերի կոմիտեի ղեկավարի թիկունքի գծով տեղակալ, 1993-1995թթ.՝ թիկունքի գծով շտաբի պետ, 1995-1996թթ.: ԱՀ ՊԲ հրամանատարի արտաքին հարցերով տեղակալ: 1996-1997թթ. գրադերել է ԱՀ ՊԲ 10-րդ լտենահրածագյին դիվիզիայի հրամանատարի թիկունքի գծով տեղակալի, 1997-1999թթ.: Հայաստանի ներքին գործերի և Ազգային անվտանգության նախարարի օգնականի պաշտոնները: 1999-2001թթ. եղել է ԱՀ ներքին գործերի նախարար, 2001-2007թթ.: ԱՀ Ազգային անվտանգության ծառայության նախարար: 2007-2020թթ. երեք ժամկետով պաշտոնավարել է որպես Արցախի Հանրապետության նախագահ: Մատուցած ծառայությունների համար պարզեատրվել է ՌԴ, ՀՀ, ԱՀ շրանցաներով ու մեղալներով:

## ՍԱՀՎԿՅԱՆ ԱՐՏԱՎԱԶԴ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ (1895-1939)

Արտավազդ Ալեքսանդրի Սահակյանց (ծնվ.՝ 1895, Հաղպատ - մահ.՝ 1939), պետական գործիչ:

1923-1925թթ. սովորել է Յա.Ս.Սվերդլովի անվան Կոմիտասական համալսարանում, 1931թ.՝ Քարվի Կարմիր պրոֆեսուրայի ինստիտուտի նախապատրաստական բաժնում, 1931-1933թթ.: Կարմիր պրոֆեսուրայի ագրարային բաժնում: 1916-1918թթ. ծառայել է ուսական բանակում: 1920-1921թթ. եղել է Ղարաբաղի և Զանգեզորի հեղլումների անդամ: 1922թ.-ից վարել է համամիութենական նշանակության ոլորտների աշխատանքները: 1925-1929թթ. աշխատել է ԼՂԻՄ ԿԿ(թ) մարզային կոմիտեում, դարձել կուսակցության մարզկոմի քարտուղար: 1930-1933թթ. եղել է Աղբքաջանի ԿԿ(թ) ԿԿ նախայական ազիտացիայի աշխատանքային բաժնի պետ: 1933-1934թթ. գրադերել է կովկասյան երկրների ՀԿԿ(թ) նշված բաժնի վարիչի պաշտոնը: 1934-1937թթ. ղեկավար պաշտոններ է վարել բաժնի վարիչի պաշտոնը: 1938թ. վարել է ՀԽՍՀ հողագործության ժողովնախարիստը: 1938թ. գրադերել է, 1939թ. դատապարտվել գնդակահարության: 1956թ. հետմահու արդարացվել է ԽՍՀ ԳԴ կողմից:



## ՍԱՐԳՍՅԱՆ ԱՐՄԵՆ ՑՈՒՐԻ (1968)

Արմեն Ցուրիի Սարգսյան (ծնվ.՝ 1968, գ. Պետքանց), բանասիրական գիտությունների թեկնածու (1998), դրոշման (2000), լեզվաբան, ԼՀՀ Գիտության վաստակավոր գործիչ (2016):

1983թ. ավարտել է տեղի ուրամյա, 1985թ.՝ Հայրությ Մ.Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցը: Ընդունվել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի լեզվագրական բաժնին: 1987-1989թթ. ծառայել է Խորհրդային բանակում, ծառայությունն ավար-



տեղուց հետո ընդգրկվել Լեռնային Ղարաբաղի պաշտպանական ջոկատ-ներում: 1992թ. ավարտել է Կիրովականի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի քաժանհունքը, 1996թ.: ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի նպատակային ասպիրանտուրան: 1996թ.-ից դասավանդում է Արցախի պետական համալսարանում: 1999-2011թթ. գրադեգրել է ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկանի պաշտոնը, միաժամանակ, 1998-2000թթ. ղեկավարել ՀՀ կառավարության առընթեր լեզվի պետական տեսչության ԼՂՀ մասնաճյուղը: 2011թ. նշանակվել է ԱրՊՀ գիտքարտուղար, 2012թ.: ԼՂՀ կրթության և գիտության փոխնախարար, 2018թ. հոկտեմբերի 5-ից Արցախի պետական համալսարանի ռեկտոր: Մասնակցել է Արցախում, Հայաստանում, Ռուսաստանում, Հոլանդիայում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում կազմակերպված մի շարք միջազգային գիտաժողովների: 2008թ. Ստեփանակերտում կազմակերպվել է միջազգային հայերենագիտական ուժերորդ գիտաժողովը: 2010թ. ԱրՊՀ ռեկտոր Ս.Վ. Դարյայանի հետ ԱրՊՀ-ում հիմնադրել է ազգագրական բանգարան՝ նվիրաբերելով իր անձնական հարուստ հավաքածուն: ԱրՊՀ ուսանողների օգնությամբ՝ ըստ «Հայերենի բարբառագիտական նյութերի հավաքման ծրագրի», կազմել է Ղարաբաղի բարբառագիտական նյութերի հավաքման ծրագրի», կազմել է Ղարաբաղի բարբառագիտական շուրջ քսան խոսքածքների վկայագրերը և հանձնել ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բարբառագիտական բաժին: Հեղինակել է մեկ տասնյակից ավելի գիտական աշխատություններ և ժողովածուներ, շորջ 60 գիտական հոդված: 2016թ. իրատարակել է «Արցախի բանահյուսությունը» գիրքը:

## ՍԱՐԳԱՅԻՆ ԳՈՒՐԳԵՆ ԼԵՎՈՆԻ (1927-1998)

Գորգեն Լևոնի Սարգսյան (ծնվ.՝ 1927, գ.Խորմանջուղ - մահ.՝ 1998),  
Սոցիալիստական աշխատանքի հերոս (1950):

1941-1965թթ. եղել է «Աշխատանք» կոլտնտեսության օդակավար, բիգադակավար, Բլուրանի Զկալովի անվան կոլտնտեսության պահեստապետ, 1965թ.՝ զյուլիստրիրովի գործողմի նախագահ: 1949թ. 4 հա խաղողայցոց ստացել է 47,8 տ խաղող: ԽՍՀՄ Գև հրամանագրով խաղողի ռեկորդային բերքի համար 1950թ. արժանացել է Աշխատանքի հերոսի կոչման: Ակտիվորեն մասնակցել է կոլտնտեսության, զյուղի, Հայրուրի և մարզի տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքին:

## ՍԱՐԳՈՅԵԱՆ ՀԱՅԿ ԱՈԼԱԿԻ (1917-...)

Հայկ Ասլանի Սարգսյան (ծնվ.՝ 1917, գ. Տումի-մահ.՝ Երևան):

Գյուղի դպրոցը ավարտելոց հետո սովորել է Հայոցութիւն մանկավարժական ուսումնարանուն, այնուհետև՝ Ստեփանակերտի գյուղտեխնիկում: 1936-1940թթ. աշխատել է որպես Հայոցութիւն մանաւարույց: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, արժանացել մարտական շրջանի անասնաբույժ: 1946-1956թթ. մասնագիտությամբ աշխատել է Տումի գյուղում և շրջկենտրոնում: Եղել է Հայոցութիւն մասնակի հրահանգիչ: 1956թ. տեղափոխվել է Երևան և անցել աշխատանքի Երևանի թիվ 2 շինուրեստում, որպես բաժնի պետի տեղակալ:

Տունու օգնության միուրյան հիմնադիրներից է, կազմվուրսուր մարտականից: Անմիջական մասնակցություն է ունեցել 1941-1945թ. պատերազմում գործադ տունացիների հուշաքանի կառուցմանը:



## ՍԱՐԳՍՅԱՆ ՀԱՅԿ ԴՈՒՐԱՍՏԱԲԻ (1917-....)

Հայկ Դուրսասանի Սարգսյան (ծնվ.՝ 1917, գ. Վաներ), հասարակական գործիչ:



գ.Վանք), Խաչիկ և Աղավնակ գյուղերում:

1932թ. ավարտել է Հայոց միջնակարգ դպրոցը: Ընդունվել է Հայոց մանկավարժական ուսումնարանը, ուսումը շարունակել Երևանի Խ.Աբրույանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում: Ուսմանը գրագիրով աշխատել է որպես Եղիքարդի միջնակարգ դպրոցի տնօւն: 1940թ. Վերադարձել է Արցախ, նշանակվել Հայոց մանկավարժական ուսումնարանի դասախոս, 1941թ.՝ ներկայացվել միջնակարգ դպրոցի տնօրենի պաշտոնին: 1941թ. կոմերիտմիուրյան շրջկոմի կողմից ընտրվել է առաջին քարտուղար: 1945թ. աշխատանքի է անցել Հայոց միջնակարգ դպրոցի երկրորդ քարտուղար: 1950թ. ընտրվել և շորջ տարը տարի Վերընտրվել է

որպես Սարտունու շրջկոմի առաջին քարտուղար: 1957թ. ընտանիքով տեղափոխվել է Մոսկվա՝ սովորելու ՍՍԿԿ-ի կից կուս, քարձրագույն դպրոցում: Ավարտելուց հետո տեղափոխվել է Հայրուր՝ զբաղեցրել շրջկոմի առաջին քարտուղարի պաշտոնը: 1966-1983թթ. պատասխանատու պաշտոններ է վարել Ժողովրդական Վերահսկողության մարզային կոմիտեում, մարզխորհրդի աշխատանքի և սոցիալական հարցերի վարչությունում: 1983թ. անցել է բռշակի: Արժանացել է մեդալների, շքանշանի, գովասանագրերի: Քաղմից ընտրվել է հանրապետական, մարզային և շրջանային խորհուրդների պատգամավոր: Իր ողջ աշխատանքային գործունեությունը նվիրել է Լեռնային Ղարաբաղի, առավել շատ՝ հարազատ Հայրուրի շենացմանը:



### ՍԱՐԳՍՅԱՆ ՄԱՆՎԵԼ ԱՐՄԱՎԻՐԻ (1955)

Մանվել Արմավիրի Սարգսյան (ծնվ.՝ 1955, Հայրուր), Արցախյան շարժման գործիչ, «Ղարաբաղ» կոմիտեի հիմնադիրներից:

1978թ. ավարտել է Բարձր ինժեներա-շինարարական ինստիտուտը: Ծառայել է Խորհրդային բանակում: 1983-1988թթ. եղել է Հայաստանի նախարարների խորհրդին կից պատմամշակութային հուշարձանների պահպանման վարչության ավագ գիտաշխատող: 1992թ. նշանակվել է ԼՂՀ մշտական ներկայացուցիչը Հայաստանում: Մասնակցել է Արցախյան հարցի կարգավորման բանակցություններին: Արցախը ներկայացրել է տարբեր միջազգային հանդիպումներում: Թերթերում, ամսագրերում հրատարակել է հոդվածներ՝ նվիրված Արցախյան հարցի կարգավորմանը:



### ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԻԲԵԿ (ՍԱՐ) ԷԴՈՒԱՐԴԻ (1981)

Սարիբեկ (Սար) Էդուարդի Սարգսյան (ծնվ.՝ 1981, Հայրուր), բարիտոն:

Նախնական երաժշտական կրորությունը ստացել է ծնննավայրի Կոմիտասի անվան երաժշտական դպրոցում: 2002թ. ավարտել է Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանի վոկալ բաժնը, 2007թ.՝ Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի վոկալ բաժնը, 2008թ.՝ Երևանի պետկոնսերվատորիայի ասսիլիանուրան: Ունեցել է միշտ համերգներ և մենահամերգներ՝ Արցախում, Հայաստանում, Ռուսաստանում, Ուկրաինայում, Վրաստանում, Բուլղարիայում, Լեհաստանում, Խուալիայում, ԱՄՆ-ում, Չինաստանում, Լիսբանում, Իսպանիայում և այլուր: Մենահամերգային ելույթներով մասնակցել է «Պոլոնիա Կանտան» և «ԱրտՊարկ» արվեստի փառատոններին (Լեհաստան 2016, 2017): Որպես մեներգի համագործակցել է Արցախի պետական «Վարարակն» (Դրժ. Ն. Գրիգորյան), «Մոռակած» (Դրժ. Մ. Մեսրոպյան) և Շուշիի «Վարանդա» (Դրժ. Զ. Ջեշիջյան) երգչախմբերի, ինչպես նաև Արցախի պետական կամերային նվազախմբի հետ (Դրժ. Գ. Մուրադյան): Նրա երգացանկում ընդգրկված են հայ, ռուս և եկորապահի կոմպոզիտորների ստեղծագործություններ: Ակադեմիական ելույթներին գույքահեռ համերգային գործունեություններում նաև հատրադային ժամանակաշրջանում մասնակի մասնակիությունը աճել է: 2012թ. իրատարակել է անդրանիկ «Կարոտ» ձայնասկավառակը:



### ՍԱՐԳՍՅԱՆ ՍԱՐԳԻՍ ԴՈՒԼԻՒ (1916-...)

Սարգիս Դուլիի Սարգսյան (ծնվ. 1916, գ. Կարմրակում), 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ:

1925թ. ընտանիքի հետ տեղափոխվել է Բաքու: Սովորել և 1935թ. ավարտել է Բաքվի թիվ 4 հայկա-



կան միջնակարգ դպրոցը: Ընդունվել և 1941թ. ավարտել է Սոսկվայի Լոմոնտոսովի անվան համալսարանի մեխանիկամաթեմատիկական ֆակուլտետը: Աշխատանքի է անցել Շուշիի, հետագայում՝ Ստեփանակերտի երկամյա ուսուցչական ինստիտուտում՝ որպես ֆիզիկամաթեմատիկական ամբիոնի դասախոս: 1942թ. գորակոչվել է ԽՍՀՄ քանակ, մինչև Հայրենական պատերազմի վերջը եղել գործող գորամասում՝ որպես ականանետային գումարտակի հրամանատար: Չորացրվելուց հետո՝ 1946-1947թթ. ուս. տարում, աշխատել է հայրենի գյուղի դպրոցում, 1947-1948թթ.՝ Հաղորդի միջնակարգ դպրոցում: 1949-1953թթ. դասախոսել է Ստեփանակերտի երկամյա ուսուցչական ինստիտուտում՝ որպես ֆիզմաթ ամբիոնի դասախոս: Միաժամանակ ֆիզիկա և գծագրուրյուն է դասավանդել Ստեփանակերտի թիվ 1, 2, 3 և 8 միջնակարգ դպրոցներում: 1953թ.՝ Ստեփանակերտի երկամյա ուսուցչական ինստիտուտի լուծարմանց հետո, աշխատանքի է անցել Ստեփանակերտի գյուղատնտեսական տեխնիկումում՝ դասավանդել ֆիզիկա, մարենատիկա, տեխնիկական մեխանիկա և գծագրուրյուն: Արժանացել է բազմաթիվ շքանշանների և մեդալների:



## ՍԱՐԳՍՅԱՆ ՍԵՐԺ ՍԵԳՐԱԿԻ (1952)



Սերժ Սեղրակի Սարգսյան (ծնվ.՝ 1952, գ.Թարուտ), հասարակական գործիչ:

Ավարտել է Տողի միջնակարգ դպրոցը: 1969թ. ուսումը շարունակել է Երևանում: Բարձրագույն կրթուրյուն ստանալուց հետո վերադարձել է Արցախ: Աշխատանքի է անցել ԼՂՄՄ վիճակագրական վարչությունում, նշանակվել Հաղորդի շրջանի վիճակագրական ծառայության պետ: Այնուհետև դիմավարել է Հաղորդի շրջանի սպառընկերությունը: Աշխատել է Հաղորդի «Լենինի» անվան խաղողագործական սովորությունը՝ որպես գլխավոր տնտեսագետ: Արցախյան շարժման ակտիվիստներից է: Եղել է շրջկենտրոն Հաղորդում ստեղծված ինքնապաշտպանական ջոկատի հրամանատար: 1995թ. նշանակվել է Հաղորդի շրջվարչակազմի դեկան: 1998թ.-ից աշխատել է շրջանի և հանրապետության այլ բնակավայրերի ֆինանսական և հարկային մարմիններում:

## ՍԱՐԴԱՐՈՎ ՍԵՐԳԵՅ ԱՐՇԱԿԻ (1909-1987)

Սերգեյ Արշակի Սարդարով (ծնվ.՝ 1909, գ.Ազոխ - մահ.՝ 1987, Մինսկ, Բելառուսիա), ավիացիայի գեներալ-գնդապետ (1965):

Նրա բազմազավակ ընտանիքը (7 երեխա) ապրուսոր հոգալու համար տեղափոխվել է Բարս: 1918թ. քաղաքացիական պատերազմի արյունավետ իրադարձություններից վրկելու համար, հայրը Բարվից ընտանիքը տեղափոխվել է Տաշրեն: 1921թ. ավարտել է թիվի միջնակարգ դպրոցը: 1921թ. եղել է փականագործի աշակերտ, Տաշրենի արիեստանոցներում աշխատել որպես փականագործ: Սովորել է Մոսկվայի մեխանիկա-մեքենաշինական ինստիտուտում: 1933թ. ավարտել է Լենինգրադի օդաչուական դպրոցը, 1952թ.՝ ԽՍՀՄ ԶՈՒ ԳԸ ռազմական ակադեմիան: 1934թ. ծառայել է Հեռավորարևելյան հատուկ բանակում, եղել գրոհային ավիացիոն էւկապրոնի օդակի, դասակի, 1936թ.-ից՝ ջոկատի հրամանատար: 1938թ. նշանակվել է էւկապրիիայի, 1939թ.՝ կործանիչ ավիագնդի զինկում, 1940թ.՝ կործանիչ ավիագնդի հրամանատար: 1942թ. իր գիխավորած կործանիչ ավիագնդով պաշտպանել է Արխանգելսկը, Կատրախանը, Գրոզնին, Միներալնին Վոլին: 1944թ. ավիագունդը մասնակցել է Թամանյան թերակղզու, Ղրիմի ազատագրմանը, Օդեսան պաշտպանել օդային հարձակումներից: 1944թ. Վերջին նշանակվել է կործանիչ ավիացիոն դիվիզիայի հրամանատարի տեղակալ, 1945թ. մասնակցել Ռումինիայի ազատագրմանը: Հետպատերազմյան տարիներին վարել է պատասխանատու պաշտոններ, մինչև 1950թ. եղել ավիացիոն դիվիզիայի, 1952-1956թթ.՝ ավիացիոն միավորման հրամանատար: Մինչև 1971թ.՝ գորացրումը, եղել է ՀՕՊ ռազմական հրամանատարական ակադեմիայի պետի տեղակալ: Ընտրվել է ԽՍԿԿ 22-րդ և 23-րդ համագումարների պատվիրակ: Պարզւատրվել է Լենինի, Կարմիր դրոշի 2-րդ, Կարմիր աստղի 3-րդ, Հայրենական պատերազմի 1-ին աստիճանի շքանշաններով:



## ՍԱՖԱՐՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ ԱՍՏԱՏՈՒՐԻ (1915-...)

Գրիգորի Աստատուրի Սաֆարյան (ծնվ.՝ 1915, Բանագործ-մահ.՝ ...թարո):



Նախնական կրթությունը ստացել է զյուղում, այնուհետև ուսումը շարունակել Ծովիում: Տեղափոխվել է Բաքու, ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետը: 1936թ. աշխատել է Բանագործի միջնակարգ դպրոցում որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: 1942-1944թթ. եղել է Բանագործի միջնակարգ դպրոցի տնօրին: Տեղափոխվել է Չոքենատրոն և 1945թ. նշանակվել Հայոց դպրության բաժնի վարիչ: 1950թ. բնակություն է հաստատել Բաքվում և երկար տարիներ եղել է Բաքվի թիվ 152 հայկական դպրոցի տնօրինը:



## ՍԱՖԱՐՅԱՆ ԷԿՈՒԱՐԴ ԳՐԻԳՈՐԻ (1948-...)

Էղուարդ Գրիգորի Սաֆարյան (ծնվ.՝ 1948, գ. Հին Թաղեր- մահ.՝ ՌԴ):



Սովորել է Հին Թաղերի միջնակարգ դպրոցում: 1965թ. գերազանցությամբ ավարտել է դպրոցը: Ընդունվել և հաջողությամբ ավարտել է Բաքվի պետական մանկավարժական ինստիտուտի հայկական բանասիրական ֆակուլտետը: Հայոց լեզու և գրականություն է դասավանդել Շամախու Սադրասա և Սալյան գյուղերում: 1971թ. ընտրվել է Աղրլեմ Հայոց կոմերիտարքունի առաջին քարտուղար: Մի քանի տարի անց նշանակվել է Հայոց դպրության բաժնի վարիչ: 1987թ. նշանակվել է շրջանային խորհրդի նախագահի տեղակալ: Տեղափոխվել է ՌԴ Շերտկարի: Այնտեղ էլ կնքել է իր մահկանացուն:



## ՍԱՖԱՐՅԱՆ ՆԻԿՈԼԱՅ ՍԱՀԱԿԻ (1918-1990)

Նիկոլայ Սահակի Սաֆարյան (ծնվ.՝ 1918, գ. Կարմրակուճ - մահ.՝ 1990, գ. Բանաձոր):

Տարրական կրթությունը ստացել է հայրենի գյուղում, ավարտել Հայոց միջնակարգ դպրոցը: 1939թ. զորակոչվել է Խորհրդային բանակ: Մասնակցել է Երկրորդ աշխարհամարտին և Մեծ հայրենականին: 1942թ. ծանր վիրավորվել է Մոսկվայի համար մղվող մարտերում, կորցրել ոսքը: Զորացրվել է և վերադարձել Արցախ: 1943թ. ընդունվել է Բաքվի մանկավարժական ինստիտուտի թիմինարանական ֆակուլտետը: Երկու տարի աշխատել է Նախիջևանի Շահրուղի շրջանում, այնուհետև՝ Հայրության Շամձորի դպրոցներում: 1956թ. ընտանիքով տեղափոխվել է Բանաձոր և շուրջ 30 տարի բնիք և կենսարանություն դասավանդել տեղի միջնակարգ դպրոցում: Դպրոցամերձ անջրդի հողամասում երեք հեկտարի վրա հիմնել է խաղողի, պտղատու ծառերի այգիներ, որտեղ աշակերտները այգեգործության, բանջարաբուծության հմտություններ էին ստորոտ: Մոսկվայի ճակատամարտի հորելյանի առիվ հրավիրվել է հանդիսարքուններին, պարգևատրվել «Մոսկվայի պաշտպանության համար» մեդալով, արժանացել Մոսկվայի պատվավոր քաղաքացու կոչման:



## ՍԱՖԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ ՎԼԱԴԻՄԻՐԻ (1952)

Սամվել Վլադիմիրի Սաֆարյան (ծնվ.՝ 1952, գ. Կարմրակուճ), կուսակցական գործիչ:

Նախնական կրթությունը ստացել է հայրենի գյուղի դպրոցում, 1969թ. ավարտել Հայրության Մ.Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցը: Սովորել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի հեռակա բաժնում: Զրադիկ է մանկավարժությամբ, այնուհետև աշխատանքի անցել կոմերիտարքունի մարմիններում: 1977-1980թթ. եղել է Հայոց կոմերիտ շրջանային քարտուղար: Ապա աշխատել է ԿԿ Հայոց շրջանում՝ որպես հրահանգիչ, պրոպագանդայի և ազիտացիայի բաժնի վարիչ: Մինչև Արցախյան գոյապայրարք գրադերել է շրջապարներության նախագահի, մշակույթի շրջանային բաժնի վարիչի պաշտոնները: Ակտիվ մասնակ-

ցույքուն է ցուցաբերել գոյապայքարին: Եղել է զորամասի շտաբի պետ: Հետպատերազմյան տարիներին աշխատել է վարչակազմի դեկավարի տեղակալ, ապա կենսարոշակային հիմնադրամի տնօրին:



## ՍԱՅՎՈՎ ԵՓՐԵՄ ԶՈՒՄՇՈՒԴԻ (1906-1992)

Եփրեմ Զումշուդի Սաֆարով (ծնվ.՝ 1906, Հայրուր - մահ.՝ 1992, Երևան), էներգետիկ, տեխնիկական գիտությունների դրվոր (1951), պրոֆեսոր (1952), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1965):

1931թ. ավարտել է Մոսկվայի բարձրագույն ճարտարագիտաշխնարական ուսումնարամը: 1938-1990թթ. աշխատել է Երևանի Պոլիտեխնիկական հիմնադրությունում: 1938-1957թթ. եղել է ջրային էներգիայի օգտագործման, 1957-1978թթ. արդյունաբերական էկոնոմիկայի կազմակերպման և էներգետիկայի ամբիոնների վարիչը: Աշխատանքները վերաբերում են ջրաբամ, ջրատնտեսական, էներգատնտեսական հաշվարկի մեթոդներին, ջրատնտեսական համալիրներում կապիտալ ներդրումներին, էներգետիկայի ամբիոնների վարչությունը: Աշխատանքները վերաբերում են ջրաբամ, ջրատնտեսական, էներգատնտեսական հաշվարկի մեթոդներին:



## ՄԵՎՀԱՆ ԱՇՈՏ ՄՈՒԽԱՆԻ (1926-2016)

Աշոտ Մուխանի Աևյան (ծնվ.՝ 1926, գ.Մյուլյարա (Ջրաբերդ)- մահ.՝ 2016), վաստակաշատ մանկավարժ:

Միջնակարգ կրթություն ստանալուց հետո ընդունվել է Շուշիի մանկավարժական ուսումնարամը: Սոցիալական սույն պայմաններում կարողացել է և օգնել ընտանիքին, և շարունակել ուսումը: 1946թ.-ից սկսել է իր մանկավարժական գործունեությունը՝ որպես հայոց լեզվի և գրականության ուսուցիչ: Ստացել է նաև բարձրագույն կրթություն: Շուրջ 40 տարի դասավանդել է Հայրուրի շրջանի Խանձաձոր, Դոլանլար, Բանաձոր, Քարագլու, Զրաբերդ գյուղերի դպրոցներում:



## ԱՏԵՓԱՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ ՆԵՐՍԵՍԻ

(1925-1979)

Գուրգեն Ներսեսի Ստեփանյան (ծնվ.՝ 1925, գ. Թաղուտ-մահ.՝ 1979, գ.Թաղուտ):

Տաննից տարեկանում ծնողներից քարուն մեկնել է ռազմաճակատ: 1942թ. վիրավորվել է Կերչի համար մղվող մարտերում: Զորացրվել է և վերադարձել հայրենի գյուղ: Հեռակա կարգով ավարտել է Բարսի մանկավարժական ինստիտուտի աշխարհագրության ֆակուլտետը, ապա Երևանի Արովյանի անվան մանկավարժական ինստիտուտի բիմիայի ֆակուլտետը: Տողի ենթաշրջանում ծավալել է մանկավարժական և հասարակական լայն գործունեություն: Եղել է Տողի գյուղական խորիրդի նախագահ, տնտեսության կուսկոմիտեի քարտուղար: Մինչև 1979թ. հանդիսացել է Թաղուտի հիմնական դպրոցի տնօրենը: Նրա մանկավարժական գործունեությունը շարունակել են վեց զավակներից Բորիկը (դպրոցի տնօրեն), Լևոնը (դպրոցի տնօրեն), Սուսաննան (Ստեփանակերտի ֆիզմար դպրոցի տնօրեն):



## ԱՏԵՓԱՆՅԱՆ ԹԵՎԱՆ ԱՂԱԶՅԱՆԻ

(1892-1941)

Թևան Աղազյանի Ստեփանյան (ծնվ.՝ 1892, գ.Տումի - մահ.՝ 1941, Բաքու), պիտական, ռազմական գործիչ:

Սովորել է Թիֆլիսի ռազմական դպրոցում: Ծառայել է ցարական բանակում որպես վաշտի հրամանատար: Կարճ ժամանակում արժանացել է արձաբել մեղալի և պարզւատրվել տաս հարվածանի մատուցերով: Կովել է Արևմտյան, ապա՝ Կովկասյան ռազմաճականություն, ականատես եղել Հայոց ցեղասպանությանը, որը շատ ծանր է տարեկ: Փետրվարյան հեղափոխությունից հետո մասնակցել է ռուսական բանակում բռնկված հեղափոխական խոռոչությանը, արցախից և շամշադինից ճակատայինների հետ վերադարձել հարազատ գյուղ: Վերադարձին տեսնելով թուրք-բաքարների կողմից Զարուիխ ծորում սրախողիով արված՝ ռազմաճակատից սուն վերադարձող հարյուրավոր



արցախցի զինվորների դիակները, հայրենի Դիզակում քարբարոսների կողմից ավերված հայկական գյուղերը, լցվել է վրեժիսնդրությամբ: Առաջին աշխարհամարտի ավարտից հետո վերադարձել է հայրենի գյուղ, Դիզակի արևելյան գյուղերը բուրք-քարբարների հարձակումներից պաշտպանելու համար ստեղծել ջոկատ: 1920թ. ամռանը Կարմիր բանակի զորամասերի՝ Դիզակի գյուղեր ներխուժելու և Արցախ ներմուծված խորհրդային մարմնների օգնությամբ բռնազրավումների իրագործման ժամանակ Ստեփանյանն ընդուանում է, ձերբակալվում և բանտարկվում է: Սակայն կարողանում է փախչել բանտից և պայքար ծավալել տեղական բոշկիկյան և խորհրդային մարմինների ու Կարմիր բանակի զորամասերի դեմ: Նա սերտ կապեր է հաստատում Դրոյի և Գարեգին Նժդեհի հետ, նրանց հանճնարարաւրյամբ գրադպում Դիզակի հարավային սահմանները ամրապնդելու գործով: Նրան հաջողվում է ազատազրել Դիզակի և Վարանդայի շրջանները: 1921թ. անցնում է Զանգեզոր և միանում Նժդեհի ուժեղն: 1921թ. մայիսին տարազրվում է Պարսկաստան: 1941թ. նոյեմբերի սկզբին Պարսկաստանում ձերբակալվում է խորհրդային գործակալների կողմից, տարփում Բարու: ՊԱՀ-ի գնդապետ Էդվարդ Մարտիրոսյան՝ Թ. Ստեփանյանին ձերբակալող խմբի դեկավարը, գրում է, որ դատավարության վերջին օրը Թեևանը արյունոտված պիշակի գրաբանից հանելով մի փոքրիկ քանի պարզում է դեպի Մարտիրոսյանը և ասում. «Այս քանի մեջ ես պահում եմ մի բուռ հող, որը վերցրել եմ հայրենի Պարարադից: Այս բուռ հողը իմ սրտի մեջ պահում եմ քանի տարուց ավելի: Ես այս հողի համար եմ պայքարել, այս հողը հային պահելու համար են ինձ հետապնդել և օտարել իմ հայրենի Պարարադից: Այս հողը, իրքն սրբություն, որպես մեր քաջ նախնիների արյամբ ամրացած, կրել եմ մարմնիս վրա և ուժ ու եռանդ ստացել: Որտեղ էլ որ մեռնեի, իրքն պատզամ պիտի խնդրեի այս մեկ բուռ հողը շաղ տան գերեզմանիս վրա: Խնդրում եմ կատարեք իմ այս պատզամը...»: Թ. Ստեփանյանը դատապարտվեց գնդակահարության:



## ՍՏԵՓԱՆՅԱՆ ՍՈՒՐԵՆ ԱՎԱՆԵՍԻ (1912-1979)

Սուրեն Ավանեսի Ստեփանյան (ծնվ.՝ 1912, Հայրութ - մահ.՝ 1979, ք. Բերդյանսկ, Ռուսականա), Սոցիալիստական աշխատանքի հերոս (1976), Բերդյանսկ քաղաքի պատվավոր քաղաքացի (2002):

1927թ. աշխատանքի է անցել կրեկին (նավարարուում) -գործարանում՝ որպես օպերատորի օգնական: 1935թ. ավարտել է Ալբրեցանի Ազգաբեկովի անվան արյունաբերական ինստիտուտի երեկոյան բաժինը, ստացել նավիր և զագի վերամշակման տեխնոլոգի մասնագիտություն: Ավարտելուց հետո երիտասարդ ինժեներ-տեխնոլոգը աշխատել է նախ Օդեսայի, այնուհետև՝ Մոսկվայի կրեկինգ-գործարաններում: 1947-1979թթ. եղել է Օսիպենկովսկու թիվ 276 աղի գործարանի տնօրեն: Ընտրվել է Բերդյանսկի քաղաքացին խորհրդի պատգամավոր:



## ՎԱՆՅԱՆ ԱՐՓԻ ՑՈՒՐԻԻ (1977)

Արփի Ցուրիի Վանյան (ծնվ.՝ 1977, Հայրութ), լրագրող, սցենարիստ, ԼՂՀ գրողների միության անդամ:

1994-2011թթ. աշխատել է Հայրութի «ԴԻ-ԶԱԿ» թերթի խմբագրությունում: Նրա շնորհիվ թերթն անցել է համակարգչային շարվածքի ու ստացել նոր որակ: 1998թ. եղել է նոյյն թերթի խմբագրի տեղակալը: Նրա հոդվածներն ու գրական գործերը տպագրվել են ՀՀ և արտասահմանյան մամուլում: ՀԳՄ «Սուտը» մատենաշարով տպագրվել են նաև «Իմ քաժին լույս» գիրքը:

2009թ. Ուսասատանում տպագրել է «Հաջորդյան գաղտնիքը» գիրքը: Որպես սցենարիստ համագործակցել է Արմենիա TV-ի, Star media կինոթիվերթյան հետ: 2011թ.-ից աշխատել է Արմենիա TV-ում, Կենտրոն TV-ում, Հ1-ում՝ որպես «Ուր է իմ տղամարդը», «Մի սիր», «Երեք կյանք», «Դեպի



երազանք», «Խմբագրություն.am», «Երևի» սերիալների սցենարի հեղինակ: 2015-2018թթ. եղել է «ռեպիկ.am», «Հարբակ.am» լրատվական կայքերի գլխավոր խմբագիր: Դարարայան դեպքերի ծշմարտությունը պատմող «Թեկուզ» գեղարվեստական ֆիլմի սցենարի հեղինակն է: Դրանով նոյնպես գրքերի հեղինակն է: 2019թ. հրատարակել է «Անհնարինը՝ հնարավոր» մոտիվացիոն թեմաներով գիրքը, որը համացանցում դարձել է բնակչության մեջ առաջատար: Հեղինակել է նաև «Ինչպես աջվել սրտում: Սիրելու Արվեստը», «Կեպ Աստծո նստավայր՝ Հայաստան» գրքերը:



**ՎԱՐԴԱՅԱՆ ԱՐՄԵՆ ՀՈՒԿԻՔԻ  
(1923-2002)**

Արմեն Հովհանի Վարդանյան (ծնվ.՝ 1923, գ. Զրակոս - մահ.՝ 2002, Երևան), հոգեբանական գիտությունների թեկնածու (1967):

Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին: Արժանատել է մեռաւնենի:

1950թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի հոգեբանության, տրամաբանության և հայոց լեզվի բաժինը: Աշխատանքի է անցել Սևանի միջնակարգ դպրոցում՝ մինչև 1957թ., այնուհետև 3 տարի աշխատել է ՀԽՄՀ նախարարների խորհրդի Արխիվային վարչությունում: 1960թ. աշխատանքի է անցել Երևանի Խ. Արքյանի անվան Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանակիր հայկական պետական մանկավարժական ինստիտուտին կից Հոգեբանության լարորատորիայում, որպես կրտսեր, այնուհետև՝ ավագ գիտաշխատող: 1970-1973թթ. աշխատել է Գորիսի մասնաճյուղում, որպես մանկավարժության և հոգեբանության ամբիոնի վարիչ, 1973թ.-ից՝ հոգեբանության ամբիոնում՝ որպես ամբիոնի ղոցեան: Պատրաստվում էր պաշտպանել դրկտորական, բայց չի հասցըել: Հեղինակել է մի շարք դասագրքեր, ձեռնարկներ, մենագրություններ, գիտական, գիտա-մասսայական հոդվածներ: Համահեղինակ է մի շարք դասագրքերի և ձեռնարկների՝ Այրենարան առաջին դասարանցիների համար (1971), Մայրենի լեզու, Դասագիրք առաջին դասարանցիների համար (1971), Այրենարան, Դասագիրք ընթերցանության համար (հայկական դպրոցների

Երկրորդ դասարանիների համար) (1971), Հայոց լեզու ոչ հայկական լուսնի Երկրորդ դասարանիների համար (1984), Моделирование как средство обучения и метод педагогического исследования (методическое пособие) (1981), Учебная деятельность и моделирование.

Վարդանյանի համահեղինակած այրբենարանով 26 տարի ուսուցա-  
մել է հայկական դպրոցներում:



## ՎԱՐԴԱՆՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ ՄԱԽԹԱՐԻ (1930-....)

Արմենակ Մխիթարի Վարդանյան (ծնվ.՝ 1930 գ. Հին Թաղեր - մահ.՝ Մոսկվա), տեխնիկական զի-  
տությունների թեկնածու:


Գերազանցությամբ ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: 1947թ. մեկնել է Բարս, ընդունվել Ալյոբեզանի Նավի և քիմիայի ինստիտուտը: Ինստիտուտն ավարտելուց հետո աշխատանքի է անցել Բարվի ճավարդյունաբերության ոլորտում: Հրավիրվել է Մոռկա և ստանձնել բարձր պաշտոններ ԽՍՀՄ նավի և գազի արդյունահանման նախարարությունում: Հանդիսանում է Ո-Դ նավթի և գազի արդյունահանման ոլորտի ճանաչված և խոշոր մասնագետներից մեկը:



## ՎԱՐԴԱՅԱԿԱՆ ՄԵԼԻՔ ԵՆՈՔԻ (1931)

Մելիք Ենոքի Վարդանյան (ծնվ.՝ 1931, գ. Զբարյան), ԼՂՀ արվեստի վաստակավոր գործիչ, 20-րդ դարի լավագույն մանկավարժ:

Սկզբանական կրթությունը ստացել է հայրենիք գյուղի յոթնամյա դպրոցում, 1947թ.՝ ավարտել Հոգեբի միջնակարգ դպրոցը: 1948թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի հոգեբանու-



թյան ֆակուլտետը: Լինելով ճյութապես անապահով, բռղել է ուսումը և որոշ ժամանակ աշխատել ուստիկանությունում որպես ցրիչ: 1950թ. մեկնել է ծառայության: Ծառայությունից վերադառնալով անցել է աշխատանքի թարգմանի անվան գործարանում: 1956թ. վերադարձել է հայրենի գյուղ: Դպրոցում աշխատել է «Հնուտ ձեռքեր» խմբակի ուսուցիչ: 1963թ. ընդունվել է Ազրբեջանի Լենինի անվան մանկավարժական ինստիտուտի ուսաց լեզվի և գրականության ֆակուլտետը: Աշխատանքի է անցել Զրակուսի 8-ամյա դպրոցում՝ որպես ուսաց լեզվի և գրականության ուսուցիչ, 37 տարի աշխատել է դպրոցում, 17 տարի եղել դպրոցի տնօրեն: Փայտարվեստի ինքնուս վարպետ է: Հեղինակել է երեք տասնյակից ավելի թեմատիկ աշխատանքներ, որոնցում ներկայացված են արցախյան կննցաղն ու պահնդույթները:

Ունի կոմպոզիցիաներ՝ կինը ճախարակի, բուրդ գգելու սանրի, երկանքի հետ աշխատելու պրոցեսում, տղամարդը՝ եզմերով վար ամենիս, երաժշտները՝ դիոնի հետ և այլն: Հատկանշական է, որ կոմպոզիցիաների հետուսների տարագները գուտ արցախյան են: 1977թ. Սոսկվայում կայացած «Հայրենիքի ինքնուս վարպետներ» փառատոնում նրա «Խնոջի», «Երկանք», «Շախարակ», «Բրուտագործ» աշխատանքներն արժանացել են ոսկե մեդալի և առաջին կարգի դիպլոմի: Բազմից մասնակցել է խմբային ցուցահանդեսների, անհատական ցուցահանդեսներով հանդես է եկել Երևանում, Ստեփանակերտում, Բաքվում: Մեծ ավանդ ունի Արցախի ոչ նյութական մշակութային ժառանգության պահպանման, հանրահուշական և դեկորատիվ կիրառական արվեստի զարգացման գործում: 2009թ. պարգևատրվել է «Երախտագիտություն» մեդալով:



## ՎԱՐԴԱՆՅԱՆ ՌՈՒԲԵՆ ԿԱՌԵՆԻ (1968)

Ռուբեն Կառլենի Վարդանյան (ծնվ.՝ 1968, Երևան՝ արմատներով բանածրոց ընտանիքում), գործարար, «Ավորոր» մարդասիրական նախածեռնության համահիմնադիր:

1985թ. ուսեւ մեդալով ավարտել է Երևանի N20 դպրոցը: Ընդունվել և 1992թ. ավարտել է Սոսկվայի պետական համալսարանի տնտեսագիտության



ֆակուլտետը: Վերապատրաստվել է Խոտակայում: 1991-1992թ. եղել է «Տրոյկա Դիալոգ» բրոդերական ընկերության փորձագետը: Այստեղ աշխատել է հիմնադրման պահից մինչև 2012թ.: Չրադացել է գործադիր տնօրենի, այսուհետև՝ նախագահի, գլխավոր գործադիր տնօրենի ու «Տրոյկա Դիալոգ» ընկերությունների խմբի տնօրենների խորհրդի նախագահի պաշտոնները: Մինչև 2015թ. եղել է «Խնայքանկ»-ի վարչության նախագահական պաշտոնները: Մինչև 2015թ. եղել է «Խնայքանկ»-ի վարչության նախագահական պաշտոնները: Այս պաշտոնում ունեցել է միաժամանակ դեկանը: 2002-2004թ. «Ուսուաստիկ» խորհրդականն ու խորհրդի դեկանը: 2013թ. Միխայիլ Բրոյրմանի հետ ստեղծել է «Վարդանյան, Բրոյրման և գործընկերներ» ետրումային ընկերությունը: Գործընկերների հետ միասին հանդիսանում է Սոսկվայում պրեմիում դասի «Ռումանով դփոր» և «Վողդլիմենկա» բիզնես կենտրոնների սեփականատերն ու դեկանը: Մի շարք ընկերությունների տնօրենների խորհրդների անդամ է: Նրա նախագծերի մի մասը կապված է Ուսուաստինում և ԱՊՀ-ում կրթական նախածեռնությունների հետ: Հանդիսանում է Դիլիջանի միջազգային դպրոցի համահիմնադիրը: «Տարնի վերածննդ» ծրագրով վերականգնել է ճարտարապետական հուշարձաններ, կառուցել աշխարհի ամենաերկար ճռպանուղին:



## ՎԱՐԴԱՆՅԱՆ ՎԱԽԹԱՆԳ ԱՐՄԵՆԻԿԻ

Վախրան Արմենակի Վարդանյան (ծնվ.՝ թ.Բարոյ՝ հինքաներցու ընտանիքում), տնտեսական գիտությունների թեկնածու:

Գերազանց գնահատականներով ավարտել է միջնակարգ դպրոցը և ընդունվել Խորհրդային Սրբության ամենահեղինակավոր բուհերից մեկը՝ Սոսկվայի միջազգային հարաբերությունների ինստիտուտը: Աշխատանքի է անցել նավարտույնաբերության բնագավառում: Եղել է Ուսուաստինի նավթի և գազի արդյունահանման՝ «Լոկոլի» ֆինանսական տնօրենը:





## ՈՒՂՈՒՅՑ ՄՊՎՍԵՍ ՄԻՐԶՅԱՆ (1907-1991)

Մովսես Միրզյան Ռւլուն (ծնվ.՝ 1907, գ.Խնձօք - մահ.՝ 1991), 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ:

Մեկ տարի սովորել է ծննդավայրի դպրոցում, 1918-1920թթ. Ծովիդի թեմական դպրոցում: Կերապառնալով գյուղ՝ հաճազութացիներին գրել-կարդալ էր սովորեցնում: Ռուտիմ շարունակել է Քարվում, միաժամանակ նաև, բանվորություն արել: 1932թ. ավարտել է բանափրական ֆակուլտետը: Կարճ ժամանակով աշխատել է «Հայկին»-ում: 1938թ. ավարտել է Ստեփանանակերտի (Ծովիդի) երկամյա ուսուցչական պատմության բաժինը և աշխատանքի անցել Ստեփանակերտի ոչ լրիվ միջնակարգ դպրոցում նախ՝ որպես ուսմասվար, ապա՝ տնօրեն: Աշխատանքին զուգահեռ հեռակա կարգով ավարտել է Քարվի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետը: 1942թ. զորակոչվել է խորհրդային բանակի շարքերը: Մասնակցել է Հայրենական մեծ պատերազմին, կովել 18-րդ բանակում և 2 անգամ վիրավորվել: Պատերազմի երկրորդ աստիճանի հաշմանդամ է: 1945թ.՝ զորացրվելու հետո, սկսել է մանկավարժական գործունեությունը քաղաքի բաներին դպրոցում սկզբում՝ որպես ուսուցիչ, ուսմասվար, հետո տնօրեն: Շնանշված մանկավարժի ծառայությունները զնահատվել են ըստ արժանվույն: Պարգևատրվել է «Հայրենական մեծ պատերազմ» և «Պատվո նշան» շքանշաններով, մի շարք մեդալներով, պատվոգրերով և գովասանագրերով: Մեծ հարգանք էր վայելում իր աշակերտների շրջանում:



## ՈՒՂՈՒՅՑ ՍԵՐԳԵՅ ԱԼԵՔՍԱՆԴՐԻ (1953-2020)



Սերգեյ Ալեքսանդրի Ռոտումյան (ծնվ.՝ 1953, ք.Վոլգորադ, ՌԽՍՖՀ, մեծքաղերի Ալեքսանդր Հոտումյանի որդին) - մահ.՝ 2020, Երևան, քաջական գիտությունների թեկնածու (1994):

1960թ. ընդունվել է ԳԴՀ Վյունիստրոֆ քաղաքի

ուսական միջնակարգ դպրոցը: Սովորել է ԽՍՀՄ տարրեր երկրների ու քաղաքների ավելի քան 7 դպրոցներում:

1970թ. ավարտել է Երևանի Ա.Ն. Տոլսոտի անվան դպրոցը: 1972-ից 1976թթ. սովորել և ավարտել է Ս.Մ. Կիրովի ոսպարժական ակադեմիան: 1978-1980թթ. սովորել է ինտերնատուրայում:

1980-1985թթ.՝ Մասիսի հիվանդանոցի մանկարար-գիմնեկոլոգ, 1985-1986թթ.՝ Արագածոտնի կենտրոնական շրջանային հիվանդանոցի մանկարարածության և գիմնեկոլոգիայի բաժնի վարիչ, գլխավոր մանկարար-գիմնեկոլոգ, 1986-1987թթ.՝ Թալինի շրջանի գլխավոր մանկարար-գիմնեկոլոգ, բաժնի վարիչ: 1987թ. նշանակել է Երևանի երրորդ կինհիկական ծննդատան գլխավոր քժիշկ: 2001թ. 3-րդ ծննդատունը վերանվանվել է «Ծենագավիր» ԲԿ, և նշանակվել է գլխավոր տնօրեն: 1994թ. ՀՀ Ա.Ավրարեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտի մանկարարածության և գիմնեկոլոգիայի ամբիոնի ղոցենստ: 1995թ. Երևան քաղաքի գլխավոր մանկարար-գիմնեկոլոգ:

1999թ. սկսած Արցախում զրադել է բարեգործությամբ:

ԱՀ առողջապահության համակարգում բուժման լապորտսկոպիկ մերություն ներդրման հիմնադիրներից է:



## ՓԱԹՅԱՆ ԿԱՐԻՆԵ ԷԳՈՒՄՐԴԻ (1982)



Կարինե Էղումրդի Փաթյան (ծնվ.՝ 1982, գ.Սևադթաղեր), բանափրական գիտությունների թեկնածու (2014), ավագ դասախոս, ԼՂՀ (2012) և ՀՀ ԳՄ անդամ (2016):

1999թ. ուկե մեղալով ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը: 1999-2003թթ. սովորել և ավարտել է ԱրՊՀ բանափրական ֆակուլտետի օտար լեզուների բաժինը՝ անգլերեն մասնագիտությամբ: 2005-2007թթ. սովորել և գերազանցությամբ ավարտել է նոյն բաժնի մագիստրատուրան, 2008-2011թթ.՝ ասպիրանտուրան:

2003-2012թթ. աշխատել է հայրենի գյուղի դպրոցում՝ որպես անզերենի ուսուցչուհի, 2013-2017թթ.՝ ԼՂՀ ԿԳՄՆ պետական տեսչությունում՝ որպես ուսուցչուհի տեսուչ, 2014-2016թթ.՝ Ստեփանակերտի Գ.Նարեկացի հա-

մալսարանում՝ որպես դասախոս: 2017թ.-ից Շուշիի տեխնոլոգիական համալսարանի ավագ դասախոս է: Հեղինակել է բանաստեղծությունների գիրք, բազմաթիվ գրական-գեղարվեստական բարգմանություններ, տպագրվել թերթերում, ալմանախներում և գիտական ամսագրերում: Տիագեստում է անգլերենին, ֆրանսերենին, ռուսերենին:



## ՓԻԼԻՊՈՍ ՏՈՒՄԵՅԻ

(16-րդ դար)

Տումեյի Փիլիպոս (16-րդ դար), Աղվանից կարողիկոս:

Փիլիպոս Տումեյու անոնց նշված է Աղվանից կարողիկոսների շարում: Գահակալել է ընդամենը մեկ տարի՝ 1572-1573թթ.: Այդ տարիներին պարսից շահի և հոգևոր բարձրագույն վերնախավի պահանջով Աղվանից աշխարհում եղել են հավատափոխության բազմաթիվ դեպքեր: Նաև և Դավիթ Առաջածորդին դեմ են հանդես եկել այդ նենգ գործընթացին և հնարավոր է դա դարձել է նրա կարճ կարողիկոսության պատճառը: Կան վարկածներ, որ նա եղել է իր ժամանակի լավագույն հոգևոր կրթություն ստացած հոգևորականներից մեջը և որ նա ուսանել է Երևանի քրիստոնյա հոգևորականների մոտ: Հնարավոր է, որ այստեղ էլ նրան մկրտել են Փիլիպոս օստարածին անոնցվ: Մահվան թվագրությունը և վայրը հայտնի չեն:



## ՕՀԱՆՅԱՆ ԱՐՄԵՆ ՀՐԱՄԵՒ

(1968)

Արմեն Հրամենի Օհանյան (ծնվ.՝ 1968, գ.Ռիստավան), հասարակական գործիչ:

1984թ. ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: Այնուհետև սովորել է Երևանի թիվ 7 պրոֆեսիոնալ ուսմանանում: 1985-1987թթ. ծառայել է Խորհրդային բանակում: 1987թ. աշխատել է Ռիստավանի «Բարեկամություն» սովորություն՝ որպես կաքսամբերի լաբորատոր: 1983թ. աշխատանքի է անցել



Հայոցութիւն ՆԳ-ում: Արցախյան շարժման սկզբից մասնակցել է Ռիստավանի ենթաշրջանի ինքնապաշտպանությանը: 1992թ. ծառայել է ԼՂՀ ՊԲ-ում, եղել ջոկատի հրամանատար, մասնակցել ուղղմական գործողություններին: 1995թ. հիմնադրել է «Աշոտիկ» ԲԲԸ-ն: 1997-2000թթ. եղել է Ռիստավանի համայնքի դեկանալիք: 2002թ. ավարտել է ք.Արտվանի Գ.Նարեկացու համալսարանը, ստացել «տնտեսագետ-մենեջերի» մասնագիտությունը: 2005թ. ընտրվել է պատգամավոր:



## ՕՀԱՆՅԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԳՐԻԳՈՐԻ

(1896-1960)

Հովհաննես Գրիգորի Օհանյան (ծնվ.՝ 1896, գ.Տող - մահ.՝ 1960, ք. Թեհրան), ռեժիսոր, սցենարիստ, գյուտարար, տեխնիկական գիտությունների թեկնածու (1941), թշչական գիտությունների թեկնածու (1953), պրոֆեսոր («Iranian Police School», Թեհրան, 1934), կինոմատոգրաֆիայի դրվագ (1932), Իրանի կինոմատոգրաֆիայի հիմնադիր և պարսկական առաջին լիամետրաժ կինոյի ստեղծողը:



Մասնակության տարիներին ընտանիքի հետ տեղափոխվել է Ռուսաստան, այնուհետև՝ Միջին Ասիա: 1919թ. ավարտել է Տաշքենի առևտիք ուսումնարանը: 1920թ. Մոսկվայում հաճախել է կինոարվեստի դասընթացների: 1924թ. մեկնել է Հնդկաստանի Կալկաթա քաղաք, որտեղ հիմնել է «Motion Picture» դերասանական վարպետության և կինոմատոգրաֆիայի հնդկական առաջին դպրոցը: Դպրոցի առաջին նշանավոր շրջանավարտներից է հայտնի հնդիկ դերասան Ռաջ Կապուրը:

1925թ. նշանակվել է Մոսկվայում Պարսկաստանի դեսպան, սովորել՝ ՎԳԻԿ-ում: 1930թ. տեղափոխվել է Պարսկաստան: Թեհրանում հիմնել է կինոդերասանի դպրոց: Նոյյն թվականին նկարահանել է իրանական առաջին լիամետրաժ «Արին և Ռարին» կինոնկարը՝ Պատ և Պատաշոն գոյակ օրինակով: Հանդես է եկել որպես սցենարիստ, ռեժիսոր և դերասան: Դժբախտաբար ֆիլմը չի պահպանվել: Նրա միակ օրինակը, բողարկվելուց երկու տարի անց, հրդեհի ժամանակ այրվել է Թեհրանի առաջին կինոթարուններից մեկում: 1934թ. նկարահանել է իր երկրորդ՝ «Հաջի աղան»

կինոդերասան» կինոնկարը, որտեղ հանդս է եկել որպես սցենարիստ, ռեժիսոր և պրոդյուսեր: Սակայն ֆիլմը հաջողություն չի ունեցել, որից հետո Հ.Օհանյանը չի կարողացել հետագա գործունեության համար որևէ աջակցություն գտնել: 1937թ. մեկնել է Հնդկաստան և շարունակել իր գիտական գործունեությունը: Այստեղ էլ երկար չի մնացել և 1947թ. վերադարձել է Իրան:

Հեղինակել է բազմաթիվ գրական ստեղծագործություններ, սցենարներ և քատերական դրամաներ: Տիրապետել է յոր լեզուների: Թեհրանում ապրել է թշուառության մեջ, բոլորից մոռացված: 1960թ. սպանվել է իր գրասենյակում: Թաղվել է Թեհրանի հայկական գերեզմանատանը:



## ՑԱՆԿ

### ԾՐՁԱՆԻ ԱՆՎԱՆԻ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՆՈՒՆԵՐԻ, ՈՐՈՇՅ ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ ԳՐՔԻ ՀՐԱՏԱՐԱԿՄԱՆ ՊԱՀԻՆ ՉԻ ՀԱԶՈՂՎԵԼ ՀԱՎԱՔԱԳՐԵԼ

1. Արայիան Ռոզա
2. Արրահամյան Միշա - տնտ. գ. թ. (գ.Առաքել)
3. Արրահամյան Ռոբերտ Երվանինի
4. Ավետիսյան Յուրա Մովսեսի
5. Բարայան Էդիկ Վանյայի
6. Բալյան Մուշեղ - ՀՀ ներքին գործերի գնդապետ (գ.Առաքել)
7. Բարխուդարյան Էռնեստ Հայկի
8. Բարույշյան Ծմավոն Աղալումի
9. Գալստյան Գրետա
10. Գասպարյան Էդուարդ Սուրենի
11. Գասպարյան Նիկոլայ Գորգենի - ՀԽԱՀ գիտության վաստակավոր գործիչ
12. Գասպարյան Սերոբ Գորգենի - մաք. գ. թ.
13. Գևորգյան Վալերի - Հայոցութիւն շրջապահապմի ղեկավար
14. Եզանյան Կիմա Երեմի - ազգուարդյունաբերության նախարարի տեղակալ, Կրասնոսելչկու շրջկոմի I-ին քարտուղար (գ.Առաքել)
15. Եզանյան Հրաչյակ - ՀՀ արդարադատության նախարարության ավագ խորհրդատու (գ.Առաքել)
16. Եզանյան Ռաֆիկ Կիմի - ՀՀ սննդարդյունաբերության փոխնախարար (գ.Առաքել)
17. Խասպետյան Միլվա
18. Խաչիյան Արմեն Մանվելի - տեխ. գ. թ. (գ.Առաքել)
19. Խաչիյան Մանվել Գրիգորի - տեխ. գ. թ. (գ.Առաքել)
20. Հայրիյան Գեորգի - ԽՄԿԿ կենտկոմի բաժնի վարիչ (գ.Առաքել)
21. Հայրիյան Էդիկ Արտաշի
22. Հայրիյան Ծորիկ Արտաշի
23. Հովհաննիսյան Գալուշյա - Հոկտեմբերյանի շրջկոմի I-ին քարտուղար (գ.Առաքել)
24. Ղալեջյան Վազգեն Մակարի
25. Ճավակյան Յուրի Միքայելի
26. Միրզոյան Գրիշա - ավիացիայի գնդապետ (գ.Առաքել)
27. Զարմազյան Արտոն Վերդիի - մաք. գ. թ.
28. Զարմազյան Վանյա Բենրուտի
29. Սանամյան Վաղարշակ
30. Սարգսյան Կաղեն Ապետի - վաստակավոր իրավաբան (գ.Առաքել)
31. Սեյրանյան Սերգեյ - գնդապետ (գ.Առաքել)
32. Օհանյան Լևոն - Սարտունու շրջկոմի քարտուղար, ՀՀ գյուղականարար (գ.Առաքել)

## ՕԳԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ավանեսյան Ա.Ս., Հարուրյունյան Գ.Հ., Լեռնային Ղարաբաղի հնքնակար Մարզի կրթական համակարգը (1923-1988թթ.), Ստեփանակերտ, «Դիզակ պյուս», 2015, Հ.2.-504 էջ:
2. Ավանեսյան Ա.Ս., Հարուրյունյան Գ.Հ., Միջնակարգ մասնագիտական և քարձրագոյն կրթության համակարգը ԼՂԻՄ-ում և Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում (1923-2018թթ.), Ստեփանակերտ, «Դիզակ պյուս», 2019, Հ.4.-528 էջ:
3. Կրթության Արցախում 405-2005թթ., Երևան, «Անտարես» հրատ., 2005, 476 էջ:
4. «Կաճառ» (ԱԳԱ-ի տարեգիրք): Գիրք 7(83-84), 2013, Ծովի «Կաճառ» Գ.Կ հրատ. 2015, 232 էջ +8 ներդիր:
5. Ալավերդյան Կարինե, Ստեփանակերտի Վ.Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի տարեգործությունը: 1932-2019թ./Վ.Ալավերդյան - Ստեփանակերտ 2019, 240 էջ +88 էջ ներդիր:
6. Ամիրյան Հրանտ. Դիզախայտ լեռան զավակները: Հայրենագիտական ուսումնասիրություն-ԵՐ.: Հեղինակային հրատարակչություն, 2007, 172 էջ:
7. Արցախի պետական համալսարանի դասախոսները, Ստեփանակերտ, 2009, 168 էջ:
8. Ասրյան Ա.Ե, Գերօն արմանե, Երևան, 2015, -360 ս.
9. Գարբիելյան Դ.Ս., Խանյան Ս.Ա., Սարգսյան Ա.Զ., Գիտության արցախածին աստղերը: 19-20-րդ դարեր: Համառոտ պատմություն/ԼՂՀ ԿԳՆ Ս. Մաշտոց համալսարան: Ստեփանակերտ, Դիզակ պյուս հրատ., 2011, 192 էջ:
10. Գուլյան (Գոլոնց) Սվետլանա, Բանաձոր. Օշակ/ Ս. Գուլյան (Գոլոնց).-Եր.: Իзд “Զանգակ”. 2018.- 376c.+ իլլ. 32c.
11. Դավթյան Բ., 20-րդ դարի լավագոյն մանկավարժները, Ստեփանակերտ, 2001, 124 էջ:
12. Երվանդ Արքահամյան, Մեծ Թաղեր, «Սոնա» հրատ., Ստեփանակերտ, 2009:
13. Խորեն Ղազարյան, Տումի, պատմ. ակնարկներ: Եր.: ՎԱՎ -պրինտ հրատ.: 2003, 212 էջ:
14. Հայազն Տ., Ղազարյան Գ., 1000 հայազնի գեներալներ, ծովակալներ, Երևան, 2009, 696 էջ:
15. Հայկական համառոտ հանրագիտարան, 4 հատորով, հատ. 1. Ա-Ղ, Երևան, 1990, 768 էջ: Դ-Կ, Երևան, 1995, 768 էջ: Հատ. 3. Կ-Ն, Երևան, 1999, 896 էջ: Հատ. 4. Ն-Ֆ, Երևան, 2003, 972 էջ:
16. Համբագիտարան, «Հայուհիներ», Երևան, «Ամարաս» հրատ., 2001:
17. Մելքոնյան Ս., Լեռնային Ղարաբաղ, Երևան, 1990, 303 էջ:
18. Ով ով է (Հայեր: Կենսագրական հանրագիտարան), 2 հատորով: Հատ. 1. Ա-Ղ, Երևան, 2005, 728 էջ: Հատ. 2. Ճ-Ֆ, Երևան, 2007, 740 էջ:
19. Սարկisյան Ա., Արման — военные ученые, конструкторы, производственники и испытатели XX века, в 3-х томах. Т. 1, Ереван, 1998, 328 с.; Т. 2, Ереван, 2005, 444с.; Т. 3, Ереван, 2005, 388 с.
20. Սարկisյան Տ.Տ., Էնցիկլոպեդիա Արշա-Կարաբախ, Սանկտ-Պետերբուրգ, 2007, 626 ս.
21. Առաքել Կոստանդյան «Պատմություն Արցախի», Երևան, «Արմավ» հրատ., 2019, -231 էջ:
22. Սերգեյ Ամիրջանյան, «Դիզակ» Երևան, «Գասպրինս» հրատ., 2006:
23. Ռոբերտ Աբայան, «Տող»:

## ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԿԱՅՔԵՐԵՐ

1. <http://www.anunner.com>
2. <https://hy.wikipedia.org>
3. <http://am.hayazg.info>
4. <http://findarmenia.org/arm/culture>
5. <http://www.ysu.am/persons>
6. [http://www.armin.am/historyofarmenia/arm/Encyclopedia\\_of\\_armenian\\_history](http://www.armin.am/historyofarmenia/arm/Encyclopedia_of_armenian_history)
7. <https://www.facebook.com/dizakert/>

## ԱՐՑԱԽԻ ԳԻՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

## ԱՐՑԱԽԻ ԱՆՎԱՆԻ ԳՈՐԾԻՉՆԵՐ

ՀԱՅՐՈՒԹԻՒՆ  
ԾՐՁԱԿՆԵՐ

ԳԻՐԿԱ 111

Սրբազիչ՝ Լ. Միքաղյան  
Էջաղումը՝ Թ. Հարթիւնյանի  
Կազմի ծևափորումը՝ Ա. Խաչատրյանի

Թուղթը՝ օֆսեթ, տպագրություն՝ օֆսեթ, չափսը՝  $60 \times 84^{1/16}$ ,  
ծավալը՝ 14.5 տպ. մամուլ, տպաքանակը՝ 250:

Տպագրվել է «Դիզայն Ապուս» հրատարակչության տպարանում:  
375000, ԱՀ, ք. Ստեփանակերտ, Հայկուլ 25  
Հեռ. +374/47946360, +374/97302002 էլ. հասցե՝ [dizak-plus@mail.ru](mailto:dizak-plus@mail.ru)